

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԲՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ**

**ԱԴԱՆԱՅԻ ՆԱՅԱՆԳԻ ՀԱՅԵՐԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.  
1909 Թ. ՈՒՆԵՉՐԿՈՒՄ**

**ԳԻՐԸ Ա**

**ԵՐԵՎԱՆ**

**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն**

**2017**

ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(52)  
Ո 459

Երաշխավորված է տպագրության  
Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝  
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

**Ա. Մարության**

### **ՈՍԿԱՆՅԱՆ Ա.**

Ո 459 Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը.  
1909 թ. ունեզրկում (Գիրք Ա) / Ա. Ոսկանյան – Եր: ՀՀ ԳԱԱ  
«Գիտություն» հրատ., 2017. – 208 էջ + 24 էջ ներդիր:

Աշխատությունը նվիրված է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակին: Գավառ առ գավառ տրված է Ադանայի նահանգի հայերի տնտեսության նկարագրությունը: Ներկայացված է նահանգում օսմանյան իշխանությունների հողային գրավումների քաղաքականությունը, 1909 թ. Ադանայի ջարդը և դրան ուղեկցող զանգվածային ունեզրկման ազդեցությունը հայության տնտեսության վրա:

Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, ցեղասպանագետների, տնտեսագետների և ընթերցողների լայն շրջանակների համար:

Կազմին՝ Արխիվային նյութերի լուսանկարներ (Մատենադարան, Ադանայի Տնտեսական խորհրդի և Քաղաքական ժողովի անմշակ արխիվ):

ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(52)

ISBN 978-5-8080-1284-4

© Անի Ոսկանյան, 2017

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA

**ANI VOSKANYAN**

**THE ECONOMIC SITUATION OF THE  
ARMENIANS OF ADANA PROVINCE:  
1909 DEPRIVATION OF PROPERTY**

**BOOK I**

**Yerevan**

**“Gitutyun” Publishing House  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia**

**2017**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	6
----------------	---

## ԳԼՈՒԽ I

<b>ԱԴԱՆԱՅԻ ՆԱՅԱՆԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՎԱՐԱԳԻՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ .....</b>	<b>17</b>
---	-----------

1.1. Վարչական բաժանումները .....	17
1.2. Ժողովրդագրական պատկերը և հայերը .....	23
1.3. Բնական պաշարները .....	27
1.4. Տնտեսության զարգացման միտումներն ու կրթական հաստատությունները .....	31

## ԳԼՈՒԽ II

<b>ՀԱՅԵՐՆ ԱԴԱՆԱՅԻ ՆԱՅԱՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ .....</b>	<b>46</b>
--	-----------

2.1. Աղանայի գավառ .....	46
2.2. Իջեղի գավառ .....	78
2.3. Սիս-Գոգանի գավառ .....	79
2.4. Ջերբել-Բերեքեթի գավառ .....	101

## ԳԼՈՒԽ III

<b>ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ 1909 թ. ՋԱՐԴԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱԴԱՆԱՅԻ ՆԱՅԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ .....</b>	<b>115</b>
---	------------

3.1. Օսմանյան իշխանությունների հողային քաղաքականությունը: Աղանայի նահանգի հայության նյութական վիճակը մինչև 1909 թ. կոտորածը .....	115
3.2. 1909 թ. Աղանայի հայերի կոտորածը և դրան ուղեկցող զանգվածային ունեզրկման ազդեցությունը նահանգի հայության տնտեսության վրա .....	149

<b>ՎԵՐՋԱԲԱՆ</b> .....	182
<b>SUMMARY</b> .....	187
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b> .....	191
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b> .....	200
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b>	
1.1. Ադանայի թեմական քաղաքների և գյուղերի հայ բնակչությունը ըստ նոր մարդահամարի .....	200
1.2. Ադանայի թեմական քաղաքների և գյուղերի հայ բնակչությունը ըստ նոր մարդահամարի (շարունակություն) .....	202
1.3. Հավաքական ցանկ Ադանայի առաջնորդական վիճակի եկեղե- ցիների, քահանաների, վարժարանների և աշակերտների .....	204
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2</b>	
2.1. Տարսունի վիճակագրությունը Վ. Վ. Փիթի համար .....	205
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3</b>	
3.1. Ադանայի Հայոց թեմի առաջնորդ Գևորգ ծ. վ. Արսլանյանի նամակը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանին .....	206

## ԱՌԱՋԱԲԱՆ

19-րդ դարը Օսմանյան կայսրության համար ճգնաժամային էր ինչպես քաղաքական ու ռազմական, այնպես էլ տնտեսական առումներով: Իրավիճակի բարդացումը հանգեցրեց բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտության: 1839 թ., այնուհետև 1856 թ. թանգիմաթական բարեփոխումները սկիզբ դրեցին գործընթացների, որոնք շրջադարձային եղան Օսմանյան կայսրության բոլոր ազգերի համար:

1858 թ. ընդունվում է «Հողի մասին օրենքը»<sup>1</sup>, որը մի շարք էական փոփոխություններ է մտցնում հողատիրության համակարգում: 1861 թ. սկսում է գործել առաջին առևտրական դատավարական օրենսգիրքը, հետագա տարիներին փոփոխություններ են կատարվում հարկային օրենսգրքում: Չնայած օրենքների ընդունումը լուրջ առաջընթաց էր Օսմանյան կայսրության համար, այնուամենայնիվ փոփոխությունները գործնականում դանդաղ էին կատարվում, և լուրջ տեղաշարժեր չէին արձանագրվում:

1861-1862 թթ. եվրոպական երկրների հետ կնքվում են առևտրական պայմանագրեր<sup>2</sup>, որոնք մի շարք արտոնություններ են տրամադրում վերջիններիս, այդ թվում նաև սահմանում են ցածր մաքսատուրքեր: Նման արտոնյալ պայմաններով կայսրություն ներխուժող եվրոպական կապիտալը գրեթե անմրցունակ էր դարձնում օսմանյան տնտեսվարողին:

Թանգիմաթի ընձեռած հնարավորություններն օգտագործելով՝ հայ առաջադեմ մտավորականների մի խումբ ազգային հարցերը նորովի բարձրացնելու և լուծումներ գտնելու ուղիներ էր որոնում: Աստիճանաբար ձևավորվում էին խմբեր ու հանձնախմբեր, որոնց գործունեության ամենատարբեր ոլորտների կանոնակարգումը անհրաժեշտ էր դառնում: Առաջ է գալիս

<sup>1</sup> Петросян Ю. А., Османская империя: могущество и гибель, Москва, «Наука», 1990, с. 193.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

Ազգային սահմանադրություն ունենալու գաղափարը: 1863 թ. մարտին Սուլթան Աբդուլ Ազիզ I-ը<sup>3</sup> վավերացնում և արտոնում է Հայոց Ազգային սահմանադրությունը<sup>4</sup>. «Ազգ մը որ առանց օրէնքի անկարգ՝ անկանոն՝ տարտամ ու անորոշ վիճակ մը կունենայ, բնական է որ օրէնք ունեցող ազգ մ'ալ առաջինէն տարբեր վիճակ մը կունենայ»<sup>5</sup>, -գրել է ժամանակակիցը: Հայոց Ազգային սահմանադրությունը բոլորովին նոր հենքի վրա է դնում օսմանահպատակ հայերին՝ խորն ազդեցություն ունենալով ներազգային կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներում:

Կայսրությունում տեղի ունեցող փոփոխությունները 1876 թ. հանգեցնում են նաև Օսմանյան կայսրության առաջին սահմանադրության ընդունմանը, որը գործնական կյանք գրեթե չի ունենում: Առաջին սահմանադրության լիազորություններն ավարտվում են ընդունումից անմիջապէս հետո՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի<sup>6</sup> գահակալությամբ:

18-19-րդ դարերում աշխարհում տեղի ունեցող արդյունաբերական փոփոխությունները տնտեսության ոլորտում ստեղծում էին նոր ձևաչափեր, որոնք այն արդյունավետ վարելու նոր լուծումներ էին պահանջում: Չնայած Օսմանյան կայսրությունը դժվարությամբ էր ներգրավվում այս գործընթացներում և տնտեսական համակարգով շարունակում էր մնալ հետամնաց, այնուամենայնիվ, չէր կարող չարձագանքել փոփոխություններին: Մինչդեռ հայերը, վաճառականության և արհեստագործության ասպարեզներում ունենալով բազմադարյա փորձ ու ավանդույթներ, շարունակ մրցելով կայսրության ոչ թուրք ժողովուրդների հետ (հույն, հրեա, ասորի, արաբ և այլն), տնտեսական դաշտում կարողացել էին հասնել որոշակի հաջողությունների և 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին արդեն գտնվում էին առաջ-

<sup>3</sup> Կառավարման տարիներ՝ 1861-1876 թթ.:

<sup>4</sup> Սահմանադրութիւն, «Ձեփիւո Հայրենեաց», Կ. Պոլիս, 1863, թիւ 10, մարտի 1, էջ 1-2:

<sup>5</sup> Ազգային սահմանադրութիւն եւ ազգային օրինավոր վարչութիւն, «Ձեփիւո», Կ. Պոլիս, 1863, թիւ 30, նոյեմբերի 13, էջ 1:

<sup>6</sup> Կառավարման տարիներ՝ 1876-1909 թթ.:

նային դիրքերում: Այս հանգամանքը թերևս պայմանավորված էր Եվրոպայում կրթություն ստացած նոր սերնդի ասպարեզ մուտք գործելով, որը հաջողությամբ կարողանում էր համադրել բազմամյա փորձն ու նորարարական մտեցումները:

Արդյունաբերական և գյուղատնտեսության բնագավառում ձեռքի աշխատանքն աստիճանաբար փոխարինվում էր մեքենաների աշխատանքով: Հայերն առաջիններից էին կայսրությունում, որ ժամանակին համընթաց քայլերու ոչ միայն ունակություն, այլև ֆինանսական հնարավորություններ ունեին: Կայսրություն ներկրված ու տնտեսության տարբեր ճյուղերում կիրառվող հաստոցներն ու երկրագործական մեքենաները, արտադրական գործընթացն արագացնելով և բարելավելով, լուրջ արդյունքներ արձանագրեցին, ինչն ապահովեց հայերի ուրույն տեղը կայսրության տնտեսական դաշտում: Հայերը, հույները և հրեաները պահանջված գործընկերներ էին նաև կայսրությունում եվրոպացի ներդրողների համար: Վերջիններս գործընկերներ կամ իրենց ընկերությունների ներկայացուցիչներ էին ընտրում հատկապես ոչ մուսուլմանների շրջանում, քանի որ նրանց լեզուների իմացությունը և տեղանքին ծանոթ լինելու հանգամանքը միաժամանակ նպաստում էր թե՛ հաղորդակցմանը և թե՛ գործի առաջընթացին: Այս ամենն իր վրա է սևեռում, ինչպես կառավարող շրջանակների, այնպես էլ նոր ձևավորվող թուրք բուրժուազիայի ուշադրությունը, որոնք ունենալով որոշակի արտոնություններ, այնուամենայնիվ, չունեին հայերի, հույների և հրեաների փորձը: Այն, որ տնտեսական դաշտում հայերի որոշակի խավ ուներ լուրջ հաջողություններ, և նրանց մի մասը գնալով հարստանում էր, բոլորովին չէր նշանակում, որ կայսրության բոլոր հայերն էին գտնվում ֆինանսապես լավ վիճակում: Հայերը մեծամասամբ հասարակ արհեստավորներ և հողագործներ էին, որոնք ծանր աշխատանքով էին օրվա հաց վաստակում ու հիմնականում շահագործվում:

Օսմանյան կայսրությունում տնտեսությունը հավասարաչափ չէր զարգանում, առավել զարգացած էին երկրի արևմտյան տարածքները և ծովափնյա շրջանները: Դա հիմնականում բա-



ցատրվում էր ներքին գավառներում հաղորդակցման ուղիների դժվարությամբ, երբեմն դրանց բացակայությամբ: 19-րդ դարում կայսրության տարածքում երկաթգծերի կառուցումը ևս կատարվում էր դանդաղ և անհավասար բաշխմամբ: Առաջին հերթին երկաթուղի կառուցվում էր երկրի համար ռազմավարական տեսանկյունից կարևորություն ունեցող, ինչպես նաև առևտուրն ու վաճառականությունը խթանող վայրերում: Միջերկրական ծովի ափին գտնվող Ադանայի նահանգը, լինելով առևտրաշրջանառության կարևոր կենտրոններից մեկը, համապատասխանում էր այդ պահանջներին: Դա էր պատճառը, որ արդեն 19-րդ դարի 80-ականներին գործում էր Մերսին-Ադանա գիծը, որն էլ ավելի է նպաստում առևտրի և արդյունաբերության զարգացմանը: Նահանգի աշխարհագրական դիրքը, հողի բերքատվությունը, ինչպես նաև տնտեսության զարգացման համար ստեղծված նպաստավոր պայմանները, անշուշտ, իրենց դերն ունեցել են նահանգի առաջընթացի մեջ, սակայն պետք է կարևորել նաև տնտեսության մեջ ներգրավված տեղական ներկայացուցիչների հմտությունները, նրանց կատարած աշխատանքը:

Հետազոտությունը նպատակ ունի ներկայացնելու Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը, հայ խոշոր ձեռնարկատերերին, ներմուծող և արտահանող ընկերությունները, ինչպես նաև մանր առևտրականներին, արհեստավորներին, հողագործներին ու գյուղական տնտեսությունները: Աշխատանքում ներկայացված են նաև Ադանայի նահանգի տնտեսական, մշակութային և կրթական հաստատությունները, նահանգի յուրաքանչյուր գավառում եղած եկեղեցիներն ու դպրոցները: Կրթական և մշակութային հաստատությունների գործունեությանը վերաբերող ֆինանսական տվյալների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առավել համապարփակ տեղեկություններ հաղորդել նահանգի հայերի տնտեսական վիճակի մասին: Բացի այդ, յուրաքանչյուր կառույց իր տարածքով ազգային հարստության մաս էր՝ հայապատկան գույք:

Փորձելով հնարավորինս մանրամասն ներկայացնել Ադանայի նահանգի հայերի տնտեսական ներուժը՝ մինևույն ժամա-

նակ ակնհայտ է, որ բերված տվյալները ամբողջական լինել չեն կարող, սակայն կարող են դառնալ կարևոր հիմք հետագա ուսումնասիրությունների համար: Այսուհանդերձ, բերված փաստերը թույլ են տալիս ընդհանրական պատկերացում կազմել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգում ապրող հայերի տնտեսության հիմնական ուղղությունների, նրանց ձեռքբերումների ու հնարավորությունների մասին: Տնտեսական վիճակին վերաբերող տվյալները ցույց են տալիս նաև 1909 թ. կոտորածների ընթացքում և Հայոց ցեղասպանության տարիներին հայերի կրած նյութական կորուստների մոտավոր ծավալները:

«Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը. 1909 թ. ունեզրկում» աշխատությունը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում ներկայացված է Ադանայի նահանգի ընդհանուր նկարագիրը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ նահանգի վարչական բաժանումները, նահանգի ժողովրդագրական պատկերը, բնական պաշարներն, ինչպես նաև տնտեսության և կրթության առաջընթացը: Երկրորդ գլուխը կառուցված է Ադանայի նահանգի վարչական բաժանումներին համապատասխան՝ ներկայացնելով յուրաքանչյուր գավառի քաղաքներում, այնուհետև գյուղաքաղաքներում և գյուղերում հայերի տնտեսական վիճակը: Գլխում զետեղված են գուտ տնտեսական տվյալներ նահանգի հայկական ընկերությունների, գործարանների և արհեստանոցների, ինչպես նաև տնտեսության առաջադեմ ներկայացուցիչների, մանր ու միջին առևտրականների, արհեստավորների մասին: Հանգամանորեն անդրադարձել ենք նաև նրանց գործունեության բնագավառներին ու շրջանակներին:

Երրորդ գլխում ներկայացրել ենք Ադանայի նահանգում տեղի ունեցող գործընթացներն Օսմանյան կայսրության ընդհանուր հողային քաղաքականության համատեքստում: Փորձել ենք լայնածավալ հողագրկում իրականացնելու միտումը դիտարկել որպես ջարդի հնարավոր շարժառիթներից մեկը: Գլխի երկրորդ բաժնում ներկայացրել ենք 1909 թ. Ադանայի ջարդը, մարդկային և նյութական կորուստները:

Գրքի առաջին երկու գլուխներում առկա տնտեսական ու ժողովրդագրական տվյալներն առավել ամբողջական և ընդգրկուն ներկայացնելու համար ներառված է 19-րդ դարի վերջից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածը, սակայն գրքում ներկայացված չէ Հայոց ցեղասպանությունն ու ցեղասպանության ընթացքում հայերի ունեցած նյութական կորուստները: Քանի որ 1909 թ. ջարդը լուրջ հարված հասցրեց նահանգի հայության տնտեսական վիճակին, ուստի կանգ ենք առնել ջարդի նկարագրության վրա՝ ներկայացնելով Ադանայի նահանգում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական գործընթացները մինչև Ադանայի ջարդը, ապա կոտորածների ընթացքը և դրանց հետևանքով հայերի կրած մարդկային ու նյութական կորուստները: 1909 թ. ջարդից հետո նահանգում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, հայերի՝ մինչ այդ ունեցած տնտեսական առաջնային դիրքերը հիմնականում կորսվել են: Պահպանված գործարանների, վաճառատների կամ այլ ձեռնարկությունների կողքին 1909-1915 թթ. ընթացքում հայերը փորձում էին վերստեղծել նորերը: Թեկուզ և կարճ ժամանակահատվածում, բայց այնուհանդերձ եղել են որոշակի ձեռքբերումներ ու հաջողություններ, որոնք էլ կասեցվել են, և դրանց արդյունքները յուրացվել են Հայոց ցեղասպանության տարիներին: Ուստի, հարկ համարեցինք 1909 թ. հետո Ադանայի նահանգի տնտեսության վերականգնումը և Հայոց ցեղասպանության տարիներին հայերի ունեզրկումը ներկայացնել առանձին՝ հաջորդ գրքում:

Ուսումնասիրության մեջ շեշտադրվող խնդիրները լուսաբանելու համար հիմնվել ենք հայկական սկզբնաղբյուրների՝ արխիվային փաստաթղթերի, ժամանակի պարբերական մամուլի, ինչպես նաև առաջնային սկզբնաղբյուրային գրականության վրա: Աշխատության աղբյուրագիտական հենքը եղել է Մատենադարանում պահվող Ադանայի Հայոց առաջնորդարանի անմշակ արխիվը, որում ներառված են Ադանայի Հայոց առաջնորդարանի պաշտոնական գրագրությունը, Ադանայի Քաղա-

քական ժողովի և Տնտեսական խորհրդի ատենագրությունները<sup>7</sup>, ինչպես նաև նահանգի հայության գործունեության տարբեր ոլորտները ներկայացնող այլ արխիվային փաստաթղթեր, որոնք խիստ արժեքավոր և եզակի նյութ են պարունակում ուսումնասիրվող ժամանակահատվածում Ադանայի նահանգի հայության տնտեսական վիճակի վերաբերյալ: Աշխատանքներ ենք իրականացրել նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվում:

Կարևոր սկզբնաղբյուր է հանդիսացել ժամանակի պարբերական մամուլը: Առանձին թերթերում ամփոփված են Ադանայի նահանգի տնտեսության վերաբերյալ բացառիկ մանրամասներ: Օգտագործել ենք շուրջ երեք տասնյակ թերթ՝ բազմաթիվ համարներով, որոնցից հատկապես առանձնացրել ենք Կ. Պոլսի «Բիրական»<sup>8</sup> առևտրային թերթը:

Ադանայի նահանգի մասին համապարփակ տվյալներ ներկայացնող սկզբնաղբյուրային գրականության թվին են պատկանում Ղ. Ալիշանի<sup>9</sup>, Հ. Աճառյանի<sup>10</sup>, Հ. Առաքելյանի<sup>11</sup>, Ի. Ասլանյանի<sup>12</sup>, Ս. Էփրիկյանի<sup>13</sup>, Հ. Խանջյանի<sup>14</sup>, Ս. Օրմանյանի<sup>15</sup>, ինչպես

---

<sup>7</sup> Տե՛ս Մատենադարան, Տնտեսական խորհրդի անմշակ արխիվ, 5 մարտ 1905 թ.-21 մայիս 1914 թ.: Քաղաքական ժողովի անմշակ արխիվ, Ատենագրություն Ադանայի Քաղաքական ժողովի, 2 մարտ 1905 թ.-10 ապրիլ 1915 թ.: Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ): Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը (18 սեպտեմբերի 1914 -31 մայիսի 1915):

<sup>8</sup> Տե՛ս «Բիրական», Կ. Պոլիս, 1906, թիւ 10, 19; 1907, թիւ 9-10, 15, 17-18, 21, 23-24, 24, 27, 35, 36, 44, 45, 46, 47, 48, 49; 1908, թիւ 26:

<sup>9</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Միսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885:

<sup>10</sup> Տե՛ս Աճառեան Հ., Տաճկահայոց Հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջեւան, տպ. Ս. Յ. Աւագեանի, 1915:

<sup>11</sup> Տե՛ս Առաքելեան Հ., Ձեյթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896:

<sup>12</sup> Տե՛ս Ասլանեան Ի. Ա., Նոր աշխարհագրութիւն ի պէտս Ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, տպ. Արամեան, 1873:

<sup>13</sup> Տե՛ս Էփրիկեան Հ. Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, Ս. Ղազար, 1902:

նան Պետերբուրգում հրատարակված «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ»<sup>16</sup> գրքերը: Նյութի լուսաբանումը առավել համակողմանի են դարձրել «Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ»<sup>17</sup> վիճակացույցները, ինչպես նաև Ս. Չեովլեքճեանի<sup>18</sup> և Ռ. Օգուզի<sup>19</sup> առևտրային ուղեցույցները:

Որպես առաջնային գրականությունն ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն են ունեցել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի Հոդային գրավումների հանձնաժողովի տեղեկագրերը<sup>20</sup>, որոնք ներկայացնում են պաշտոնական տվյալներ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին հայապատկան հողերի գրավումների մասին:

Ադանայի ջարդից հետո հրատարակվել է մեծածավալ գրականություն ինչպես ականատեսների, այնպես էլ կոտորածներից հետո Ադանայի նահանգ այցելած հայ և օտարազգի

---

<sup>14</sup> Տե՛ս Խանճեան Հ. Ս., Պատկերագարդ Նոր Աշխարհագրութիւն, Բ. Մաս Աշխարհագրութիւն Օսմանեան Կայսրութեան, Կ Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1900:

<sup>15</sup> Տե՛ս Օրմանեան Մաղաքիա Արքեպիս., Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. Է. Ն. Տէր-Ներեսեան, 1911:

<sup>16</sup> Տե՛ս Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894:

<sup>17</sup> Տե՛ս Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Ա., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1901; Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1903:

<sup>18</sup> Տե՛ս Չեովլեքճեան Ս., Առաջնորդ Վաճառականաց կամ Տարեք Առևտրական գիտութեան, Է. Բ, տպագր. Նշան Կ. Պէրպլեռեան, Կ. Պոլիս, 1901:

<sup>19</sup> Տե՛ս Ougouze R., Cuide Commercial D'Adana, Stamboul, imp. Djihan Freres, 1924.

<sup>20</sup> Տե՛ս Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Ա., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1910; Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Բ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Օսմ. գործակցական ընկերութեան, 1911; Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Գ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1912; Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Դ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1912:

մտավորականների, լրագրողների, միսիոներների և այլոց կողմից: Դրանց թվում առանձնանում են Հ. Թերզյանի<sup>21</sup>, Ս. Պարթևյանի<sup>22</sup>, Մուշեղ Եպիսկոպոսի<sup>23</sup>, Ա. Թեոդիկի<sup>24</sup>, Ջ. Եսայանի<sup>25</sup>, Հ. Աշխենի<sup>26</sup>, Ն. Եպս. Դանիելյանի<sup>27</sup>, ինչպես նաև Ա. Ադոսիդեսի<sup>28</sup>, Ֆ. Դաքետի<sup>29</sup>, Ժ. Բրեզոլի<sup>30</sup>, Հ. Գիբոնսի<sup>31</sup>, Ռ. Լամբերտի<sup>32</sup> և այլ հեղինակների գրքերն ու հուշագրությունները:

1910 թ. Ադանայի ջարդի տարելիցին, «Հորիզոն» թերթում Ermino<sup>33</sup> ծածկանվամբ Աբրահամ Գյուլխանդանյանը հրատարակեց

---

<sup>21</sup> Տե՛ս Թերզյանի Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, տպ. «Արաքս», 1912:

<sup>22</sup> Տե՛ս Պարթևեան Ս., Կիլիկեան Արհաիրքը, Կ.Պոլիս, գրտ. Նշան-Պապիկեան, 1909:

<sup>23</sup> Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Ջարդը եւ պատասխանատուները, Գահիրէ, տպ. Արարատ-Ս. Դարբինեան, 1909:

<sup>24</sup> Տե՛ս Թեոդիկ Ա., Ամիս մը՝ի Կիլիկիա, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան, 1910:

<sup>25</sup> Տե՛ս Եսայեան Ջ., Աւերակներուն մէջ, Պէյրուս, տպ. Էտվան, 1957:

<sup>26</sup> Տե՛ս Աշխենի Հ. Յ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ Յուշեր, Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1950:

<sup>27</sup> Տե՛ս Դանիելեան Ներսէս Եպս., Կաթիլ մը Ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, գրատուն Յ. Գըլըճեան, տպ. Օ. Արզուման, 1912:

<sup>28</sup> Տե՛ս Adossidés A., Arméniens et Jeunes-Turcs, Les massacres de Cilicie, Paris, P.-V. Stock, 1910.

<sup>29</sup> Տե՛ս Duckett Ferriman, Turkish Atrocities. The Young Turks and The Truth about Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, London, 1913.

<sup>30</sup> Տե՛ս Brézol G., Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres D'Adana en 1909, Paris, En Vente Chez L'auteur, 1911.

<sup>31</sup> Տե՛ս Gibbons H., The Red Rugs of Tarsus. A Woman's Story of the Armenian Massacres, Paris, Hagop Turabian editor, 1919.

<sup>32</sup> Տե՛ս Lambert R., Hadjin and the Armenian Massacres, New York, Fleming H. Revell Company, 1911.

<sup>33</sup> Եղիշէ Իշխանյանի վկայությամբ Ermino ծածկանվամբ հանդես է եկել Աբրահամ Գյուլխանդանյանը: Նա հոդվածներ է գրել Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն» (1910 թ.) և Բաքվում հրատարակվող «Արեւ» (1914 թ., 1917 թ.) թերթերում: Հովակիմյան Բ. Ս., Հայոց ծածկանունների բառարան (8000 հեղինակի 25000 ծածկանուն), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2005, էջ 475-476:

րակել է «Ադանայի ջարդերը»<sup>34</sup> հոդվածաշարը: Շուրջ երկու տասնյակ հրապարակումներում Ա. Գյուլխանդանյանը սովել է Ադանայի և Հալեպի նահանգների ընդհանուր նկարագիրը, համակողմանի ներկայացրել տեղի ունեցած ջարդերն ու դրանց հետևանքները՝ հաղորդելով բացառիկ մանրամասներ: Թերևս Ermino-յի հոդվածները մեկտեղ ամբողջացնելով կարող ենք ունենալ Ադանայի կոտորածների մասին ևս մեկ արժեքավոր աշխատություն՝ գրված ժամանակակցի կողմից:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել Բ. Եղիայանի<sup>35</sup>, Մ. Քելեշյանի<sup>36</sup>, Հ. Պողոսյանի<sup>37</sup>, Մ. Գոճայանի<sup>38</sup> նահանգի տարբեր գավառների ու քաղաքների պատմությունը ներկայացնող գրքերը:

Ադանայի նահանգի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև Մ. Սերոբյանի<sup>39</sup>, Կ. Աշըգյանի<sup>40</sup>, Մ. Խապրիկի<sup>41</sup> հուշերն ու ինքնակենսագրական հուշագրությունները:

Աշխատության համար կարևորություն ենք սովել Հ. Ղազարյանի<sup>42</sup>, Լ. Չոբուխյանի<sup>43</sup>, Հ. Ինձիկյանի<sup>44</sup> և Ռ. Գևորգյանի<sup>45</sup> գրքերին:

---

<sup>34</sup> Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1910, թիւ 22, 24, 27, 33, 39, 40, 42, 45, 47, 52, 54, 55, 56, 64, 66, 72, 73:

<sup>35</sup> Տե՛ս Եղիայեան Բ., Ստանայի Հայոց պատմութիւն, Հրատարակութիւն Ստանայի հայրենակացական միութեան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1970:

<sup>36</sup> Տե՛ս Քելեշեան Մ., Սիւ-Սատեան, Պէյրութ, տպ. «Հայ Ճեմարանի», 1949:

<sup>37</sup> Տե՛ս Պողոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Լու Անճէլըս, Քալիֆօրնիա, Պօզաճեան տպ., 1942:

<sup>38</sup> Տե՛ս Գոճայեան Մ., Պատմութիւն Չորք-Մարգպանի (Տէօրթ-Եոյ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս-Անճէլըս, Լոս-Անճէլըսի Չորք-Մարգպանի հայրենակցական միութիւն, 2005:

<sup>39</sup> Տե՛ս Սերոբեան Մ., Դիտումներ եւ Դատումներ (Էջեր Օրագրէս), Պէյրութ, տպ. «Ազդակ», 1932:

<sup>40</sup> Տե՛ս Աշըգեան Կ. Բ., Ուզուն Աշըգեան գերդաստանի պատմութիւնը, Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1968:

<sup>41</sup> Տե՛ս Խապրիկ Մ., Եթէ Չորք-Մարգպանը ինձի հետ խօսէր..., Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1983:

<sup>42</sup> Տե՛ս Ղազարեան Հ., Տեղասպան թուրքը, Բէյրութ, «Համազգային», 1968:

Հետազոտական աշխատանքների ընթացքում անգնահատելի են խորհուրդներն ու աջակցությունը, ինչի համար մեծապես շնորհակալ ենք Միհրան Մինասյանին, Անահիտ Աստոյանին, Աննա Ալեքսանյանին և Հայկ Մարտիրոսյանին: Սամվել Պոռանյանի<sup>46</sup> անտիպ հուշագրության արժեքավոր էջերը տրամադրելու համար խորապես շնորհակալ ենք Վերա Սահակյանին:

Համիդյան ջարդերի, 1909 թ. Ադանայի կոտորածների և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում բազմաթիվ են ինչպես հայ, այնպես էլ օտար մասնագետների հետազոտություններն ու հրապարակումները: Սակայն 19-րդ դարի վերջին քառորդից մինչև 1923 թ. հայ ժողովրդի կրած նյութական կորուստների ծավալը ու դրանց կործանարար հետևանքները դեռևս լուրջ հետազոտության կարիք ունեն: Սույն աշխատության շրջանակներում Ադանայի նահանգի օրինակով օսմանահպատակ հայերի տնտեսական առաջընթացը դիտարկվել է որպես ջարդի, ապա և ցեղասպանության շարժառիթներից մեկը, իսկ տնտեսության կազմալուծումը, ունեցվածքի բռնագրավումն ու յուրացումը իրան է դարձել թուրքական տնտեսության զարգացման համար:

---

<sup>43</sup> Տե՛ս Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա. հատոր, (1850-1878), Պէյրութ, տպ. Մեւան, 1972:

<sup>44</sup> Տե՛ս Инджикян О. Г., Буржуазия Османской Империи, Ереван, Издательство Академии наук Армянской ССР, 1977.

<sup>45</sup> Տե՛ս Кеворкян Р., Геноцид Армян, Полная история, Центр Арменоведческих исследований «Анив», Москва, 2015.

<sup>46</sup> Տե՛ս Պոռանեան Ա., Հուշագրություն Ճուլ Մարգարանի, Լենինական, անտիպ, 1965:



# Գ Լ Ո Ւ Խ Ի

## ԱՂԱՆԱՅԻ ՆԱԶԱՆԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

### 1.1. Վարչական բաժանումները

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության մաս կազմող պատմական Կիլիկիայի տարածքի մեծ մասի վրա ձևավորվում է Ադանայի նահանգը, իսկ Կիլիկիայի հարավ-արևելյան մասը ներգրավվում է Հալեպի նահանգի մեջ:

1834 թ. և 1864-67 թթ. ձեռնարկված վարչական փոփոխությունների հետևանքով վերացվում են փաշայությունները և ստեղծվում վարչական նոր միավորներ՝ նահանգներ<sup>47</sup>: 1875 թ. Ադանային շնորհվում է նահանգի կարգավիճակ<sup>48</sup>:

Ադանայի նահանգի արևմտյան սահմանը Ալայիա քաղաքից դեպի արևելք Իմամլը ծովափնյա ավանն էր, իսկ Ալեքսանդրետտայի ծոցի (Հայոց ծոց)<sup>49</sup> արևմտյան սահմանը վերջանում էր Ալեքսանդրետտա քաղաքից դեպի հյուսիս: Ադանայի նահանգին

---

<sup>47</sup> Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 12:

<sup>48</sup> Քելեշեան Մ., Միս-Մատեան, Պեյրուֆ, տպ. «Հայ Ճեմարանի», 1949, էջ 19:

<sup>49</sup> Հայկական աղբյուրներում առավել հաճախակի հանդիպում է Հայոց ծոց ձևով: Ծովածոց Միջերկրական ծովի հյուսիսարևելյան կողմում, Կիլիկիայի արևմտյան սահմանում հայտնի է եղել Իստոս քաղաքի անունով, իսկ նոր ժամանակներում Ալեքսանդրետտայի ծոց: Կոչվել է նաև Ալեքսանդրետտա, Սյասի ծոց, Իսսիկյան ծոց, Իսկենդերուն, Ծոց Կիլիկիոյ և այլն: 4-րդ դ. գործածության մեջ է մտնում Հայոց ծոց անունը: Միջնադարյան եվրոպական հեղինակները Հայոց ծոցը և Հայկական Կիլիկիայի ծովային ողջ շրջանը կոչել են Հայոց ծով, իսկ ծովափնյա շրջանը Հայկական ծովափ: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., հ. 3, Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 1991, էջ 342:

սահմանակից էին արևմուտքից՝ Կոնիա նահանգը՝ Նիյտեի, Կոնիայի և Ատալիայի գավառներով, հյուսիսից՝ Անկոբա և Մեքաստիա նահանգները՝ Կեսարիա և Մեքաստիա գավառներով, արևելքից և որոշ չափով հարավից՝ Հալեպի նահանգը՝ Մարաշ և Հալեպ գավառներով<sup>50</sup>: Կ. Պոլսում հրատարակված 1907 թ. «Բիրակն» թերթի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Ադանայի նահանգն ուներ 40.000 քառ. կմ տարածություն՝ 52.432.000 դեոնում<sup>51</sup>, և 500.000 բնակիչ: Հարավային սահմանն էր Միջերկրական ծովը, հյուսիսից՝ Կոնիայի, Մեքաստիայի և փոքր չափով Էնկյուրիի նահանգները, արևելքից՝ Հալեպի նահանգը<sup>52</sup>:

Պատմաբան Բ. Եղիայանը նահանգի տարածքը նշում է 45.000 քառ. կմ<sup>53</sup>, որն ընդգրկում է շուրջ 50 միլիոն դեոնում – արտավար հող, հետևյալ դասավորությամբ.

Տեսակ	Տարածություն դեոնումի	Համեմ. առ հարյուր
ա. Մշակելի հող	20.100.000	40%
բ. Լեռնային տարած.	29.000.000	58%
գ. Ճահճային տարած.	900.000	2%

Ադանայի նահանգի հողերի միայն 40 տոկոսն էր մշակելի, իսկ մնացածը լեռնային էր կամ ճահճային<sup>54</sup>:

1875 թ. Ադանայի նահանգը բաժանված էր Ադանա, Տարսոն, ավելի ուշ Մերսին գավառների, 1881թ-ից՝ Սիս (Գոզան) գավառի՝ Սիս կենտրոնով, Ջեբել-Բերեքեթի, որի կենտրոնները հաջոր-

<sup>50</sup> Գալուստեան Գ. Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Ջեյթուն, Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1934, էջ 15:

<sup>51</sup> Ըստ թուրքական դեոնումի՝ յուրաքանչյուր դեոնումը 40×40 կանգուն = 1600 քոկ. կնգ., կամ՝ հողաչափի կանգունը 75 սանտիմ հաշվով՝ 1 դեոնումը 900 քոկ. մ: Եղիայեան Բ., Ատանայի Հայոց պատմութիւն, Հրատարակութիւն Ատանայի հայրենակազմական միութեան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1970, էջ 146:

<sup>52</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 35, 1907, օգոստոսի 25, էջ 202:

<sup>53</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 139:

<sup>54</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 146:

դաբար եղել են Յարփուզը, Ջիհանը, Օսմանիեն, և Իչելի կամ Մելնկիայի գավառի: Իչելի գավառը Ադանայի նահանգի կազմում էր մինչև 1918 թ. զինադադարը, այնուհետև դառնում է անկախ գավառ<sup>55</sup>:

1894 թ. Պետերբուրգում հրատարակված «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքում Ադանայի նահանգը ներկայացված է հետևյալ վարչական բաժանումներով՝ չորս *սանջաք* կամ գավառ՝ Ադանայի, Իչելի, Քոզանի և Ջերել-Բերեքթի, որոնք ստորաբաժանված են 19 *քազաների* (գավառակ) և 23 *նահիյեների* (գյուղախումբ)<sup>56</sup>: 1907 թ. «Բիւրակն» թերթում նույնպես նշված է՝ 19 *քազա*, 23 *նահիյե* և 1623 գյուղ<sup>57</sup>:

Համաձայն Հ. Առաքելյանի տեղեկությունների՝ 19-րդ դարի վերջին Ադանայի նահանգը բաղկացած էր չորս *սանջաքից* կամ *մութասարրըֆություններից*, որոնք բաժանվում էին 19 *քազաների*՝ 49 *նահիյեների*.

#### **1.Ադանայի գավառ**

*Գավառակներ*՝ Ադանա, Մերսին, Տարսուս (Տարսոն), Կարաչիսար

#### **2.Իչելի գավառ**

*Գավառակներ*՝ Մելնկիա, Գյուլնար, Անամուռ, Էրմենեկ, Մութ

#### **3.Խոզանի (Գոզան) գավառ**

*Գավառակներ*՝ Սիս, Վահկա (Ֆեքե), Հաճըն, Կարս Փագար

#### **4.Ջերել-Բերեքթի գավառ**

*Գավառակներ*՝ Յարփուզ, Օսմանիե, Իսլահիե, Բուլանըք, Հասսա, Պայաս (Փայաս)<sup>58</sup>:

Իսկ վերոհիշյալ թերթի հաջորդ համարում տրված են նահանգի վարչական բաժանումները՝ հետևյալ կերպ<sup>59</sup>.

<sup>55</sup> Գալուստեան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 15:

<sup>56</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. Ի. Լիբերմանի, 1894, էջ 38:

<sup>57</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 35, 1907, օգոստոսի 25, էջ 202:

<sup>58</sup> Առաքելեան Հ., Ջելթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896, էջ 34-35:

<sup>59</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 202:

Մանձաք	Քազա	Նահիյէ	Գիւղ
Ատանա	Ատանա  Թարսուս  Գարա իսալու Մէրսին	Քարաթաշ, Միսիս, Մուհաճիրին, Մըրքընթը, Քարսանթը, Ճանիպ շէիր Քուսուս, Քիւլէքպօղազ  Էլվալը, Կէրճէլի	716
Իջիլ	Սէլէֆքէ  Էրմէնէք Մուֆ Կիւլնար Անամուր	Եազտէ, Այաշ, Պուլաճալը  Անտիպագար Մէլինտի	321
Գօզան	Միս Քարս Հաճըն Ֆէքքէ	Մէհաստէ Րուպ	324
Ճէպէլի Պէրէքէթ	Եարբուզ  Օսմանիէ  Ըսլահիյէ Խասս Պուլանըք Բայէաս	Գայբաք, Քարաիիտ Թաճիրլի, Ճիրիթքիէ  Եունուրթալըք	328

Տվյալ աղյուսակում ներկայացված է 22 *նահիյէ*, իսկ գյուղերի հանրագումարը կազմում է 1689:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգի վարչական բաժանումները ներկայացնող աղբյուրներում գավառների, գավառակների, շրջանների ու գյուղերի տվյալները փոքր-ինչ տարբեր են: Հիմնականում տարբերությունը շրջանների ու գյուղերի ընդհանուր թվի մեջ է, որն էլ կարելի է բացատրել նահանգի սահմանային գյուղերի՝ երբեմն տվյալ երբեմն

ել հարևան նահանգի կազմում հաշվառվելով:

1913 թ. տեղի ունեցած օսմանյան նոր վարչական բաժանումներով Ադանայի նահանգը բաղկացած էր արդեն հինգ գավառից, որից մեկն ինքնավար էր, այսինքն՝ մյուս գավառների համեմատ օժտված էր տեղական կառավարման ավելի մեծ ինքնուրույնությամբ<sup>60</sup>: Իսկ *սանջաք*ներն էլ համապատասխանաբար բաժանված էին *քազան*ների և *նահիյե*ների:

Ըստ թուրք հետազոտող Ք. Քարփաթի՝ 1914 թ. Ադանայի նահանգի վարչական բաժանումները հետևյալն էին.

### **Ընդհանուր Ադանա**

1. Ադանա, Ջեյհան, Կարաիսալի, Յումուրթալըք
2. Քոզան, Հաճըն, Վահկա, Կարս
3. Ջեբել-Բերեքթեթ, Չորք-Մարգպան (Դյորթ-Յուլ), Իսլահիե, Բահչե (Բուլանըք), Հասսա
4. Մերսին, Տարսոն<sup>61</sup>

### **Իչելի գավառը** (առանձնացվել է Ադանայից)

1. Իչել, Անամուռ, Գյուլնար, Մուրթ<sup>62</sup>:

Օսմանյան տիրապետության հաստատումից հետո Կիլիկիան ենթարկվել է տարբեր վարչական բաժանումների: Ընդհանրապես, ժամանակ առ ժամանակ իրականացվող վարչական բաժանումներով օսմանյան կառավարությունը վերաձևումներ էր կատարում գրավյալ տարածքներում: Ներքին սահմանների շարունակական փոփոխություններից հետո կորչում և վերանում էր գրավյալ տարածքների նախնական ամբողջականությունը, տեղանունների փոփոխությունը խզում էր առաջացնում տեղանքի ու տվյալ աշխարհագրական տարածքում ձևավորված ժողովրդի միջև, իսկ նահանգի կենտրոն հանդիսացող քաղաքների փոփոխության հետևանքով տեղի էին ունենում

<sup>60</sup> Միմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 23:

<sup>61</sup> Karpat K. H., Ottoman Population: 1830-1914, Demographic and Social Characteristics, London, The University of Wisconsin Press, 1985, p. 172.

<sup>62</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 184:

սոցիալ-սոստեսական ցնցումներ, ինչն էլ հանգեցնում էր բնակչության տեղաշարժերի:

1875 թ. Ադանայի նահանգի վարչական սահմանի մեջ էին մտնում Ադանա քաղաքը, Մերսինը, Տարսոնը, Միսը և Հաճընը՝ կցելով նաև Մելնկիայի գավառը: Ադանայի գավառը հյուսիսից՝ Հաճընից դեպի հարավ տարածվելով, իր մեջ էր ներառում Իսլահիեն մինչև Ալեքսանդրետ<sup>63</sup>: Ներկայացնելով Ադանայի նահանգի վարչական բաժանումները՝ Հ. Ղազարյանը նկատում էր. «Այս վարչական կարգադրության քաղաքական միտք բանին այն էր, որ ոչ-հայ տարրերու մեջ հայերը մեծամասնություն չկազմէին, ըլլայ Ատանայի, ըլլայ Հալեպի, ըլլայ Մեքաստիոյ նահանգին մեջ»<sup>64</sup>:

1875 թ. սկսած նահանգի կենտրոնական կուսակալանիստ քաղաքը Ադանան էր: Նահանգապետը նշանակվում էր սուլթանի կողմից և պատասխանատու էր կենտրոնական կառավարության առջև: Նահանգապետին էր ենթարկվում պետական մեքենան՝ իր բոլոր ճյուղերով, բացի զինվորական և դատական մարմիններից: Նահանգապետի օգնականն էր *դեֆթերդարը* (նահանգի, գավառի ֆինանսական պատասխանատու) կամ *մուհասեբեջին* (հաշվակալ) այնուհետև *մեքթուփչին* կամ կուսակալության ընդհանուր քարտուղարը: Նահանգը ղեկավարող վարչական մարմիններն էին հանրային կրթության, առևտրի, հողագործության, հանրօգուտ շինության, կալվածքների տեսչությունները, տուրքերի, անտառների, հանքերի, հեռագրի և հանրային պարտքի, ծխախոտի և ոգելից ըմպելիքների, մաքսատների, մարդահամարի գրասենյակի տեսուչները, ոստիկանությունն ու ոստիկան զինվորները և այլն: Նահանգապետին անմիջականորեն ենթակա էին *մութասարըֆ*ները կամ գավառապետերը, այնուհետև *քայ-*

---

<sup>63</sup> Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, «Համագային», 1968, էջ 166:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում:

մաքամները, նահիլներն՝ իրենց տեղակալներով և տեսուչներով, գյուղերը դեկավարում էին գյուղապետերը՝ մուհթաքները<sup>65</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բազմակի ենթարկվելով վարչական բաժանումների՝ պատմական Կիլիկիայի մեծ մասի վրա ձևավորված Ադանայի նահանգում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին պահպանվել էին հայաշատ գավառներն ու գավառակները, քաղաքներն ու գյուղերը՝ իրենց մշակութային արժեքներով, շարունակաբար զարգացող տնտեսությամբ:

## 1.2. Ժողովրդագրական պատկերը և հայերը

1845 թ. Սուլթան Աբդուլ Մեջիդ I-ի<sup>66</sup> մարդահամարի համաձայն՝ Ադանայի նահանգում բնակվում էր 270.000 հայ, 1878 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի մարդահամարով հաշվվում էր՝ 380.000 հայ<sup>67</sup>, (հարկավոր է հանել Կիլիկիո կաթողիկոսության այն թեմերի բնակչության թվաքանակը, որոնք նահանգի կազմի մեջ չեն մտնում): Հ. Ղազարյանը նշում է, որ 1878 թ. թուրքական «Սալնամեն» Ադանայի հայերի առանձին թիվ չի նշում, այլ գրում է, որ. «Ատանա եւ Փոքր Ասիա (6 նահանգներէն դուրս) 835.000 հայ, որով «Սալնամե»ին թիւերը խառնուած են»<sup>68</sup>: Ապա շարունակում է, որ, թերևս, ճշմարտամոտ է Գ. Զոհրայի «Հայկական հարցը» ֆրանսերէն աշխատությունում ներկայացված թիվը, ըստ որի՝ Ադանայի նահանգում ստացվում է 178.000 հայ: Իսկ ֆրանսիացի Վիթալ Քինեն 1890 թ., հենվելով թուրքական աղբյուրների վրա, նշում է 97.450 հայ<sup>69</sup>:

1891 թ. լույս տեսած Քինեի «Ասիական Թուրքիա» գրքում

---

<sup>65</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 18:

<sup>66</sup> Կառավարման տարիներ 1839-1861 թթ.:

<sup>67</sup> Չիթունի, Յուշիկք Հայաստանի, Կ. Պոլիս, «Հայագիտում հրատարակչութիւն», 1919, էջ 63:

<sup>68</sup> Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 166:

<sup>69</sup> Տե՛ս նույն տեղում:

Ադանայի կուսակալության բնակչությունը ցույց է տրված հետևյալ կերպ.

Մուսուլմաններ	158.000	
Քրիստոնյաներ		
Հայ Առաքելական	69.300	
Հայ Կաթոլիկ	11.500	
Հայ Բողոքական	<u>16.600</u>	
	97.400	
Այլ Քրիստոնյաներ	75.989	
		<u>173.389</u>
Զանազաններ	72.050	
		403.439

Բաղդատական հաշվով քոկ. կմ-ի վրա 11 բնակիչ<sup>70</sup>:

Պետերբուրգում հրատարակված «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքում ներկայացված է, որ 19-րդ դարի վերջին նահանգի քրիստոնյա բնակչությունը գերակշռում էր՝ 168.990, որից հայերը՝ 97.450, իսկ մուսուլմանները՝ 162.400: Տվյալ ժամանակահատվածում Ադանայի նահանգի յուրաքանչյուր քառակուսի մղոնի վրա մոտ 590 հոգի էր ապրում՝ ցրված 1629 գյուղերում և շուրջ 20 քաղաքներում ու ավաններում<sup>71</sup>:

Վիճակագրական տարբեր թվերի համադրությամբ ակնհայտ է դառնում, որ նահանգում 1890-ական թթ. գերակշռում էին հայերը: Այնուհետև հայերի թիվը պարբերաբար աճել է, քանի որ 19-րդ դարի վերջին Կիլիկիան, մասամբ գերծ մնալով համիդյան կոտորածներից, համեմատաբար ավելի խաղաղ վայր է եղել հայերի համար, քան Արևմտյան Հայաստանի նահանգները, ինչպես նաև դարձել է ոչ միայն հայկական նահանգներից, այլև Օսմանյան կայսրության տարբեր վայրերից աշխատանք փնտրող-

<sup>70</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 148:

<sup>71</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 39-40:



ների հավաքատեղի:

Կիլիկիայի բազմաթիվ ազարակներում, ինչպես հայերին պատկանող, այնպես էլ թուրքերին, հույներին, ասորիներին և այլն, դաշտային աշխատանքների շրջանում աշխատել են հազարավոր բանվորներ: 19-րդ դարի վերջին Ադանայի դաշտում աշխատանք է տրամադրվել 15-20 հազար բանվորի, որոնք մեծամասամբ հայեր էին<sup>72</sup>: Հարկավոր է նշել, որ հաջորդիվ այս թիվը շարունակաբար աճել է:

1880-ական թթ. սկսած Ադանայի նահանգը և հարակից գավառները տարեկան ընդունում էին մոտ 100.000 աշխատող<sup>73</sup>:

Ըստ 1912 թ. «Արեւելեան Տարեցոյց»-ի<sup>74</sup> Ադանայի նահանգի ժողովրդագրական պատկերը հետևյալն է.

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳ					
Գավառ	Գավառակ	Գյուղախումբ	Բնակչություն		
			Մուսուլման	Քրիստոնյա	
ԱԴԱՆԱ	3	7	60.000	50.000	
ՄԵՐՄԻՆ	1	3	20.000	50.000	
ՋԵԲԵԼ-ԲԵՐԵՔԵԹ	6	4	45.000	15.000	
ԳՈԶԱՆ-ՍԻՍ	4	4	20.000	50.000	
ԻՉԵԼ	5	7	40.000	50.000	
Գումար	19	25	185.000	215.000	
				Ընդհ. բնակչ.	400.000

Ադանայի նահանգում, համաձայն Հայոց պատրիարքարանի (1913 թ. փետրվար-1915 թ. օգոստոս) մարդահամարի տվյալների, նշվում է 119.414 հայ հետևյալ հարաբերակցությամբ. Ադանայի

<sup>72</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 22, 1910, յունարի 30, էջ 3:

<sup>73</sup> Инджикян О. Г., Буржуазия Османской Империи, Ереван, Издательство Академии наук Армянской ССР, 1977, с. 70.

<sup>74</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 148:

գավառ՝ 27.990, Մերսինի գավառ՝ 6.987, Իչելի գավառ՝ 466, Քոզան (Միս) գավառ, որից Քոզան՝ 5.600, Ֆեքե (Վահկա)՝ 4.948, Սախմբեյլի (Հաճըն)՝ 27.850, Կարս Փազար 5.645 և Օսմանիե (Ջեբել-Բերեքեթ) գավառ՝ 39.928<sup>75</sup>:

1915 թ. «Արարատ» ամսագիրը Կիլիկիայի հայության վերաբերյալ նշում է հետևյալ վիճակագրական տվյալները. «Ատանայի սանձագ 13,535. Միս-Գոզանի սանձագ 5,600. Հաճընի գազա 26,480. Գարս Բազար 5,645. Ֆեքե (Վահկա) 4,948. Օսմանիեի սանձագ 9,832. Պաղչէի գազա 560. Ճիհանի (Համիտիե) գազա 886. Երկինի սանձագ 750. Տէօրթեօլ (Չօք Մարգուան) 12,300. Եարբուզ 15,000. Մերսինի սանձագ 3,840. Տարսուն 2,250. Հալեպի սանձագ 9,870. Այնթապ 36,000. Քիլիս 7,966. Անտիոք 8,820. Պէլէն 8000. Իսկէնտէրուն 6,370. Սոււետիա 1,600. Քէսապ 13,450. Մարաշի սանձագ 31,560. Ջէրթուն 22,450. Կոկիսուն 10,789. Ալպիստան 5,830. Ուրֆայի սանձագ 32,600. Բում գալէ (Հոմկլա) 1,460. Պիրէճիկ 1,500. Կիւրին 10,000. Ուլաչ 4,500. Տարէնտէ 4,060. Աշոտի 2,500. Մալաթիոյ սանձագ 35,000. Տէհանի 8,600. Ատիաման 12,040. Եօզղատի սանձագ 28,500»<sup>76</sup>: Ինչպէս նշում է ամսագիրը հայության ընդհանուր թիվը 411.062<sup>77</sup> է՝ հավելելով, որ թիվը վեր է հանված Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից «յատկապէս կատարուած քննութեան միջոցով»<sup>78</sup>: Ակնհայտ է, որ տվյալ ցուցակում ներկայացված որոշ տեղանուններ աշխարհագրորեն Կիլիկիայի մաս չեն կազմում, սակայն հանդիսանում են Կիլիկիո կաթողիկոսության թեմ, ուստի ներկայաց-

---

<sup>75</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler, İstanbul, Aras, 2012, s. 63.

<sup>76</sup> «Արարատ», 1915-ՌՅԿԴ, տարի ԽԹ, յունվար, համար Ա, էջ 29:

<sup>77</sup> Մեր հաշվումներով՝ ցուցակում ներկայացված թվերի հանրագումարը կազմում է 405.091, որից կարելի է ենթադրել, որ մեկ կամ ավելի տեղանուններ բաց են թողնված:

<sup>78</sup> Տե՛ս նույն տեղում: Ցուցակը նախապես հրապարակվել է Թեոդիկի կողմից 1914 թ. (Թեոդիկ, Ամէնուն Տարեցոյցը, Տրդ, Կ. Պոլիս, հրատ. եւ տպ. Մ. Յովակիմեան, 1914, էջ 322-323):

ված թիվը, ինչպես արդեն նշվեց, ոչ թե Կիլիկիայի, այլ կաթողիկոսության թեմերի հանրագումարն է:

Ադանայի նահանգի ժողովրդագրական տվյալները բազմաթիվ են, արված՝ ինչպես հայերի, այնպես էլ օտարների կողմից: Համաձայն ներկայացված ընդհանուր վիճակագրական տվյալների Ադանայի նահանգում քրիստոնյա բնակչությունը կազմում էր մեծամասնություն, որտեղ հայերը առաջատար էին:

Հայոց վերջին թագավորության անկումից ի վեր ապրելով Կիլիկիայում՝ հայերը Հայոց ցեղասպանության նախօրեին դեռևս շարունակում էին ունենալ բնակչության թվի առավելություն նահանգի այլ էթնիկ խմբերի համեմատությամբ, սակայն հայերի տեղահանությունն ու կոտորածները Հայոց ցեղասպանության տարիներին հիմնավոր կերպով փոխեցին նահանգի ժողովրդագրական պատկերը՝ վերացնելով հայերի գերակշիռ ներկայությունը տարածաշրջանում:

### **1.3. Բնական աշարները**

Կիլիկիան առանձնանում էր ոչ միայն իր աշխարհագրական դիրքով, այլև բնական պաշարներով՝ անտառներով, տարատեսակ հանքերով ու բնական ջերմուկներով, որոնց նպատակային ու ճիշտ կիրառումը, նահանգի տնտեսության զարգացման համար լայն հնարավորություններ էր ստեղծում:

Կիլիկիայի լեռնային մասը հարուստ էր անտառներով և կազմում էր 1.858.629 արտավար: Հատկապես նշանավոր էին Լեչեն կամ Զեյթունյուքը՝ Հայոց ծոցի հյուսիսում, Փայասից մինչև Գարանլըք Գափու, Այասի մոտ, (Լեչեի անտառները հատվեցին Առաջին աշխարհամարտի տարիներին շոգեկառքերի համար վառելիքայտ ստանալու նպատակով), և Պոզ Աղաչ անտառը՝ Միսիսի շրջակայքում, Արքայակաղին վանքի մոտակայքում,

Ջիհանի գետաբերանին, Պեպելի լճի և Միջերկրական ծովի միջև<sup>79</sup>:

Ադանայի նահանգն ուներ 490.865 տարածություն, այսինքն՝ 1.860.000 դեոնում անտառ հետևյալ գավառներում՝

Ադանա – 143.610

Սիս (Գոզան) – 51.410

Ջեբել-Բերեքթեթ – 74.027

Իչել – 221.818

Ընդամենը՝ 490.865<sup>80</sup>:

Հ. Գալուստյանը նշում է, որ անտառները կազմում են 1.858.629 դեոնում<sup>81</sup>, ըստ «Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքի՝ տրված է մոտ 449.142 դեյաստին, որից՝

Ադանայի գավառ – 131.403 դեո.

Քոզանի գավառ – 47.040 դեո.

Ջեբել-Բերեքթի գավառ – 67.735 դեո.

Իչելի գավառ – 202.964 դեո.<sup>82</sup>:

Հայկական թագավորության կործանումից հետո այս անտառներից երկու ընդարձակ շրջաններ Կիլիկիո կաթողիկոսության սեփականությունն էին ճանաչվել, որից առաջինը վերոնշված Լեչե կամ Ջեյթունլուք կոչվող շրջանն էր՝ 40.000 դեոնում, շուրջ 3.600 հեկտար տարածությամբ և երկրորդը՝ Պոզ Աղաչ անտառը՝ 30.000 դեոնում, շուրջ 2.700 հեկտար<sup>83</sup>:

1907 թ. լույս տեսնող «Բիւրակն» թերթը հավելում է, որ Ջեյթունլուքը ձիթենիների լայնածավալ անտառ էր, իսկ Պոզ Աղաչում ձիթենիներից բացի աճում էին մեծ թվով թթենիներ<sup>84</sup>: Ձիթենիներ, թթենիներ և այլ պտղատու ծառեր ունեցող տարածք-

---

<sup>79</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 21:

<sup>80</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 204:

<sup>81</sup> Գալուստեան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 22:

<sup>82</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 58:

<sup>83</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 152:

<sup>84</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 205:

ները ավելի թանկ էին գնահատվում, ընդհանրապես Կիլիկիայում հողը բերրի էր, ինչն էլ բարձրացնում է նրա արժեքը:

Դաշտավայրերում Մելնկիայի և Սսի միջև աճում էր տաք և բարեխառը, իսկ լեռնադաշտերում՝ ցուրտ կլիմային հաստուկ բերք: Ստորին մասերում մշակվում էր ցորեն, գարի, վարսակ, հաճար, քնջութ, եգիպտացորեն, բամբակ, բրինձ, խաղող, նարինջ, շաքարեղեգ և գրեթե ամեն տեսակի ընդեղեն: Վերնի մասերում աճում էին կեռաս, տանձ, դեղձ, կաղին ու այլ պտուղներ: Ծառերի գլխավոր տեսակներն էին՝ կաղնի, սոճի, եղևնի, վայրի ձիթենի, թթենի, մայրի և այլն: Այս ծառերը՝ հիմնականում որպես վառելավայտ, արտահանվում էին Սիրիա և Եգիպտոս<sup>85</sup>:

Կիլիկիայի լեռները հարուստ էին հանքերով: Ադանայի նահանգում կապարի հանքերը գտնվում էին Քյուլեք-բողագում, պղնձինը՝ Արդանե-մատենում, իսկ հանքային ածխինը՝ Թոզ-օղլուում<sup>86</sup>: Կիլիկիայի լեռները կրային կազմության պատճառով ունեին բազմաթիվ ջերմուկներ: Իրենց բուժիչ հատկություններով հայտնի էին Ջիհան գետի ավազանում ջերմուկները, ինչպես Հարունիե հայկական գյուղի մոտ գտնվող Ամանոսի և Տեռնկելե գյուղի ստորոտին գտնվող Տեռնկելեի ջերմուկները<sup>87</sup>, ինչպես նաև Իլիչեի ջերմուկը<sup>88</sup>:

Աղի դաշտերը միայն Ադանայում էին շահագործվում<sup>89</sup>: Սիհուն և Ջիհան գետերի միջև գտնվածները իբրև աղահանք էին շահագործվում Հանրային պարտքերի վարչության կողմից: Հինգ կարևոր աղահանքերում՝ Աքչե դենիզ, Հասան դեղե, Բեբեքի, Մահլի, Միտիրլի 2-2½ միլիոն օխա աղ էր արտադրվում,

---

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 204-205:

<sup>86</sup> Սալանեան Ի. Ա., Նոր աշխարհագրություն ի պետս Ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, տպ. Արամեան, 1873, էջ 232:

<sup>87</sup> Պօղոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Lou Մնճէլըս, Քայիֆօրնիա, Պօզաճեան տպ., 1942, էջ 6:

<sup>88</sup> Գրիգոր Գ. Գուստուկեան, Կիլիկեան լուրեր, Խառնը-Հարունիե, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 5,149, 1913, սեպտեմբեր 18-1 հոկտեմբեր, էջ 1:

<sup>89</sup> Գալուստեան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 23:

որը կարելի էր հասցնել մինչև ութ միլիոնի<sup>90</sup>:

Գլխիկիան կայսրության պղնձի ու կապարի ամենահարուստ հանքերի հիմնական կենտրոնատեղիներից մեկն էր<sup>91</sup>: Մասնավորապես Ադանայի հյուսիսարևելյան կողմում գտնվող լեռնաշղթայում կային կապարի, պղնձի և արծաթի հանքեր<sup>92</sup>: Շահագործվում էին Բերեքեթի Մատենի արծաթախառն կապարի հանքը և Բուլկար Մատենի ոսկեհատ արծաթի հանքը<sup>93</sup>:

Ջեյթունի և Հաճընի շրջանում հատկապես իր ծավալով առանձնանում էր կրաքարը: Հ. Պողոսյանը հիշատակում է նաև ծծումբ, բորակ, սև և սպիտակ ձութ, խեժ, աղ և ապակեհող: Մարոսի և Ջիհանի վերևի մասում կային երկաթի հանքեր<sup>94</sup>:

Բնական պաշարների առատությունը ևս առավելություն էր տալիս նահանգին: Բացի այն, որ բնական հարուստ պաշարները բարձրացնում էին հողի ապարանքային արժեքը, այլև նպաստավոր պայմաններ էին ստեղծում արդյունաբերության զարգացման համար: Գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված հանքարդյունաբերության զարգացումը շարունակ մեծացնում էր ինչպես կառավարության, այնպես էլ նոր ձևավորվող թուրք բուրժուազիայի հետաքրքրությունը Ադանայի նահանգի նկատմամբ՝ վերջիններիս դեպքում նաև շահեկան դարձնելով նահանգում հողեր ու տարածքներ ունենալու հանգամանքը:

---

<sup>90</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 205:

<sup>91</sup> Խանձեան Հ. Ս., Պատկերագրող Նոր Աշխարհագրութիւն, Բ. Մաս Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան, Կ Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1900, էջ 151:

<sup>92</sup> Էփրիկեան Հ. Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1902, էջ 264:

<sup>93</sup> Գալուստեան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 22:

<sup>94</sup> Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 6:

## 1.4. Տնտեսության զարգացման միտումներն ու կրթական հաստատությունները

Կիլիկիան, ինչպես միջին դարերում, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակահատվածում շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ուներ կարևոր ռազմավարական ու առևտրային նշանակություն: Կիլիկիայի ծովափնյա քաղաքները՝ որպես առևտրաշրջանառության կարևոր կենտրոններ, Փոքր Ասիան կապում էին Եվրոպայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետև՝ ԱՄՆ) և այլ երկրների հետ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում Կիլիկիայի դերն ու նշանակությունը արդեն բավականին մեծացել էր:

«Հորիզոն» թերթի 1910 թ. համարներից մեկում նշվում է, որ եթե Սուեզի ջրանցքը հեշտացրել էր հաղորդակցությունը դեպի Հնդկաստան և Հեռավոր արևելք, ապա երկաթուղին, որ անցնելու էր Կիլիկիայով, վերստեղծելու էր հին պատմական ցամաքային ճանապարհը Եվրոպայի և Ասիայի միջև. «Ասիայի սիրտը ճեղքող Բաղդադի երկաթուղու գիծը, որը գալիս է մի կողմից Կ. Պոլսից և մյուս կողմից Զմիռնայից, արդեն հասել է Գոնեա, Ադանայի վիլայեթի արևմտեան կողմը: Բացի այդ, եթե իրականացաւ թիւրքական պարլամենտի անցեալ սեսիայում վճռուած հայկական նահանգների երկաթուղիների հարցը, այդ ժամանակ Կիլիկիան է լինելու այն վայրը, որը պետք է կապէ Եւրոպայի հետ մի կողմից Հնդկաստանը և միւս կողմից հայկական նահանգները»<sup>95</sup>: Ապա եզրափակելով՝ հողվածագիր Ermino-ն հավելում էր, թե որքան Կիլիկիան՝ իր աշխարհագրական դիրքով, կարևոր է իբրև համաշխարհային շուկա. «նոյնքան և գուցէ ավելի կարևորութիւն ունի հայկական վայրերի վերաբերմամբ»<sup>96</sup>:

<sup>95</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 22, 1910, յունարի 30, էջ 3:

<sup>96</sup> Տե՛ս նույն տեղում:

20-րդ դարասկզբին նահանգի՝ Ադանա, Մերսին, Տարսոն, Միս, Հաճըն, Չորք-Մարգպան և այլ քաղաքներն ու գյուղաքաղաքները, ունենալով հնարավորինս կայուն զարգացող տնտեսություն, աստիճանաբար իրենց վրա էին կենտրոնացնում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների ուշադրությունը: Լինելով ժամանակի հարմարավետ նավահանգիստներից մեկը՝ Մերսինը Ադանա քաղաքի հետ կապված էր նաև երկաթուղով, ինչը հնարավորություն էր ստեղծում ապրանքներն առավել արագ ներկրելու ու արտահանելու նահանգի կենտրոնից դեպի Կ. Պոլիս, Զմյուռնիա, Միջերկրականի ավազանի տարբեր երկրներ ու ավելի հեռու վայրեր: Մերսինը նաև հյուպատոսների նստավայրն էր. այդ հանգամանքը ավելի դյուրին էր դարձնում օտարերկրացի գործարարների մուտքը տարածաշրջան, ինչպես նաև օգնում էր տեղական արտադրողին նոր ապառման շուկաներ գտնելու գործում:

1890 թ. Կիլիկիայից արտահանվել է մոտ 8.450.000 մանեթի (ռուբլի)<sup>97</sup> ապրանք, որից Մերսինի նավահանգստով դուրս է եկել 6.080.000 մանեթի ապրանք, իսկ մնացյալը արտահանվել է երկրորդական նավահանգիստների միջոցով<sup>98</sup>: Համաձայն այլ տվյալների՝ միայն 1890 թ. Ադանայի նահանգից արտահանվել է 21.150.000 ֆրանկի ապրանք: Նույն տարում ներմուծվել է 8.528.000 ֆրանկի ապրանք հետևյալ երկրներից՝ Անգլիա, Ամերիկա, Ավստրիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Հունաստան, Ռուսաստան և այլն: Ներմուծված ապրանքներն էին՝ ըմպելիքներ, սուրճ, համեմունք, բրինձ, շաքար, օճառ, ծխախոտ, պաստառներ և զգեստեղեն, մշակված կաշի, այծի մազ, գործիքներ, անագի, կապարի, պողպատի և պղնձի առարկաներ, նավթ, թուղթ, լուցկի, ապակեղեն, ինչպես նաև հաստոցներ ու գյուղատնտես-

---

<sup>97</sup> Կիլիկիայում օսմ. ոսկին հավասար է 124 դուրուշի կամ դահեկանի, որ 9 կոպեկ է ստացվում, ուրեմն ոսկին լինում է 11 ռուբլի 20 կոպեկ: Ղուրուշը 40 փարա է, փարան հավասար է ¼ կոպեկ: Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 77:

<sup>98</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 76:



սական մեքենաներ և այլն<sup>99</sup>: Ըստ 1907թ. «Բիւրակն» առևտրային թերթի՝ Ադանայի նահանգը միջին թվով արտահանում էր 30.000 տոննա ցորեն, 15 միլիոն օխա քնջուր, 50.000 հակ (200 կիլոգրամանոց) խամ բամբակ, 100-150.000 կգ չոր խոզակ, 30-40.000 արկղ նարինջ<sup>100</sup>:

Կիլիկիայի խճուղիներն էին Մերսին-Տարսոն-Ադանա խճուղին, ինչպես նաև՝ Ադանա-Սիս և Ադանա-Միսիս: Վերջինը Օսմանիե-Բահչե ճանապարհով տանում էր Մարաշ, սակայն դա անավարտ ճանապարհ էր: Տարսոնի և Ադանայի միջև Քյուլեքի կայարանից սկսվում էր նույնանուն խճուղին և անցնում Քյուլեք Բողազից ու Կիլիկիան կապում Կապադովկիայի հետ: Ադանայի մեծ խճուղին, անցնելով Ամանոսի և Ասորիքի մոտով, հասնում էր մինչև Հալեպի նահանգ: Առաջին երկաթուղին Կիլիկիայում Ադանա-Մերսին գիծն էր, որը բացվել է 1886-ի օգոստոսին, երկարությունը 66 հազար մետր էր: Առաջին աշխարհամարտի ընթացքում Տավրոսի և Ամանոսի ուղիների կառուցմամբ Բաղդադի գիծն ամբողջանում է<sup>101</sup>:

Հաղորդակցության ուղիների բացակայությունը տնտեսության զարգացումը արգելակող հիմնական պատճառներից էր: Երկաթուղու առկայության պարագայում ոչ միայն ավելի դյուրին էին դառնում արտաքին շփումները, այլև առավել արագ էր ընթանում ապրանքաշրջանառությունը: Միջերկրական ծովի ափին գտնվելը Ադանային այլ նահանգների նկատմամբ արդեն առավելություն էր տալիս՝ միաժամանակ նպաստելով նաև առաջինների թվում երկաթուղի ունենալու հնարավորությանը: 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրության տնտեսական նոր մարտահրավերների առջև Ադանայի նահանգը այս տեսանկյունից ևս շահեկան դիրքերում էր:

Ընդհանուր առաջընթացի համատեքստում զարգանում էր նաև գյուղատնտեսությունը, և նահանգի բնակչության մեծ մասը

---

<sup>99</sup> Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 264:

<sup>100</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 206:

<sup>101</sup> Գալուստեան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 23-24 :

զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Դաշտային մասում տարածված էր երկրագործությունը: Այգիները, բանջարանոցները և ցանքատարածությունները գրավում էին ընդարձակ հողամասեր, լեռնային մասերում հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ: Իսկ նահանգում անտառների խտությունը նպաստում էր ատաղձագործության զարգացմանը, փայտի արտահանությանը և այլն:

Անշուշտ, հարմար աշխարհագրական դիրքն ու հողի բերքատվությունն ուրույն նշանակություն են ունեցել նահանգի տնտեսության զարգացման գործում, սակայն պետք է նշել նաև տնտեսության տեղական ներկայացուցիչների ժամանակին համընթաց քայլելու ունակությունը: Ադանայի նահանգը թերևս առաջիններից էր, որ եվրոպական երկրներից ներկրեց արդյունաբերական և գյուղատնտեսական տեխնիկա: Ժամանակակից մեքենաների կիրառումը հեղաշրջում կատարեց արդյունաբերության ու հողի մշակման ասպարեզում և շատ արագ տվեց իր արդյունքները:

1900-ական թթ. սկսած Կիլիկիայում դանդաղորեն տարածվում էր երկրագործական մեքենաների գործածությունը: Այսպես, օրինակ, 1906 թ. նահանգում աշխատում էր 5-600 հնձող մեքենա<sup>102</sup>: 1907 թ. Ադանայի նահանգում հնձող մեքենաներն արդեն մեծ թիվ էին կազմում, հատկապես հիշատակվում են Ա. Ն. Ավետիսյանների "M. CORMICK" և Պոլ Պալատուրի մեքենաները<sup>103</sup>:

19-րդ դարի բամբակագործության համընդհանուր զարգացման շրջանակներում օսմանյան կառավարությունը երկրում բամբակի արտադրությունը խթանելու համար լուրջ քայլեր էր ձեռնարկում: 1862 թ. օրենք է հրապարակվում բամբակագործներին աշարից ազատելու մասին, 1863 թ. թույլատրվում է ներմուծել առանց մաքսի բամբակագտիչ մեքենաներ, իսկ 1866 թ. գյուղացիներին անվճար բաժանվում է ամերիկյան բամբակի

<sup>102</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 453:

<sup>103</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 21, 1907, մայիսի 19, էջ 876:

սերմ<sup>104</sup>: Բամբակագործությունը խթանող միջոցառումների շարքում 1863 թ. Առևտրական գործերի պաշտոնատան կողմից հատուկ հրահանգներ են պատրաստվում և տպագրվում 14.000 օրինակով<sup>105</sup>: Իմանալով բամբակի արտադրության կարևորությունն ու դրանում հայերի ներգրավվածությունը՝ հիշյալ հրահանգները թարգմանվում են նաև հայերեն ու հրատարակվում:

19-րդ դարի վերջին Ադանայի բամբակը արդեն մեծ ծավալներով արտահանվում էր Անգլիա և Ֆրանսիա<sup>106</sup>:

Համաձայն 1907 թ. Կ. Պոլսում հրատարակվող «Բիւրակն» թերթի տվյալների՝ Ադանայի նահանգի տարբեր քաղաքներում կային բամբակ գտող գործարաններ, մասնավորապես այս հարաբերակցությամբ՝ Ադանա՝ ութ, Տարսոն՝ հինգ, Մերսին՝ մեկ, որոնք ընդհանուր թվով ունեին 365 մեքենա<sup>107</sup>:

Մարսելի հրապարակում օսմանյան արտադրության բամբակի գների շարքում ներկայացված է նաև Ադանայի նահանգի Ադանա և Տարսոն քաղաքներում արտադրված բամբակի գինը, մասնավորապես՝ 70-71 ֆր. [100 կգ 4% զեղջ]<sup>108</sup>: 1907 թ. հոկտեմբեր ամսին Մարսելում Տարսոնի բամբակի 50 կգ արժեք 60-62 ֆր., իսկ միննույն հրապարակում Մերսինի այժի մորթին՝ միջինը 35-50 ֆր.<sup>109</sup>: «Բիւրակն» թերթի ներկայացրած տվյալներով Ադանայի նահանգում արտադրվում էր 35.000-50.000 հակ բամբակ, որը օգտագործվելու էր ոչ թե արտահանության, այլ տեղական սպառման համար<sup>110</sup>:

---

<sup>104</sup> Համբարյան Ա. Ս., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., Արմավիր, «Պարզև Ոսկանյան», 2003, էջ 80:

<sup>105</sup> «Կիլիկիա», Կ. Պոլիս, թիւ 9, 1863, մայիսի 1, էջ 11:

<sup>106</sup> Ծերենց, Կիլիկիա, «Փորձ», Տիխիս, N-XI, 1879, նոյեմբեր, էջ 11:

<sup>107</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 206:

<sup>108</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 24, 1907, յունիսի 9, էջ 965-966:

<sup>109</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 44, 1907, հոկտեմբերի 27, էջ 1604-1605:

<sup>110</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 9-10, 1907, յունվարի 27, էջ 238:

**Բամբակի արտադրությունը Կիլիկիայում (հակերով)՝ ըստ  
Կ. Պոլսում հրատարակված առևտրային ուղեցույցի<sup>111</sup>.**

1896	2 000		1912	115 000
1905	15 000		1913	120 000
1906	50 000		1914	135 000
1907	56 000		1915	15 000 ?
1908	64 000		1916	
1909	76 400		1917	
1910	45 800		1918	15 000
1911	80 000		1920	

Դաշտային Կիլիկիայում բամբակը միջին և չուննոր ընտանիքների հիմնական ապրուստն էր, բերքը հավաքելուց մինչև վերջնական տեսք ստանալը բազմաթիվ փուլեր էր անցնում, ինչին շղթայաբար մասնակցում էին տարբեր մարդիկ, ուստի կերակրվում էին հարյուրավոր ընտանիքներ: Այս առիթով Կ. Բ. Աշըգյանը գրում էր. «Գոգայեն բամպակ հանող ընտանիքներ իրենց աշխատանքով, տունին մամիկը եւ հարսը ամեն տարի մէյ-մէկ գոյգ ոսկի ապարանջան կ'աւելցնէին իրենց բազուկներուն»<sup>112</sup>: Ադանայի նահանգում բամբակագործությունը հասել էր լուրջ ծավալների: Այն գնալով մեծացնում էր իր արտադրման և սպառման շրջանակները՝ աստիճանաբար դառնալով նահանգի առևտրաշրջանառության հիմնական ապրանքատեսակը:

Հարկավոր է նշել, որ առաջընթացը նահանգում ընդհանուր էր և ներառում էր ժամանակի արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը: Նահանգում կային նաև երկաթյա իրեր, մեքենաներ արտադրելու հնարավորություն ունեցող գործարաններ, որոնք դեռևս 1907 թ. շոգեշարժ շարժիչներ արտադրելու կարողություն

<sup>111</sup> Remzi Ougouze, Cuide Commercial D'Adana, Stamboul, 1924, p. 20.

<sup>112</sup> Աշըգեան Կ. Բ., Ուզուն Աշըգեան գերդաստանի պատմությունը, Պէրյութ, տպ. Կ. Տոնիկեան, 1968, էջ 134:

ունեին<sup>113</sup>: Ինչպես նաև մանածի, կտավի և սառույցի գործարանները: Սառույցի երկու գործարանում, համաձայն «Բիւրակն» թերթի, օրական 6.000 կգ սառույց էր արտադրվում<sup>114</sup>:

Բացի այդ, նահանգում զարգացած էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտուրը: Արտահանության գլխավոր ապրանքներն էին ցորեն, գարի, վարսակ, կանեփ, խաշիսաշ, կորեկ, ոսպ, մեղրամուս, չամիչ, չոր մրգեր, աղացած միս, ճարպ, կենդանիներ, շինարարական փայտ, բուրդ, մետաքսի բոժոժ, անգամ գորգեր և այլն: Ապրանքատեսակները գլխավորապես արտահանվում էին Մերսինից ու մի քանի այլ երկրորդական նավահանգիստներից: Արտահանվող ապրանքների մեծ մասը ներմուծվում էր Եվրոպական և Ասիական տարբեր երկրներ, հասնում ընդհուպ մինչև ԱՄՆ:

Կիլիկիայի հայաբնակ շրջանները (Ադանայի նահանգ) 1890-ական թթ. կոտորածներից հիմնականում քիչ էին տուժել: 1894-1896 թթ. համիդյան ջարդերի՝ Կիլիկիայում լայն տարածում չստանալը, թերևս, պայմանավորված էր Զեյթունի ընդվզումով: Ֆրեզնոյի «Ասպարեզ» թերթը գրում էր. «...կառավարութիւնը ինչպէս ուրիշ նահանգներու մէջ՝ կրնար Կիլիկիոյ մէջ ևս խուժանին թն թիկունք ըլլալ և կոտորածը ընել տալ, սակայն Զեյթունը օր առաջ զսպելու ճիգը ուրիշ դաւեր նիւթելու միջոց չէին տուած իրեն բացի Ուրֆայի և ուրիշ մի քանի քաղաքներու մէջ եղածներէն»<sup>115</sup>, նշվում է նաև Կիլիկիայի հայության՝ Արևմտյան Հայաստանի նահանգների համեմատությամբ առավել սակավաթիվ կորուստներ ունենալու հանգամանքը:

Տեղանքի ընձեռած առանձնահատուկ հնարավորությունները և հայի՝ հին ու հմուտ վաճառական լինելու հանգամանքը նպաստել էին տնտեսության ոլորտում առաջիններից մեկը դառնալուն: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին վաճա-

---

<sup>113</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 206:

<sup>114</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>115</sup> Քարոդ Ե., Կիլիկիոյ կացութիւնը վերջին աղետէն առաջ, «Ասպարեզ», Ֆրեզնօ, թիւ 45, 1909, յունիսի 18, էջ 3:

ռականությունը և արհեստները գրեթե ամբողջապես կենտրոնացած էին հայերի ձեռքում: Արհեստավորների 85 տոկոսը հայ էր, մնացածը՝ հույն և թուրք<sup>116</sup>: Չնայած որ հաջողվում է առաջնային դիրքերի հասնել, այնուամենայնիվ մրցակցությունը մեծ էր ու դժվարին: Նահանգի խոշոր քաղաքներում իրենց գործունեությունն էին ծավալում ինչպես կայսրության տարբեր ազգերի ներկայացուցիչները, այնպես էլ օտարերկրյա առևտրային տներն ու ընկերությունները, որոնք, ինչպես նշում է պատմաբան Լ. Չորմիսյանը, առանձնաշնորհյալ դիրքեր ունեին՝ հավելելով, որ. «Այդ խիստ մրցումին մեջ հայ առևտրականներուն ձեռք ձգած յաջողութիւնը ստեղծած էր հայ անունին շուրջ առևտրական բացառիկ ձիրքերով եւ շնորհքով օժտուած ժողովուրդի մը համբաւը»<sup>117</sup>: Բացի օտարերկրյա ներդրողներին տրված արտոնություններից՝ թուրք տնտեսավարողին ևս տրվում էր առաջնահերթություն: Տնտեսական դաշտում ստեղծված անհավասար մրցակցային պայմաններից բացի՝ հայերի գործունեությունը խոչընդոտող այլ պատճառներ ևս կային. հրկիզումներ, կողոպուտներ, գրավումներ, գործարքների խափանումներ, արգելքներ ու կոտորած:

Համընդհանուր բռնության, անձի ու գույքի անապահովության պայմաններում հայերը աշխատում էին՝ շարունակաբար ընդլայնելով իրենց գործունեության շրջանակները. «Թուրքիոյ այլատարր ազգերու մէջ, հայեր շնորհիւ իրենց ընդունակութեան և ձեռներեցութեան կարողացած են հակառակ տիրող բռնութեանց և կաշկանդումներուն, վայելել բարեկեցիկ կեանք մը, որովհետեւ անոնք տիրապետած էին առևտրական շուկային»<sup>118</sup>:

Հայ առևտրականների և արհեստավորների ջանքերի շնորհիվ Ադանայի նահանգի որոշ քաղաքներ սկսեցին ակնառու

---

<sup>116</sup> Աճառեան Հ., Տաճկահայոց Հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, տպ. Ս. Յ. Աւագեանի, 1915, էջ 57:

<sup>117</sup> Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա. Հատոր, (1850-1878), Պէրուի, տպ. Սեւան, 1972, էջ 182:

<sup>118</sup> Տէր-Պետրոսեան Յ., Հայերու սատարը թուրք մշակոյթին եւ տնտեսութեան, Գահիրէ, 1976, էջ 170:

դեր խաղալ վաճառականական ասպարեզում: Ադանայի դաշտում սկսեցին ձևավորվել հարուստ ազարակներ՝ մի քանի տասնյակ հնձի, կալսելու, ծեծելու և այլ մեքենաներով: Ժամանակակցի նկարագրությամբ Կիլիկիայում գոյություն ունեցող ազարակներից շատերը կապիտալիստական երկրագործական ձեռնարկություններ էին, որտեղ աշխատում էին տասնյակ, երբեմն նաև՝ մի քանի հարյուր բանվոր<sup>119</sup>:

Այսպիսով, 19-րդ դարը շրջադարձային էր կայսրության բոլոր ժողովուրդների համար, իսկ տնտեսության զարգացման պարագայում՝ մեկնարկային: Արտաքին աշխարհի թելադրած նոր ձևաչափերին համապատասխանելու և ներքին ճգնաժամը հաղթահարելու անհրաժեշտությունը բարեփոխումների իրականացումը դարձրեց անխուսափելի: 19-րդ դարում ընդունված նոր օրենքների, ինչպես նաև կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումով լուրջ փոփոխությունների ենթարկվեց կայսրության տնտեսական դաշտը: Նման զարգացումների արդյունքում փոխվեց նաև ներքին տնտեսվարող սուբյեկտի կարգավիճակը՝ նրան արհեստավորից աստիճանաբար վերածելով արդյունաբերողի:

Հայերի տնտեսական զարգացման հետ մեկտեղ փոխվեց նաև վերաբերմունքը նրանց նկատմամբ: Կայսրությունում և նրա շուրջը ծավալվող նոր գործընթացներն իրենց ազդեցությունն ունեցան բոլոր ժողովուրդների վրա: Հայերին տնտեսապես թուլացնելու և տնտեսությունը կազմալուծելու խնդիրը աստիճանաբար ավելի ընդգծվեց՝ 1915 թ. առաջ դառնալով պետական հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մաս:

Արդեն 1909 թ. «Ասպարեզ» թերթը գրում էր. «Թիւրք քաղաքականութիւնը սկիզբի օրէն հայուն մտքէն անջատողական գաղափարը-երէ երբեք այդ տեսակ բան մը կայ-իսպառ ջնջելու միակ միջոցը հայուն տնտեսապէս փճացումը նկատած ըլլալով, Կիլիկիոյ օրը օրին զարգացումը իր ազգին փուշ մը ըլլալ

---

<sup>119</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 33, 1910, փետրւարի 12, էջ 2:

սկսած էր, այդ միակ միջոցը միշտ գործադրութեան մէջ պահելը անհրաժեշտ էր օրուան կառավարութեան համար, ինդիր չէ ըլլայ բռնապետական ըլլայ սահմանադրական կառավարութիւնը իշխողը»<sup>120</sup>:

Սակայն մինչ Ադանայի ջարդը և ապա Առաջին աշխարհամարտը, Կիլիկիան շարունակելու էր զարգանալ՝ ֆրանսիական մամուլի բնորոշմամբ վերածվելով «Հայկական Շվեյցարիա»-ի. «...վերին Կիլիկիոյ այն Հայկական գաւառները, որոնց Ձէյթուն բնական բերդաքաղաքն է, Հաճըն ու Մարաշ վաճառականական շահաստանները, եւ Սիս կրօնական մայրաքաղաքը»<sup>121</sup>: Իսկ հայկական մամուլը դիպուկ արձանագրելու էր. «...որքան Տաճկաստանը ուզում էր նմանիլ կազմակերպւած պետութեան, նույնքան մեծանում էր դաշտային Կիլիկիայի նշանակութիւնը»<sup>122</sup>: Մեծանում ու ընդլայնվում էր նաև Ադանայի նահանգի հայության տնտեսությունը՝ շարունակաբար բարելավելով վերջիններիս ֆինանսատնտեսական վիճակը:

\* \* \*

Ցանկացած առաջընթաց, ինչպէս և տնտեսականը, ենթադրում է կրթված հասարակություն: Դպրոցն ու կրթությունը մշտապէս գտնվել են հայերի ուշադրության կենտրոնում, ուստի ամենափոքր հնարավորության դեպքում բոլոր ջանքերն ուղղվել են կրթական հաստատություններ հիմնադրելու գործին: 19-րդ դարում հայ մտավորականների նոր սերնդի նախաձեռնությամբ ստեղծվեցին տարբեր միություններ և ընկերություններ, որոնց նպատակն էր Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում ու կայսրության մյուս հայաշատ բնակավայրերում ստեղծել

---

<sup>120</sup> Քարոդ Ե., Կիլիկիոյ կացութիւնը վերջին աղետէն առաջ, «Ասպարէզ», Ֆրէզնօ, թիւ 45, 1909, յունիսի 18, էջ 3:

<sup>121</sup> «Ազգ», Պոսթօն, թիւ 21-1655, 1921, յունվարի 21, էջ 2:

<sup>122</sup> Ermينو, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 33, 1910, փետրւարի 12, էջ 2:



կրթական տարբեր հաստատություններ: Հայկական ընկերություններն ու միությունները նպատակաուղղված կերպով արական դպրոցների կողքին բացում էին իգական դպրոցներ: Արդյունքում՝ 19-րդ դարի երկրորդ կեսից երկսեռ վարժարաններն արդեն իրողություն էին կայսրության ամենատարբեր քաղաքներում ու գյուղերում:

Բ. Եղիայանը, խոսելով հայության կյանքում մեծ դեր ունացած «Հայոց Միացեալ ընկերութեան»<sup>123</sup> (այսուհետև՝ «Միացեալ») մասին, գրում է, որ անկարելի է Ադանայի և «Մեծագոյն Կիլիկիոյ» կրթամշակութային պատմությունը ամբողջացնել առանց համակողմանի ներկայացնելու «Միացեալ»-ի գործունեությունը. «որ ընդհանրապէս ամբողջ Թրքահայաստանի ու մասնաւորապէս Կիլիկեան Հայաշխարհի վերածաղկումի շրջանին, մօտաւորապէս քառասուն տարիներ, 1880-1915-եղաւ Հայ ժողովորդի մեծագոյն կազմակերպեալ կրթական առաքելութիւնը, համագործակցութեամբը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Պոլսոյ Ազգ. Ժողովականութեան ու բարեսէր Հայութեան»<sup>124</sup>:

«Միացեալ»-ի գործունեության առաջին շրջանում 1880-1896 թթ. նրանում միաձուլված երեք կրթասիրական ընկերությունները նախապես ունեին միայն 24 վարժարան, որից «Կիլիկեան ընկերութիւնը»՝ 8, «Դպրոցասիրաց-Արեւելեանը»՝ 5 և «Արարատեան ընկերութիւնը»՝ 11<sup>125</sup>:

1887-1889 թթ. ժամանակահատվածում ընկերության հովանավորած դպրոցների թիվը հասնում էր 42-ի, որից 12-ը՝ Կիլիկիայում: Դպրոցներում սովորում էր 708 աշակերտ՝ 443 տղա և 265 աղջիկ: Դրանից բացի, նախապես համագործակցելով ազ-

---

<sup>123</sup> Բարեգործական, կրթական կազմակերպություն: Ստեղծվել է 1880 թ. հունիսի 1-ին Կ. Պոլսում: Ընկերության նպատակն էր հայկական նահանգներում, Կիլիկիայում և կայսրության այլ հայաբնակ վայրերում կրթություն տարածել: Պօղոսեան Ե., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Կ. Ս., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1957, էջ 36-37:

<sup>124</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 669:

<sup>125</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 676:

գային իշխանության հետ՝ «Միացեալ»-ը նպաստում էր երկու դպրոցների՝ արական և իգական, ինչպես նաև Տարսնում և Մերսինում մեկական՝ արական և իգական դպրոցների գործունեությանը<sup>126</sup>:

1909 թ. «Միացեալ»-ի դպրոցների թիվն արդեն 36 էր, որից 19-ը՝ Կիլիկիայում: 1910 թ. դպրոցների թիվը դառնում է 56, որից 27-ը՝ Կիլիկիայում: Աշակերտների ընդհանուր թիվը 5.100, որից դարձյալ մեծամասնությունը Կիլիկիայում՝ 2.500 հոգի, 60 պաշտոնյայով և 4.550 օսմ. ոսկի բյուջեով<sup>127</sup>: 1911-1912 կրթական շրջանում ընկերությունը ուներ 85 վարժարան՝ 72 արական և 13 իգական՝ ընդհանուր 6.813 աշակերտով<sup>128</sup>: 1912-1913 թթ. տարեշրջանում միայն Կիլիկիայում աշակերտության թիվը հասնում է 3.600-ի, պաշտոնյաներինը՝ 129-ի, իսկ բյուջեն դառնում է 4.525 օսմ. ոսկի: «Միացեալ»-ը օժանդակում էր նաև՝ Ադանայում, Հաճընում, Չորք-Մարգապանում, Մարաշում, Այնթափում և Հասանբեյլիում վեց որբանոցի՝ 700 աշակերտով<sup>129</sup>:

«Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան»<sup>130</sup> դպրոցները գործում էին Ադանայում, Հաճընում և Ջեյթունում: Ընկերությունը ստանձնում է նաև կիլիկյան բոլոր որբանոցների աղջիկների կրթության հոգսը: Դպրոցներ պետք է բացվեին նաև՝ Մերսինում, Չորք-Մարգապանում, Հասանբեյլիում, Այնթափում և Մարաշում<sup>131</sup>:

---

<sup>126</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 676-677:

<sup>127</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 679:

<sup>128</sup> Պօղոսեան Ե., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, էջ 39:

<sup>129</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 679:

<sup>130</sup> Հիմնադրվել է 1879 թ. Կ. Պոլսում Սիպիլի՝ Ջապել Խանջյանի կողմից: Ընկերությունը ձեռնարկել է արևմտահայ գավառների հայ կանանց ու աղջիկների կրթության գործը: Մանրամասն տե՛ս Ադանայյան Ս. Լ., Ազգանվեր Հայուհյաց ընկերությունը (Ստեղծման 100-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, N 4, Երևան, 1979, էջ 255-259:

<sup>131</sup> Թեղդիկ Ա., Ամիս մը՛ի Կիլիկիա, Կ. Պօլիս, տպ. Վ. եւ Ն. Տեր Ներսեսեան, 1910, էջ 75:

1890 թ. Ադանայի նահանգի կրթական հաստատությունները<sup>132</sup>.

Ա.	Մահմեդական դպրոցներ	դպրոց	աշակերտ
1	«Մեքիյան» տարրական, նահիյեների համար	45	1430
2	Կրոնական «Մետրեւէ»ներ, Սօֆթաներ և Մոլլաներ պատրաստելու համար	23	280
3	«Ըիւշտիէ», Երկրորդի.	1	60
4	«Իսլահիէ»	1	30
Բ.	Քրիստոնեական դպրոցներ	դպրոց	աշակերտ
1.	<b><u>Ադանա</u></b> Ա. Հայ դպրոցներ -ազգային -մասնավոր Բ. Հույն Գ. Կաթողիկ ժեզուիտ Դ. Հայ բողոքական		
		2	200
		2	60
		2	80
		1	200
		1	150
2.	<b><u>Տարսոն</u></b> Ա. Հայ Բ. Հույն Գ. Մարոնիտ		
		2	180
		2	160
		1	60
3	<b><u>Մերսին</u></b> Ա. Հայ Բ. Հույն Գ. Հայ բողոքական Դ. Մարոնիտ		
		2	60
		2	60
		1	100
		1	63
4	<b><u>Սիս</u></b> Ա. Հայ		
		3	500
5	<b><u>Հաճրն</u></b> Ա. Հայ		
		2	200

Եթե 1901-1902 թթ. Կիլիկիայում գործում էր 98 դպրոց՝ 10.844 աշակերտով, ապա 1913-1914 թթ. դպրոցների թիվը 176-ն

<sup>132</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 653-654:

էր՝ 35.000 աշակերտով<sup>133</sup>: 1908 թ. միայն Ադանայի Հայոց թեմի<sup>134</sup> քաղաքներում և գյուղերում գործում էր 38 դպրոց<sup>135</sup>:

Քանի որ Ադանայի նահանգը տնտեսության բնագավառում առավել զարգացած նահանգներից մեկն էր, ժամանակ առ ժամանակ ձեռնարկվում էին տնտեսական և երկրագործական մասնագիտական ուղղվածություն ունեցող վարժարանների հիմնադրման աշխատանքներ ևս: Սակայն այդ ձեռնարկումները տարբեր պատճառներով անհաջողության էին մատնվում: Ձեռնարկումներից մեկի մասին տեղեկանում ենք Ս. Շահազիզի նամակից՝ գրված Սահակ Բ կաթողիկոսին 1903 թ.<sup>136</sup>: Հարկավոր է նշել հատկապես այն հանգամանքը, որ առաջադեմ մտավորականը, խոսելով երկրագործական ուսումնարան հիմնադրելու պարագաների մասին, առաջնահերթ էր համարում կշռադատել քաղաքական ներկա և ապագա հանգամանքները ևս: Գյուղատնտեսական վարժարան հիմնադրելու հաջորդ փորձը թերևս Ադանայի Հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի<sup>137</sup> հայտնի նախաձեռնությունն էր, որի շինության գումարի մի մասը ձեռք բերելու համար առաջնորդը Ադանայի ջարդի նախօրեին մեկնել էր Եգիպտոս: Այս երկրորդ փորձը ևս խափանվեց 1909 թ. ջարդի պատճառով: 1909 թ. փետրվարի 17-ին Մուշեղ եպիսկոպոսը գրում էր իր՝ Եգիպտոս մեկնելու անհրաժեշտության մասին, որտեղ տեղի էր ունենալու հանգանակություն գյուղատնտեսական գիշերօթիկ վարժարան հիմնադրելու համար՝

---

<sup>133</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 83:

<sup>134</sup> Ադանայի Հայոց թեմն ընդգրկում էր Ադանայի, Մերսինի, Իջևի, Ջերբել-Բերբեթի գավառները:

<sup>135</sup> Մուշեղ եպիսկոպոս, Հովիհի Խրատները, Կ. Պոլիս, Տպագրութիւն Յ. Սատթեսեան, 1908, էջ 172-175:

<sup>136</sup> Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԵ, Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրո Բէհրուդեան, Երևան, 2007, էջ 409:

<sup>137</sup> 1905-1909 թթ. Ադանայի Հայոց թեմի առաջնորդ, 1895 թ. ձեռնադրվել է վարդապետ, 1906 թ. եպիսկոպոս:

«աղքատ տղայոց կրթութեան»<sup>138</sup>:

1909 թ. ջարդից առաջ խափանված ծրագրերից էր կրկին Մուշեղ եպիսկոպոսի՝ Ադանայում տպարան հիմնադրելու փորձը, ինչպես նաև Հ. Թերզյանի կողմից առաջարկված «Տավրոս» և Պ. Եղիայանի՝ «Կիլիկիա» անուններով թերթեր հրատարակելու համար արտոնություններ չստանալը<sup>139</sup>:

Բարերար Մատթևոս Խերյանը Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսին 4.000 օսմ. հնչուն ոսկի կանխավճար է հանձնում՝ Կիլիկիայում գյուղատնտեսական վարժարան բացելու համար<sup>140</sup>, սակայն Առաջին համաշխարհային պատերազմը խափանում է այդ ծրագիրը ևս:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգում հայերի տնտեսական առաջընթացը ուշագրավ էր: Տնտեսության տարբեր ոլորտներում հայերի դերը, նրանց ձեռքբերումներն ու ներդրումներն իրենց ազդեցությունն են ունենում տարածաշրջանում նորովի ձևավորվող սոցիալ-տնտեսական դաշտի վրա:

Հայկական ունեցվածքի աճը չէր կարող վրիպել երկրի դեկավար շրջանակների ուշադրությունից՝ լինել այն սուլթանական թե երիտթուրքական, և չէր կարող որոշիչ գործոն չդառնալ հետագա զարգացումներում: Կայսրության տնտեսությունը միատարր դարձնելու և թուրքացնելու գաղափարը դարձավ պետության հետագա գոյության անհրաժեշտ պայմաններից մեկը, ուստի հայկական ունեցվածքի յուրացումը, այլ կերպ՝ կողոպտումը, անխուսափելի էր, որն էլ Կիլիկիայի դեպքում հաջողությամբ իրականացվեց 1909 թ. ջարդի (փորձարկման տարբերակով), այնուհետև Հայոց ցեղասպանության ընթացքում:

---

<sup>138</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3109/99, փետրվարի 17, թ. 400:

<sup>139</sup> Թերզեան Յ., Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, տպ. Զարեհ Ն. Պերպերեան, 1909, էջ 37:

<sup>140</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 679:

## ԳԼՈՒԽ II

# ՀԱՅԵՐՆ ԱՂԱՆԱՅԻ ՆԱՅԱՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

### 2.1. Աղանայի գավառ<sup>141</sup>

#### Աղանա

Աղանան նահանգի կենտրոնական քաղաքն էր, ինչպես նաև մշակութային և տնտեսական կենտրոնը: Աղանան նահանգապետի նստավայրն էր, քաղաքում էին գտնվում վարչական կառույցները: Համաձայն Մ. Օրմանյանի՝ Աղանան արքեպիսկոպոսական վիճակ էր: Ներառում էր Աղանա, Մերսին և Իչել գավառները<sup>142</sup>: Մուշեղ Եպիսկոպոսը, որպես Աղանայի առաջնորդական վիճակ, վերոհիշյալ երեքին (Աղանա, Մերսին և Իչել) հավելում է նաև Ջեբել-Բերեքթեթի գավառը<sup>143</sup>:

Աղանա քաղաքում 1890-ական թթ. հայերի ընդհանուր թիվը 12.575 էր<sup>144</sup>: 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո Աղանան ուներ 40.000 բնակիչ, որոնց մեկ երկրորդը կամ նույնիսկ կեսը հայեր էին<sup>145</sup>: Չնայած 1909 թ. կոտորածին՝ Առաջին աշխարհամարտի նախօրեին Աղանա քաղաքում դեռևս ապրում

---

<sup>141</sup> Քանի որ վարչական բաժանումներ իրականացվել են ոչ մեկ անգամ, որի հետևանքով նահանգի գավառակներն ու դրանցում ներգրավված քաղաքներն ու գյուղերը հաճախ մեկ գավառից մյուսին են անցել, ուստի անհամաձայնություններից խուսափելու համար աշխատության այս գրվածք պայմանակնորեն կառուցել ենք ըստ Հ. Առաքելյանի («Ջեթոն: Տեղագրական, ազգագրական և վարչական տեսութիւն, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896»), գրքում ներկայացված վարչական բաժանումների:

<sup>142</sup> Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. և Ն. Տեր-Ներեսեան, 1911, էջ 263-264:

<sup>143</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Հովիվի Խրատները, էջ 176:

<sup>144</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 103:

<sup>145</sup> Մուրաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, թարգմ.՝ Ա. Շահումյան, գիտ. խմբ. Ա. Բոզոյան, Երևան, «Նաիրի», 2001, էջ 8:

եր 26.430 հայ: Հայերի մեծ մասը կենտրոնացած էր Հրդրբ Իյաս թաղամասում գտնվող Ս. Աստվածածին և քաղաքի կենտրոնում գտնվող Ս. Ստեփանոս եկեղեցիների շրջակայքում<sup>146</sup>:

Ադանայում հայ առաքելական համայնքը առավել բազմամարդ էր, ուներ երկու եկեղեցի՝ Ս. Աստվածածին և Ս. Ստեփանոս, կաթոլիկ համայնքը ուներ 170 ընտանիք և մեկ եկեղեցի՝ Անարատ Հղիության Ս. Կույսի<sup>147</sup>:

19-րդ դարի վերջին Ադանայի տները հիմնականում երկհարկանի էին, նշանավոր էր կառավարական պալատը՝ գետի աջ ափին, շուկան և մի քանի այլ վարչական շենքեր: Հասարակական շենքերից էին՝ մի քանի բաղնիք, մեկ հոգեբուժարան, 29 խան, երկու հյուրանոց, մեկ թատրոն, քնջութի ձիթհաններ, մահուդի մեծ գործարան (գինվորական զգեստներ արտադրելու համար), թաղիքի գործարաններ և ներկարաններ, բամբակի յոթ գործարան՝ բամբակը մաքրելու համար հինգ շոգեջարժ մեքենաներով, 55 ջրաղաց, կղմինդրի եվրոպական երկու գործարան, օդի թորելու 10 գործարան, մեկ կաշվի, հինգ գարեջրի և մեկ կերպասի գործարան<sup>148</sup>: 1907 թ. քաղաքում արդեն գործում էր բամբակի ութ գործարան<sup>149</sup>:

Ադանայի լայնածավալ դաշտերում 150 կմ երկարության և 40 կմ լայնության միջին տարածության վրա 58-60 մեծ կալի մեքենաները օրը 850-900 տոննա ապրանք էին արտադրում: Մեքենաների կիրառությունը հանգեցնում է բարձր բերքատվության: Ադանացի մեկ երկրագործը միջինը 500 արտավար, իսկ առավելագույնը՝ 40.000 արտավար մշակելի հող ուներ<sup>150</sup>:

Առևտուրն ու արհեստները կենտրոնացված էին հիմնականում քրիստոնյաների ձեռքում, իսկ վաճառականության ասպարեզում հայերը գերիշխող դիրք ունեին: Տարբեր ապրանք-

---

<sup>146</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 271:

<sup>147</sup> Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 263:

<sup>148</sup> Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 263: Տե՛ս նաև Ատանա, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 147, 1909, 10-23 ապրիլ, էջ 1:

<sup>149</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 36, 1907, սեպտեմբերի 1, էջ 206:

<sup>150</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 453:

ների արտահանությունը ևս շատ դեպքերում հայ վաճառականների ձեռքում էր: Գյուղատնտեսական ապրանքներից արտահանվում էր բամբակ, ցորեն, գարի, քնջութ, չոր մրգեր և այլն, կենդանական ծագում ունեցող ապրանքներից՝ կաշի, մորթի, բուրդ, ինչպես նաև տեղական կաշվից ու մորթուց պատրաստված հագուստի տարբեր տեսակներ և այլն:

Ադանայում բերքահավաքը տեղի էր ունենում տարին մի քանի անգամ, սկզբում հավաքում էին միրգ, բանջարեղեն և այլ բարիքներ, այնուհետև սկսվում էր բամբակ հավաքելու գործընթացը, որի մեջ ներգրավված էր Ադանայի բնակչության, ինչպես նաև Ադանայում սեզոնային աշխատանքներ կատարող մարդկանց մեծ մասը:

«Բիրակն» թերթի 1907 թ. նոյեմբերի 10-ի համարից տեղեկանում ենք, որ Ադանայի բամբակի օխան արժեք 6 դուրուշ, իսկ Հալեպինը՝ 5½ դուրուշ<sup>151</sup>: 1913 թ. Ադանայի բամբակի գինը ենթարկվում է տատանումների՝ մինչ տարեվերջ ունենալով նվազման միտում, մասնավորապես 4 օխան մեկ ամսվա ընթացքում 39½ դահեկանից դառնում է 33½ դահեկան<sup>152</sup>:

Հ. Ս. Խանջյանը, ներկայացնելով կայսրության տարբեր շրջանների բամբակի արտադրությունը, հատկապես առանձնացնում էր Ադանայի բամբակը. «Ասիական Թուրքիոյ բամբակ արտադրող երկիրներն են Խիտավէնտիկեարի, Այտընի, Ատանայի, Քօնեայի, Հալեպի, Սուրիոյ, Տիարպէքիրի, Մոսուլի եւ Պաղտատի կուսակալութիւնները եւ Միջագետքը: Եւ սակայն Ատանայի բամբակը միւսներէն աւելի յարգ եւ համբաւ ունի»<sup>153</sup>:

Ադանայի գավառն առաջնային դիրքերում էր ոչ միայն բամբակի արտադրության բնագավառում, այլև գյուղատնտեսական մյուս ապրանքների ոլորտում. Ադանան կարողանում էր մրցել կայսրության տարբեր գավառների հետ: Մասնավոր-

---

<sup>151</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 46, 1907, նոյեմբերի 10, էջ 1674:

<sup>152</sup> Կեանքը Ատանայի մէջ, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 1657, 1913, 11-24 դեկտեմբեր, էջ 2:

<sup>153</sup> Խանձեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 138:



րապես «Բիրակն»-ում հրապարակված ցորենի գների աղյուսակում տեսնում ենք ինչպես Ադանայում, այնպես էլ Տարսոն և Մերսին քաղաքներում լուրջ կշիռ ունեցող արդյունահանողների անունները: Ադանայի, Մերսինի և Տարսոնի գլխավոր գործարանները գրեթե հաջողությամբ մրցում էին Զմյուռնիայի հրապարակի հետ՝ գները նույն համեմատության վրա պահելու համար (ցորենի մեկ օխան արժեք 48-50 փարա):

**Տեղական գործարանների սպառման տարեկան վիճակացույց<sup>154</sup>.**

Ադանա	Միմեոն օղլու-150.000 Պոսնալը գադե-120.000 Թըրբանի-110.000 Խուպեսերյան-80.000
Տարսոն	Մարինի-100.000 Շավարձյան-80.000 Գանարօղլու-80.000
Մերսին	Լիքիարտոբուլու-100.000 Գրիվ 820.000 կամ 22.000.000 օխա

Հարկ ենք համարում նշել, որ այս հաշվարկից դուրս են մնացել տեղի ջաղացների և մասնավոր հացագործների տարեկան սպառման խոշոր գումարները:

Պատկերը առավել ամբողջական ներկայացնելու համար կարևոր է նաև Ադանայում «Բիրակն»-ի սեփական թղթակցի 1908 թ. հունիսի 11-ի հրապարակումը.

«Այս տարուան բերքը նախկիններեն շատ առատ է, ցորենի սդութինն ալ, առատ բերքին հետ միանալով, հագուադեպ բախտի մը արժանացուց մեր երկրագործները: Բերքին առատութեան նայելով, ցորենի գիներուն վրայ անկում մը կ'սպասուէր ամէն կողմէ, սակայն ցորենի սակը միեւնոյն աստիճանի վրայ մնաց գրեթէ: Երկու շաբաթ առաջ 35-45 դրշ. (ոսկին 124 և մեծիտիյէն 23 դրշ. էն) կիւլլէկ (կամ չորս շինիկ) էն 25-35ի իջաւ: Անցեալ շաբաթ 30-40ի բարձրացաւ: Երեկուան պագարին 27-37ի իջաւ, իսկ այսօրուան գիներն են.

<sup>154</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 27, 1907, յունիսի 30, էջ 1070:

Ցորեն-կիվկերը 30-35 դրշ., գարին օխան 30 փր.: Հակառակ Ատանայի բերքին առատութեան, Հաճընի և շրջականերուն արտերը շատ յուսալից չեն, անձրեւներու պակասութեան պատճառով»<sup>155</sup>:

1900-ականների սկզբից մինչև 1909 թ. կոտորածը Ադանայի հայերի տնտեսության բնագավառում գրանցած հաջողությունները զգալի էին ու ակնհայտ: Կարելի է ասել՝ սկսվել էր դինամիկ զարգացող մի գործընթաց, որն աստիճանաբար ավելի ընդգրկուն էր դառնում:

1905 թ. ապրիլի 1-ի Ադանայի Տնտեսական խորհրդի հերթական նիստում քննարկվում էր Ազգային տուրքի բաշխման ծրագիրը՝ համաձայն հատուկ պատրաստված տոմարի: Ադանայի հայերը, ինչպես նաև քաղաքում հաստատված կեսարացիները, հաճընցիները, թալասցիները, էվերեկցիները և այլոք՝ ընդհանուր 2.990 հոգի, պարտավորվում էին վճարել տարեկան տուրք 5-100 դուրուշի չափով՝ ըստ իրենց նյութական կացության<sup>156</sup>: Ենթադրվում է, որ այս գումարները ևս ուղղվելու էին ազգային սոցիալ-տնտեսական բազմաթիվ հարցերի կարգավորման գործին:

Ադանայի հայերի տնտեսական բարեկեցության մասին էր վկայում նաև Ս. Ստեփանոս եկեղեցու խաչկալի ոսկեգոծման ծրագիրը: 1905 թ. ապրիլին 28-ի Ադանայի Քաղաքական ժողովի նիստում արդեն քննարկվում էին ծախսերն ու հաշիվները<sup>157</sup>: 1909 թ. ջարդից առաջ կառուցվում է նաև Ս. Աստվածածին եկեղեցու զանգակատունը<sup>158</sup>:

1905 թ. նոյեմբերին Ադանայի առաջնորդ Մուշեղ ծ. վարդապետի հրամանի համաձայն՝ Ադանայի “Western” ապահո-

---

<sup>155</sup> Առեստուրի կեանքը գաւառներու մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 26, 1908, հունիսի 21, էջ 829:

<sup>156</sup> Մատենադարան, Ադանայի Տնտեսական խորհրդի անմշակ արխիվ, 5 մարտ 1905 թ.-21 մայիս 1914 թ., նիստ Ժ, 1 ապրիլ 1905:

<sup>157</sup> Տե՛ս Մատենադարան, Ատենագրություն Ադանայի Քաղաքական ժողովի, 2 մարտ 1905 թ.-10 ապրիլ 1915 թ., Նիստ ԺԶ, 28 ապրիլ 1905 թ., թ. 4:

<sup>158</sup> Աշրգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 9:

վագրական ընկերության ներկայացուցիչներ Ռ. և Մ. Գազանձյան եղբայրները դիմել են ընկերության Կ. Պուլսի ընդհանուր գործակալությանը, որն արտոնել է նրանց քաղաքի ազգային կալվածքների ապահովագրական վճարների վրա 20 տոկոս զեղչ անել: Գազանձյան եղբայրերը նոյեմբերի 16-ին սույն տեղեկությունը հաղորդել են առաջնորդին: Վերջինս հանձնարարել է Ադանայի Տնտեսական խորհրդին՝ սկսել ապահովագրական գործընթացը առավել կարևոր և անմիջապես ապահովագրության կարիք ունեցող կալվածքներից, ինչպես նաև ապահովագրական առավել շահեկան պայմաններ ունենալու համար բանակցություններ են սկսել Ադանայի “Union” ապահովագրական ընկերության ներկայացուցիչների հետ<sup>159</sup>:

Ադանայի հին հայկական գերեզմանոցի չօգտագործվող տարածքում տարիներ ի վեր գոյություն է ունեցել խանութներ և շուկա կառուցելու ծրագիր, սակայն տարբեր պատճառներով այն չի իրականացվել: Վերոհիշյալ խնդրի կապակցությամբ 1905 թ. նոյեմբերի 16/24-ին Գավառական, Կրոնական և Քաղաքական ժողովների, ինչպես նաև Տնտեսական ու Թաղային խորհուրդների մասնակցությամբ գումարվել է Խառը ժողով<sup>160</sup>: Ժողովը վերոհիշյալ ծրագիրն իրականացնելու հավանություն է տվել և որոշել է կառուցվելիք շուկան կոչել «Պահրի փաշա Չարշասը», ի պատիվ Ադանայի նահանգապետ Բահրի փաշայի<sup>161</sup>: Անշուշտ, տվյալ անվանակոչությունը օգնելու էր կառուցման արտոնագիրը արագորեն ստանալու գործընթացին:

Արդյունքում կառուցվում է դպրոց, պանդոկ, սակարան, ինչպես նաև մեծ թվով խանութներ, որոնցից առաջնորդարանը

---

<sup>159</sup> Մատենադարան, Ադանայի Տնտեսական խորհրդի անմշակ արխիվ, 5 մարտ 1905 թ.-21 մայիս 1914 թ., նիստ ԻԱ, 18 նոյեմբեր, 1905:

<sup>160</sup> Մատենադարան, Ադանայի Քաղաքական ժողովի անմշակ արխիվ, Ատենագրություն Ադանայի Քաղաքական ժողովի, 2 մարտ 1905 թ.-10 ապրիլ 1915 թ., 16/24 նոյեմբերի, թ. 9-10:

<sup>161</sup> Տե՛ս նույն տեղում:

5.000 հնչուն ոսկի եկամուտ էր ստանում<sup>162</sup>: Միևնույն ժամանակ կառուցվելիք վարժարանի՝ «Կիլիկեան գիշերօթիկ վարժարան» հսկա շենքը ավարտին հասցնելու համար կազմակերպվում է հանգանակություն: Հանգանակված գումարներով վճարվում է ինչպես տվյալ վարժարանի շինության ծախսերը, այլև ձեռնարկվում Արգարյան վարժարանի հին շենքի վերակառուցումը<sup>163</sup>: Վարժարանը վերակառուցումից հետո վերանվանվում է Մուշեղյան:

Հանգանակության գումարը կազմում է երկու անգամ՝ 2.000-ական օսմ. ոսկի: Մուշեղյան վարժարանն իր աշխատանքներն է սկսում 1905-1906 դպրոցական տարեշրջանի սկզբին<sup>164</sup>:

1906 թ. մարտի 10/23 Տնտեսական խորհրդի հերթական նիստի աղագրությունից տեղեկանում ենք, որ Մուշեղյան վարժարանի շինության հանձնաժողովին պարտքով է տրվել 4.827 դուրուշ<sup>165</sup>: Իսկ ավելի ուշ՝ արդեն 1908 թ. ապրիլի 17-ի Տնտեսական խորհրդի ԺԱ նիստում, խորհուրդը, քննելով Մուշեղյան վարժարանի շինության հաշիվները, արձանագրել է, որ ծախսվել է 97.064<sup>3</sup>/<sub>4</sub> դուրուշ: Այնուհետև քննության են ենթարկվել նոր շուկայի շինության հանձնախմբի հաշիվները, ըստ որի՝ թե՛ առաջին շինության արժեքը և թե՛ ծախսված գումարը 394.846<sup>3</sup>/<sub>4</sub> դուրուշ էր<sup>166</sup>:

1909 թ. հրկիզումներից հետո կառուցված Արգարյան-Մուշեղյան վարժարանի նոր շենքը ավելի ընդարձակ էր: Գետնահարկում՝ դեպի շուկայի փողոց, ուներ 32 խանութ<sup>167</sup>:

1901-1915 թթ. ընթացքում Արգարյան-Մուշեղյան վարժարանի միայն շենքամասերի գրաված հողային տարածությունը

---

<sup>162</sup> Աշըգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 168-169:

<sup>163</sup> Թերգեան Յ., Ատանայի կեանքը, էջ 22-23:

<sup>164</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 644:

<sup>165</sup> Մատենադարան, Ադանայի Տնտեսական խորհրդի անմշակ արխիվ, 5 մարտ 1905 թ.-21 մայիս 1914 թ., նիստ ԻՁ, 10/23 մարտ 1906:

<sup>166</sup> Տե՛ս նույն տեղում, նիստ ԺԱ, 17 ապրիլ 1908:

<sup>167</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 648:

12.835 քով. կանգուն էր, շուրջ 7.250 քով. մ՝ բացի ընդարձակ բակից<sup>168</sup>:

1909 թ. ջարդի օրերին, ինչպես արդեն նշվեց, Մուշեղյան վարժարանն ու հարակից տարածքները ամբողջությամբ հրկիզվեցին: Ավելի ուշ՝ 1912 թ. Ադանայի Տնտեսական և Թաղային խորհուրդներում քննարկվում էր Ազգային իշխանության և «Ատանա Սինէմա թէաթրո գոմբ» ընկերության լիազոր ներկայացուցիչ պրն. Բ. Հաթոնի միջև կնքվելիք պայմանագիրը, ըստ որի հրդեհված Մուշեղյան վարժարանի և նրան կից ութ խանութների ազգապատկան տարածքները տրամադրվելու էին «Ատանա Սինէմա թէաթրո գոմբ» ընկերությանը՝ 15 տարի ժամանակով (1.500 ոսկի վարձակալության գումարը) և 3.000 լիրա արժողությամբ կինոթատրոնի շենք կառուցելու պայմանով<sup>169</sup>:

Ադանայում անհատ վաճառականների կամ գործարարների կողքին ձևավորվում էին ընկերություններ, ձեռնարկություններ: Երբեմն հայ վաճառականներն արժանանում էին պետական բարձր պարգևների և կոչումների<sup>170</sup>: Ավելի հաստատուն քայլերով առաջ էր գալիս խոշոր արդյունաբերողների մի խումբ, որոնք քաղաքում արդեն հիմնադրել էին գործարաններ ու արհեստանոցներ, որոնց գրեթե ճնշող մեծամասնությունը զինված էր արդի տեխնիկայով կամ էլ հավակնում էր դրան:

Ադանայի՝ բամբակ արտադրող գործարանատերերն էին «Աշըգյան-Պագայյան»-ը, Անապթաս Քարա Յուսուֆ Օղլուն, «Փամբուզյան-Տոնիկյան»-ը, Շատրիկյանը, Իբրահիմ Սատրզը, դոկ. Պետրոսը, Նազարեթ Նաջարյանը, Սոֆոզլիտիսը և Գյուլբենկյանը<sup>171</sup>:

Քաղաքի արդյունաբերության մեջ իր ուրույն տեղն ունեն

---

<sup>168</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 642-643:

<sup>169</sup> Մատենադարան, Ադանայի Տնտեսական խորհրդի անմշակ արխիվ, 5 մարտ 1905 թ.-21 մայիս 1914 թ., նիստ Գ, 14 մայիս 1912:

<sup>170</sup> Այս օրուման պաշտոնականք, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, թիւ 1,400, 1901, մայիսի 9-22, էջ 2:

<sup>171</sup> Աշըգեան Կ. Բ, նշվ. աշխ., էջ 133-134:

Գալուստ և Պատրիկ Գյուլբենկյանների բամբակի գործարանը, տնօրինությամբ Լուրճիկ Խուպեսերյանի ու Գալուստ Գյուլբենկյանի, ով նշանավոր գործարարի անվանակիցն էր<sup>172</sup>: Հայտնի գործարանների թվին էր պատկանում Պապիկյան-Չաքմաքճյանի և Բարիքյանի գուլպայի գործարանը:

1907 թ. «Բիրակն» թերթը հաղորդում է, «Պապիկյան-Չաքմաքճյան և Բարիքյան» գործարանում տեղի ունեցած հրդեհի մասին: Հիշյալ գործարանը արտադրում էր տեղական լավագույն գուլպաները՝ օրական 800-1000 գույգ: Արտադրանքը տեղական սպառումից գատ արտահանվում էր Զմյուռնիա, Դեղե Աղաչ, Բեյրութ, Կեսարիա, Տարսոն, Մերսին, Հաճըն և այլ ներքին գավառներ ու քաղաքներ: Ապրանքատեսակը հայտնի էր «Սիհուն» վաճառանիշի ներքո: Գործարանը ապահովագրված էր, և ապահովագրության գումարը կազմում էր 2.400 օսմ. ոսկի: Հրդեհից հետո պարզ է դառնում, որ կորստի չափը ավելի մեծ է, քան ապահովագրության գումարը: Թերևս տվյալ գումարը կարողանում էր փակել միայն գործարանի արտադրական մեքենաների վնասը: Բացի տեխնիկայից՝ հրդեհի պահին գործարանում եղել է 30.000 գույգ գուլպա, 2.000 կապ դերձան ու ներկերի արժեքավոր տեսակներ: Պետք է նշել նաև, որ նման գործարան կառուցելու համար նվազագույնը հարկավոր էր 1-2 տարի ժամանակ<sup>173</sup>: «Պապիկյան-Չաքմաքճյան և Բարիքյան» գործարանի ու ապահովագրական գումարի փոխհատուցման հետ կապված հատկանշական է «Բիրակն»-ի տվյալ տեղեկությունը ևս. «Ստոյգ աղբիւրէ կ'իմանամ որ ապահովագրական ընկերութիւնները, քննելով Ատանայի մէջ այրած Սիհուն գուլպայի գործարանատէր Պապիկեան, Չաքմաքճեան և Բարիքեան Տեարց տոմարները, ապահովագրուած գումարէն շատ աւելի գտած են յիշեալ վաճառականներուն կրած վնասը և հետեւաբար հատուցում պիտի ընեն անյապաղ»<sup>174</sup>:

<sup>172</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 298:

<sup>173</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 9-10, 1907, յունվարի 27, էջ 237:

<sup>174</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 17-18, 1907, փետրուարի 24, էջ 423:

Աղանայում գործում էր այլուրի չորս գործարան՝ գլանով և ինքնագործ մեքենաներով, որոնցից մեկն «Աշրգյան-Պագալյան» գործարանն էր<sup>175</sup>, որը նույնպես զինված էր ժամանակի առաջակարգ տեխնիկայով:

«Աշրգյան-Պագալյան» այլուրի գործարանը գտնվում էր Աշրգյան կավվածքում: Այն հիմնադրել էին Աշրգյան եղբայրները Սարգիս Պագալյանի հետ միասին<sup>176</sup>: Քաղաքի չորս սառույցի գործարաններից (այլուրի գործարաններին կից) երկուսը ևս պատկանում էին հայերին՝ հանձինս «Աշրգյան-Պագալյան»-ի և «Փամբուզյան-Տոնիկյան»-ի գործարանների<sup>177</sup>:

Հ. Թերզյանը նշում էր, որ Աշրգյան եղբայրների գործարանից բացի, մյուս հայկական գործարանները ամբողջությամբ հրդեհվում են 1909 թ. ջարդի օրերին, վերոհիշյալ գործարանը ազատվում է հրկիզումից միայն գորանոցին մոտ լինելու պատճառով<sup>178</sup>: Ջարդի ժամանակ կողոպտվում է «Աշրգյան-Պագալյան» մեծաքանակ նպարեղենի խանութը: Հափշտակվում է «Աշրգյան-Գալպճյան» ընկերության ողջ գույքը, տներն ու խանութները, այրվում են երկու ագարակները:

Տիգրան Ուզուն Աշրգյանը՝ Կարապետ Բ. Ուզուն Աշրգյանի հետ միասին, Մերսինում բացում է «Աշրգյան-Պագալյան» գործարանի գրասենյակը: Այնուհետև Կարապետ Բ. Ուզուն Աշրգյանը հեռանում է, իսկ Տիգրան Ուզուն Աշրգյանը միայնակ կառավարում է այն մինչև 1915 թ. բռնագաղթը<sup>179</sup>:

Աղանայում, Մերսինում և Տարսուտում կային ձիթապտղի և քնջութի ձիթահան գործարաններ: Աղանայում հայտնի գործարանատերերից էր՝ Մաղսերեչի Հակոբը<sup>180</sup>:

Ձավար և կորկոտ պատրաստելու համար Աղանայում կա-

---

<sup>175</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 160:

<sup>176</sup> Աշրգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 78:

<sup>177</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 160:

<sup>178</sup> Թերզեան Յ., Ատանայի կեանքը, էջ 9:

<sup>179</sup> Աշրգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 87-88:

<sup>180</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 135:

յին ձիերով աշխատող «Տինկ»-եր, որոնցից նշանավոր էր Պետրոս Աղայի «Չիֆթե-Տինկը»<sup>181</sup>:

19-րդ դարի վերջին Հարություն Օհանյանը հիմնադրում է առաքման ծառայություն՝ պայմանագիր կնքելով Ադանա-Մերսին շոգեկառքի ընկերության հետ: Օհանյանը կայարանի բակում կառուցում է հսկա ախոռ, վարձում ձիապաններ և կառապաններ, նրանց հսկելու համար նշանակում տեսուչներ: Ադանայի ճամուս Կեռլիվ թաղում Օհանյանը ուներ առանձնատուն, իսկ Քուրդ Թեփեում՝ 300 դեռնում տարածությամբ այգի<sup>182</sup>:

Հակոբ աղա Պուլտուզյանը Ադանայում ուներ մսավաճառի խանութ: Շահմիր աղա Աշըգյանին էր պատկանում նպարեղենի խանութ՝ Ադանայի ժամացույցի աշտարակի հարևանությամբ: Խանութը կողոպտվում է Ադանայի ջարդի ժամանակ<sup>183</sup>:

Մովսես Աշըգյանը Հաջի Կարապետ Ուզունյանի հետ զբաղվում էր առևտրով: Ունեին սեփական խանութ «Սաճ Պետեսթենում» (շուկա): Այս խանութը ևս կողոպտվում է Ադանայի ջարդի ժամանակ<sup>184</sup>:

1909 թ. ջարդից առաջ գործում էր նաև Թորիկյան վաճառատունն ու Զիրիշյան խանութը<sup>185</sup>:

Ադանայում արտահանությամբ զբաղվող հայտնի վաճառականներն ու վաճառատներն էին «Շահպազյան-Քեշիշյան»-ը, «Աշըգյան-Գալպճյան»-ը, Հովհաննես Վենետիկյանը: Երկաթի, պողպատի, թիթեղի և ապակու ներմուծությամբ զբաղվում էին «Շահպազյան-Քեշիշյան»-ը, «Աշըգյան-Գալպճյան»-ը<sup>186</sup>, «Գասապյան տուն»-ը, իսկ Մերսինում՝ հույն վաճառական Ալըրճը-

---

<sup>181</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 160:

<sup>182</sup> Աշըգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 47:

<sup>183</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 58-61:

<sup>184</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 12-13:

<sup>185</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3114/104, թ. 406:

<sup>186</sup> Աշըգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 130-131:



Օղլուն և Եուսուֆյան, Գասապյան վաճառատների մասնաճյուղերը<sup>187</sup>:

Շինանյութ, ատաղձ, գործիքներ, մեքենաների մասեր ներկրողներն էին Ավետիս Ավետիսյանը, Միհրան Քեշիշյանը և ուրիշները<sup>188</sup>: Ադանայում հայտնի էր Դոքմեքչի Պողոս աղայի ձուլարան արհեստանոցը, իսկ երկրագործական գործիքների, տախտակյա իրերի շինության, ինչպես նաև ընկուզենու, չինարի և այլ կիլիկյան լեռների ատաղձի վաճառքի ոլորտում հայտնի էր Ուստա Միսաք Կեով-Եղիայանը<sup>189</sup>:

Կոշկակարության համար անհրաժեշտ ապրանքներ ներկրողները հիմնականում հույներն էին, իսկ հայերից հայտնի էր Հովհաննես Աղապաշյանը, ընդհանրապես, կոշկակարությամբ և տեղական «Եւմենի»-կարմիր մուճակի արտադրությամբ զբաղվում էին հայ արհեստավորները<sup>190</sup>:

Նպարեղեն ներմուծողներն էին «Աշրգյան-Պագալյան»-ը, Սմբատ Շահմիրյանը, Շիքարողլուն, Քեոշկերյանը և Աղազարյան եղբայրները<sup>191</sup>:

Ադանայում հայտնի ազարակատերեր էին Պուլտուզյանները, Արթին Աղա Սամիկյանը (տիտղոսավորված «Զենգին (հարուստ) Արթին»), Արթին աղա Շատրիկյանը, Հարություն Ներսեսյանը, Խաչեր աղա Թաթիրոսյանը, Հակոբ աղա Քեհիայանը («Քեհիա Օղլու»), Տավուտլարյանները, Տելիֆերյանները<sup>192</sup>: Ազարակները բավականին ընդարձակ էին և բարեկարգ: Դրանք տասնյակ, երբեմն հարյուրավոր մարդկանց աշխատանք ունենալու հնարավորություն էին ընձեռում:

Ադանայի Քաղաքական ժողովի և Տնտեսական խորհրդի ատենագրություններից, Ադանայի առաջնորդարանի պաշտո-

---

<sup>187</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 158:

<sup>188</sup> Աշրգեան Կ. Բ, նշվ. աշխ., էջ 131:

<sup>189</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 159:

<sup>190</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 158:

<sup>191</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>192</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 161:

նական գրագրության և նամակների տետրերից պարզ է դառնում, որ նահանգում (հատկապես Ադանայում, Ստում, Մերսինում և Տարսոնում) գործել է հայկական բանկ, որը հիշատակվում է որպես «Շահպազյան-Քեշիշյան տուն»<sup>193</sup>: Համաձայն բազմաթիվ նշումների<sup>194</sup> «Շահպազյան-Քեշիշյան տուն»-ը 1905-1915 թթ. ընթացքում՝ որպես հուսալի գործընկեր, գործարքներ է իրականացրել կամ էլ դրամատուն է եղել Սսի Կաթողիկոսարանի, Ադանայի առաջնորդարանի, ազգային մարմինների, հայ վաճառականների և տարբեր անհատների համար:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանան Օսմանյան կայսրության տնտեսապես կայուն ու զար-

---

<sup>193</sup> Տե՛ս Մատենադարան, Տնտեսական խորհրդի անմշակ արխիվ, 5 մարտ 1905 թ.-21 մայիս 1914 թ.: Քաղաքական ժողովի անմշակ արխիվ, Ատենագրություն Ադանայի Քաղաքական ժողովի, 2 մարտ 1905 թ.-10 ապրիլ 1915 թ.: Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ): Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը (18 սեպտեմբերի 1914 -31 մայիսի 1915):

<sup>194</sup> Ադանայի առաջնորդական փոխանորդ Արսեն քահանայի՝ Ադանայի Թաղական խորհրդին ուղղված պատասխան նամակը հաղորդում է, որ առաջին հանգանակության արդյունքում գոյացել է ընդամենը 97.589 դր2., որից գանձվել է 85.790 դր2.: Այն քննվել է Տնտեսական խորհրդի կողմից և հանձնվել է ամբողջությամբ «Շահպազյան-Քեշիշյան տան»-ը, մնացորդն է 11,799 դր2.: Երկրորդ հանգանակությունը կազմել է 49,042 դր2., որից գանձվել է 24,323 դր2. և հանձնվել վերոհիշյալ տանը: *Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3178/168, թ. 491*: Ադանայի առաջնորդը Գևորգ ծ.վ. Արսլանյանը խնդրում է Սսի կաթողիկոսին, որ վերջինս պրն. Շահպազյանին արտոնի և հրամայի, որ «Շահպազյան-Քեշիշյան տան» մոտ ավանդաբար դրված գումարներից «Տրուին պատկանեալ մարմնոց մուրհակի փոխան, եւ յառաջիկային իրենց որոշ նպատակին կարենալ յատկացուելու համար անպատճառ վճարելու յանձնառութեամբ»: *Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 587-405, 18 նոյեմբերի 1914, թ. 114*: Շարունակաբար կատարվող գործարքների մասին են վկայում նաև առաջնորդի հաջորդ գրությունները՝ արված 1914 թ. նոյեմբերի վերջին: *Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 608-426, 609-427, նոյեմբերի 29, թ. 136, 137*: Տե՛ս նաև *Ատենագրություն Ադանայի Քաղաքական ժողովի, 2 մարտ 1905 թ. - 10 ապրիլ 1915 թ., Նիստ Ի, 8 սեպտեմբեր 1905 թ., թ. 7* և այլն:

գացած քաղաքներից մեկ էր: 19-րդ դարի բամբակագործության ընդհանուր առաջընթացի համատեքստում Ադանան հանդիսանում էր կայսրության կարևոր շուկաներից մեկը, որի բնակչության հիմնական մասը ներգրավված էր ուրտի ամենատարբեր աշխատանքներում: 20-րդ դարի սկզբին ինչպես քաղաքում, այնպես էլ հարակից գյուղաքաղաքներում և գյուղերում գործում էին բամբակի՝ զգալի թվով հայապատկան գործարաններ ու արհեստանոցներ: Հայերի ներկայությունը շոշափելի էր քաղաքի արդյունաբերության մյուս ճյուղերում ևս՝ լինելով այլուրի, սառույցի կամ այլ ապրանքների արտադրություն կամ վերամշակություն: Ադանայի տնտեսության առաջընթացը անդրադառնում էր ինչպես հարակից գյուղաքաղաքների և գյուղերի, այնպես էլ առավել հեռու վայրերում բնակվող հայերի սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

### **Ադանայի Հայոց թեմի կրթական հաստատությունները**

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Ադանայի նահանգում ձևավորված միությունների նպատակն էր բոլոր հնարավոր միջոցներով աջակցել կրթական գործի զարգացմանը: Տվյալ ժամանակահատվածում հիմնադրվում ու գործում է ավելի քան 25 միություն:

1852-1853 թթ. հիմնադրվում է «Կիլիկիոյ ընկերութիւն»-ը, 1868 թ.՝ «Տիկնանց ընկերութիւն»-ը, որը Ադանայում ընդհանրապես չորրորդ, սակայն կրթական գործունեություն իրականացնող երկրորդ ընկերությունն էր: Վերոհիշյալ ընկերությունը հանդես է գալիս իգական դպրոց բացելու առաջարկությամբ: 1871 թ. հիմնադրվեց «Անձնուէր ընկերութիւն»-ը՝ ատենապետությամբ Նիկողայոս Մ. Գ. Մարյանի, ատենադպիրությամբ Կարապետ Յ. Գազանճյանի, գանձապետությամբ Մ. Պողոս Թորիկյանի և գրապետությամբ Խաչատուր Ս. Խանկյանի: Այս ընկերությունը մեկ տարի հետո վերակազմավորվեց և իր աշխատանքներն էր

շարունակում «Միաբանասիրաց ընկերութիւն» անվամբ<sup>195</sup>:

1872 թ. հիմնադրվեց «Ուսումնասեր ընկերութիւն»-ը, որի կրթական գործունեության մասին 1874 թ. մարտի 18-ի թղթակցության մեջ ասվում էր. «Ատանայի վարժարանաց մէջ այժմ ամենէն բարեկարգն է Ուսումնասեր Ընկերութեան բացած Պարթեւեան Վարժարանը: Այս ընկերութիւնը այժմ 90 անդամ ունի, եւ ամէն մէկ անդամավճար բաժինը ամսական 8 դուրուշ է: Ընկերներէն ոմանք մէկէ աւելի բաժին կը վճարեն, եւ բոլոր բաժիններն 100-է աւելի են, որով ամիսը 800 դուրուշէն աւելի կը հաւաքուի...»<sup>196</sup>:

1878 թ. ստեղծվեց նշանավոր «Աբգարեան ընկերութիւն»-ը, որը և դարձավ նույնանուն դպրոցի հիմնադիրը: Դպրոցը սկզբում հովանավորվում է ընկերության կողմից, ապա հանձնվում է Ազգային Թաղականության խնամքին:

1881 թ. Ադանայի Թաղականությունը Ադանայի ազգային վարժարանների մատակարարությունը հանձնում է «Միացեալ»-ին՝ կնքելով երեք տարի ժամկետով պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ Ադանայի Թաղականությունը պետք է վճարեր տարեկան 300 օսմ. ոսկի, իսկ 3-400 օսմ. ոսկու ծախսը հոգալու էր վերոհիշյալ ընկերությունը<sup>197</sup>:

1850-60 թթ. Ադանայի Ս. Աստվածածին եկեղեցին ուներ երկհարկանի վարժարան՝ մեկ սրահով, Ս. Ստեփանոս եկեղեցին՝ մեկ հարկանի վարժարան՝ նույնպես մեկ սրահով: Դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 2-300 աշակերտ, աշխատում էր մեկ կամ երկու վարժապետ<sup>198</sup>:

1878-1883 թթ. Ադանայում գործում էր «Կիլիկեան վարժարան»-ը: Վարժարան ուներ 50-60 աշակերտ: Այն գտնվում էր մասնավոր շէնքում՝ եկեղեցու բակից դուրս, յուրաքանչյուր աշա-

---

<sup>195</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 622-623:

<sup>196</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 622:

<sup>197</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 622-625:

<sup>198</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 618:

կերտի վարձը տարեկան երեք օսմ. ոսկի էր<sup>199</sup>:

19-րդ դարի վերջին Ադանայում հիմնադրված երեք ազգային վարժարանները՝ Արամյան, Աշխենյան, Աբգարյան, իրենց ուրույն հետքն են թողել ինչպես նահանգի, այնպես էլ Օսմանյան կայսրության հայ կրթության և դպրության պատմության էջերում: Հատկանշական է Ադանայի երեք ազգային վարժարանների նկարագրությունը 1898 թ. Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթում.

«Ազգ. վարժարանք հոս երեք են. Մին՝ Աբգարեան բարձր նախակրթարան, շուկայի մէջ, միայարկ, ընդարձակ բակ մ'ունի, շէնքը հին և բոլորովին նորոգման կարօտ է, ուր կ'յաճախեն 140 աշակերտ: Բ.ն Արամեան, ծաղկոց և մանկարպարտեզ մանչ տղայոց, երկայարկ, Ս. Սստուածածնայ եկեղեցոյ բակին մէջ շինուած է, ծաղկոցն այժմ ունի 200 աշակերտ, մանկապարտեզն ալ ունի 200 աշակերտ, նոյն եկեղեցոյն բակն ալ սենեակներու մէջ զետեղուած է 90 աշակերտ, միջին Աբգարեան անունը կ'կրէ: Աբգարեան շէնքին նեղ գալովը: Գ.ը Աշխենեան աղջկանց վարժարան, Ս. Ստեփաննոս եկեղեցոյն բակը նորոգ շինուած եռայարկ, քովը հինէն սենեակներ կան, նախակրթարանն ունի 180 աշակերտուի, ծաղկոցը 200, մանկապարտեզը 100, գումար աշակերտաց 630, գումար աշակերտուիեաց 480, վարժապետ 20, վարժուիի 14, տնտես 3»<sup>200</sup>:

Աշխենյան իգական վարժարանը հիմնադրվել է 1888 թ. Ս. Ստեփանոս եկեղեցու բակում<sup>201</sup>: «Բիւզանդիոն» թերթի հաղորդմամբ՝ Աշխենյան վարժարանի նոր շէնքը կառուցվել է 1889-ին: Շինության համար քաղաքի թաղապետական բժիշկ Սարգիս Արամյանը հատկացրել է 200 ոսկի, նույնքան էլ «Ազգը բարեսիրաբար հոգաց»<sup>202</sup>:

Համաձայն 1903 թ. Օսմանյան կայսրության գավառական ազգային վարժարանների Ադանայի առաջնորդական վիճակի՝ դպրոցների և վարժարանների տվյալները հետևյալն են.

---

<sup>199</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 624:

<sup>200</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 625, 1898, նոյեմբեր 7-19, էջ 3:

<sup>201</sup> Tuğlacı P., Tarih Boyunca Batı Ermenileri, (1851-1890), c. 2, İstanbul, Pars Yayın ve Tic. Ltd. Şti., 2004. s. 738.

<sup>202</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 625, 1898, նոյեմբեր 7-19, էջ 3:

Առաջնորդական վիճակ Ատանայի <sup>203</sup>				
Քաղաք կամ գիւղ	Վարժարանին անունը	Դասընթ./ աշ./ համագ.	Ուս./համագ.	Ամս. հասոյթ եւ ծախք/համագ.
Ատանա	Աբգարեան	Զ / 180	8	6700
Ատանա	Միջին Աբգարեան	Բ / 70	2	
Ատանա	Արամեան	Դ / 280	4	
Ատանա	Արամեան	Գ / 350	4	
Ատանա	Աշխէնեան	Ը / 140	7	
Ատանա	Աշխէնեան	Թ / 230	6	
Ատանա	Աշխէնեան/երկսեռ	- 150	2	
Ատանա	Աշխէնեան/մանկ.	Ե / 100	5	
Տարսոն	Լուսինեան	Դ / 130	4	800
Տարսոն	Լուսինեան/մանկ.	- 120	4	500
Մերսին	Պարթեւեան/երկսեռ	- 125	4	1150
Մելիֆքէ	Ս. Աստուածածին	- 45	1	225
Գոշօլուզ	Ազգ. Վարժարան	- 20	1	60
Հայ գիւղ	Ազգ. Վարժարան	- 20	1	60
Ինճիրլիք	Ազգ. Վարժարան	- 25	1	100
Շէխ մուրաթ	Ազգ. Վարժարան	- 30	1	100
Ապտողլու	Ս. Գեորգ	- 60	1	120
Մամեստիա	Ազգ. Վարժարան	- 50	1	120
Նաճարլը	Ազգ. Վարժարան	- 40	1	140
Օսմանիյէ	Ազգ. Վարժարան	- 35	1	80
Պաղչէ	Ազգ. Վարժարան	- 35	1	90
Օճագլը	Ս. Աստուածածին	- 150	2	400
Զօքմէրգիպէն	Ս. Աստուածածին	Ե / 250	5	1000
Էօզլերլի	Ս. Փրկիչ	- / 100	1	200
Ճէպէլ պերէքէթ	Ազգ. Վարժարան	- / 20	1	100

<sup>203</sup> Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1903, աղ. 22:

Ընդհանուր հաշվով՝ 1901-1902 ուս. տարում Ադանայի առաջնորդական վիճակի վարժարաններում սովորում էր 2.755 երկսեռ աշակերտ, որից 1.947-ը տղա, իսկ 808-ը՝ աղջիկ, կար 69 երկսեռ ուսուցիչ՝ 40 տղամարդ, 29 կին, իսկ ամսական հասույթն ու ծախսը կազմում էր 11.945 դուրուշ:

Վիճակացույցից դուրս են մնացել 560 աշակերտ (290 տղա, 270 աղջիկ), որոնք հաճախել են հետևյալ վարժարանները.

Ա. Հայ հռոմեական դպրոց՝ 90 տղա և 50 աղջիկ:

Բ. Հայ բողոքական դպրոց՝ 100 տղա և 100 աղջիկ:

Գ. Լատինական վարժարան՝ 100 տղա և 120 աղջիկ<sup>204</sup>:

Դեռևս 1886 թ. հայ բողոքականների կողմից Ադանայում հիմնադրվում է իգական գիշերօթիկ վարժարան<sup>205</sup>: Բ. Եղիայանը, գրելով Ադանայի հայ կաթոլիկ համայնքի արական և իգական ազգային վարժարանների մասին, նշում էր ընդամենը 400-450 աշակերտ<sup>206</sup>:

Ադանայի ջարդի օրերին հրդեհված Աշխենյան վարժարանը 1909-1910 թթ. վերաբացվում է՝ զբաղեցնելով Աշրգյանների տան մի մասը<sup>207</sup>: 1912-1913 թթ. ուսումնական տարում Աշխենյանը ուներ 10 շրջանավարտ<sup>208</sup>: 1913 թ. Աբգարյան, Աշխենյան և Արամյան դպրոցներում 1.500 աշակերտ էր սովորում<sup>209</sup>:

1910 թ. Ադանայում հայերը սկսեցին հրատարակել երկլեզու՝ հայերերն և թուրքերեն «Ադանա» թերթը<sup>210</sup>:

19-րդ դարի 50-60 ական թթ. սկսած Ադանայում բացվում և տարեցտարի իրենց գործունեությունն էին ընդլայնում հայկական կրթական հաստատությունները: Արդեն 19-րդ դարի վերջին

---

<sup>204</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>205</sup> Յուզարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցոյ, գրեց՝ Վեր. Կ. Պ. Ատանալեան, Ֆրեզոն, Կալիֆորնիա, Crown printing co., 1952, էջ 472:

<sup>206</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 664:

<sup>207</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 634-636:

<sup>208</sup> Կիլիկեան արձագանք, «Մամանակ», Կ. Պոլիս, թիւ 1474, 1913, 1-14 յունիս, էջ 1:

<sup>209</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 271:

<sup>210</sup> Տե՛ս նույն տեղում:

ունենալով երկսեռ դպրոցներ՝ Ադանան 20-րդ դար էր թևակոխում կրթական հաստատություններում արական ու իգական սեռի աշակերտների թվի ոչ մեծ տարբերությամբ: Այս հանգամանքը փաստում է հայության ոչ միայն բարեկեցության, այլև առաջադիմության մասին: Կրթական հաստատությունների գործունեությունը ֆինանսավորվում էր ազգային և հոգևոր իշխանությունների, ազգային միությունների ու ընկերությունների կամ անհատ բարերարների կողմից, ինչը կրկին տնտեսական կայունության արդյունք էր, բացի այդ յուրաքանչյուր վարժարան ու նախակրթարան ազգային հարստության մաս էր՝ իր անշարժ և շարժական գույքով:

### **Ադանա գավառակի գյուղախմբերն ու գյուղերը**

Հարակից գյուղերի համար Ադանան կարևոր սպառման շուկա էր, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աշխատանքի հնարավոր վայր:

Նահանգի 1.600-ից ավել գյուղերի 329-ը գտնվում էին Ադանայի շրջակայքում, իրենց հարյուրավոր ագարակներով, որոնցից յուրաքանչյուրի սեփականությունը կազմող ցանքի դաշտերը շատ դեպքերում 10-20-30.000 դեռնում տարածություն ունեին: Գյուղերի մոտ մեկ տասնյակը զուտ հայ բնակչություն ուներ, ինչպես օրինակ՝ Աբդողլուն, Ինջիրլիքը, Շեյխ Մուրադը, Գյավուր Քոյը (Հայ գյուղ) և այլն: Մյուս գյուղերում հայերը ապրում էին խառը՝ մուսուլման և քրիստոնյա այլ բնակչության հետ միասին<sup>211</sup>:

Քաղաքի մերձակա գյուղերն էին՝ հարավ-արևելքում՝ Շեյխ Մուրադը՝ 40 տուն, հարավային մասում՝ Աբդողլուն՝ 50 տուն, Սարոսի վերին ավերի մոտ Հայ գյուղը՝ 20-ից ավել տուն և Գոգ-Օլուքը՝ 20 տուն<sup>212</sup>: Համաձայն այլ տվյալների՝ Ադանայի հայկական գյուղերի բնակչության վիճակագրությունը հետևյալն է. հյուսիսում՝ Հայ գյուղ կամ Գյավուր գյուղ՝ 190, արևելքում՝ Միսիս՝

<sup>211</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 156:

<sup>212</sup> Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 264:



480, հարավ-արևելքում գտնվում էր Աբդոլուն՝ 340 և Շեյխ Մուրադը՝ 300 բնակչությամբ<sup>213</sup>: Ըստ Հ. Թերգյանի՝ Աբդոլուն ուներ 130 տուն բնակիչ, որից 100 տուն հայ, 30 տուն թուրք: 1909 թ. ջարդի ժամանակ գյուղում է գտնվել մոտ 400 արտագնա աշխատանքի եկած հայ մշակ<sup>214</sup>: Ջարդից հետո գյուղում մնացել է 30 տուն<sup>215</sup>: Գյուղն ուներ եկեղեցի ու վարժարան:

**Շեյխ Մուրադի** բնակչությունը Այրիախանամ հանձնաժողովի տեղեկագրում հաշվվում է շուրջ 60 տուն<sup>216</sup>: Հ. Թերգյանի տվյալներով՝ Շեյխ Մուրադ գյուղում կար 45 տուն՝ 200 հայ բնակիչ: Գյուղում գործում էր եկեղեցի և վարժարան<sup>217</sup>:

Ադանայի առաջնորդարանի փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1912 թ. Շեյխ Մուրադ գյուղում ձեռնարկվել են նոր եկեղեցի կառուցելու աշխատանքներ: 1912թ. դեկտեմբերի 16-ին և 1913 թ. մայիսի 23-ին Շեյխ Մուրադի եկեղեցու շինարարության համար տրամադրվել է 4208,20 լ. օսմ., որն ամբողջությամբ ծախսվել է աշխատանքների ընթացքում<sup>218</sup>:

**Աղզը Բոյուք** գյուղը գտնվում էր Ադանայի հարավում, ուներ 9 տուն՝ 45 բնակիչ, որոնք ամբողջապես հաճընցի էին<sup>219</sup>:

Ադանայի արևելքում Բեռլին-Բադրադ երկաթուղու երկարությամբ էր **Ինջիրլիք** գյուղը՝ 250 բնակչությամբ<sup>220</sup>: Ինջիրլիքում 1909 թ. ջարդից առաջ 80 տուն հայ կար, այնուհետև մնաց 30 տուն<sup>221</sup>: Գյուղում գործում էր եկեղեցի և դպրոց: 1908 թ. տվյալներով դպրոցում 30 աշակերտ էր սովորում<sup>222</sup>:

---

<sup>213</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 271-275:

<sup>214</sup> Թերգեան Յ., Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, «Արաքս», 1912, էջ 176:

<sup>215</sup> Տեղեկագիր Այրիախանամ Յանձնաժողովի, 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, Յաւելուած Տեղեկագիր քննիչ-պատուիրակ Պ. Շազ Սայապալեանի, Ղալաթիա, «Շանթ», էջ 78:

<sup>216</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 79:

<sup>217</sup> Թերգեան Յ., Կիլիկիո աղետը, էջ 215:

<sup>218</sup> Տե՛ս Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ:

<sup>219</sup> Թերգեան Յ., Կիլիկիո աղետը, էջ 215:

<sup>220</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 271:

<sup>221</sup> Տեղեկագիր Այրիախանամ Յանձնաժողովի, էջ 79:

<sup>222</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Հովիւիւն Խրատները, էջ 172:

Ինջիրլիք գյուղում էր գտնվում Պզտիկյան եղբայրների ագարակը: Ագարակը բավականին ընդարձակ էր և իր ամբողջականությամբ առանձին գյուղի տպավորություն էր թողնում: Ինջիրլիք գյուղի հայապատկան ագարակներից մեկում այժմ տեղակայված է ամերիկյան «Ինջիրլիք» ռազմակայանը.

«Ինջիրլիք» ռազմաբազայի կալվածքը պատկանել է Տիգրան և Կալինե Պզտիկյաններին: Տվյալ կալվածքը ևս 1915 թ. բռնագրավվել է թուրքական իշխանությունների կողմից: Թուրքերը 49,5 հա այս տարածքը, ռազմական նպատակով ամերիկացիներին վարձակալության տալով, մեծ շահույթ են ստացել: Տիգրան Պզտիկյանի ժառանգների պահանջով 2011 թ. Կալիֆորնիայի դաշնային դատարանը Թուրքիայի Հանրապետության Գյուղատնտեսական և Կենտրոնական բանկերի դեմ հայց է ներկայացրել: Պզտիկյանի ժառանգները դաշնային դատարանին ներկայացված դիմումում նշել են, որ ներկա պահին իրենց պապենական կալվածքը «Ինջիրլիք» ռազմակայանի մասն է կազմում, չորս հողատարածքի և բնակելի տների արժեքը 63,9 միլիոն դոլար է, սակայն ռազմակայանի տեղակայման դիմաց ԱՄՆ բանակից ստացած վարձի և 1915թ. ի վեր կուտակված տոկոսների հետ այդ գումարն աճել է, ուստի Թուրքիան որպես փոխհատուցում պետք է վճարի 100.000.000 դոլար: Այս տարածքում ոչնչացվել է Ս. Լուսավորիչ եկեղեցին, Ազգային վարժարանը և հայոց գերեզմանատունը»<sup>223</sup>:

**Միսիսը** հայերի կողմից հիմնադրվել է միջնադարում հայտնի Լևոն բերդ ամրոցի մոտակայքում<sup>224</sup>: Գտնվում էր Ադանայից վեց ժամ հեռավորության վրա դեպի արևելք՝ Ջիհանի աջ ափին: 19-րդ դարի վերջին ուներ 2.000 բնակիչ, որի մեկ երրորդը հայեր էին: Միսիսը համանուն *նահիյեի մյուղիրի* (գյուղաքաղաքի ղեկավար) նստավայրն էր<sup>225</sup>: Գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին<sup>226</sup>:

Միսիսում Սողոմոն Քասարճյանն ուներ բամբակի գործարան<sup>227</sup>: 1909 թ. ջարդից առաջ կար 80 տուն հայ, այնուհետև

<sup>223</sup> Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, «Նաիրի», 2013, էջ 149:

<sup>224</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 275:

<sup>225</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 111, 118:

<sup>226</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 275:

<sup>227</sup> Աշրգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 133:

մնաց 10 տուն<sup>228</sup>, ջարդի ընթացքում ոչնչացվեց հայերին պատկանող գրեթե ողջ գույքը:

**Համիդիեն** (Ջիհան) գտնվում էր Ադանայից արևելք՝ Բադդադի երկաթուղու գծի վրա: Համիդիեն հանդիսանում էր գավառակի կենտրոնը: Ուներ 2.200 տուն բնակչություն: Ջարդից առաջ 50 տնից ավելին հայեր էին, իսկ հետո՝ 41 տուն: 1909 թ. հայկական բոլոր տները, ինչպես նաև եկեղեցին այրվել է<sup>229</sup>:

### Մերսին

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մերսինը Միջերկրական ծովի կարևորագույն նավահանգիստներից էր, նահանգի առևտրաշրջանառության հիմնական կենտրոններից մեկը: Ադանայի նահանգից բացի՝ այն առանցքային նշանակություն ուներ նաև հարակից նահանգների համար, որոնց թվում հատկապես առանձնանում էր Կոնիայի նահանգը:

1890-ական թթ. Մերսինում բնակվում էր 860 հայ<sup>230</sup>: 1890-ական թթ. կար երկու դպրոց՝ արական ու իգական՝ 40-60 աշակերտով<sup>231</sup>: 1913 թ. ուներ 2.297 հայ բնակիչ: Շուրջ 1.000 հայ էլ բնակվում էր շրջակա գյուղերում: Մերսինում գործում էր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և երեք դպրոց<sup>232</sup>, դպրոցներից մեկը կոչվում էր Պարթևյան<sup>233</sup>:

Առաջին աշխարհամարտի տարիներին Մերի Հովհաննիսյանին հաջողվում է Մերսինում ուսուցչական գործունեություն ծավալել՝ 1916-17 տարեշրջանին ունենալով 10 աշակերտ, իսկ 1917-18 թթ.՝ 30 աշակերտ: Զինադադարից հետո արդեն որպես մասնավոր վարժարանի վարիչ՝ Հովհաննիսյանը շարունակում է իր գործունեությունը հայ բողոքականների ժողովարանի շեն-

---

<sup>228</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 79:

<sup>229</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 63:

<sup>230</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 220:

<sup>231</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 193:

<sup>232</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 283:

<sup>233</sup> Köker O., 100 yıl önce Türkiye'de Ermeniler, İstanbul, Birzamanlar yayıncılık, 2005, s. 242.

քում՝ ունենալով 103 երկսեռ աշակերտ և երեք ուսուցչուհի<sup>234</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Մերսինի առաջընթացը պայմանավորված էր նաև երկաթուղու շահագործմամբ: Քաղաքը կապված էր Ադանային 67 կմ երկարությամբ երկաթուղով<sup>235</sup>: Երկաթուղու առկայությունը ոչ միայն խթանում էր տնտեսական հարաբերությունների զարգացումը երկու քաղաքների միջև, այլև նպաստում էր հարակից գյուղաքաղաքների և գյուղերի տնտեսության զարգացմանը:

Մերսինի մաքսային հասույթը 1904 թ. եղել է 40.500 ոսկի, իսկ 1905 թ.՝ 44.000 ոսկի: 1905 թ. նավահանգիստ են ժամանել 365 շոգենավ՝ 460.000 տոննա տարողությամբ և 960 առագաստանավ՝ 16.000 տոննա տարողությամբ<sup>236</sup>: Մերսինում բամբակի ընդհանուր արտադրությունը հասնում էր մեծ չափերի: Քաղաքից արտահանվում էր ցորեն, գարի, վարսակ, բամբակ, քնջութ, դերձան, թահին, բուրդ, ոլոռ, անասուն (ոչխար, այծ, կով), ապուխտ, ինչպես նաև ձութ, կուպր, քրքում, մում, գորգ և այլն, որոնց մեծ մասը գալիս էր Կեսարիայից, Նիյտեից, Քըրշեհիրից: Այս ապրանքները Կ. Պոլսի ու Զմյուռնիայի ճանապարհով արտահանվել են Եվրոպա: Ներմուծվող գլխավոր ապրանքներից էին՝ շաքար, բրինձ, կտավեղեն, երկաթ, հանքածուխ և ծխախոտի հումք (վերջինս հատկապես ներկրվել է Ադանայի գործարանի համար)<sup>237</sup>:

Հստակ ու համակարգված առևտրային հրապարակները թերևս լավագույն ձևով ներկայացնում է Կ. Պոլսի «Առևտուր» թերթի հոդվածայունը. «Գարի [10 Հոկտմ.] Եթթնեկին մեջ Հայտար-Բաշա հասաւ Անատ. Օսմ. Երկաթուղիով ընդամենը 23 վակոն, այսուհանդերձ դարձեալ անկում տեղի ունեցաւ, էքսորա տեսակներուն իւրաքանչիւր օխային ½ բարայ, իսկ միւս տեսակներուն 1 բարայ... Իսկ տեղական սպառման համար Դանուրի

<sup>234</sup> Մերսինի հայ դպրոցները, «Կիլիկիա», Ատանա, թիւ 15, 1919, ապրիլի 4, էջ 1:

<sup>235</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 453:

<sup>236</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 454:

<sup>237</sup> Տե՛ս նույն տեղում:

և Մերսինի ապրանքները և Անատոլի գարիներուն թեթև տեսակները քիլէով կը ծախուին 14-15 դրուշէն»<sup>238</sup>:

Մերսինի քնջութի նոր բերքի 1.000 պարկը 1907 թ. նոյեմբերի սկզբին արտահանման համար արժէր 131 փարա<sup>239</sup>, այնուհետև իջնում է մինչև՝ 128 փարա<sup>240</sup>, ավելի ուշ 500 պարկի արժէքը դառնում է 129-130 փարա<sup>241</sup>:

Մերսինից վաճառական Պետրոս Ուրֆայանը 1907 թ. նոյեմբերի 21-ին «Բիւրակն» թերթի խմբագրությանը բամբակի գների մասին հայտնում է հետևյալը. «Բամբակը կը ծախուի 37-37½ դրշ. և կը ներածէ բաւական դրամ: Կնճիթը 3<sup>37/40</sup> ինչ որ իր hausseէն baisse մ'ունեցաւ: Յորենը 83/85 փր., գարին 45 փր.: Արտածումին խիստ չափաւոր է»<sup>242</sup>:

Թերթերում գների, արտահանվող և ներկրվող ապրանքների, արտադրանքի ծավալների մասին հաճախակի հրապարակումները ներկայացնում են ոչ միայն տարբեր գավառների ու քաղաքների միջև իրականացվող համակարգված առևտուրը, այլև փաստում են վաճառականների (թերևս շատերին կարելի է անվանել գործարարներ) հմուտ և արհեստավարժ գործելաճը:

Մերսինի հայկական առևտրային ընկերություններն ու անհատ վաճառականները հասնել էին լուրջ հաջողությունների: Նրանք գործունեություն էին ծավալում ոչ միայն տեղում, այլև առևտրային տների մասնաճյուղեր ունեին Օսմանյան կայսրության տարբեր քաղաքներում, ինչպէս նաև Եվրոպայում և ԱՄՆ-ում: Բացի այդ՝ կայսրության մյուս վաճառաշատ քաղաքներում հիմնադրված այլ ընկերությունները ևս ձգտում էին իրենց մասնաճյուղերն ունենալ Մերսինում:

1880 թ. Կ. Պոլսում հիմնադրված, արևելքում ամենամեծը համարվող «Կ. Յավրույան և Որդի» թեյի վաճառատունը մաս-

---

<sup>238</sup> «Առևտուր», Կ. Պոլիս, թիւ 2, 1908, հոկտեմբերի 18, էջ 43-44:

<sup>239</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 45, 1907, նոյեմբերի 3, էջ 1640:

<sup>240</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 47, 1907, նոյեմբերի 17, էջ 1705:

<sup>241</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 48, 1907, նոյեմբերի 24, էջ 1737:

<sup>242</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 49, 1907, դեկտեմբերի 1, էջ 1767-1768:

նաճյուղեր էր բացել Տրապիզոնում, ինչպես նաև Մերսինում<sup>243</sup>:

Մերսինում էր գտնվում Գյուլբենկյան հայտնի առևտրական տան բաժանմունքը, ինչպես նաև Ն. Ղազանչյան և Ֆրենկյան եղբայրների առևտրական տները: Վերջիններս Մերսինում և շրջակայքում ցածր գներով մեծ հողային կալվածքներ էին գնել որոնց արժեքը օրեցօր կտրուկ աճում էր<sup>244</sup>: Հողերի թանկացումները կապված էին նաև Մերսինի ավամերձ շրջաններում նավթի որոնողական աշխատանքների հետ: Այդ պատճառով մեծ թվով ինչպես հայ, այնպես էլ այլազգի գործարարներ փորձում էին հնարավորինս արագ մեծ տարածքներ ձեռք բերել տարածաշրջանում:

1892-1893 թթ. հայտնի գործարար Գալուստ Գյուլբենկյանը Իվրեյլի դաշտային շրջանից դեպի ծով մոտավորապես 250-300.000 դեոնում հողամաս է գնել «պետական միրիէն» (նահանգապետարանից), ինչպես Մոսուլում, այնտեղ ևս նավթի հայտնաբերման աշխատանքներ կատարելու համար: Իվրեյլի ծովամասից Գյուլբենկյանի սեփականացրած մոտ 45.000 հա հողատարածքը, 1915-1922 թթ. որպես «Էմվալ-ի մեթրուքե» (լքյալ գույք), գրավել է թուրքական կառավարությունը և հատկացրել թուրք փախստականներին<sup>245</sup>:

Մերսինի ծովափնյա շրջաններում նավթ փնտրողների մեջ շրջանառվում են նաև այլ հայկական ազգանուններ: «Բիրակն»-ում որոշ տեղեկություններ են հրապարկված Թըրբանի-Համամձյան հողային վեճի մասին: Մ. Ա. Թըրբանին կարողացել է ձեռք բերել ծովեզրյա մի հատված՝ անհամեմատ ավելի ցածր գնով, քան նրա զինը եղել է տվյալ պահին (1907թ.). «Սոյն ծովեզրեայ գետինը այնքան յարգ ստացաւ այսօր որ անկարելի է բաղդատութեան դնել գնուած թուականին հետ»<sup>246</sup>: Նավթ գտնելու համար ուսումնասիրություններ սկսելու արտոնագիր

<sup>243</sup> «Ազատամարտ», Կ. Պոլիս, թիւ 1458, 1914, 8/21 մարտ, էջ 3:

<sup>244</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 222:

<sup>245</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 298:

<sup>246</sup> «Բիրակն», Կ. Պոլիս, թիւ 15, 1907, ապրիլի 6, էջ 680:

ստանալուց հետո, նա սկսել է բանակցել Մանկոյան-Քեշիշյանի հետ, որպեսզի վերջիններիս նոր ներկրած արտեզյան ջրհորի մեքենաներն առաջին անգամ գործածվեն այս պեղումների ժամանակ<sup>247</sup>:

Մերսինի հայ գործարարները ներգրավված էին առևտրի ու արդյունաբերության ամենատարբեր ճյուղերում: Նրանց գործունեությունը չէր սահմանափակվում մի որևէ ուղղությամբ: Շատերը հետամտում և իրականացնում էին բազմաբնույթ աշխատանքներ:

Միջերկրականի ջրերում կար «քեֆալ» կոչվող ձկնատեսակը, որի ձկնկիթը հույն մասնագետները հատուկ եղանակով կարողանում էին մշակել: Ընդհանրապես ձկնկիթի վաճառքը բավականին սակավ էր, իսկ այդ տեսակի ձկնկիթը առաքվում էր մինչև անգամ Կ. Պոլիս՝ սուլթանական պալատ: Մերսինում որպես ներկայացուցիչ հիշատակվում է «Զելվեյան տուն»-ը<sup>248</sup>, սակայն չի հստակեցվում առաքման, թե արտադրության ոլորտում:

Զելվեյաններն իրենց ուրույն տեղն ունեին ինչպես Մերսին քաղաքի, այնպես էլ նահանգի առևտրի և արդյունաբերության մեջ: Մերսինում բամբակ արտադրող գործարանը ևս պատկանում էր Զելվեյաններին<sup>249</sup>: Բամբակագործության ասպարեզում ԱՄՆ-ից ներկրված արդի մեքենաները Զելվեյաններինն էին<sup>250</sup>: Նրանց էր պատկանում ձիթապտղից և քնջութից կերակրի յուղ արտադրող գործարանը<sup>251</sup>:

**«Մ. և Գ. Մ. Զելվեյան»** ընկերությունը եվրոպական գործարաններին էր վաճառում տարատեսակ ապրանքներ, իրականացնում էր իտալական և անգլիական կտավեղենի մեծածավալ գործարքներ, բրդի գլխավոր հավաքողն ու առաքողն էր: Բոստոնի հրապարակում իրականացնում էր ընդեղենի ու մորթու առև-

---

<sup>247</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>248</sup> Աշրգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 129:

<sup>249</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 133-134:

<sup>250</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 164:

<sup>251</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 159:

տուր: Գործարքներ էր կնքում նաև հանքային նյութերի հետ կապված<sup>252</sup>: Մ. Զելվեյանը "Մոնիոն" ապահովագրական ընկերության Մերսինի ներկայացուցիչն էր<sup>253</sup>:

**«Եռուսուֆյան և Գասապյան»** ընկերության հիմնական գործառույթը ընդեղենի, երկաթի և նավթի առևտուրն էր: Ընկերությունը նավթի մասնավոր մթերանոց ուներ: Հանդիսանում էր եվրոպական գործարանների շաքարի ներկայացուցիչը: Ընկերությունը մասնաճյուղեր ուներ Կ. Պոլսում, Կեսարիայում, Ադանայում և Տարսոնում<sup>254</sup>: Եռուսուֆյանն ու Գասապյանը զբաղվում էին նաև հյուսվածքեղենի և նպարեղենի ներմուծությամբ<sup>255</sup>:

**«Գյուլբենկյան որդիներ և Մանուկյան»** ընկերությունը իրականացնում էր ընդեղենի և քնջութի մեծամասշտաբ առևտուր: Գործարքներ էր կատարում Տրիեստի սեփական առևտրային տան հետ: Արտահանում էր ոչխար:

**«Միսաք Քեշիշյան և ընկ.»** ընկերությունը կատարում էր ընդեղենի, բամբակի, քնջութի, երկաթեղենի լայնածավալ գործարքներ: Ընկերությունը մասնաճյուղեր ուներ Ադանայում և Տարսոնում:

**«Մ. Մ. Շիմշիրյան որդիներ»** ընկերությունը իրականացնում էր ընդեղենի, քնջութի և այլ ապրանքների, ինչպես նաև գորգի առևտուր: Արտահանում էր ոչխար: Համանուն առևտրային տներ ուներ Կեսարիայում և Տրիեստում:

**Պետրոս Ս. Ուրֆայանը** արտահանում և ներմուծում էր գործվածքեղեն, երկրագործական մեքենաներ, խողովակներ, երկաթեղեն, ներկ և այլն: Հավաքում էր հնագիտական առարկաներ և գորգեր: ԱՄՆ-ում գտնվող համանուն տան գորգի գործակալն էր: Յոկոհամայից ուղղակի ներմուծում էր ճապոնական հնություններ: Գործարքներ էր իրականացնում Ադանայում և Տարսոնում:

---

<sup>252</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 455:

<sup>253</sup> Մերսինի Ազգ. Կալուածներու հրդեհուիլը, «Մամանակ», Կ. Պոլիս, թիւ 795, 1911, մայիս 16-29, էջ 1:

<sup>254</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 455:

<sup>255</sup> Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 158:



**Մ. Կ. Գըրըճյանը** կտավեղենի, ինչպես նաև ընդեղենի հանձնակատարական գործեր էր իրականացնում Կեսարիայում և նրա շրջակայքում:

**Հովհաննես Չերյանը** տարատեսակ կտավեղենի, օճառի և ընդեղենի հանձնակատար և վաճառող էր: Հանձնակատարական գործեր էր իրականացնում Կեսարիայում, Էրեյլիում, Գարամանում, Նիյտեում, Քըրշեհիրում, Մատենում<sup>256</sup>:

**Սարգիս Միմոնյանը** մեծ կապեր ուներ Կ. Պոլսի առաջնակարգ տպարանների հետ, կարողանում էր ձեռք բերել ցանկացած հրատարակություն: Զբաղվում էր նաև կաուչուկե և մետաղյա կնիքների արտադրությամբ: Իրականացնում էր տարբեր հանձնարդական ու մաքսային գործեր<sup>257</sup>:

**«Մանուելյան ու Քեշիշյան»** բամբակի սերմից յուղ արտադրող արդիական գործարանը ուներ մեծ համբավ և չղաղարեցրեց իր աշխատանքներն անգամ Առաջին աշխարհամարտի տարիներին<sup>258</sup>:

Մերսինի և Ադանայի՝ «Ֆանքանել Շիֆներ», «Օրոզտի Պաք», «Էրրերա», «Շամլը Որդիք», «Արմադանյան», «Պագըրճյան Եղբայրներ», «Մուրադյան և Քըրմաճյան», «Բագլավաճյան», «Մուրադյան Էղբայրներ», «Տեր-Աբրահամյան» առևտրային տների միջև իրականացվող գործարքները ընդլայնվում էին տարեցտարի<sup>259</sup>: Ձեռնարկություններից բացի՝ գործունեություն էին ծավալում նաև անհատ վաճառականները: Այսպես, օրինակ, արտահանության ասպարեզում հայտնի էր Հակոբ Մանուելյանը<sup>260</sup>:

Մեծ շրջանակներ էր ընդգրկում նաև հյուսվածքեղենի առևտուրը, որի մեջ ներգրավված էին բազմաթիվ հայ վաճառականներ՝ ձեռնարկությունների մասնաճյուղեր ունենալով Մերսինում և Ադանայում: Հյուսվածքեղենի ներմուծությամբ զբաղվում էին Իբրանոսյան եղբայրները, Չեովլեքճի-օղլուն, Պարսում Աղա Պետ-

<sup>256</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 455:

<sup>257</sup> «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 10, 1906, ապրիլի 1:

<sup>258</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 159:

<sup>259</sup> Մերսինի հրապարակը, «Բիւրակն», Կ. Պոլիս, թիւ 19, 1906, յունիսի 3, էջ 454:

<sup>260</sup> Աշըգեան Կ. Բ., նշվ. աշխ., էջ 130:

րոպանը, «Թորիկյան-Մարգարյան» ընկերությունը, Հովհաննես Թերզյանը, Մնտիկյան Հաճի Թադեոս աղան, Հակոբյան եղբայրները, «Ավետիսյան-Ճերիտյան»-ը («Բոն-Մարշե»), «Ավետիսյան-Քեշիշյան»-ը, «Գալուստյան-Ճերիտյան»-ը («Թաշ-Մաղազ»), Գրիգոր և Միսաք Ազիբյանը, ինչպես նաև Գույումձյան եղբայրները, Կարապետ Ճեյրբյանը, Օննիկ Իսկանտերյանը, Տիրան Գազանջյանը, Ավետիս Աղազարյանը և այլոք: Տեղական սպառումի համար քաղաքի խանութպանները հիշյալ վաճառականներից ստանում էին ապրանք, կամ երբեմն իրենց նախընտրած տեսականին պատվիրում էին Բեյրութից, Ջնյունիայից և Կ. Պոլսից<sup>261</sup>: Բամբակեղենի և գործվածքեղենի արտադրությամբ, ներմուծությամբ զբաղվում էր նաև Փանոս աղա Մուշյանը, գործվածքեղենի արտադրությամբ՝ Գրաձյան եղբայրները, բամբակի առևտրով՝ Միսաք Քեշիշյանը, իսկ Քեստենյան եղբայրները մանրավաճառներ էին<sup>262</sup>: Կոշկակարության համար անհրաժեշտ ապրանքներ ներկրողները քրիստոնյա արաբներն էին և Հովհաննես Լուսարարյանը<sup>263</sup>:

Այսպիսով, աշխարհագրական դիրքի բերումով, ունենալով տարանցիկ առևտրի համար բարենպաստ պայմաններ՝ քաղաքը տնտեսապես զարգացած էր: Մերսինը առանձնանում էր ինչպես օսմանյան, այնպես էլ եվրոպական առևտրային տների ու ընկերությունների բազմազանությամբ: Վերը բերված օրինակները փաստում են, որ օսմանյան ընկերությունների շարքում հայկական ներկայացուցչությունը մեծ ներդրում է ունեցել քաղաքի տնտեսական աճի վրա: Հայկական ընկերություններն ու անհատ վաճառականները Մերսինում հաստատուն դիրքերի հասնելուց հետո փորձում էին իրենց գործունեության շրջանակները ընդլայնել, ինչպես կայսրության տարբեր քաղաքներում, այնպես էլ Եվրոպայում ու ԱՄՆ-ում՝ գտնելով սպառման նոր շուկաներ: Քաղաքի հայ վաճառականները հաճախ

---

<sup>261</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 158:

<sup>262</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 179:

<sup>263</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 158:

արևմտյան տարբեր ընկերությունների ներկայացուցիչներն էին կամ գործընկերները: Հայերը որոշիչ դեր էին խաղում արտահանումների և ներկրումների շուկայում, արդյունաբերության ասպարեզում: Տարիների աշխատանքի շնորհիվ Մերսինի տնտեսության հայ ներկայացուցիչներն իրենց առևտրային տները կարողացել էին դարձնել ճանաչված և վստահելի ձեռնարկություններ ու ընկերություններ:

### Տարսն

Տարսոնը, լինելով Մերսին-Ադանա երկաթուղային գծի քաղաքներից մեկը, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին պահպանում էր առևտրային քաղաքի համբավը՝ թեպետ նրա կարևորությունը որոշ չափով նվազում է՝ վաճառականների և օտարերկրյա հյուպատոսների՝ Մերսին տեղափոխվելուց հետո:

Տարսոնում 1909 թ.՝ 4.400, իսկ 1913 թ.՝ 3.139 հայ էր ապրում: Քաղաքի ընդհանուր բնակչությունը 30.000 էր<sup>264</sup>:

Տարսոնում կար երկու հայկական եկեղեցի՝ Ս. Աստվածածին կամ Ս. Պողոս և Ս. Սարգիս: Գործում էր մեկ արական և մեկ իգական դպրոց՝ բացված «Միացեալ»-ի կողմից<sup>265</sup>: Տարսոնի կրթական ոլորտում թուրք հետազոտող Օ. Քյոքերը հիշատակում է Լուսինյան արական ու իգական դպրոցն ու մի մանկապարտեզ<sup>266</sup>: 1897 թ. Վեր. Հ. Ճենանյանի կողմից հիմնադրվում է հայ բողոքականների որբանոցը<sup>267</sup>:

Տարսոնի հասարակական շենքերից էին՝ մեկ «բեզեսթեն»<sup>268</sup>, 10 խան, երկու բաղնիք, յոթ ջրաղաց, վեց բամբակի գործարան<sup>269</sup>, երկու մանածագործական գործարան<sup>270</sup>: Բնակչության հիմնա-

---

<sup>264</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 283:

<sup>265</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 210- 212:

<sup>266</sup> Köker O., 100 yıl önce Türkiye’de Ermeniler, s. 242-243.

<sup>267</sup> Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցոյ, էջ 474:

<sup>268</sup> Bedesten-ընդարձակ փակ շուկա:

<sup>269</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 213:

<sup>270</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 76:

կան զբաղմունքը առևտուրն ու հողագործությունն էր: Արտադրության ոլորտում առաջնություն տրվում էր բամբակին:

1908 թ. Մուշեղ եպիսկոպոսի՝ Վահան քահանա Պյուլպյուլյանին և Տարսոնի Հայոց Թաղական խորհրդին ուղղված նամակից պարզ է դառնում, որ Տարսոնում կար հայապատկան քարհանք: Եպիսկոպոսը գրում է, որ շարունակեն անարգելք քար հանել «ՏԵՏՈՒՄ-ԹԱՂ»-ից, քանի որ, թե՛ պարտեզը և թե՛ գերեզմանը ազգային սեփականություն են ու դրանց «միթելվելին» (պատասխանատուն) ինքն է. «Մենք ալ այսօր թագրիր պիտի գրենք: Բայց չըլլայ, որ գործը դադարեցնէք: Նոյն իսկ կարելի եղածին չափ գործաւորը շատցուցէք եւ քարերը Եկեղեցոյ բակը փոխադրել տուէք փոթով»<sup>271</sup>:

Բամբակագործության ժամանակակից մեքենաներ Տարսոնում ուներ Շավարձյանը<sup>272</sup>: Լավագույն այլուրի գործարանը պատկանում էր Շավարձյան եղբայրներին: Արամ, Մարտիրոս և Արտաշես Շավարձյանների արդիական գործարանում օրական 60.000 կգ այլուր էր արտադրվում: Այնտեղ արտադրվող այլուրը սպառում էր ողջ քաղաքի, ինչպես նաև նահանգում տեղակայված հազարավոր զինվորների (Առաջին աշխարհամարտի օրերին) հացի պահանջարկը: Շավարձյաններին էր պատկանում նաև քաղաքի միակ ավտոմեքենան<sup>273</sup>:

Տարսոնում հայտնի էին նաև Էլլեզյան եղբայրները, որոնք զբաղվում էին գործվածքեղենի արտադրությամբ և մանրածախ առևտրով<sup>274</sup>:

1913 թ. Տարսոնում հիմնադրվում է «Կիւղնոս» ազգային, գրական, գիտական թերթը: Թերթի անդրանիկ համարը լույս է

---

<sup>271</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3005/505, դեկտեմբերի 29, թ. 274:

<sup>272</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 164:

<sup>273</sup> Üngör U., Polatel M., Confiscation and Destruction, The Young Turk Seizure of Armenian Property, London, Continuum International Publishing Group, 2011, p. 112.

<sup>274</sup> Պոդսեւան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 179:

տեսնում դեկտեմբերի 15-ին: Այն կիսամյա էր և հրատարակվում էր 16 էջով<sup>275</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Տարսունը թեն կորցրել էր իր առևտրային քաղաքի նախկին բանուկ դիրքը, սակայն հարակից գյուղաքաղաքների ու գյուղերի համար դեռևս ապրանքաշրջանառության կարևոր շուկա էր:

Տարսունի շրջակա գյուղերից **Գոգ-Օլուքը** լեռնային հայաբնակ գյուղ էր, գտնվում էր Տարսունից ութ ժամ դեպի հյուսիս հեռավորության վրա: 1909 թ. ջարդից առաջ ուներ 80 տուն, այնուհետև՝ 50, որից 30-ը՝ բողոքական: Գործում էին առաքելական և բողոքական եկեղեցիներ: 1909 թ. բոլոր տները և բողոքական եկեղեցին հրդեհվում են: Հիմնական զբաղմունքը հողագործությունն ու ածխագործությունն էր<sup>276</sup>:

**Քյոզալդ** հայկական գյուղը գտնվում էր Տարսունից մեկ ժամ հեռավորության վրա, շրջապատված էր բազմաթիվ ագարակներով, որտեղ աշխատում էին 250-300 բանվոր<sup>277</sup>:

Այսպիսով, 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Ադանայի գավառում էին գտնվում նահանգի վարչական կենտրոնը՝ Ադանան, գլխավոր նավահանգստային քաղաքը՝ Մերսինը, որն արդեն դառնում էր միջազգային առևտրի խոշոր կենտրոն, ինչպես նաև Մերսին-Ադանա երկաթգծի կարևոր կանգառը՝ Տարսուն քաղաքը: Գավառին էին պատկանում նահանգի գյուղերի մոտ մեկ երրորդը, որոնք առանձնանում էին իրենց ագարակներով, ընդարձակ ցանքատարածություններով և զարգացած գյուղատնտեսությամբ: Ադանայի գավառում էր կենտրոնացել նաև նահանգի առևտրաշրջանառության հիմնական մասը՝ դառնալով շարժիչ ուժ ընդհանուր զարգացման ու առաջընթացի համատեքստում:

---

<sup>275</sup> «Կիլոնոս», Տարսուն, թիւ 1, 1913, դեկտեմբեր 15:

<sup>276</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 77:

<sup>277</sup> Ermino, Ադանայի Ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 64, 1910, մարտի 23, էջ 3:

## 2.2. Իջելի գավառ

Սելևկիան կամ Ջելեֆքեն Իջել լեռնային գավառի կենտրոն էր և գավառապետի նստավայրը: 19-րդ դարի վերջին քաղաքում բնակվում էր 1400 մուսուլման, 800 հույն և 300 հայ<sup>278</sup>, 1908 թ. տվյալներով Սելևկիայում կար 371 հայ, Մարայում՝ 85 հայ<sup>279</sup>:

Իջելի գավառի կազմում կար հինգ գավառակ՝

1. Իջելի- վեց գյուղախումբ, 66 գյուղ
2. Էրմենեկ- մեկ գյուղախումբ, 47 գյուղ
3. Մութ- 65 գյուղ
4. Գյուլնար- մեկ գյուղախումբ, 53 գյուղ
5. Անամուռ- մեկ գյուղախումբ, 77 գյուղ<sup>280</sup>:

«Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ» գրքում Մութ գավառակում նշված է 74 գյուղ՝ 16.000 բնակչով<sup>281</sup>:

Գավառի կենտրոն Սելևկիայում կար հայկական եկեղեցի՝ կառուցված 1302<sup>282</sup> (1886) թ., և Մարա գյուղի եկեղեցին՝ 1324 (1908) թ.<sup>283</sup>: Գործում էր երկու դպրոց՝ կրկին Սելևկիայում ու Մարայում<sup>284</sup>:

Ի տարբերություն Ադանայի նահանգի մյուս գավառների՝

---

<sup>278</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 241-244:

<sup>279</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Հովիւիւն Խրատները, էջ 172-173:

<sup>280</sup> Չէօնլէքճեան Ս., Առաջնորդ Վաճառականաց կամ Տարերք Առեւտրական գիտութեան, Խ. Բ, Կ. Պոլիս, տպագր. Նշան Կ. Պերպերեան, 1901, էջ 25:

<sup>281</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 272:

<sup>282</sup> Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից արդարադատության և դավանանքների նախարարությանը ներկայացված ցուցակներում եկեղեցիների ու վանքերի հիմնադրման տարեթվերը նշված են կայսրությունում պաշտոնապես գործող օսմանյան *սայի* տոմարով:

<sup>283</sup> Սաֆրաստյան Ա. Խ., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների նախարարությանը ներկայացված Հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, Էջմիածին, Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԻԳ տարի, Ը, ՌՆԺԶ/1966, էջ 61:

<sup>284</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Հովիւիւն Խրատները, էջ 172-173:

Իչելի գավառի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները բավականին սակավ են, ինչը սահմանափակում է գավառի հայերի տնտեսական վիճակի մասին անգամ նվազագույնը ներկայացնելու հնարավորությունները:

### 2.3. Սիս-Գոզանի գավառ

#### Սիս

«Ռուբինեաններու եւ Լուսինեաններու հարստութիւններու շրջաններուն եւ ապա մինչեւ Մեծ Եղեռն հայ կիլիկեան կաթողիկոսներ իրենց գահերը հաստատեցին մասնաւորապէս Հռովմլլայի եւ Սիսի մէջ: Կանգնեցին ու բարձրացուցին շէնքերեկեղեցիներ ու վանքեր եւ անոնց մէջ պաշտօնավարեցին, գործեցին ու արդիւնաւորուեցան եկեղեցականներ ու միաբաններ»<sup>285</sup>: Թերես առավել լակոնիկ, միաժամանակ ընդգրկուն ու համակողմանի հնարավոր չէ ներկայացնել հայոց հնագույն քաղաքներից մեկը՝ Սիսը:

Սիս գավառը ուներ 324 գյուղ, երեք գյուղախումբ և երեք *քայմաքամություն*, Սիս քաղաքը՝ 77 գյուղ<sup>286</sup>:

Քաղաքը գտնվում էր Ադանայի հյուսիսարևելյան կողմում: 20-րդ դարի սկզբին ուներ 2.000 տուն բնակիչ, որից 1.500 տունը՝ հայ<sup>287</sup>: 1914 թ. մոտ 8.000 բնակիչներից 5.600-ը հայ էր, որը քաղաքի բնակչության երեք քառորդն էր<sup>288</sup>:

Սիս քաղաքը բաղկացած էր հինգ թաղից՝ Մահմուտլը, Քրիսթիյան, Արսլան, Փաշա, Թաշ Եարըմ օղլու: Հայերն ունեին մեկ վանք և երկու եկեղեցի և բազմաթիվ մատուռներ լքված վիճակում, ինչպես նաև մեկական՝ հայ բողոքական և հայ կաթոլիկ եկեղեցի<sup>289</sup>:

---

<sup>285</sup> Ոսկեան Հ., Կիլիկիայի վանքերը, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1957, էջ 284:

<sup>286</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 182:

<sup>287</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 226:

<sup>288</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 294:

<sup>289</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 182:

Դաշտերի շուրջ երեք չորրորդը պատկանում էր թուրքերին, իսկ մնացածը՝ հայերին: Ամենամեծ հողատերը կաթողիկոսարանն էր. նրան էր պատկանում Թլան (թիլ ավան) ագարակը (10-20 հազ. արտավար), որի կեսը ճահճուտ էր, մյուս կեսը վարելահող<sup>290</sup>:

1903 թ. «Արևելեան մամուլը» Թլանի ագարակի մասին գրում է, որ ագարակը գտնվում է Սսից 3½ ժամ հեռավորության վրա: Կազմում է 15.000 արտավար տարածք, հողը խիստ պարարտ է: Ագարակի ներսում բխում էր «Համամ սույու» կոչվող գետը<sup>291</sup>:

Ինչպես գրում է Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը, Թլանի ագարակի տարածքը երբեմն 1.000, երբեմն էլ 15-20.000 արտավարի էր հասնում: 1867 թ. ցուցակում նշված էր 2.000 արտավար<sup>292</sup>:

Թլանի ագարակից բացի՝ Սսի Մայրավանքին պատկանող կալվածքներն էին.

1. Ջրաղաց մեկ քարով, Սսի գետի ափին, տարեկան վարձը՝ 120 ցորենի կյուվիլեկ:

2. Մեկ կազինո՝ Աճար շուկայում, տարեկան վարձը՝ 1380 դուրուշ:

3. Երկու խոհարարական խանութ, վարձը՝ 368 և 460, ընդհանուր՝ 828 դուրուշ տարեկան:

4. Մեկ փոքրիկ սրճարան՝ տարեկան 756 դուրուշ վարձով:

5. Մեկ փոքրիկ տուն՝ Ուզուն-Թարվայում՝ վարձը 115 դուրուշ:

6. Պարտեզ՝ 36 արտավար տարածքով, վարձը՝ 1035 դուրուշ:

7. Հայոց թաղում՝ մի ավերակ տուն:

8. Թլանում երկու քարով ջրաղաց, վարձը՝ տարեկան 700 կյուվ. ցորեն<sup>293</sup>:

---

<sup>290</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 185:

<sup>291</sup> Կիլիկեան գործեր, «Արևելեան մամուլ», Իզմիր, թիվ 21, 1903, մայիսի 24, էջ 504:

<sup>292</sup> Կիլիկեան կակիծներ, 1903-1915, կազմ. Զ. Պզտիկեան, Պէյրուս, «Հրագրան», 1927, էջ 25:

<sup>293</sup> Բարբէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն Մինչեւ մեր օրերը), տպ. Դպրեվանուց



Բացի այդ՝ Սսի շրջակայքում գտնվում էին 400 արտավար արտեր<sup>294</sup>:

Հասութաբեր այս կալվածքներից բացի՝ վանքի սեփական հողերի վրա կառուցված էին տարբեր տներ, որոնք տարեկան մասնավոր տուրք էին վճարում որպես *իջարը-գեմին* (հողի վարձ)<sup>295</sup>: Սահակ Բ կաթողիկոսի ընդհանրացմամբ. «...Ըստ այսմ Սսոյ վանուց ի Սիս գտնուած կալուածոց եկամուտն է ջրաղացք 820 կիւլ-ցորեն վերածեալ 15 դրշէն 12300, գազինօ, խանութներ, պարտեզ և այլն. 4114, իճարը գեմին՝ 448½, ընդ ամենը 16336½ դրշ.»<sup>296</sup>: Մարաշում ևս վանքն ուներ արտեր, պարտեզներ և խանութներ, որոնք տարեկան 6-8.000 դուրուշ եկամուտ ունեին, որից վանքին վճարվում էր 500-1.000 դուրուշ<sup>297</sup>: Վերոհիշյալից պարզ է դառնում, որ Մայրավանքի տարեկան հասույթը միայն այս կալվածքների շահագործումից մոտ 17.000-17.500 դուրուշ էր:

Մայրավանքին պատկանող եկեղեցական թանկարժեք առարկաները պահվում էին Մայրավանքի գանձարանում, որոնք պարբերաբար ցուցակագրվում էին: 1850 թ. մարտի 20-ի ցուցակագրության արդյունքների համաձայն՝ գանձարանի պարունակությունը կազմում էր 823 կտոր, որոնցից առավել հատկանշական է Ս. Մեռոնի արծաթյա կաթսան (հիշատակ Դուզյան գերդաստանի), մեկ հայրապետական զգեստ (հիշատակ Պեզճյան գերդաստանի), մեկ ոսկյա սկիհ, երեք արծաթյա ջահ և երեք զույգ՝ մեծ, միջին և մանր աշտանակներ: Բացի այդ՝ ցուցակագրված ապրանքների շարքում կային՝ զգեստներ, ջահեր, աշտանակներ, թագեր, սաղավարտներ, վակասներ, բուրվառ, գոտի, կոնքեր, կանթեղ, խաչ, սկիհ, քշոց, տապանակ, զարդեր,

---

Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 872-873: Տե՛ս նաև Կիլիկեան կսկիծներ, էջ 24-25:

<sup>294</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 274:

<sup>295</sup> Կիլիկեան կսկիծներ, էջ 25:

<sup>296</sup> Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 873: Տե՛ս նաև Կիլիկեան կսկիծներ, էջ 25:

<sup>297</sup> Կիլիկեան կսկիծներ, էջ 27:

աջ, մասունքներ, շուրջառ, եմփոտրոն, փորուրար, թևնոց, շապիկ, ժամարարի և դպրաց գավազան, վարագույր, գոգնոց, ծածկոց, կորփուրա, տարատեսակ արծաթեղեն ու պղնձեղեն, ինչպես նաև արծաթապատ Ավետարան և այլն<sup>298</sup>:

1867 թ. Մայրավանքի գույքը վերստին ցուցակագրվեց: Ներառվեց նաև տնային կահույքն ու անոթները, արդյունքը կազմեց «իքի պին իւչ եիւզ եիրմի սօգուզ փարչա մալ եեքիննի» այսինքն՝ 2329 կտոր ապրանք, որոնց մեջ հաշվառված է 577 ձեռագիր և տպված գիրք, 53 ջիլտսիզ (անկազմ) տետր և այլ իրեր: Այնուհետև ցուցակագրվում են վանքի սեփական մյուլքերը (հողատարածք, անշարժ գույք), որոնց մեջ Թլանի տարածքը նշվում է 2.000 արտավար: Ցուցակում կային նաև Մայրավանքին կտակված մի քանի տներ՝ Ստում և Ադանայում<sup>299</sup>:

1903 թ. Սահակ Բ կաթողիկոսի՝ Գևորգ եպս. Երիցյանին ուղղված նամակներից պարզ է դառնում, որ կիլիկեցիներին նվիրաբերվել է 1.700 ոսկի, որից 500 ոսկին ծախսվելու էր դպրոց կառուցելու համար, այն կոչվելու էր բարերարի անունով, իսկ 1.200 ոսկին էլ տրամադրվելու էր կալվածքներ գնելու գործին<sup>300</sup>:

Միս գավառում գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքին էին արհեստները՝ երկաթագործությունը, դերձակությունը, ոսկերչությունը, հացագործությունը և այլն, կային մեծ թվով ջորեպաններ: Զարգացած էր հողագործությունը, աճում էր ցորեն, գարի, քնջութ, ծխախոտ նաև նարինջ ու կիտրոն:

Միս և հարակից գյուղեր ներմուծվում էր հիմնականում ձեթ, շաքար, բրինձ, սուրճ, աղ, համեմունքներ, պտուղ-բանջարեղեն, օձառ, դեղորայք, ինչպես նաև տպածո կտավեղեն, կերպասեղեն, ապակեղեն, թուղթ, թիթեղ, երկաթ, նավթ և այլ մանրավաճառ ապրանքներ: Ներմուծումների տարեկան ծավալը 726.000 օխա՝ 97.100 օսմ. ոսկի էր: Արտահանվում էր ցորեն, գարի, քնջութ, բամբակ, նուշ, ձու, այծ, կով, եզ, էջ, ձի, մորթի, նաև յուղ, պանիր

---

<sup>298</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 32:

<sup>299</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 32-33:

<sup>300</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 41-43:

և այլն, որոնց տարեկան ծավալը կազմում էր 5.071.900 օխա՝ 432.990 օսմ. ուսկի<sup>301</sup>:

Սաում ևս զարգացած էր բամբակագործությունը, այն նահանգի ընդհանուր առաջընթացին համընթաց կարողացել էր հասնել որոշակի ծավալների: Բամբակը սերմից զատող մեքենաները պատկանում էին Քել Կարապետին<sup>302</sup>:

Առաջին խանութները բացել են Կարապետ և Թորոս Փաշապեզյան եղբայրները, Սարգիս Տանաճյանը, Սահակ ու Փանոս Գասարճյան եղբայրերը, Կարապետ և Մանուկ Փաթաթյան եղբայրները և Ստեփան Ազիրյանը: Գյուղատնտեսական մթերքների և այլ ապրանքների արտահանությամբ հիմնականում զբաղվում էին Կարապետ Փայլեցյանը, Մատթեոս Նալբանդյանը, Գիրիգոր Միսիրյանը, Հովհաննես Մեմերճյանը, Աբրահամ Խաչիկյանը, Սարգիս Պեքերչյանը, Հակոբ Կուսիկյանը, ինչպես նաև Սսի մայրավանքը՝ իր Թլան ագարակով<sup>303</sup>: Քեչիճյան եղբայրները, Պալասանյանները և Հաճի աղա Ճերեճյանը զբաղվում էին գործվածքեղենի արտադրությամբ<sup>304</sup>:

Վաճառականության և հատկապես արտահանումների ապարեզում լուրջ հաջողությունների էր հասել Եավեր Գրիգոր Մճրգյանը, իսկ ներգաղթից հետո նույն ոլորտում առաջատար էր Միսաք Ազիրյանը՝ դառնալով նաև Ազգային Միության ատենապետ<sup>305</sup>:

Միսը հարուստ էր այգեստաններով: Հատկապես առանձնանում էր Քել Կարապետի պարտեզն իր ջաղացով, Ֆերեմանյանի պարտեզն ու ջաղացը, Աջապահյանի և Տէլի Վանեսյանի ջաղացն ու պարտեզը, ինչպես նաև Փաշապեզյանի պարտեզը, ջաղացն ու գործարանը<sup>306</sup>, վերջինիս գործունեության ոլորտը չի հստակեցվում:

---

<sup>301</sup> Քելեճեան Մ., նշվ. աշխ., էջ 427-428:

<sup>302</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 182:

<sup>303</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 426:

<sup>304</sup> Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 179:

<sup>305</sup> Քելեճեան Մ., նշվ. աշխ., էջ 427:

<sup>306</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 182:

Սսի դաշտավայրում բազմաթիվ էին հայապատկան ազարակները: Ագարակների ճնշող մեծամասնությունը զինված էր երկրագործական մեքենաներով: Գույումձյանների ազարակը բաղկացած էր 15 տուն հայ ընտանիքից: Բողազ Տեղիկն ուներ 70 տուն, որոնց շարքում հիշատակվում էին Տալտապանյանների, Գուլայանների և Տափանցի ընտանիքները: Պալասանյան Գրիգորի ազարակը գտնվում էր թուրքական Իտեմ գյուղում: Նալբանդյանի ազարակը (Ուֆաճրգ Էորեն) բաղկացած էր մոտ 70 ընտանիքից<sup>307</sup>, ազարակն առանձնանում էր արդի հերկող, ցանող, հնձող և այլ մեքենաների կիրառությամբ<sup>308</sup>:

Հոգի Հաճիի ազարակն ուներ 15 տուն, գտնվում էր թուրքական գյուղում, Կուսիկ Հակոբի ազարակն ուներ 10 ընտանիք՝ Ասլանլը գյուղում, Գույումձյան Ավետիս աղայի ազարակը Պեքիրճե գյուղում էր, Ֆերմանյան Արթին Քեհեայի և Քեջեպաշյանների ազարակները՝ Ալաբունարում<sup>309</sup>:

Սիս քաղաքի շրջակայքում կար խաղողի 500 այգի, որոնք պատկանում էին քաղաքի բնակչությանը<sup>310</sup>, իսկ շրջակա հայաբնակ գյուղերի մոտ 15 ջաղաց այլուր էր արտադրում Սսի և շրջակայքի համար<sup>311</sup>:

Սսի մոտակայքում գտնվող **Միսլի** գյուղն ուներ 60 տուն, հիշատակվում են Գիչիկլեր, Կըլլը Մինասի, Ճինիչի և Խալըտ Պետրոսի ընտանիքները: 1895 թ. ջարդի ընթացքում այս գյուղի բնակիչները մեծամասամբ ոչնչացվել են, իսկ ջարդից ազատվածները գաղթել են Չոքաք: **Պեքմեզլի քոյ** կամ **Մու տեռքուլեն** գյուղում հայերը 30 տուն էին<sup>312</sup>: **Գարապուզան** 10 ընտանիքից բաղկացած գյուղ էր: Գյուղի արտերի մեծամասնությունը հա-

---

<sup>307</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 222:

<sup>308</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 424:

<sup>309</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 222:

<sup>310</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 151:

<sup>311</sup> Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 431:

<sup>312</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 222:

յերի՝ Փաշապեզյան, Ֆերմանյան, Խաչիկյան և Պեքերճյան ընտանիքների սեփականությունն էր<sup>313</sup>:

Միսը թեև իր տնտեսական ներուժով զիջում էր Ադանա ու Մերսին քաղաքներին, սակայն այստեղ նույնպես առաջընթացը զգալի էր: Հայերը ներգրավված էին տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում: Ագարակներում ու գյուղերում զարգանում էր գյուղատնտեսությունը: Միսը Կիլիկիո կաթողիկոսների նստավայրն էր, ինչն էլ նրան քաղաքական տեսանկյունից առանձնակի կարևորություն էր հաղորդում: Կաթողիկոսանիստ լինելու հանգամանքը անդրադառնում էր նաև հայերի տնտեսական վիճակի վրա: Ինչպես տեսանք, Մայրավանքը ամենամեծ ագարակատերն էր՝ իր Թլանի ագարակով ու բազմաթիվ այլ կալվածքներով, որոնք ոչ միայն որոշակի հասույթ էին ապահովում, այլև միաժամանակ աշխատատեղի էին՝ Սսի և շրջակայքի բնակչության համար:

### **Միս գավառակի հայկական կրթական հաստատությունները**

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ինչպես նահանգի մյուս գավառներում, Սսում նույնպես բացվում և հաջողությամբ գործունեությունն էին ծավալում տարբեր կրթական հաստատություններ: 1880 թ. «Միացեալ»-ի կողմից Սսում բացվում է դպրոց: Միաժամանակ գործում էր նաև մեկ վարժարան և տեղացիների ջանքերով բացված արական և իգական դպրոցը: Այս երեք դպրոցներում սովորում էին մոտ 300 երկսեռ աշակերտ<sup>314</sup>:

1901-1902 ուս. տարվա Ազգային գավառական վարժարանների վիճակագրույցի տվյալների համաձայն՝ Սսում և շրջակայքում գործում էին հետևյալ վարժարանները.

---

<sup>313</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 185:

<sup>314</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 153-154:

Միս եւ շրջակայք <sup>315</sup>				
Քաղաք կամ գիւղ	Վարժարանին անունը	Դասընթացք / աշ./համագ.	Ուսուցիչ/ համագ.	Ամս. հասոյթ եւ ծախսք/ համագ.
Միս	Ժառանգ. Վարժ.	Գ / 20	2	842
Միս	Ազգ. Որբանոց	Գ / 21	2	1350
Միս	Ազգ. Վարժ.մանչ	Զ /260	7	920
Միս	Ազգ. Վարժ.աղջկ	Դ /130	4	336
Գարս պագար	Ազգ.Վարժարան	Դ / 85	2	130
Ֆէքէ	Ազգ.Վարժարան	Դ / 60	1	153
Երէպագան	Ազգ.Վարժարան	Դ / 65	1	158

Ընդհանուր տվյալներով՝ Կիլիկիո կաթողիկոսության Սսի եւ շրջակայքի վարժարաններում 1901-1902 ուս. տարում սովորում էր 641 երկսեռ աշակերտ, որից 476 տղա եւ 165 աղջիկ, աշխատում էր 19 ուսուցիչ՝ 15 տղամարդ եւ 4 կին, իսկ վարժարանները ամսական ունեին 3.889 դուրուշ հասույթ եւ ծախս<sup>316</sup>:

### Հաճրն

Հաճրնը Կիլիկիայի հնագույն քաղաքներից էր, կառուցված Լեռնային Կիլիկիայի բարձունքներից մեկի վրա: Աշխարհագրորեն արդեն իսկ անմատչելի Հաճրնը, դարերի ընթացքում դիմակայելով բազմաթիվ իրադարձությունների, 20-րդ դարի սկզբին շարունակում էր մնալ Ադանայի նահանգի հայաշատ քաղաքներից մեկը:

Այն իր 84 գյուղերով կուսակալության մաս էր կազմում<sup>317</sup>: Արևելքից սահմանակից է Կեոքսուին, արևմուտքից՝ Վահկա-

<sup>315</sup> Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց ..., Տետր Բ., աղ. 21:

<sup>316</sup> Տէ՛ս նույն տեղում:

<sup>317</sup> Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, խմբ.՝ Գ. Ահարոնեան, Պէյրուք, հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի, 1965, էջ 865: Տէ՛ս նաև «Հաճրն», Փասադենա, թիւ 7, 1938, յունուար-փետրուար:

յին, հյուսիսից՝ Էվերեկին և Ազիզիեին, հարավից՝ Սսին և Կարս Փագարին<sup>318</sup>:

Հաճրնը եպիսկոպոսական վիճակ էր, նրա կազմում էր Հաճրն գավառակը<sup>319</sup>: Քաղաքի հայ առաքելական եկեղեցիներն էին՝ Ս. Աստվածածինը, Ս. Գևորգը և Ս. Թորոսը<sup>320</sup>, եկեղեցիներ ունեին նաև հայ բողոքականները և կաթոլիկները<sup>321</sup>:

Հաճրնի արևմտյան կողմում էր գնվում Ս. Հակոբի վանքը, Ս. Գրիգորը, Ս. Մինասը, Սպիտակ Աղբյուրը և Չափըթե Սուրբը, արևելքում՝ Ս. Առաքելը, Ս. Վառվառը, հարավում՝ Ս. Սարգիսը և հյուսիսային կողմում՝ Չաթախի Սուրբ Կարապետ մատուռը<sup>322</sup>:

Ըստ «Հեռաձայն» թերթի՝ Հաճրնն ուներ 2.000 տուն բնակիչ, որից միայն 50-ն էր թուրք: Բնակչության մյուս մասը բաղդատվում էր հետևյալ կերպ՝ 1.700 տուն հայ առաքելական, 200 հայ բողոքական և 50 տուն՝ հայ կաթոլիկ<sup>323</sup>: 1914 թ. օսմանյան մարդահամարի տվյալների համաձայն՝ Հաճրն գավառակի ամբողջ տարածքում նշվում է ընդհանուր թվով 13.550 հայ, մուսուլմանների թիվը հիշատակվում է 16.000: Սակայն Կիլիկիո կաթողիկոսարանի պաշտոնական քարտեզում արտացոլված եպիսկոպոսական շրջանների տվյալների համաձայն՝ միայն Հաճրն քաղաքում ապրում էր 26.480 հայ<sup>324</sup>: Այսինքն՝ Օսմանյան պաշտոնական մարդահամարների տվյալները այդ ժամանակաշրջանում բավականին աղճատված են:

«Հաճրն» թերթը գրում էր, որ Առաջին աշխարհամարտից առաջ բնակչության թիվը հասնում է 30.000-ի՝ 6.000 տուն: Քա-

---

<sup>318</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 105:

<sup>319</sup> Մաղաքիա Արքեպիս. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 263-264:

<sup>320</sup> Ալիշան Ղ, Միսուան և Լեոն Մեծագործ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 166:

<sup>321</sup> Հաճրն և Երջակայքը, «Ժողովուրդի Ձայնը», Կ. Պոլիս, թիւ 428, 1920, մարտ 9, էջ 1:

<sup>322</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 151:

<sup>323</sup> «Հեռաձայն», Կ. Պոլիս, թիւ 2(1347), 1913, յունվար 24-6 փետրուար, էջ 3:

<sup>324</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 299:

ղաքում միայն 75 թուրքական տուն կար<sup>325</sup>: Հ. Թերզյանը նշում է, որ Հաճընը Կիլիկիայի ամենահայաշատ քաղաքն էր՝ 5.000 տուն հայ բնակիչ<sup>326</sup>: Գնել եպս. Ճերեճյանը ևս 1915 թ. նշում էր 5.000 տուն հայ<sup>327</sup>:

Հաճըն քաղաքը առևտուր էր անում Ադանայի, Սսի, Օսմանիեի և Կարս Փագարի հետ: Ապրանքների փոխանակությունը կատարվում էր ջորիներով և ձիերով:

Հաճընը հարուստ էր այգեստաններով, ընկուզենիների և կեռասենիների պարտեզներով: Հայտնի էր գինին և օղին, որը համարվում էր տեղական լավագույն արտադրանքը: Այն թիթեղյա տարաներով տեղափոխում էին Կիլիկիայի տարբեր քաղաքներ և վաճառում բավականին բարձր գնով<sup>328</sup>:

Քաղաքի մոտակայքում մշակելի հող չկար, պետք էր 3-4 ժամ հեռանալ Հաճընից, որպեսզի հնարավոր լիներ գտնել մշակելի հող: Բնակչության միայն 25 տոկոսն էր զբաղվում խաշնարածությամբ և հողագործությամբ: Մեծագույն մասը առևտրականներ և արհեստավորներ էին՝ կոշկակարներ, դերձակներ, որմնադիրներ, ատաղձագործներ, ջուլիակներ և այլն<sup>329</sup>: Ղ. Ալիշանը նշում էր, որ քաղաքը հատկապես հայտնի էր երկաթագործությամբ<sup>330</sup>:

Հաճընը ուներ տվյալ ժամանակահատվածի համար բավականին արդիական մթերանոց, որտեղ որոշակի վճարի դիմաց կամ տասանորդի հաշվով հաճընցիները մթերում էին իրենց ապրանքները: Մեծաքանակ մատակարարներն էին Տրդատյան և Պահատուրյան ընտանիքները, որոնք մթերք էին հայթայթում

---

<sup>325</sup> Սար. Ալ., Հաճըն քաղաքը, «Հաճըն», Մարսել, Փասադենա, թիւ 9-12, 1935/1936, էջ 948:

<sup>326</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 232:

<sup>327</sup> Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, էջ 865:

<sup>328</sup> Սար. Ալ., Հաճըն քաղաքը, «Հաճըն», Մարսել, Փասադենա, թիւ 9-12, 1935/1936, էջ 948:

<sup>329</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 949:

<sup>330</sup> Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 165:



օսմանյան բանակի համար<sup>331</sup>:

Հաճընն ուներ երեք խան կամ պանդոկ, որոնցից միայն մեկն էր հայկական և պատկանում էր Ս. Գևորգ եկեղեցուն: Պանդոկը գտնվում էր Վերի Շուկայի հարևանությամբ, բաղկացած էր երկու հարկից, յուրաքանչյուր հարկում կային բազմաթիվ սենյակներ: 1880-ականներին պանդոկը այրվում է, այնուհետև պանդոկի հողի մի մասի վրա բարերար Հաճի Ավետիք աղա Թերզիյանը սենյակներ է կառուցում ու նվիրում Ս. Գևորգ եկեղեցուն:

Հաճընի բաղնիքը կառուցվում է 1887 թ. հաճընցի Սարգիս Տեվլիրյանի կողմից: Բաղնիքի կառուցման համար 45 եզան սայլ սպիտակ և ծիրանագույն մարմար է օգտագործվում<sup>332</sup>:

Հաճընում կար ինը գերեզմանոց, որից վեցը պատկանում էր առաքելականներին և մեկական՝ բողոքականներին, կաթոլիկներին ու մուսուլմաններին<sup>333</sup>:

Քաղաքում կար երկու շուկա՝ Վերի Թաղի շուկան՝ մոտ 200 խանութով և առևտրական տներով, և Վարի Թաղի շուկան՝ մոտ 20 խանութով: Գործում էր 100-120 փուռ<sup>334</sup>:

Վաճառականության ասպարեզում կարևոր տեղ էր զբաղեցնում գործվածքեղենի առևտուրը, որով զբաղվողները տարին մի քանի անգամ Ադանայից, Մերսինից, Բեյրութից, Զմյուռնիայից, Կ. Պոլսից ապրանք էին ներմուծում և վաճառում մանրածախ ու մեծածախ խանութներին: Քաղաքի և շրջակայքի համար ներմուծվում էր նաև հագուստեղեն, ինչպես նաև շաքար, բրինձ, սուրճ, օճառ, նավթ և այլ ապրանքներ:

Քաղաքում առաջին մեծանուն վաճառականը եղել է Նազարեթ աղա Փննիկյանը, այնուհետև լայն գործունեություն են ծավալել Ճիկերճյանը, Գալուստ Այրճյանը, Համբարձում Թեր-

---

<sup>331</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 176:

<sup>332</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 148:

<sup>333</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 150:

<sup>334</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 146-147:

գյանը, Ռուբեն և Ասատուր Գրգեաշարյանները, Միքայել Այրճ-յանը, Ավետիք Սողանայանը, Մեսրոպ Շրգրտրտմյանը, Պողոս Քըթըֆյանը, Աբրահամ Կեչիճյանը, Ուզունյանը, Պերեքյան եղբայրները, Չուլագյանը, Սեդրակ Երեցյանը, Ստեփան Սեհյանը, Ռուբեն Մարգարյանը և այլոք: Հարություն Կիզիրյանը և որդիները՝ Նազարեթը և Կարապետը, ինչպես նաև վերոհիշյալ վաճառականներից շատերը զբաղվում էին ներմուծությամբ, մասնավորապես ապրանքներ էին ներկրում Անգլիայից<sup>335</sup>:

Հաճընում բավականին զարգացած էր կաշեգործությունն ու մուշտակագործությունը: Տասնյակ հազարներով մորթի և մուշտակ էր արտահանվում արտաքին շուկա: Ոլորտի առաջատարներից էին Կեչիճյան եղբայրները, Մընըշյան եղբայրները, Արշակ Մանկրյանը, Պողոս Քըթըֆյանը, Փանոս Պերեքյանը, Կարապետ ու Սարգիս եղբայրները և հատկապես Հաճի Ավագ Պալապանյանը<sup>336</sup>:

Հիմնականում Հաճընից արտահանվում էր այծի ու եզան մորթի՝ տարեկան 1.000 ոսկու չափով: Երկրորդ տեղում էր գտնվում աղվեսի, կզաքիսի և այլ կենդանիների մորթիների արտահանումը (տարեկան մոտ 500-600 ոսկու), որոնք օգտագործվում էին մուշտակագործության մեջ<sup>337</sup>:

Հաճընում արտադրվող բրոյա շալվարները վաճառում էին տեղում ու շրջակա գյուղերում: Արտադրանքը արտահանվում էր նաև Մարաշի, Քիլիսի, Այնթափի, Հալեպի, Ալեքսանդրետի և հատկապես Ադանայի շուկա: Այս արհեստի մեջ հայտնի էին Մընըշյան եղբայրները, Մախյանը, Աշըրյանը, Ըշըգյանը, Յուլմեսեքյանը, Պեյանը, Մանկըրյանը, Ղարիբյանը և այլն:

Կարապետ Քեշիշյանի ջանքերով Այնթափի հայտնի «Չարիֆե» կոչված ձեռագործությունը ներմուծվում է Հաճըն: Վերջինս Այնթափի Կենտրոնական վարժարանում պաշտոնավա-

---

<sup>335</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 175:

<sup>336</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 176:

<sup>337</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 50:

րելուն զուգահեռ 1909 թ. Հաճրնի իր հայրական ընդարձակ տան մեջ արհեստանոց է բացում՝ նախապես գտնելով վաճառքի շուկաներ Կ. Պոլսում և ԱՄՆ-ում: Տվյալ արհեստանոցում մոտ 400 կին և օրիորդ, խումբ-խումբ սովորում ու հմտանում է այս գործում: Այնուհետև ստանալով ձեռագործի պարագաներ ու հումք՝ կարող էին աշխատել նաև իրենց իսկ տներում: Այս գործընթացը հաջողությամբ շարունակվում է շուրջ երեք տարի<sup>338</sup>:

Մանիսագործության և կտավագործության մեջ տարիներ ի վեր հայտնի էր Մանիսաձյան ընտանիքը: Նարգարեթ Մանիսաձյանը և նրա որդիները, իրենց տան ու խանութի տարածքում հիմնադրելով մանիսագործական դազգահներ, զբաղվում էին կտավի և մանիսի արտադրությամբ ու վաճառքով: Ներկարարության մեջ հայտնի էին Բոյաձյան եղբայրները, Չոնչուգյանը, Տելիձյանը և Սարաշյանները: Պղնձագործության և երկաթագործության մեջ՝ Դեմիրձյանները, Աճեմյանները, Սըվդընյանները և համբավվոր վարպետ Գալայձյանը: Թամբագործության մեջ հայտնի էին Դևիրյանները, Սարաձյանները և Գույումձյանները, որոնց արտադրանքը կարելի էր համարել գեղարվեստական գործ: Հատկապես հայտնի էին ձիերի համար ստեղծված նրանց արծաթյա և ոսկյա թելերով ծածկոցները: Հարկավոր է նշել նաև ոսկի, արծաթ և մետաքսյա ձեռագործի մասին, այս գործում հայտնի էր Մանուկ Թերգյանը, իսկ Ադանայում՝ հաճրնցի Տեովլեթ աղա Գայյանը<sup>339</sup>:

Չնայած արհեստների բազմազանությանը և հայերի ամենատարբեր աշխատանքներում ներգրավվածությանը, այնուամենայնիվ, հաճրնցիները հաճախ բախվում էին գործազրկության հետ: Նահանգում առավել հաճախ հաճրնցիներն էին արտագնա աշխատանքի մեկնում և փորձում աշխատանք գտնել տարբեր քաղաքներում ու գավառներում: «Հորիզոն» թերթի հաղորդմամբ՝ հաճրնցիների երեք քառորդը աշխատանք փնտրում

<sup>338</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ, էջ 170-171:

<sup>339</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 171-173:

էր դրսում<sup>340</sup>: Ադանայում, Տարսնում, Կարսում, Սսում, Օսմանիեում, Համիդիեում, և Չորք-Մարգպանում կային մոտ 1200 հաճընցի գործավորներ<sup>341</sup>:

Հաճընի մոտակայքում էր գտնվում Գարաչամլըք անտառը, որը լայն հնարավորություն էր ստեղծում աստղծագործությամբ զբաղվելու համար: Շըզըրտըմյանը, Փաթփոթյանները, Մողանայանները, Էվխանյանները, Պահատուրյանը, Քեշիշյանները հիմնադրել էին «խզարներ»՝ ջրի ուժով ծառեր սղոցող գործարաններ և զբաղվում էին աստղծի առևտրով<sup>342</sup>:

Հաճընի ջորեպաններն ունեին իրենց սեփական անասունները՝ 1-15 գլուխ: Նրանք կանոնակարգված ցուցակներով ուղևորություններ էին կատարում դեպի Սիս, Ադանա, Կեսարիա, Կոնիա և այլն՝ տեղափոխելով բեռներ կամ ճամփորդներ: Այս գործում հայտնի էին Վարդևար Զագյանը, Սանթուր Աննիկյանը, Սարգիս Փուշյանը, Չատըրճյանը (Քեքլիկյան), Պալապանյանը և այլն<sup>343</sup>:

Հաճընի առավել բարեկեցիկ բնակիչներից շատերը շրջակա գյուղերում հողատարածքներ էին գնում և ագարակներ հիմնադրում: Հայտնի ագարակատերերն էին Համբարձում աղա Ռեճեպյանը, Հաճի Գևորգ և Կարապետ Մանկըրյան աղաները, Հաճի Ասատուր Գըրգեաշարյանը, Աբրահամ և Ղազարոս Կեչիճյան եղբայրները, Հարություն Թերզյանը, Ավետիք և Գրիգոր աղա Մողանայանները, Հաճի Կարապետ աղա Շըզըրտըմյանը, Հակոբ աղա Քեշիշյանը, Խոճավագյանը, Պայանները, Քեսպերճիքյանները և այլն<sup>344</sup>: Այդ ագարակները ունեին մեծ թվով անասուններ, ցանքատարածություններ, ախոռներ, ինչպես նաև աշխատանքով էին ապահովում բազմաթիվ մշակներին:

---

<sup>340</sup> Ermino, Ադանայի ջարդը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 72, 1910, ապրիլի 1, էջ 2:

<sup>341</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 50:

<sup>342</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ, էջ 168-169:

<sup>343</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 175:

<sup>344</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 167:

## Հաճընի հայկական կրթական հաստատությունները

19-րդ դարի երկրորդ կեսից կրթության բնագավառում Հաճընում ևս լուրջ փոփոխություններ են տեղի ունենում: Ս. Գևորգ, Ս. Աստվածածին և Ս. Թորոս եկեղեցիներին կից, իրարից անջատ տեղացի վարժապետների հսկողության ներքո գործում էին ծաղկոցներ<sup>345</sup>:

1873 թ. Կ. Պոլսի «Կիլիկեան ընկերութիւն»-ը Միհրան Սվաճյանին Հաճըն է ուղարկում ու վերջինիս տնօրինությամբ բացում երկսեռ վարժարան: Վարժարանը կրում էր Վարդանյան անունը: Երկու-երեք տարվա ընթացքում վարժարանը 8-10 երկսեռ շրջանավարտ է ունենում<sup>346</sup>:

1880-90-ական թթ. Հաճընի երիտասարդության կողմից հիմնադրվում է «Ուսումնասիրաց ընկերութիւն»-ը, որի հիմնական նպատակներից էր օգնել որբ և աղքատ ուսանողներին<sup>347</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հաճընում «Միացեալ»-ի ջանքերով հիմնադրված Կենտրոնական վարժարանից բացի՝ գործում էին Ամերիկյան միախոններների և կաթոլիկների վարժարանները, ինչպես նաև երեք նախակրթարան և հինգ մանկապարտեզ<sup>348</sup>:

Հայ բողոքականների կողմից 1880 թ. Հաճընում իգական գիշերօթիկ վարժարան է հիմնադրվում, իսկ 1908 թ.՝ երկսեռ վարժարան<sup>349</sup>:

1901 թ. Ազգային գավառական վարժարանների վիճակացույցում՝ Հաճընի առաջնորդական վիճակի տվյալների համա-

---

<sup>345</sup> Ս. Մ. Ս., Երջանիկ անցեալը, «Հաճըն», Մարսել, թիւ 9-10, 1932, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 660:

<sup>346</sup> Տիգրան Մ. Մէգ-Ջէն, Հաճըն, «Ծաղիկ», Պոլիս, թիւ 42, 1892, սեպտեմբերի 19, էջ 485: Տէ՛ս նաև «Հաճըն», Մարսել, թիւ 9-10, 1932, էջ 660:

<sup>347</sup> Թափառիկ, Նամակ Կիլիկիայից, «Հաճըն», Փասադենա, թիւ 19, 1940, մարտ-յունիս, էջ 305:

<sup>348</sup> Սար. Ալ., Հաճըն քաղաքը, «Հաճըն», Մարսել, Փասադենա, թիւ 9-12, 1935/1936, էջ 949:

<sup>349</sup> Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցոյ, էջ 473:

ձայն, Հաճընի Ս. Աստվածածին եկեղեցուն կից գործում էր Կենտրոնական վարժարանը, որն ուներ 283 աշակերտ, հինգ ուսուցիչ: 1901 թ. ամսական հասույթը և ծախսը կազմում էր 555 դուրուշ, Ս. Գևորգ եկեղեցում՝ Ս. Գևորգ վարժարանը, որն ուներ 169 երկսեռ աշակերտ՝ 112 տղա և 57 աղջիկ, երեք ուսուցիչ՝ երկու տղամարդ և մեկ կին, ինչպես նաև ամսական հասույթն ու ծախսը կազմում էր 298 դուրուշ: Ս. Թորոս վարժարանն ուներ 99 աշակերտ՝ 87 տղա և 12 աղջիկ, երեք ուսուցիչ՝ երկու տղամարդ և մեկ կին, ամսական հասույթն ու ծախսը կազմում էր 279 դուրուշ: Ս. Հակոբի վանքում կար Ազգային որբանոց՝ 26 արական սեռի աշակերտով, մեկ ուսուցիչ, ամսական հասույթն ու ծախսը կազմում էր 187½ դուրուշ:

Ընդհանուր չորս վարժարանների աշակերտների թիվը 577 էր, ուսուցիչների թիվը՝ 12, իսկ հասույթն ու ծախսը կազմում էր 1319½ դուրուշ<sup>350</sup>:

1898 թ. Ս. Հակոբի վանքում հայ առաքելական համայնքի կողմից բացված առաջին որբանոցը գործեց չորս տարի, որբերի խնամքի գումարը հատկացվում էր Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից՝ Մաղաքիա Օրմանյանի պատրիարքության շրջանում<sup>351</sup>:

1909 թ. ջարդի ժամանակ Ս. Հակոբի վանքը ևս թալանվում ու այրվում է, այնուհետև նվիրատվությունների միջոցով նորոգվելուց հետո՝ վերածվում Ազգային որբանոցի<sup>352</sup>:

1909 թ. Հաճընի առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանը Ս. Գևորգ եկեղեցուն կից կառուցում է մեծ վարժարան՝ մանկահասակ երեխաների համար: Հաճընի վերջին առաջնորդ Պետրոս արք. Սարաճյանը Ս. Աստվածածին եկեղեցու առջևում գտնվող ժայռի վրա կառուցում է հնգահարկ շենք, որի առաջին երկու

---

<sup>350</sup> Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Ա., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1901, աղ. 29:

<sup>351</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 454:

<sup>352</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 50:

հարկի ծախսերը հոգում է առաջնորդարանը՝ 500 ոսկի, մյուս մասի շինության համար 1913 թ. օժանդակում են ամերիկաբնակ հաճրնցիները՝ Հաճրնի առաջնորդարան ուղարկելով 600 դոլար: Հաճրնցիների ծախսը կազմում է 1.550 ոսկի, այնուհետև 200 ոսկի տրամադրում է Այրիախինամը<sup>353</sup>, այսպիսով՝ վարժարանի շինության համար ընդհանուր ծախսվում է 1.750 ոսկի՝ չհաշված կիրը, քարը և աստղձը, որը տրամադրում է ժողովուրդը<sup>354</sup>: Վարժարանը կառուցվում է 1912-1914 թթ. ընթացքում և ի հիշատակ գրերի գյուտի՝ կոչվում Սահակ-Մեսրոպյան<sup>355</sup>:

Շենքի առաջին հարկը հատկացվում է մանկապարտեզին, 2-րդ և 3-րդ հարկերը՝ իգական վարժարանին, 4-րդ հարկը՝ առաջնորդարանին, իսկ 5-րդ հարկում կար թատերասրահ, բեմ և օթյակներ: Վարժարանը զավթվում է թուրքերի կողմից 1915 թ. և նրանց ենթակայության տակ մնում մինչև 1918 թ., այնուհետև 1919-1920 թթ. ընթացքում հայերը վերատիրանում են դրան<sup>356</sup>: Հաճրնի Սահակ-Մեսրոպյան վարժարանը հրդեհվում է թուրքերի կողմից՝ 1920 թ. հոկտեմբերի 15-ին<sup>357</sup>:

Կրթության ոլորտում Հաճրնը նահանգի առաջատար քաղաքների թվին էր պատկանում: Դեռևս 1870-ական թթ. քաղաքում բացվում և գործունեություն էին ծավալում երկսեռ վարժարաններ, որոնց շրջանավարտների թիվը տարեցտարի ավելանում էր:

---

<sup>353</sup> 1909 թ. Ադանայի ջարդերի հետևանքով այրիացած կանանց խնամող հանձնաժողով: Ստեղծվել է 1910 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի և Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի կողմից: Տեղեկագիր Այրիախինամ Յանձնաժողովի, էջ 5:

<sup>354</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 450-452:

<sup>355</sup> Բաբգեն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 911:

<sup>356</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 452-453:

<sup>357</sup> Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, էջ 878:

## **Հաճրնի շրջակա գյուղերը**

Հաճրնի շրջակա գյուղաքաղաքներն ու գյուղերը ևս հայա-  
շատ էին՝ իրենց եկեղեցիներով, դպրոցներով և հնարավորինս  
զարգացող տնտեսությամբ:

**Ռումլու** գյուղը գտնվում էր Հաճրնից չորս ժամ հեռավորու-  
թյան վրա՝ դեպի հյուսիս: Բնակչության հիմնական զբաղմունքը  
հողագործությունն էր և խաշնարածությունը: Գյուղում կային քիչ  
թվով խանութներ:

Ռումլուն ուներ երեք դպրոց՝ հայ առաքելական, բողոքա-  
կան ու թուրքական, ինչպես նաև առաքելական եկեղեցի, որը  
հրկիզվում է 1909 թ. ջարդի ժամանակ և չի վերականգնվում<sup>358</sup>:

Ռումլու գյուղում 5-6 այծի և ոչխարի հոտեր կային՝ շուրջ 2-  
3.000 գլուխ, ինչպես նաև 3-4 խոշոր եղջերավոր անասունների  
հոտեր և ձիեր: Ատաղձ և տարբեր շինանյութեր պատրաստելու  
համար Ռումլուում կար ջրի սղոց, որը պատկանում էր հաճրնցի  
Սողանալյաններին, որոնք տարեկան 50-60 հազար տախտակ և  
այլ ատաղձ էին ուղարկում Հաճրն: Ռումլուում կար երեք  
ջրաղաց, որոնցից մեկը պատկանում էր Չամտիայաններին<sup>359</sup>:

Ռումլու ավանում երեք հայկական փոքր գյուղ կար՝  
Քյոռողլու, Մեքի և Քուշքայա: 1914 թ. այս գյուղերում միայն 250  
հայ էր ապրում<sup>360</sup>:

**Բանլըզը** գյուղը գտնվում էր Հաճրնից մոտ չորս ժամ հեռու՝  
դեպի հյուսիս-արևմուտք՝ Բանլըզը գետի եզերքին: Ըստ օսման-  
յան վիճակագրության՝ կար 120 հայ, հիմնական զբաղմունքը  
այգեգործությունն էր, հատկապես աճում էր սալոր և ընկույզ<sup>361</sup>:

**Շարը** կամ **Շար-Պերեսի**ն գուտ հայաբնակ գյուղ էր: Գտնվում  
էր Հաճրնից ինը ժամ և Ռումլուից մոտ հինգ ժամ հեռու՝ դեպի  
հյուսիս: Հիմնադրվել է 1866 թ. հաճրնցի 60 ընտանիքների կող-

<sup>358</sup> Ռումլուն, «Հաճրն», Մարսել, Փասադենա, թիւ 9-12, 1935/1936, էջ 951:

<sup>359</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 78:

<sup>360</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 300:

<sup>361</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 68:



մից, այնուհետև եկել են 10-15 տուն կեպենցի: Ուներ 2.000 բնակիչ: Գյուղը բաժանված էր երեք թաղի՝ Սուլաքյան Վարդիվառ աղայի Թաղը, Մինոն աղա Պատյանի Թաղը և Մինաս քեհեա Կտիկյանի թաղը<sup>362</sup>:

### Կարս Փազար գավառակ

Կարս Փազարը կամ Գարս-Զյուլ-Գատրիեն գտնվում էր Սսի արևելյան կողմում՝ Սավուրուն գետակի աջ եզերքին: Բնակչությունը մոտ 200 տուն հայ էր և 150 տուն թուրք: Ուներ մեկ եկեղեցի և երկսեռ դպրոց՝ 120 արական և 40 իգական աշակերտով: Գյուղաքաղաքում և նրա շրջակայքում բնակվում էր 10-15 տուն բողոքական հայ: Կաթոլիկներն ունեին երկսեռ դպրոց՝ 30 աշակերտով<sup>363</sup>: 1914 թ. Կարս Փազարի 2.000 բնակչից 1.800-ը հայ էր: Կաթողիկոսարանի վիճակագրության համաձայն՝ Կարս Փազար գավառակում ընդհանուր 5.645 հայ էր ապրում<sup>364</sup>:

Շուկայի առևտուրը և ամբողջ արհեստները, ընդդեմի և բամբակի վաճառականությունը հայերի ձեռքին էր: Կային նաև երկրագործությամբ զբաղվող մեծ թվով հայեր, որոնք եկել էին Հաճընից և Սարաշից<sup>365</sup>:

Կարս Փազարում նշանավոր վաճառականներն էին Դումանյան Թորոս և Նազարեթ եղբայրները, որոնք զբաղվում էին բամբակի և բամբակյա արտադրանքի վաճառքով, ինչպես նաև Եղիշե Քեքիկյանը, Մախյան եղբայրները<sup>366</sup>:

Կարս Փազարի գյուղերում ևս գյուղատնտեսությունը առաջընթաց էր ապրում: **Չոքսք** գյուղը գտնվում էր Սսի հարավարևելյան կողմում: Բակչությունը 80-90 ընտանիք էր, որոնց մի մասը

---

<sup>362</sup> Շար գյուղը, «Հաճըն», Մարսել, Փասադենա, թիւ 9-12, 1935/1936, էջ 950:

<sup>363</sup> Կարս-Պազար, «Ազատամարտ», Կ. Պոլիս, թիւ 207, 1910, 11/24 փետրուար, էջ 3:

<sup>364</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 301:

<sup>365</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 220:

<sup>366</sup> Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 179:

եկել էր Ագտամից, մյուս մասն էլ՝ Ջեյթունից: Չոքաքցիները գտնվում էին տնտեսապես լավ վիճակում, յուրաքանչյուր ընտանիք ուներ սեփական տուն և վարելահող: Զբաղվում էին երկրագործությամբ: Ամեն ընտանիք ուներ լծկան եզ և երեք-չորս կով, եղել են նաև 50-60 կով ունեցող ընտանիքներ: Գյուղում գործում էր հայկական դպրոց<sup>367</sup>:

**Ագտամը** գտնվում էր Սսի հարավային կողմում՝ Անարգաբայից դեպի արևմուտք: Գյուղն ուներ 60-70 ընտանիք և գործուն եկեղեցի: Ագտամը 1909 թ. ջարդերի ժամանակ ամբողջությամբ ավերվում է<sup>368</sup>: 1913 թ. գյուղում 420 հայ էր ապրում<sup>369</sup>:

### **Վահկա գավառակ**

Վահկան Միս-Գոզանի գավառակներից էր, բաղկացած՝ 90 գյուղից, որոնցից ութը հայկական գյուղեր էին՝ Վահկա, Երեպագան, Գալատերե, Սըփանտերե, Գըզըլ Յեր, Քիսենիթ, Գարա Քոյ և Թափան<sup>370</sup>:

Վահկայի հայկական եկեղեցին շատ հին էր, զարդարված էր հարթաքանդակներով ու սյունակներով: Երեք այլ հայկական եկեղեցի, ինչպես նաև Ս. Հովհանի մենաստանը և Ս. Աստվածածնի վանքը ավերված էին<sup>371</sup>: Հ. Պողոսյանը նշում է չորս եկեղեցի, վերը նշվածներին հավելելով՝ Կաստաղոնի Ուխտը և Կարմիր լեռան վանքը<sup>372</sup>: Բավականին խոսուն և տպավորիչ է Վահկայի եկեղեցու նկարագրությունը Մեսրոպ քահանա Օրջանյանի հուշերում. «Փոքր մատուռ մըն էր եկեղեցին՝ կառուցուած գիղաքաղաքին արեւելեան ծայրը, Հայկական հին ոճով... Խորանին ճակատը զետեղուած էր Տիրամօր պատկերը՝ որուն առջեւ շարունակ կը պլպլար արծաթեայ սիրուն կանթեղ մը:

<sup>367</sup> Քելեշեան Ս., նշվ. աշխ., էջ 221:

<sup>368</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 221-222:

<sup>369</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 301:

<sup>370</sup> Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 21:

<sup>371</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 307:

<sup>372</sup> Պողոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 37:

...հիւսիսակողմը կախուած կը մնար Ս. Գեորգի պատկերը»<sup>373</sup>:

20-րդ դարի սկզբին Վահկան ուներ 2.500 բնակիչ, որից 1.150-ը հայ<sup>374</sup>: 1913 թ. ողջ Վահկայի գավառակում ընդհանուր 4.948 հայ էր ապրում<sup>375</sup>:

Հայ առաքելական եկեղեցուն կից գործում էր երկսեռ տարրական վարժարան, որը 1908 թ. սկսած անցնում է «Միացեալ»-ի հսկողության տակ և ընդարձակում ուսման ծրագիրը<sup>376</sup>: Վահկայի երիտասարդները 1909 թ. հիմնադրում են «Դպրոցասիրաց ընկերութիւն»-ը և գնում ընդարձակ այգի, որի եկամուտը ուղղվելու էր կրթության զարգացմանը<sup>377</sup>:

**Երեպագան** գյուղը Վահկայի հարավարևմտյան կողմում էր՝ մոտավորապէս 12 մղոն հեռավորության վրա: 1863 թ. ուներ 80 տուն հայ, 1909թ.՝ 150 տուն՝ 500-600 անձով: Ուներ հայ առաքելական մեկ եկեղեցի, որին կից գործում էր երկսեռ նախակրթարան, ինչպէս նաև մեկ բողոքական եկեղեցի և նախնական դպրոց<sup>378</sup>: Երեպագանի երկսեռ դպրոցում ուսանում էր 140 աշակերտ<sup>379</sup>: Առևտուրը և արհեստները կենտրոնացած էին հայերի ձեռքին.

«Երեպագանի շրջակայ թուրք գիւղերուն բնակչութիւնը Գիւղաքաղաքին հայութեան հետ խաղաղօրէն կապուած էին, որովհետեւ այդ թուրքերուն գոյութիւնը հայերու ձեռներեցութենէն կախեալ էր, որեւէ թուրք գիւղի մէջ արհեստատր, խանութպան կամ առուծախ ընող չէր չիներ չըլլալուն, թուրքերը պէտք է դիմէին Երեպագանի Հայ խանութպանին, կօշկակարին, դարբինին, հիւսնին, մսավաճառին, հացագործին, ճաշարանին, կլայագործին, համետագործին, ոստայնանկին»<sup>380</sup>:

---

<sup>373</sup> Մեսրոպ քհնյ. Օրջանեան, Վերլիշումներ Վահկայի (Ֆեքէ) կեանքէն, «Հաճըն», Փասադենա, թիւ 14, 1939, մարտ-ապրիլ, էջ 223:

<sup>374</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 294:

<sup>375</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 298:

<sup>376</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 39:

<sup>377</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 40:

<sup>378</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 49-51:

<sup>379</sup> Քէլէշեան Ս., նշվ. աշխ., էջ 222:

<sup>380</sup> Պօղոսեան Յ. Պ., նշվ. աշխ., էջ 50:

**Գալատերեն** Վահկայի և Երեպագանի միջև գուտ հայաբնակ գյուղ էր՝ շրջապատված բազմաթիվ այգիներով: Գյուղն առանձնանում էր ընկուզենիների առատությամբ: 1863 թ. ուներ 40 տուն հայ, իսկ 1915-ին՝ 50 տուն: Գյուղում կար մեկ հայ առաքելական եկեղեցի, որին կից գործում էր երկսեռ նախակրթարան<sup>381</sup>:

**Միփանտերեն** Գալատերեի մոտակայքում գտնվող փոքրիկ գյուղ էր՝ 12-15 հայ ընտանիքներով: Գյուղում կար բնական աղբյուր, որի ջուրը եռացնելով՝ բնակիչները աղ էին ստանում<sup>382</sup>:

**Գարա Քոյը** գտնվում էր Վահկայի հյուսիսային կողմում, գյուղում կար 65 տուն հայ: Գործում էր մեկ առաքելական եկեղեցի և մեկ դպրոց, բողոքական հայերը ունեին ժողովարան և ժողովարանին կից մեկ դպրոց<sup>383</sup>:

**Թափան** գյուղը գտնվում էր Վահկայի արևելյան կողմում: Թափանում գործում էր խան կամ իջևանատուն, որը պատկանում էր հաճընցի հայերին<sup>384</sup>: Թափան գյուղը ուներ 100 տուն բնակիչ<sup>385</sup>:

Սում և հարակից քաղաքներում, գյուղաքաղաքներում և գյուղերում դարեր ի վեր ապրելով՝ հայերը Առաջին աշխարհամարտի նախօրեին մեծ թիվ էին կազմում, ունեին վանքեր, եկեղեցիներ ու դպրոցներ: Զարգացած էր առևտուրն ու արհեստները, հայերը ներգրավված էին գյուղատնտեսական բոլոր աշխատանքներում: Գավառը կաթողիկոսանիստ էր, ամենամեծ ազարակատերը կաթողիկոսարանն էր, որի հողերը մշտապես գրավման վտանգի տակ էին: Առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարեզում հայ տնտեսավարողների որոշ մասը հաջողությամբ գործունեություն էր ծավալում ինչպես գավառում, այնպես էլ նահանգի տարբեր քաղաքներում և գյուղաքաղաքներում:

---

<sup>381</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 53:

<sup>382</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 58:

<sup>383</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 61:

<sup>384</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 64:

<sup>385</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 224:

## 2.4. Ջերել-Բերեքերի գավառ

Ամանոս լեռների հյուսիսային սահմանին գտնվող Ջերել-Բերեքերի գավառը Ադանայի նահանգի ամենախիտ բնակեցված շրջաններից մեկն էր: Հայոց պատրիարքարանի վիճակագրության համաձայն՝ 1913 թ. գավառում կար 29 քաղաք ու գյուղ, 13 եկեղեցի և 18 դպրոց, որոնցում սովորում էին 1.200 աշակերտ: Հայերի թիվը կազմում էր 39.928<sup>386</sup>:

1890-ականներին Այասում կար մեկ հայկական եկեղեցի<sup>387</sup>: Գործում էր մեկ բաղնիք, տները հիմնականում կառուցված էին բերդի մեջ: Շրջակայքում կային անտառներ, նարնջի և կիտրոնի ծառեր: Հյուսիսային կողմում տարածված էր ընդարձակ դաշտ<sup>388</sup>:

Այասը միջնադարյան Կիլիկիայի հռչակավոր նավահանգստային քաղաքներից մեկն էր. «որ Արեւելքի և Արեւմուտքի միջեւ, փոխանցումի կարեւոր կեդրոն մը դարձած էր ժամանակին, բոլորովին անշուք վիճակի մէջ թողնուած այժմ, որուն ամբողջ քրիստոնէայ բնակչութիւնը բնաջնջուեցաւ քիչ առաջ Քեմալականներու ձեռքով»<sup>389</sup>: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին քաղաքի տնտեսական նշանակությունը բավականին նվազել էր:

Պայաս (Բայաս) քաղաքն ուներ 6.000 բնակիչ, գրեթե կիսով չափ թուրք և հայ: Քաղաքում կար շուկա, մզկիթ, մեդրեսե և եկեղեցի: 1890-ական թթ. կար մեկ նախակրթարան, որը բացվել էր «Միացեալ»-ի կողմից<sup>390</sup>:

Բայասի շրջակայքում էր գտնվում Զեյթունլուք (Զիթաստան) կոչված լայնատարած անտառը, որը դարեր ի վեր Սսի կաթողիկոսարանին է պատկանել, այնուհետև պետականացվել

---

<sup>386</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 304:

<sup>387</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 209:

<sup>388</sup> Էփրիկեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 135:

<sup>389</sup> Կիլիկիայէն մինչեւ Կ. Պօլիս, «Տոռովուրդի Ձայնը», Կ. Պօլիս, թիւ 504, 1920, մայիս 28- յունիս 10, էջ 1:

<sup>390</sup> Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, էջ 220-222:

է: «Զէյթունկուղի տարածութիւնը մէկ կողմից միւսը՝ կը նկատուի վեց ժամու ճանապարհ, և այս օրուան անմշակ ու խոպան վիճակումն էլ խաշնարածներց վարձք կարելի է ստանալ տարեկան մինչև 1.000 ոսկի: ...Կիլիկիայում ուրիշ կալուածներ էլ կան, որոնք թէև ազգին են պատկանում, բայց այժմ ձեռքից դուրս են ելած ինչպես այս Զէյթունկուղ (ուրիշ անունով՝ Լէչէ) ասուած հողը»<sup>391</sup>: Ոչ միայն վերոհիշյալ անտառը, այլև բազմաթիվ այլ հայապատկան տարածքներ տարիների ընթացքում պարբերաբար օտարվում էին հայերից:

### **Չորք-Մարզպան**

Չորք-Մարզպանն իր գյուղերով գտնվում էր Ալեքսանդրեոսի (Հայոց) ծոցի դիմաց, Բայաս և Այաս հին ավերակ բերդաքաղաքների մեջտեղում<sup>392</sup>, Միջերկրական ծովի ափին և ուներ 4.850 հայ բնակիչ<sup>393</sup>:

Չորք-Մարզպանում գործում էր երեք առաքելական եկեղեցի՝ Ս. Մինաս, Ս. Աստվածածին և Ս. Խաչ, բողոքականները ունեին ժողովարան<sup>394</sup>:

Աղանայի Հայոց առաջնորդարանի արխիվային փաստաթղթերում պահպանվել են Չորք-Մարզպանի՝ Վերի թաղի Հայոց Թաղական խորհրդի գործունեությունը լուսաբանող բացառիկ փաստաթղթեր, որոնց մեջ հատկապես առանձնանում են Ս. Աստվածածին եկեղեցուն պատկանող անշարժ և շարժական կալվածքների ցուցակները:

---

<sup>391</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 224-225:

<sup>392</sup> Խապրիկ Մ., Եթէ Չորք-Մարզպանը ինձի հետ խօսեր..., Պէյրուս, տպ. Կ. Տոնիկեան, 1983, էջ 15:

<sup>393</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 220:

<sup>394</sup> Գոճայեան Մ., Պատմութիւն Չորք-Մարզպանի (Տէօրթ-Շոյ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս-Անճելըս, 2005, էջ 142-143:

**Չորք-Մարզպանի Ս. Աստվածածին  
Եկեղեցապատկան անշարժ կալվածքների ցուցակ<sup>395</sup>.**

150	Օսմ. ոսկի	3	արտավար	վարի պարտեզ եկեղեցույ
50	-	1	-	վերի պարտեզ եկեղեցույ
30	-	¾	-	Չափար Պողոսի պարտեզ -
50	-	2	-	Գոճա Օղլուի - -
120	-	6	-	Քերագ - - -
160	-	8	-	Տախտակի գործարանի վերևի պարտեզը եկեղեցույ
50	-	1	-	Ս. Սրագսի մօտի - -
		15	-	Գերեզմանատուն
100	-	2	-	Եկեղեցույ և դպրոցի բակը
50	-	1	-	Աղջկաց վարժարանի -
40	-	¾	-	Վարի - - -
20	-	1	հատ	Խանութ (շուկայի մեջ)
80	-	1	-	Հաճի Մարգարի խանութ --
10	-	½	բաժին	Պ. Խոսրով ԳարաՄարգրսեանի նուիրած խանութը
40	-	1	հատ	Եկեղեցույ մօտ խանութ
150				Հաճի Արթին Սեմիրճեանի կտակած երկյարկ տուն մը պարտեզով
80		4	արտավար	Ժամկոչ Հաճի Յակոբի կտակած պարտեզը Լէէի մեջ մէկ (1 արտ.) և Չինար Գօնլուի մօտ (3 արտավար)

Ս. Աստվածածին եկեղեցուն էին պատկանում նաև երկու խանութ Էքպեզի շուկայում, որոնցից յուրաքանչյուրի արժեքը 20-ական օսմ. ոսկի էր, իսկ հասույթը՝ 180-ական դուրուշ, ինչպես նաև հինգ արտ՝ առաջինը 15, այնուհետև հերթականու-

<sup>395</sup> Տե՛ս Մատենադարան, Ադանայի Հայոց առաջնորդարանի անմշակ արխիվ:

թյամբ՝ 8, 15, 8 և 10 դեռնում տարածություններով<sup>396</sup>: Արտերի ընդհանուր տարածությունը կազմում էր 56 դեռնում:

Չորք-Մարգպանի Վերի թաղի կենտրոնում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցուն կից գործում էր դպրոց, որը 1909 թ. հետո վերածվեց մանկապարտեզի: Միննույն ժամանակ իր աշխատանքները սկսեց Ազգային Կենտրոնական վարժարանը, որն ուներ նորակառույց երկհարկանի շենք: Վարժարանի աշակերտների թիվը հասնում էր 500-ի<sup>397</sup>: 20-րդ դարի սկզբին գյուղաքաղաքի Վարի թաղում ևս գործում էր հայկական դպրոց<sup>398</sup>: 1908 թ. Մուշեղ Եպիսկոպոսը Չորք-Մարգպանում չորս վարժարան է նշում՝ 450 երկսեռ աշակերտով<sup>399</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Չորք-Մարգպանը բանուկ արևելյան գյուղաքաղաք էր՝ զարգացած առևտրով և գյուղատնտեսությամբ.

«...Տօրթ-Եոլն ալ շուկան կեդրոնացուցած էր քաղաքին ստորոտի շրջան մը խաչաձև չորս ճամբաներու վրայ որով քաղաքին Տօրթ-Եոլ անունը տրուած է շուկայի ձևաւորման դրույթեան վրայ: Բազմաթիւ զարդարուած խանութները շտեմարան մըն էին ելրոպական եւ արեւելեան արտադրութիւններու: ...Տօրթ-Եոլի հայութիւնը, հպարտ իր շուկայով, Ատանայի կուսակալութեան մէջ կը գրաւէր երկրորդ դիրքը առևտրական ասպարեզին մէջ, Քէօրօլլուեան, Շիբքի եւ Բարձումեան վաճառատունները իրենց ճոխ կերպասեղենի մթերքներով կրնային մրցիլ կուսակալանիստ Ատանայի հետ»<sup>400</sup>:

Չորք-Մարգպանն առանձնանում էր նաև իր գեղեցիկ երկհարկանի շենքերով, ինչպիսիք էին Քյուչուք Մարգպանների կապտագույն «ապարանքը», Վահրամ Քեշիշյանի և Գառնիկ Կեռոզյանի սպիտակածեփ քարաշեն շենքերը: Քաղաքի Չամլըք կոչվող թաղամասում էր գտնվում Աբրահամյանների առանձնատունը, իսկ Վերի թաղի եկեղեցու հարևան փողոցում էին

---

<sup>396</sup> Մատենադարան, Ադանայի Հայոց առաջնորդարանի անմշակ արխիվ:

<sup>397</sup> Գոճայեան Մ., նշվ. աշխ., էջ 148-149:

<sup>398</sup> Քելեշեան Մ., Բնքնակենսագրութիւն, Պէրյութ, «Օլիմփիք», 1951, էջ 84-85:

<sup>399</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Հովիփն Խրատները, էջ 172-173:

<sup>400</sup> Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 16-17:



գտնվում Ռուբեն Պալյանի, Կյուրինլիյանի, Շաքլյանի և Հաճի Կարապետի «ապարանքները», հատկապես առանձնանում էր Հովի. Քյոռոզլույանների կապույտ երկհարկանի առանձնատունը. «...որ սովորութիւն ուներ իր մէջ պատուելու քաղաք այցելող պաշտօնական եւ նշանաւոր հիւրերը, ինչպէս՝ Ճէմալ փաշան, երբ ան Ատանայի կուսակալ էր»<sup>401</sup>: Հատկանշական էր նաև Գարաեագուլայան Խաչերի առանձնատունը, որի կողքին գործում էր մետաքսի թելեր արտադրող գործարան<sup>402</sup>:

Չորքմարզպանցիները նաև հայտնի արհեստավորներ էին, գյուղաքաղաքում շարունակ ավելանում էին արհեստավորների խանութ-կրպակները, աճում էին նաև արհեստակցական միությունները: 1880-ականներին Ժիրայր Պոյաճյանը մի խումբ տեղացիների հետ ստեղծել էր «Ազգային ընկերութիւն»-ը, որի քաջալերանքով Սարգիս և Գևորգ Քեոմպեճյանները հիմնադրել էին ջուլիակների արհեստակցական միությունը: Զարկ էր տրվում տեղական կերպասեղենի արտադրությանը: Ավելի ուշ միանալով գործին՝ Հայկանուշ Պոյաճյանը՝ «Կանանց օժանդակ մարմն»-ի հսկողությամբ և օգնությամբ, կանանց սովորեցնում էր բարակ թել ու դերձան մանել, հյուսել, ներկել, ձևել ու կարել: Գյուղաքաղաքի հիմնական արհեստների շարքում առանձնանում էր ատաղձագործությունը, սափրիչությունը, կոշկակարությունը, զինագործությունը (փամփուշտ, վառոդ, մաշված հրացանների նորոգում և այլն)<sup>403</sup>:

Չորք-Մարզպանը տարածաշրջանում հայտնի էր նարնջի մշակությամբ, որը բնակչության 75 տոկոսի ապրուստի միջոցն էր: Չորք-Մարզպանը շրջակա երկու գյուղի (Էոզերլի, Օջաքլը) հետ միասին տարեկան 30-40.000 ոսկու նարինջ էր արտահանում: Երկրագործական այլ ապրանքների շրջանառությունը մեծ չէր, ընդդեմի տասանորդը՝ 10-12.000 դուրուշ: Բացի այդ՝ գյուղաքաղաքում գործում էր շուրջ 250 խանութ և արհեստա-

---

<sup>401</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 38-40:

<sup>402</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 40:

<sup>403</sup> Գոճայեան Ս., նշվ. աշխ., էջ 160-161:

վորների կրպակներ<sup>404</sup>: Սակայն նարնջի արտադրությունը չորքմարզպանցիների համար մշտապես եղել և մնում էր ամենատարածված ու ամենաեկամտաբեր գործը:

Նարնջագործությամբ էին զբաղվում բազմաթիվ մեծ ու փոքր գործարաններ: Դրանց շարքում հայտնի էր «Եփրեմյան» աշխատանոց-գործարանը (հայ-հունական), որի ընդարձակ քարաշեն շենքը գտնվում էր քաղաքի կենտրոնում: Գործարանում աշխատում էին մոտ 1.000 բանվոր և բանվորուհի<sup>405</sup>. «Ձմեռը այս գործարանը կը նմաներ մրջնանոցի կամ մեղուներու փեթակի: Առաջին յարկին վրայ գործաւորուհիները կ'ընտրէին պարտեզներէն բերուած նարինջները, կ'առանձնացնէին արտածուելիքները, պատկերազարդ թուղթերու մէջ փաթթելով և արկղերու մէջ տեղաւորելով զանոնք»<sup>406</sup>:

Չորք-Մարզպանի նարնջի բերքահավաքի, փաթեթավորման և տեղափոխման աշխատանքներում ներգրավված աշխատողների քանակն ու աշխատանքի բնույթը, համակողմանի նկարագրված է բնիկ չորքմարզպանցի Սամվել Պոռանյանի «Հուշագրություն ճուկ-Մարզեպանի»<sup>407</sup> 505 մեքենագիր էջից բաղկացած անտիպ աշխատության մեջ, որը բավականին մանրամասն ներկայացնում է աշխատանքային ողջ գործընթացը: Ըստ Պոռանյանի՝ յուրաքանչյուր վաճառական ուներ բերքահավաքի հատուկ հինգ խումբ: Յուրաքանչյուր խմբի մեջ մտնում էին տա-

---

<sup>404</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 58:

<sup>405</sup> Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 22:

<sup>406</sup> Գոճայեան Մ., նշվ. աշխ., էջ 159:

<sup>407</sup> Հուշագրությունը գրվել է հայատառ թուրքերեն՝ Սամվել Պոռանյանի կողմից, ով եղել է Չորք-Մարզպանի երեք հերոսամարտերի մասնակից, Միսկան որբանոցի շինություններից մեկի հատակագծի հեղինակը: Հուշագրությունը հեղինակը անձամբ տրամադրել է Հարություն Պալյանին, վերջինս այն թարգմանել և Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ պատրաստել է տպագրության, սակայն անհայտ հանգամանքների պատճառով մնացել է անտիպ: Հ. Պալյանի որդին՝ Խորեն Պալյանը 2004 թ. հուշագրության մեքենագրված տարբերակը տրամադրել է Վերա Սահակյանին: Վերջինս հուշագրության սույն էջերը տրամադրել է մեզ՝ օժանդակելու համար գրքի պատրաստման աշխատանքներին:

ասկան աշխատող՝ նարնջի՝ մկրատով բերքահավաքի համար, հնգական նարինջ հավաքող, խմբի մեկ ղեկավար և մեկ ղեկավարուհի, մեկ հաշվապահ, երկուական փոխադրող, վեց բանվորուհի, մեկ արկղ պատրաստող: Մի խումբն ուներ 27 աշխատող, յուրաքանչյուր վաճառական ամեն օր աշխատեցնում էր հինգ խումբ, այսինքն՝ 135 աշխատող:

Բացի այդ՝ բերքահավաքի շրջանում պահեստների մեջ աշխատում էին քառասուն բանվորուհի և չորս խմբի ղեկավարուհի, հինգ՝ նարինջ արկղերի մեջ դասավորող, տասը ատաղձագործ, մեկ թվագրող, մեկ թուղթ տվող, մեկ թղթերը դասավորող, արկղերը նավահանգիստ տեղափոխող 10 ջորեպան և մեկ պահակ:

Այս հաշվով մեկ վաճառականը աշխատեցնում էր երկու հարյուրից ավելի երկսեռ աշխատող, որոնց միջին օրավարձը հինգ ոսկի դահեկան էր: Բացի կիրակի օրերից՝ բերքահավաքի աշխատանքները անդադար շարունակվում էին 100 օր: Նարնջենիների բարձրությունն ուներ համապատասխան բերքատվություն, միջին հաշվով ծառերը արտադրում էին 500 մինչև 15.000 նարինջ<sup>408</sup>:

Մ. Գոճայանը ևս անդրադարձել է նարնջենիների բերքատվությանը՝ նշելով, որ 50-60 տարեկան ծառերը ունեցել են 18-20 մ բարձրություն և տարեկան տվել են 15-20.000 նարինջ: 10-15 տարեկան նարնջենին՝ 3-5.000 նարինջ, 10-12 տարեկան նարնջենին՝ 1.000-1.500, 7-8 տարեկան ծառը՝ 500-1.000 նարինջ: Բերքառատ տարիներին Չորք-Մարգպանը և շրջակա գյուղերը արտադրում էին 120-150 միլիոն նարինջ<sup>409</sup>:

1909 թ. հունվարին Ադանայի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը հանձնարարում էր տեղացիներին՝ օգնել և աջակցել Համբարձում Ռուբենյանին, ով պետք է նպաստեր նարնջի արտահանման գործին՝ նոր շուկաներ գտնելով և բարձրացնելով հայկական կողմի մրցունակությունը՝ ի հաշիվ զմյուռնիացի

<sup>408</sup> Պոռանեան Ս., Հուշագրություն Ճուկ Մարգպանի, Լենինական, անտիպ, 1965, էջ 52- 53:

<sup>409</sup> Գոճայեան Ս., նշվ. աշխ., էջ 159:

հույների ու Սիրիայի քրիստոնյա արաբների<sup>410</sup>:

Չորք-Մարզպանից նարինջը նավերով արտահանվում էր Զմյուռնիա, Կ. Պոլիս, Վարնա, Օդեսա, Ալեքսանդրիա, Լիվերպուլ և այլ քաղաքներ: Արտահանվող նարինջը տեղավորում էին 60, 80, 100 և 150 կգ-անոց արկղերում, որոնք ունեին իրենց տարբեր գները<sup>411</sup>: Մ. Խապրիկը նշում էր. «Շնորհիւ նարնջի վաճառումի գործողութեան, Տօրթ Եոլ կը գրաւէր ամբողջ Կիլիկիոյ հողամասին վրայ երկրորդ դիրքը առետուրի եւ արտածումի տեսակետով, առաջնութիւնը տալով Ատանայի, որ իր բամպակի գործարաններով եւ Չուքուր Օվայի արտադրած արմտիքի ճոխութեամբ, միջազգային համբաւ կը վայելէր»<sup>412</sup>:

Չորքմարզպանցիների տնտեսության մեջ նարնջի բերքի քանակության, վաճառքի ծավալների ու գների կարևորության նշանակությունը պարզ է դառնում նաև մամուլի հրապարակումներից: Մասնավորապես, «Ժամանակ» թերթը իր համարներից մեկում հաղորդում էր, որ նարնջի բերքը 1913 թ. այնքան էլ առատ չի եղել 1912 թ. համեմատությամբ: 1912 թ. արտահանվել է 69 միլիոն նարինջ, իսկ 1913 թ.՝ հազիվ 40-45 միլիոն: Սակայն նշված է, որ նախորդ տարվա համեմատությամբ նարինջներն ավելի մեծ էին, ուստի արտահանված արկղերի քանակը նույն էր, հետևաբար շահույթը նույնպես: Թերթը նաև գրում է, որ Չորք-Մարզպանում հնարավոր չի եղել նարնջի արտահանությամբ զբաղվող ընկերություն հիմնադրել, ուստի, այդ պատճառով վաճառականները կամ օտարերկրացիները կրկնակի շահույթ էին ստանում: Սակայն բոլոր դեպքերում նարնջի արտադրությունը հայերի համար կենսական նշանակություն ուներ: Նարնջագործության շնորհիվ, ի տարբերություն Հաճընի կամ Զեյթունի, չորքմարզպանցիներն կարիք չունեին արտագնա աշխատանքի մեկ-

---

<sup>410</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 2045/15, յունվարի 3/21, թ. 299:

<sup>411</sup> Գոճայեան Մ., նշվ. աշխ., էջ 159-160:

<sup>412</sup> Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 23-24:

նելու<sup>413</sup>: Հաջորդ համարներից մեկում թերթը, կրկին անդրադառնալով Չորք-Մարզպանի նարնջի բերքին, գրում էր, թե որքան էլ շատ ու բազմազան են խնդիրները, նույնիսկ 1913-ի համեմատաբար նվազ բերքի պայմաններում, այնուամենայնիվ 100-ավոր կանանց ու աղջիկների հաջողվել է շաբաթներ շարունակ ներգրավվել նարնջի արտադրման աշխատանքներում<sup>414</sup>:

Չորք-Մարզպանը ոչ միայն առատ էր նարնջենիներով, այլև ուներ մեծ քանակությամբ խնձորենիներ, ծիրանենիներ, ինչպես նաև թուզ և խաղող: Քաղաքում նման պարտեզները բազմաթիվ էին, սակայն հատկապես առանձնանում էին Պալյան ընտանիքին պատկանող այգիները<sup>415</sup>:

Այսպիսով, Չորք-Մարզպանի տնտեսության, մասնավորապես նարնջագործության առաջընթացը աստիճանաբար իր շուրջն էր կենտրոնացնում ինչպես շրջակա գյուղերի և գյուղաքաղաքների առևտրականներին, այնպես էլ օտարերկրացի վաճառականներին ու արտահանողներին: Դանդաղ, բայց հաստատուն քայլերով գյուղաքաղաքը վերածվում էր առևտրային կարևոր կենտրոնի:

1909 թ. կոտորածից հետո Չորք-Մարզպանը ևս կրել է զգալի նյութական կորուստներ և նահանգի մյուս ավերված բնակավայրերի նման լցված էր որբերով և այրիներով, որոնք օգնության կարիք ունեին:

1909 թ. Չորք-Մարզպան այցելած Տիգրան խան Քելեկյանը թերևս այդ բարերարներից մեկն էր, ով որքանոց կառուցելու համար տրամադրում է անհրաժեշտ գումար, մասնավորապես 65.000 ֆրանկ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միու-

---

<sup>413</sup> Կիլիկեան արձագանք, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 1607, 1913, 17-30 հոկտեմբեր, էջ 4:

<sup>414</sup> Կիլիկեան արձագանք, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 1651, 1913, 5-18 դեկտեմբեր, էջ 1:

<sup>415</sup> Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 19:

թյան<sup>416</sup> կողմից նախաձեռնած որբանոցի շինարարությունը սկսելու և ավարտին հասցնելու համար: Շնորհիվ այդ նվիրատվության և հետագա աջակցության՝ որբանոցը ստանում է Քելեկյան անունը: Որբանոցի կառուցման համար ընտրված հողը Պոռանյան ընտանիքը տրամադրում է անվճար: 100 հոգու համար նախատեսված որբանոցի բացումը տեղի է ունենում 1912 թ. հոկտեմբերին: 1913 թ. որբանոցին կից կառուցվում է նաև արհեստանոց: Նորակառույց շինությունը ծովին մոտ գտնվելու համար սկզբից նեթ գրավում է թուրքերի ուշադրությունը<sup>417</sup>:

1915 թ. փետրվարի 15-ին Ադանայի առաջնորդ Գևորգ ծ. վ. Արսլանյանը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանին գրում է, որ Քելեկյան որբանոցը բազմիցս խուզարկվել է և այնտեղ վնասակար ոչինչ չի գտնվել<sup>418</sup>: Մարտի 5-ին առաջնորդը ներկայացնում է որբանոցի փակվելու հարցը<sup>419</sup>: Այնուհետև շենքը բռնագրավվում է և վերածվում թուրքական վարժարանի՝ Մուլթանիե անունով<sup>420</sup>: 1918 թ. զինադադարից հետո Չորք-Մարզպան վերադարձավ 3.000 վերապրող, շրջակա բնակավայրերից նրանց միացավ ևս 1.000 վերապրող: ՀԲԸՄ-ն վերակառուցում է Քելեկյան որբանոցը: Նախաձեռնում է նաև 800 որբի համար նախատեսված երկրորդ՝ Սիսվան որբանոցի շինարարական աշխատանքները՝ ներդնելով շուրջ 30.000 եգիպ-

---

<sup>416</sup> Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ)-մարդասիրական, բարեգործական կազմակերպություն: Հիմնադրվել է 1906 թ. Եգիպտոսում: Ապրիլի 15-ին Կահիրեում՝ Պողոս Նուբարի տանը, տեղի է ունեցել միության հիմնադիր-սահմանադիր ժողովը: Գեորգեան Յարութին Ռ., Թաշճեան Վահե, Դար մը պատմություն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Կեդրոնական վարչություն, 1906-1940, հ. 1, Գահիրե-Փարիզ-Նիւ Եորք, ՀԲԸՄ, թարգմ. Գ. Շահինեան, Շ. Արծրունի, "Impression Brochage" 2006, էջ 19:

<sup>417</sup> Սահակյան Վ., «Քելեկյան» և «Սիսվան» որբանոցների գործունեությունը, Բանբեր Մատենադարանի, N 22, «Նաիրի», Երևան, էջ 540-541:

<sup>418</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 535-49, 15 փետրվարի 1915 թ., թ. 275:

<sup>419</sup> Տե՛ս նույն տեղում, 544-58, 5 մարտի 1915 թ., թ. 286:

<sup>420</sup> Քելեկեան որբանոցը, «Կոչակ», Նիւ Եորք, թիւ 48, 1915, նոյեմբերի 27, էջ 1075:

տական ոսկի<sup>421</sup>: Հարկավոր է նշել, որ 1918 թ. զինադադարից հետո վերապարձ հայերը վերադառնալով՝ կրկին բազմաթիվ ներդրումներ կատարեցին, որոնք նույնպես մատնվեցին կորստի:

### **Չորք-Մարզպան գավառակի գյուղերը**

**Էռզերլի** գյուղը գտնվում էր Չորք-Մարզպանից հարավ, բնակչությունը 400 տուն էր, որից 300 հայ և 100 թուրք<sup>422</sup>: Այլ տվյալների համաձայն՝ Էռզերլիում 1.560 հայ է նշվում<sup>423</sup>: Գյուղում կար եկեղեցի և դպրոց: Հայ բողոքականները գյուղում ունեին ժողովարան<sup>424</sup>: Հիմնական եկամտի աղբյուրը նարնջագործությունն էր: Երկրագործությունը Չորք-Մարզպանի համեմատությամբ ավելի մեծ էր, ընդդեմի տասանորդը հասնում էր 40.000 դուրուշի<sup>425</sup>:

**Օջաքը** (Օջաքլու) գյուղը գտնվում էր Չորք-Մարզպանից քառորդ ժամ հյուսիս: Ուներ 550 տուն բնակչություն, որից 350-ը՝ հայ: Ընդդեմի տասանորդը հասնում էր 120.000 դուրուշի<sup>426</sup>: Ըստ այլ տվյալների՝ Օջաքըում նշվում է 2.545 հայ<sup>427</sup>:

Օջաքը գյուղում յուրաքանչյուր տուն ուներ 1.000-2.000 քառ. մ տարածությամբ պարտեզ, որոնց 75 տոկոսը զբաղեցնում էին նարնջի ծառերը, աճում էին նաև այլ պտղատու ծառեր՝ մասնավորապես ծիրան, թուզ, խաղող և այլն<sup>428</sup>:

Օջաքը գյուղում Գյոքչյան եղբայրները հիմնադրել էին նարնջի վաճառատուն-աշխատանոց, որտեղ աշխատում էին մոտ 700 երկսեռ բանվոր: Գյոքչյանների վաճառատան հետ հաջողությամբ մրցակցում էր Բոյաճյան վաճառատունը: Վերջինիս վաճառատուն-աշխատանոցը քարաշեն էր և, նույնպես,

<sup>421</sup> Սահակյան Վ., «Քելեկյան» և «Միսվան»..., էջ 542:

<sup>422</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 58:

<sup>423</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 305:

<sup>424</sup> Գոճայեան Ս., նշվ. աշխ., էջ 143:

<sup>425</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 59:

<sup>426</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>427</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 305:

<sup>428</sup> Խապրիկ Ս., նշվ. աշխ., էջ 55:

ուներ հարյուրավոր աշխատողներ: Գյոքչյան Գրիգորին էր պատկանում նաև ձավարեղեն մանրող ջրաղացը<sup>429</sup>:

**Նաջարը** (Նաջարլու) գյուղում կար 750 հայ<sup>430</sup>: Գյուղն ուներ եկեղեցի: Նաջարլում հսկայական հողատարածքներ պատկանում էին Փելթեքյան ընտանիքին<sup>431</sup>:

### **Բահչե և Իսլահիե գավառակները**

Բահչեն գավառակի կենտրոնն էր, գտնվում էր Բաղդադի երկաթուղու զծի վրա, ուներ 160 տուն, որի կեսը հայ էր: Խանութների մեծ մասը պատկանում էին հայերին: Արհեստավորները նույնպես հիմնականում հայեր էին: Զբաղվում էին շերամաբուծությամբ և ծխախոտի արտադրությամբ: Երկաթուղու շինարարությունը բավականին բարելավել էր Բահչեի և շրջակա գյուղերի տնտեսական վիճակը: Եթե նախկինում մեկ ձիապանն օրական հազիվ 10-12 դուրուշ էր աշխատում, ապա երկաթզծի կառուցումից հետո հեշտությամբ կարող էր աշխատել կրկնակի ավել՝ 20-25 դուրուշ<sup>432</sup>:

**Լափաջը** (Լափաջլու) գտնվում էր Բահչեից մեկ ժամ դեպի հյուսիս-արևմուտք, հայաբնակ գյուղ էր՝ 120 տուն հայ և միայն մեկ տուն թուրք: Լափաջըրցիների մեծ մասը երկրագործ էր, ունեին արտեր, մեծ թիվ էին կազմում ձիապանությամբ զբաղվողները<sup>433</sup>:

**Իսառնի** (Հարունիե) գտնվում էր Լափաջըրից հյուսիս-արևմուտք, 200 տուն բնակչությունից միայն 30 տուն էր թուրք, 170-ը՝ հայ: Գլխավոր զբաղմունքը հողագործությունն էր, ծխախոտի մշակությունը, մասամբ՝ շերամաբուծությունը<sup>434</sup>, տարածված էր նաև բամբակագործությունը և ցորենի մշակությունը: Բամբակը

---

<sup>429</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 52-53:

<sup>430</sup> Kevorkian R. H., Paboudjian P. B., նշվ. աշխ., էջ 304:

<sup>431</sup> Խապրիկ Մ., նշվ. աշխ., էջ 46:

<sup>432</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 67:

<sup>433</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 69:

<sup>434</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 69-70:



արտահանվում էր Ադանա, Տարսոն և Մերսին<sup>435</sup>: 1909 թ. ջարդից առաջ համարվում էր լավագույն տնտեսական վիճակ ունեցող գյուղը:

**Հասանբեյլին** գտնվում էր Ամանոսի լեռնաշղթայի լանջին՝ շրջապատված անտառներով, ուներ 400 տուն, որից միայն 30-ն էր թուրքերով բնակեցված: Կար փոքր շուկա: Հիմնականում զբաղվում էին հողագործությամբ, ծխախոտի մշակությամբ, շերամաբուծությամբ և այլն<sup>436</sup>: Հասանբեյլիում, ըստ 1908 թ. պաշտոնական մարդահամարի, կար 1.848 հայ բնակիչ<sup>437</sup>:

**Քիշնեշ** գյուղը գտնվում էր Հասանբեյլիից հարավ-արևելք: Ուներ 60 տուն բնակչություն՝ 30-ը հայ, 30-ը՝ թուրք: Ջբաղվում էին հիմնականում երկրագործությամբ, շերամաբուծությամբ: Պահում էին նաև կով և այծ: **Էնթիլլին** գտնվում էր Հասանբեյլիից հյուսիս-արևելք, Բաղդադի երկաթգծի վրա: 100 տուն բնակչությունից 30-ը՝ հայ: Գյուղում կար անգամ հիվանդանոց: **Քյունեսլերը** Հասանբեյլիից հյուսիս-արևելք ընկած գուտ հայաբնակ գյուղ էր՝ 10 տուն: **Գյոքչայիբը** ևս գուտ հայաբնակ գյուղ էր՝ 14 տուն, այստեղ աճում էին ծխախոտի լավագույն տեսակները<sup>438</sup>:

**Գոյակը** նույնպես գուտ հայաբնակ գյուղ էր: 20-րդ դարի սկզբին ուներ 30 տուն հայ բնակիչ: Ջբաղվում էին հողագործությամբ, արհեստագործությամբ<sup>439</sup>:

## **Օսմանիե գավառակ**

Օսմանիեն գտնվում էր Ադանայից դեպի արևելք և Չորք-Մարգպանից դեպի հյուսիս: Օսմանիե գավառակում 19-րդ վեր-

---

<sup>435</sup> Գրիգոր Գ. Գուտուլեան, Կիլիկեան լուրեր, Խառնը-Հարունիե, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 5,149, 1913, սեպտեմբեր 18-1 հոկտեմբեր, էջ 1:

<sup>436</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 64-65:

<sup>437</sup> Թերզեան Յ. Կիլիկիոյ աղետը, էջ 202:

<sup>438</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 70-73:

<sup>439</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 943:

ջին կար 35 գյուղ՝ 7.370 բնակչով<sup>440</sup>: 1909 թ. ջարդից առաջ ուներ 1.000 տուն, որից՝ 200-ը հայ<sup>441</sup>: Համաձայն այլ տվյալների՝ ջարդից առաջ կար 150 տուն հայ բնակիչ, որից մնացել էր 30 տուն: Հետագայում շրջակա տարածքներից գաղթածների հաշվին դառնում է 100 տուն<sup>442</sup>: 1913 թ. գավառակում կար 9.832 հայ: Զբաղվում էին հողագործությամբ, շերամապահությամբ, տիրապետում էին տարբեր արհեստների, ներգրավված էին առևտրի մեջ<sup>443</sup>: Օսմանիեն հայտնի էր նաև փայտի առևտրով<sup>444</sup>:

Թեև Ջերեզ-Բերեքեթի գավառում նարնջագործությունը գյուղատնտեսության առաջատար ճյուղն էր, սակայն կարևոր տեղ էին զբաղեցնում նաև ծխախոտագործությունն ու շերամաբուծությունը: Ջերեզ-Բերեքեթի գավառն աստիճանաբար ընդլայնում էր արտաքին և ներքին առևտրի շրջանակները՝ գրավելով սպառման նոր շուկաներ: Գավառն իր նարնջի արտադրության ու ապրանքաշրջանառության ծավալներով դառնում էր նահանգում երկրորդը՝ Ադանայի բամբակագործությունից հետո:

Ներկայացնելով Ադանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը գավառ առ գավառ՝ մեր առջև տվյալների տեղեկատվական բանկ ստեղծելու խնդիր էինք դրել: Ակնհայտ է, որ բերված տվյալներն ամբողջական չեն, սակայն, կարծում ենք, բավարար են նահանգի հայերի ընդհանուր տնտեսական ներուժը ցույց տալու համար: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգը Օսմանյան կայսրության տնտեսապես առաջատար նահանգների թվին էր պատկանում, և հայերը, անշուշտ, այդ տնտեսության ստեղծման ու կայացման գործում առաջիններից էին:

---

<sup>440</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., հ. 5, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2001, էջ 487:

<sup>441</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 195:

<sup>442</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 61:

<sup>443</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 487:

<sup>444</sup> Խանձեան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 64:

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ 1909 Թ. ԶԱՐԴԵՐԻ  
ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՐԱ**

**3.1. Օսմանյան իշխանությունների հողային  
քաղաքականությունը: Ադանայի նահանգի  
հայության նյութական վիճակը մինչև 1909 թ.  
կոտորածը**

Ադանայի նահանգի հողերը մշտապես գտնվում էին օսմանյան իշխանությունների ուշադրության կենտրոնում: 19-րդ դարից սկսած դրանք շարունակաբար հատկացվում էին մուսուլմաններին, և հատկացումների շրջանակը մշտապես ընդլայնվում էր ի հաշիվ հայկական հողերի: Երբեմն այդ գործընթացները տեղի էին ունենում «օրինականության» շրջանակներում, ավելի հաճախ դրանք խլվում էին բռնությամբ:

1864 թ. օսմանյան կառավարությունը, ինչպես հայկական մյուս նահանգներում, այնպես էլ Ադանայում, բնակեցնում է Կովկասից գաղթած 10-12 հազար չերքեզների: Բնակեցումների համար ընտրվում էին հատկապես այն գավառները, որտեղ մեծամասնություն էին կազմում հայերը, և կային հարուստ բնական պաշարներ<sup>445</sup>:

1894-96 թթ. համիդյան ջարդերի և դրանց հետևանքով առաջացած պայմանների արդյունքում շուրջ 80.000-100.000 հայ թողել էին իրենց շրջանները՝ գաղթելով կայսրությունում հայերի համար փոքր ի շատե ապահով վայրեր: Կառավարու-

---

<sup>445</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 33, 1910, փետրվարի 12, էջ 2:

թյունը բոլոր նրանց, որոնք մեկ անգամ դուրս էին եկել իրենց բնակավայրերից, արգելում էր վերադառնալ: Նրանց թողած հողերն ու գույքը տրվում էին մուսուլմաններին: Թուրք, քուրդ գյուղացին, ինչպես նաև չերքեզները տեր էին դառնում հայկական հսկայական շրջանների<sup>446</sup>: Իրավիճակը և հայերի դրությունը բարդացնող այլ պայմաններ ևս կային:

Շնորհիվ ներքին անցագրի խստության՝ հայերը չէին կարողանում մի գյուղից մյուսը գնալ, փոխանակել իրենց մթերքները, աշխատանք գտնել, մնում էր միայն ճանապարհներ որոնել օրենքը շրջանցելու համար: Բացահայտվելու դեպքում հետևանքները ծանր էին լինում ոչ միայն տվյալ գյուղացու, այլև ամբողջ գյուղի համար: Երբեմն մի քանի ոսկի ծախսելով հնարավոր էր լինում ձեռք բերել ներքին անցագիր, սակայն այդ հաջողվում էր շատ քչերին<sup>447</sup>:

Հակառակ վերը նշվածին՝ կառավարությունը հեշտությամբ տրամադրում էր անցագրի բոլոր նրանց, որոնք ցանկանում էին մեկնել կայսրության առավել հեռավոր նահանգներ կամ արտասահման: Այսպիսով, հարևան գյուղ գնալը եթե արգելված էր կամ «օրինականորեն» խոչընդոտվում էր, ապա առավել հեռու վայրեր գնալը խրախուսվում էր: Հեռացողին արգելվում էր վերադառնալ, ուստի արտագաղթում էին ընտանիքներով: Հեռացողների հողը դառնում էր կառավարության սեփականությունը, որը բնակեցվում էր չերքեզներով, քրդերով կամ այլ մուսուլմաններով: Այսպիսով, բազմաթիվ հայկական գյուղեր այս ճանապարհով դառնում էին մուսուլմանների սեփականությունը: Տարածքներ, որ 10-15 տարի առաջ հայկական էին, 19-րդ դարի վերջից սկսած դառնում էին մուսուլմանական<sup>448</sup>: Ստեղծված իրավիճակին պարբերաբար անդրադառնում էր Ժամանակի

---

<sup>446</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 27, 1910, փետրւարի 5, էջ 2:

<sup>447</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>448</sup> Տե՛ս նույն տեղում:

հայ մամուլը՝ ներկայացնելով վերլուծություններ, օրինակներ և փաստեր.

«Կառավարությունը փոխանակ մտածելու Ադանայի պտղաբեր դաշտի ճահիճները չորացնելու և ոռոգման գործը կանոնաւորելու, որով հնարաւորութիւն կը ստացուէր կրկնապատկել, եռապատկել գիւղերի թիւը, նա լցնում էր բոլոր հնարաւոր վայրերը նորանոր գաղթականութեամբ: Այսպիսով հայկական հողերի կողքին և յաճախ խառն կանգնում էին թիրքական գիւղեր և ազարակներ: ...Շնորհիւ կառավարութեան այդ տաքտիկայի Կիլիկիան դարձաւ մի չափազանց սակաւահող վայր, ուր հողի գինը բարձրացել էր, Տաճկաստանի վերաբերմամբ, ամենամեծ չափերի»<sup>449</sup>:

19-րդ դարի 60-ական թթ. վերջերից հողի գինը անընդմեջ աճելով՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին բարձրացել էր տասն անգամ<sup>450</sup>: Ընդհանրապէս այս երևույթը բնորոշ էր ոչ միայն Կիլիկիային, այլև ողջ կայսրությանը: Հողատարածքների գները տարբեր էին՝ կապված հողի բերքատվությունից և տեղանքից<sup>451</sup>:

1894-96 թթ. կոտորածներից հետո հայերից առգրավվել ու վաճառվել էր ավելի քան 7.000 միավոր հողակտոր (ավելի քան 100 դեռնում տարածք)<sup>452</sup>:

Դանդաղ, բայց հետևողականորեն դատարկելով հայկական նահանգները, Կիլիկիան և հայաբնակ մյուս վայրերը՝ սուլթանական, այնուհետև երիտթուրքական կառավարությունները հետապնդում էին մի կարևորագույն նպատակ՝ ազատվել հայ-

---

<sup>449</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 33, 1910, փետրւարի 12, էջ 2:

<sup>450</sup> Инджикян О. Г., նշվ. աշխ., էջ 72:

<sup>451</sup> 20-րդ սկզբին Բալքանիսում մեկ դեռնում հողն արժէր 15 ֆրանկ, դեպի արևելք՝ կախված տեղանքից, արժէքը տատանվում էր 2-3-ից մինչև 40-80 լիր (1 լիրը = 22 ֆրանկ): Միրիայում գները տատանվում էին 0,5 ֆրանկից մինչև 30-50 ֆրանկ: Լիբանանում դրանք 10-20 անգամ բարձր էին: Արևմտյան մասերում խաղողի այգիների մեկ դեռնումը արժէր 100-400 ֆրանկ, թզի այգիները նույնքան կամ ավելի, իսկ ձիթենու տնկադաշտերը՝ 2.120 լիր: Տե՛ս Инджикян О. Г., նշվ. աշխ., էջ 72-73:

<sup>452</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 60:

կական տարրից, կամ այնպես նվազեցնել հայ բնակչության թվաքանակը, որ վերջիններս որևէ վայրում՝ հատկապես հայկական նահանգներում, մեծամասնություն չկազմեին: Ազատվելով քրիստոնյա բնիկ փոքրամասնություններից՝ կառավարությունը ձեռք էր բերում *թուրքական* պետության գոյատևման համար ամենակարևոր գործոնը՝ տարածություն, հող, որը բնակեցված էր թուրքերով կամ այլ մուսուլմաններով: Վերջիններս մեծամասամբ ներգաղթյալներ էին և պետության օգնությամբ հեշտությամբ հողատարածքներ էին յուրացնում: Իսկ կայսրության հեռավոր նահանգներում ցրված հայերը այլևս վտանգ չէին ներկայացնում, քանի որ, կտրվելով հողից ու միջավայրից, դատապարտված էին դանդաղ ձուլման:

Արդուհամիդյան բռնապետության դեմ պայքարելիս՝ երիտթուրքական առանձին գործիչներ ժողովրդական զանգվածների համակրանքը նվաճելու համար հայտարարում էին, թե ովքեր զրկվել են իրենց հողերից, անվճար հետ կստանան անգամ այն դեպքում, եթե դրանց վրա հաստատվել են մուսուլման փախստականներ: Բայց գալով իշխանության՝ նրանք հրաժարվեցին իրենց խոստումներից<sup>453</sup>:

1908 թ. Մահմանադրության վերահռչակումից հետո իրենց նախկին բնակավայրեր վերադարձող հայերը փորձում էին վերականգնել իրենց կալվածքները, սկզբնական շրջանում կառավարությունը կարծես թե աջակցում էր նրանց այս հարցում: Բայց խնդրի լուծումը դյուրին չէր, նախկինում հայկական եղած և այժմ մուսուլմաններով բնակեցված գյուղերի թիվը քիչ չէր: Մա առաջ էր բերում երկկողմանի դժգոհություններ և խժոժություններ, քանի որ 10-15 տարի ապրելով, մուսուլմանները իրենց համարում էին հողի տերերը և չէին ցանկանում թողնել դրանք: Արդյունքում կառավարությունը տեղի է տալիս մուսուլման-

---

<sup>453</sup> Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, ՀՄՍ ԳԱ հրատ., 1979, էջ 48:

ների պահանջներին՝ հայտարարելով, որ այլևս չի կարելի բռնի կերպով քշել վերջիններիս<sup>454</sup>:

1908 թ. սեպտեմբերին երիտթուրքերը հայտարարեցին, որ գյուղացիներին վարկավորման եղանակով պետք է բավարարել հողով, այսինքն՝ պետական միջոցներից վարկ տրամադրել գյուղացիներին, որ փրկագներն իրենց հողամասերը կամ ձեռք բերեն նոր տարածքներ, հետո վարկը մաս-մաս վերադարձնեն գանձարան, սակայն աղաներն ու մուսուլման գյուղացիները հայերին հողամաս չէին վաճառում: Այնուհետև երիտթուրքերը հողերը տրամադրելու դիմաց առաջ քաշեցին այնպիսի պայմաններ, որոնք դժվար հաղթահարելի էին հայերի համար<sup>455</sup>: Նմանօրինակ հրահանգներից մեկով սահմանված էր, որ այն հողերը, որոնք, տերերի բացակայության ժամանակ թափուր համարվելով, պարտքերի և տուրքերի դիմաց վաճառվել էին, պետք է տրվեին վերջին կալվածագիրը ներկայացնողին, իսկ տերերին կառավարական գանձարանից պետք է վճարվեր այն գինը, որը ժամանակին վճարել էին գնորդները: Եթե նրանց հողերի վրա հիմնվել էին նոր գյուղեր, ապա հայերը կարող էին ստանալ միայն հողի արժեքը՝ հողի գնահատման նոր գներով: Իսկ բոլոր անհամաձայնություններն այսուհետև պետք է լուծվեին դատական կարգով<sup>456</sup>: Իսկ անհամաձայնությունները բազմաթիվ էին, քանի որ հայերը չէին ցանկանում որևէ դրամական հատուցում և ուզում էին հետ ստանալ իրենց հողերը:

1909 թ. «Ազատամարտ» թերթը, անդրադառնալով հողային խնդիրներին առանձնացնում էր գրավումների գործադրության եղանակները, ըստ որի՝ գրավումներ իրականացնելու տարբերակներից մեկը բռնությունն էր: Թուրք, քուրդ աղան կամ բեկը

---

<sup>454</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 27, 1910, փետրւարի 5, էջ 2:

<sup>455</sup> Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը..., էջ 48:

<sup>456</sup> Հողային խնդիրը հայաբնակ գաւառներու մէջ, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 4,140, 1910, մայիս 25-7 յունիս, էջ 1:

պաշտոնյաների աջակցությամբ կամ թույլատվությամբ, բռնի ուժով հայերին քշում էին իրենց սեփական հողերից և տիրանում դրանց: Հայերը, ինքնապաշտպանության բոլոր միջոցներից զրկված լինելով, դիմում էին արտագաղթի: Դրանից բացի՝ առանց փոխարժեքը վճարելու կառավարությունը բռնությամբ գրավում էր հայերից ընդարձակ հողաբաժիններ և տալիս մուսուլման փախստականներին: Այսպիսով, կառավարության դրսևորած կամայականությունների արդյունքում հողատեր հայ գյուղացին դառնում էր հողագուրկ վարձու մշակ: Բացի այդ՝ ընդհանուր հարստահարություններից որոշ չափով խուսափելու համար հայ գյուղացին դիմում էր որևէ աղայի՝ ակնկալելով պաշտպանություն, փոխարենը տալով իր հողի լավագույն մասը: Արդյունքում՝ հայ գյուղացին մտնում էր պաշտպան աղայի հպատակության և հարկատվության տակ: Գործում էր նաև կեղծիքի տարբերակը՝ աղան սպառնալիքով գյուղի մեծերից կամ ժողովրդից վերցնում էր բացակա կամ գաղթած հողատերերի *մազպայթանները* (տեղեկագիր) և հողերը փոխում է իր անվամբ: *Թափուի* գործողության ժամանակ աղան՝ սեփականատիրոջ փոխարեն, ներկայացնում էր մեկ ուրիշ հայի: Կառավարական պաշտոնյանները, քաջատեղյակ լինելով կեղծիքին, լռում էին, քանի որ իրենք ևս այս ձևով տիրանում էին հայկական մեծ հողատարածքների: Գործում էր նաև բարձր տոկոսների տարբերակը, ըստ որի հայ գյուղացին ստիպված էր լինում դիմել բեկերին, աղաներին կամ հայ վաշխառուներին՝ դրամ խնդրելով կառավարական տուրքերի, սերմացուի կամ այլ խնդիրների համար: Տոկոսը կազմում էր 100-ին 200 կամ ավելի բարձր: Չկարողանալով պարտքը վճարել՝ պարտատիրոջը տալիս էր իր հողը, անասունները, լուծքը, սակայն դրանով չէր ազատվում: Պարտավորվում էր նաև աշխատել՝ դառնալով պարտատիրոջ ստրուկը: Պարտքի տարբերակով կատարվող հարստահարության ձևերից էր նաև *սալաֆը*, որը արվում էր օրական ապրուստի կամ տուրքերի կարիքից ելնելով, այսինքն՝



ձմռանը վերցնում է 20 դուրուշ՝ պարտավորվելով վեց ամիս հետո՝ աշնանը տալ, օրինակ, գառ, որն արժեք 40 դուրուշ, կամ 50 դուրուշի փոխարեն ութ կոտ ցորեն, որն արժեք 80 դուրուշ: Փաստորեն, վերցնելով որոշակի գումար, պարտավորվում էր վերադարձնել կրկնակին: *Միրիպան* ևս պարտքի տարբերակ էր, սակայն դրամի փոխարեն գյուղացուն տրամադրվում էր սերմացու և աշխատանքի պարագաներ: Վերջինս պարտավորվում էր կիսվել բերքով, պարտքից ազատվելու ընթացքը այնքան էր շարունակվում մինչև գյուղացին դառնում էր հողագուրկ: Գրավի ձև էր նաև *մարունան*. գյուղացին չնչին գնով գրավադրում էր իր հողը, օրինակ 10-30 ոսկի արժողությամբ հողը՝ հինգ ոսկով: Ժամանակին պարտքը վերադարձնել չկարողանալով՝ զրկվում էր հողից: Սակայն ավելի հաճախ պատահում էր, որ հողը գրավվում էր պայմանաժամից առաջ<sup>457</sup>:

Կայսրության գավառներում նման դրսևորումներն առօրեական էին և բխում էին ծանր սոցիալական վիճակից՝ մուսուլման աղան կամ բեկը, օգտվելով հայի իրավագուրկ և սնանկ վիճակից, պարզապես հարստանում էր ու ամրապնդում իր տեղական իշխանությունը որոշակի տարածքում: Գավառաբնակ աղաները հիմնականում սոցիալական խնդիր էին լուծում և հեռու էին պետական մտածողությունից. նրանց գործողությունները պարզապես բխում էին պետության շահերից և խրախուսվում տեղական իշխանությունների կողմից, որոնք, կողոպտելով հայերին, սեփական շահը համադրում էին պետականի հետ՝ կատարելով կենտրոնական կառավարության կողմից տրված հստակ ցուցումներ:

Անշուշտ, պետականորեն գրավումներ կատարելու ամենահարմար և օրինական տարբերակը բանկային համակարգն էր, որն էլ, հանձին Երկրագործական բանկի, գործում էր անխափան: Հողային գրավադրում կատարելու դեպքում բանկը չնչին փոխատվությամբ վերցնում էր ավելի մեծ արժողությամբ

---

<sup>457</sup> Մարգպետ, Հողային հարցի շուրջ, Հարստահարութեան ձևեր, «Ազատամարտ», Կ.Պոլիս, թիւ 136, 1909, նոյեմբերի 18-1 դեկտեմբերի, էջ 2:

հողեր: Տրված գումարը բաղադրյալ տոկոսով աստիճանաբար հասնում էր խոշոր չափերի: Գյուղացին, չկարողանալով վճարել, զրկվում էր իր հողերից: Բանկը գրավում էր դրանք և դնում աճուրդի: Հայերը նույնիսկ հնարավորության դեպքում չէին կարող մասնակցել աճուրդներին, քանի որ ազդեցիկ թուրքերն արգելքներ էին դնում, անգամ սպառնում<sup>458</sup>: Այսպիսով, երկրագործական բանկը, որի գործունեության առանցքը պետք է լիներ հողագործ ժողովրդի տնտեսական վիճակի բարելավումը, գործում էր ճիշտ հակառակ սկզբունքով. սնանկացնում էր գյուղացուն՝ տիրանալով նրա հողին: Երկրագործական բանկի միջոցով կառավարությունը կարճ ժամանակահատվածում կարողացավ յուրացնել զգալի թվով հայկական հողեր:

Ինչպես տեսանք, երիտթուրքերը գործնականում շարունակում էին նախորդ վարչակարգի կողմից իրականացվող հողազրկման քաղաքականությունը: Ինչպես համիդյան տարիներին, այժմ նույնպես բռնագրավում էին հայերի հողերը տարբեր ճանապարհներով, իսկ ավելի հաճախ՝ բանկի միջոցով, որը հողազրկման առավել «օրինական» և քաղաքակիրթ տարբերակ էր: Կառավարող շրջանակները հասկանում էին, որ իրենց կոշտ տնտեսական քաղաքականության արդյունքում հայ հողատերերը կամ գյուղացիները միջոցների սղության պատճառով ստիպված էին լինելու գրավադրել հողը: Բարձր տոկոսների, ծանր հարկային քաղաքականության և երբեմն նաև ավերումների, հրկիզումների և արհեստականորեն ստեղծված այլ խոչընդոտների հետևանքով հայ հողատերերը չէին կարողանալու վերադարձնել գումարը: Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ կատարվում էր պարզապես բանկային գործարք՝ շահող և տուժող կողմերով, սակայն թվացյալ օրինականության ներքո պետության մակարդակով տեղի էր ունենում «օրինականացված» կողոպուտ: Սկսելով հայերի հողազրկման գործընթացը՝ կառա-

---

<sup>458</sup> Տե՛ս նույն տեղում:

վարությունը հետևողականորեն այն տանում էր մինչև վերջ՝ ավելի ու ավելի բարդացնելով հայերի կորցրած սեփականությունը օրինական ճանապարհով հետ բերելու բոլոր հնարավորությունները:

Հողային գործարքները գնալով դառնում էին ավելի շահավետ: Բացի այն, որ հողերի հայաթափության արդյունքում փոխվում էր ժողովրդագրական պատկերը, այլև ինչպես համիդյան վարչակազմը, այնպես էլ երիտթուրքերը դրանք իրենց ձեռնտու մարդկանց վաճառելով, երբեմն նվիրելով՝ տարբեր վայրերում կարևոր խնդիրներ էին լուծում. համախոհներ կամ կամակատարներ էին ձեռք բերվում, որոնք դառնալով հողատերեր՝ այլևս շահագրգիռ էին դրանք պահելու հարցում:

Գրավումների գործադրության նպատակներն ու հետևանքները լավ հասկանալով՝ ժամանակի առաջադեմ մտավորականները, հայ քաղաքական գործիչները, քաղաքական կուսակցությունները և հատկապես Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանն ու Կիլիկիո կաթողիկոսարանը շարունակ բարձրաձայնում էին դրանց մասին, ինչպես նաև փորձում էին գտնել հնարավոր լուծումներ: Այս խնդրի առիթով օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գ. Զոհրապը Օսմանյան կայսրության վարչապետ Սաիդ փաշային գրում է.

«Ի՞նչպես համոզուած չըլլամ երբ համիտական ռեժիմին պարծանքը կազմող աղիտաբեր քաղաքականութիւնը սահմանադրական ռեժիմին մէջ ամէնէն առաջ կեդրոնի իշխանութեան գործունէութեան մէջ երեւան կուզայ: Բ. Դրան գործքերուն և որոշումներուն մէջ բազմաթիւ փաստեր կան որոնք կը մատնեն Հայերը տնտեսապէս փճացնելու քաղաքականութիւնը: Վերջերս նախարարական խորհուրդին տուած այն որոշումը թէ կալուածագիր ունեցող ու տուրք վճարող Հայը իր հողին սեփականատէր չլիտի նկատուի ու պարտաւոր պիտի ըլլայ դատարանին դիմելու, առաջին փաստն է ուղղութեան մը՝ որ ներկայիս, կառավարութեան համար պատուաբեր չի կրնար նկատուիլ: Մինչդեռ հողային օրէնքին 72-րդ յօդուածին բացորոշ տրամադրութեան համաձայն, պէտք չէր՝ ականայ գիւղերը լքելու հարկադրուած ժողովուրդին»

սեփական հողերը մահիլի ու թափուի միւսթահագգ նկատել»<sup>459</sup>:

Գ. Զոհրապը նշում էր նաև, որ ջարդերի հետևանքով իրենց գյուղերը թողած հայերի հողը տերերին վերադարձնել չուզե-նալը վերոհիշյալ քաղաքականության ապացույցն էր, մինչդեռ օրենքի 180-րդ հոդվածի համաձայն պետք էր պատժել քուրդ ավատապետերին՝ հայերից տուրք գանձելու համար<sup>460</sup>: Այնուհետև Զոհրապը շեշտում էր, որ մեծամասամբ մուսուլմաններից կազմված դատարանը այդ գանձումներին տալիս էր շինծու օրինականություն՝ դրանք համարելով քրդերց՝ հայերի վարձած հողերի հարկ: Այսպիսի մեկնաբանություններով իշխանություն-ները փորձում էին կոծկել նման անօրինականությունները և հայերի հողը քրդերին տալով շարիաթական դատարանների կողմից սեփականագրեր էին տրամադրում վերջիններիս<sup>461</sup>:

Անպատիժ իրականացվող հողային գրավումների մասին գրում է նաև ռուս լրագրող Ա. Տիրկովան՝ նշելով, որ մուսուլ-մանները սովոր էին հայերին համարել օրենքից դուրս և վերցնել այն, ինչ ցանկանում էին: Ա. Տիրկովան հավելում է, թե հայերը ոչ մի լավ բան չէին ակնկալում թուրքական դատարան-ներից, ուստի նախընտրում էին, որ հողային հարցերում հանձ-նաժողովը որոշումներ ընդունի վարչական կարգով, այլ ոչ թե դրանք հանձնվեին դատարաններին<sup>462</sup>:

Հողային գրավումների հարցը քննարկվում էր նաև հայ հե-ղափոխական կուսակցությունների նիստերի օրակարգերում: Մասնավորապես Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցու-թյունը, 1910 թ. քննարկելով այս հարցը, նկատում է. «Հին րեժիմի

---

<sup>459</sup> Պ. Զոհրապի յիշատակագիրը ուղղուած Վարչապետ Սախտ փաշայի, «Ազա-տամարտ», Կ. Պոլիս, թիւ 776, 1911, դեկտեմբեր 21-3 յունուար, էջ 1:

<sup>460</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>461</sup> Վավերագրական նյութեր Արևմտահայերի մասին, Գ. մատենաշար, Երևան, 1983, էջ 7:

<sup>462</sup> Тыркова А., Старая Турция и Младотурки, Год в Константинополе, Петроград, Типография Б.М. Вольфа, 1916, с. 65-66.

պետական քաղաքականութիւնը եղած է կարգ մը միջոցներով, ինչպէս նաեւ հողային բռնագրաւումներով հարուածել հայ ժողովուրդը: Նախորդ րեժիմէն ժառանգուած այդ քաղաքականութիւնը ներկայիս ալ կը հետապնդուի զօրեղ թափով»<sup>463</sup>: 1911 թ. ընդարձակ քննարկում է իրականացրել նաև Հ. Յ. Դաշնակցություն կուսակցությունը՝ մասնավորապէս արձանագրելով, որ Համիդյան ռեժիմի տարիներին, հատկապէս 1890-ական թթ. սկսած, հայաբնակ նահանգների մեջ տիրող բռնության, ավարառության, անօրինականության և օրենքի խախտումների արդյունքում հայերը զրկվում էին իրենց հողերից, որը հաճախ նրանց ապրուստի միակ միջոցն էր: Համիդյան բռնություններից տարագիր տասնյակ հազարավոր հայեր, ապավինելով սահմանադրական կարգերին, վերադառնալով իրենց հայրենիքը, գտնում էին իրենց հողերը գրավված, իսկ իրենց օրինական սեփականությունը պահանջելու դեպքում ստանում էին մերժում: Հարկավոր է շեշտել, որ օսմանյան հողային օրենքների համաձայն՝ հողը օգտագործելու իրավունքը տրված էր այն մշակողին, մինչդեռ վերջին 30 տարիների ընթացքում հայ գյուղացիներից հողերը հափշտակվել էին կա՛մ բռնությամբ, կա՛մ օրինական խարդախություններով, կա՛մ մահվան սպառնալիքով՝ հարկադրելով դրանք թողնել և հեռանալ երկրից<sup>464</sup>:

1909 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը ստեղծել էր Հողային հանձնաժողով (Ն. Տաղավարյան, Ղ. Հ. Պեզագյան, Ռ. Փափագյան, Արամ Հալաճյան, Գեղամ Տեր-Կարապետյան): Հանձնաժողովի կողմից պատրաստվել է հայոց ազգային ու անհատական գրավյալ հողերի ու կալվածքների ցուցակները՝ հստակ նշելով, որ իրենց ունեցած տվյալները չեն ներկայաց-

---

<sup>463</sup> Սօս-Դէմ. Հնչակ. Կուսակցութեան Տաճկ. Ա. Ընդի. Պատգամաւորական ժողովի գլխաւոր որոշումները, Հողային հարց, «Ապագայ», Կ. Պոլիս, թիւ 18, 1910, օգոստոսի 28, էջ 138:

<sup>464</sup> Թուրքիա, Հողավեճը, «Ազատամարտ», Կ. Պոլիս, թիւ 792, 1912, յունուար 10/23, էջ 1:

նում գրավումների ամբողջական պատկերը և շարունակական համալրման կարիք ունեն: Յուրակները ներկայացվել են Կ. Պոլսի Հայոց պատրիարք և Ազգային կենտրոնական վարչության նախագահ Եղիշե արք. Դուրյանին և Պատկառելի Քաղաքական ժողովին:

Հոդային գրավման հանձնաժողովը իր աշխատանքները կատարել է՝ ուղենշային համարելով հետևյալ դասակարգումը.

1. Տուրքի փոխարեն կառավարության կողմից չնչին գնով ծախված հողեր:
2. Պարտքի փոխարեն Երկրագործական բանկի կողմից էժան գներով ծախված հողեր:
3. Անհատների փոքր պարտքերի փոխարեն դատարանով գրավված արժեքավոր հողեր:
4. Կեղծ պահանջատերեր, որոնք սուտ վկաներով հաստատելով իրենց պահանջը, դատարանով գրավել են հողեր:
5. Փոքր պարտքերի փոխարեն՝ բռնի *ֆերաղով*<sup>465</sup> գրավյալ հողեր:
6. Փոքր պարտքերի փոխարեն՝ առանց դատարանի պահանջի գրավյալ հողեր (առանց *ֆերաղի*):
7. Գաղթող հայրերի հողեր՝ *մահլուլ* (անժառանգ գույք) հռչակված և այլոց բաժանված, տրված կամ ծախված:
8. Բռնի գրավյալ հողեր՝ առանց *ֆերաղի*, որոնց *թափուները*<sup>466</sup> հայերի ձեռքին են և տուրքերը դեռ իրենք են վճարում:
9. Բռնի գրավյալ հողեր՝ առանց *ֆերաղի*, որոնց *թափուները* հայերը կորցրել են կամ չունեն, սակայն կալվածատիրական արձանագրությունները հայերի վրա են:
10. Բռնի գրավյալ հողեր, որոնց համար կեղծ *թափուներ* են հանել բռնագրավողները և վճարում են դրանց տուրքերը:
11. Մինչև այսօր առանց պետական արձանագրության և *թափուի* հայերի կողմից վաղուց մշակված հողեր, որոնց բռնի տիրել են և այժմ *իլամներ*<sup>467</sup> են հանում իրենց անունով:

<sup>465</sup> Ferağ-ունեցվածքի իրավունքի հանձնում, զիջում, բռնի օտարում:

<sup>466</sup> Tapu-սեփականության վկայական, կալվածաթուղթ:

12. Եկեղեցիների, վանքերի ազգապատկան հողեր, որոնք իբր *մահչուլ* գրավվել են՝ առանց ճանաչելու բարոյական անձերի գոյությունը:

13. Հայկական շենքերի, տների և նույնիսկ գյուղերի բռնի գրավումով, դրանք օտար գաղթականների և այլոց տալու անօրինականություններ:

14. Եկեղեցիներ, վանքեր, գերեզմանատներ քանդելու և այդ քարերով իրենց հատուկ տներ կառուցելու ոճիրներ<sup>468</sup>:

Համաձայն առաջնորդարաններից եկած հարյուրավոր տեղեկագրերի, ինչպես նաև պատրիարքարանի կողմից հանձնաժողովի աշխատանքներին օժանդակելու համար տրամադրված գրագրերի հավաքած նյութերի, երբեմն նաև գավառները ներկայացնող պատգամավորների հաղորդած տեղեկությունների՝ 135 մեծադիր ցուցակներով պատրաստվել են 32 *սանջաք*ների հողային և կալվածային ավելի քան 7.000 գրկումները, որոնցում նշված են գրավյալ հողի կամ կալվածքի գավառը, գավառակը, գյուղը կամ քաղաքը, սեփականատիրոջ անունը, կալվածքի տեսակը, տարածությունը, կալվածագիր ունենալը կամ ոչ, արժեքը, եթե տրված է, գրավման եղանակն ու թվականը, գրավողի անունը և այլ տեղեկություններ<sup>469</sup>:

Հանձնաժողովը, ամփոփելով ցուցակները, տեղեկագրի ձևով պատրաստել է չորս տետր: Ա. Տետրի մեջ առանձնացված են գրավյալ սրբավայրերը և ազգապատկան կալվածքները՝ ցուցակագրված են գրավյալ 13 վանքեր (որոշները իրենց կալվածքներով), 27 եկեղեցիներ, 16 գերեզմանատներ և 80 ազգապատկան մեծ ու փոքր կալվածքներ: Դրանց մի մասը Ազգային իշխանության կողմից տրվել է դատարան: Տեղեկագրում նշված է նաև

---

<sup>467</sup> Ուսման-դատական որոշում՝ գրավոր ձևով:

<sup>468</sup> Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Ա., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1910, էջ 1-2:

<sup>469</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 3:

նրանց դատական վիճակը:

Հողային գրավման տեղեկագրի Ա. Տետրում արձանագրված է Ադանայի նահանգի եկեղեցապատկան կալվածք հանդիսացող Փայաս-Լիմոնլուք լեռնադաշտը, որը պատկանում է Սսի վանքին.

«Եկեղեցապատկան կալվածքներ. Ատանա. Փայաս-Լիմոնլուք լեռնադաշտ Սոյ վանքին սեփական կալուածագրով, այս դաշտը Սոյ Տ. Միքայել կաթողիկոս [1832-1855] թափու կ'ընէ, վեճ մը թէն կ'ունենայ, բայց վանքը կը շահի, յետոյ թեմիզի կ'ելլայ խնդիրը և ի վնաս վանքին վճիռը կը բեկանուի և հողերը կառավարութեան ձեռքը կը մնան. չգիտցուիր թէ թեմիզի վճիռը Կիլիկիոյ կաթողիկոսին հաղորդուած է թէ ոչ»<sup>470</sup>:

Բ. Տետրը<sup>471</sup> պարունակում է անհատներից գրավված կալվածքները: Կարևոր կալվածք են համարվում 100 ոսկուց ավելի արժեք ունեցող հողերը կամ կալվածքները, կամ երբ արժեքը նշված չէ՝ 100 դեոնումից ավելի տարածք ունեցող հողերը: Տեղեկություններ կան նաև դատի տրվածների մասին:

Տեղեկագրի Բ. Տետրում Ադանայի նահանգի՝ անհատական գրավյալ կալվածքներից նշվում է Կարս Փագարում Սարգիս և Փանոս Գարաման օղլուի սեփական չորս արտերը՝ 945 դեոնում: Մեկ ագարակ և այգի՝ 300 լիրա արժողությամբ, որոնք բռնի գրավվել են հաճի Ռեջիպ օղլու Իսմայիլի կողմից, ինչպես նաև Համիդիեում Գարասարգիսյանների ագարակը և հողերը, որոնք բռնագրավվել են տեղացի թուրքերը 1895 թ.<sup>472</sup>:

Գ. Տետրը<sup>473</sup> պարունակում է հայ ազգաբնակչության գրավյալ կալվածքների ցանկ: Յույց են տրված մեկ գյուղի մեջ տասից ավելի սեփականատերերի (առանձին-առանձին 100 ոսկուց նվազ

---

<sup>470</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

<sup>471</sup> Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Բ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Օսմ. գործակցական ընկերութեան, 1911:

<sup>472</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5:

<sup>473</sup> Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Գ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տօրամաճեան, 1912:



արժեքով կամ 100 դեռնումից պակաս տարածքով) պատկանող հողերը, որոնք մինևույն անձի կողմից հավաքաբար գավթվել են:

Ադանայի նահանգի Կարս Փագար բնակավայրի տարբեր վայրերում մոտ 50 հողատերերի 57 արտերը, չորս արսան (հողակտոր), ինը խանութ և չորս տուն բնագրավվել են: Տեղեկագրում նշված է նաև, որ բնագրավողների անունները գրված են ընդհանուր ցուցակում: Բացի այդ՝ Անդրբրն-Աճեմլիի հայերին պատկանող 200 լիրա արժողությամբ երկու այլուրի ջրաղացի կեսը բնագրավվել է Եայճրօղլու Հաճի Տուտուի կողմից<sup>474</sup>:

Չորք-Մարգպան գավառակի Նաջարլը Նավիրանի հայ գյուղացիների հողերը 1901 թ. բնագրավվել են Ռումելիայի փախստականների կողմից, որոնք հաստատվել են մինչև Համիդիե: Գիշերվա ընթացքում հողերի վրա 70 փայտաշեն տուն է կառուցվել՝ ոչնչացնելով հունձքերը, միաժամանակ *թափուն*ները իլվել են նախկին տերերից: Հաջորդ տարիների ընթացքում ընդարձակվել են գրավումները: Եվ ինչպես եզրափակում է տեղեկագիրը. «...1905 քննութեան համար քովսիսիոն մը կը կագմուի եւ ցարդ ջանքերը ապարդիւն կը մնան»<sup>475</sup>:

Վերը նշված երեք դասակարգերի վերաբերյալ գրավյալ հողերի 100-ից 90-ի *թափուն*ները դեռ իրենց բուն սեփականատերերի ձեռքում են և կամ արձանագրված են սեփականատիրոջ անունով: Բացի այդ՝ հողերից հասույթ ստանում էին բնագրավողները, իսկ տուրքերը շարունակում էին վճարել հայերը<sup>476</sup>:

Սարգիս պատվելի Տեր-Թորոսյանը<sup>477</sup> ևս նշում էր, որ 1872 թ. կառավարությունը գրավել է Ադանայի հայոց կալվածքներից՝

---

<sup>474</sup> Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Գ., էջ 5:

<sup>475</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5-6:

<sup>476</sup> Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Ա., էջ 3:

<sup>477</sup> Սարգիս պատվելի Տեր-Թորոսյանն Ադանայի հին բնակիչներից է: 1909 թ. ջարդից հետո նա ևս կազմել է մարդկային և նյութական կորուստների ցուցակ և ուղարկել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան: Տե՛ս Թեոդիկ Ա., նշվ. աշխ., էջ 79:

իբրև *մասրիֆի* (կրթության) տուրք<sup>478</sup>: 1896-1904 թթ. գրավումների շարքում հիշատակվում է Տարսնի հայերի պարսպապատ գերեզմանը և մեկ բերդ<sup>479</sup>: Ադանայում Աբդուլբադիի Բադրադի-զադեն յուրացրել է Քույումճը օղլու Հակոբի ընտանիքի 5.000 ոսկի արժողությամբ կալվածքները<sup>480</sup>:

Դ. Տետրե<sup>481</sup> պարունակում է 1890 թ. հետո տեղի ունեցած հետևյալ գրավումները.

1. տուրքի փոխարեն կառավարության կողմից հողի ու կալվածքի գրավումներ, 2. պարտքի փոխարեն Երկարագործական բանկի կողմից գրավումներ, 3. աննշան պարտքի փոխարեն տեղի ունեցած արժեքավոր գրավումներ, 4. պարտքի փոխարեն առանց օրինական ձևակերպումների կատարված գրավումներ:

1910 թ. մայիսին հանձնաժողովը հողային գրավումների մասին ներկայացրել է եզրակացություններ և առաջարկներ<sup>482</sup>:

---

<sup>478</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 79-80:

<sup>479</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Ջարդը եւ պատասխանատուները, Գահիրե, տպ. Արարատ-Ս. Դարբինեան, 1909, էջ 10:

<sup>480</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 191, 1909, յունիս 2-15, էջ 1:

<sup>481</sup> Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Դ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տօրլամաճեան, 1912:

<sup>482</sup> Ա. Ազգապատկան հաստատությունները, վանքերը, եկեղեցիները, գերեզմանատները և մեծ ու փոքր կալվածքները որևէ պատրվակով չէին կարող ուրիշին անցնել: Սրանք ազգային սեփականություն են: Պատրիարքարանը ջանք չէր խնայելու այս մասին մեկ ընդհանուր հրամանագիր պատրաստել տալու՝ սրանք ազգին վերադարձնելու համար: Բ. Հայ հասարակության և անհատներից բռնի գրավված կալվածքների մեծամասնության թափուները տերերի ձեռքին են և արձանագրությունները իրենց անունով են, ուստի 1909 թ. օգոստոսի 31-ի հրամանագիրը մատնանշելով մի մասը ազատվելու էր: Պատրիարքարանը բողոքելու էր 1910 թ. ապրիլի 1-ի Ներքին գործերի նախարարության խորհրդականի Եպարգոսական հրամանով կուսակալություններին ուղղված հեռագրական հրամանագրի դեմ, որ օգոստոսի 31-ի հրամանը կգործի միայն 1909 թ. համար, այդ ապօրեն հրահանգը հայերի գրավյալ հողերի իսպառ կորուստն էր նշանակում, որը հայ գյուղացու մասն էր: Գալով այն հողերին, որոնց համար բռնագրավողներին հաջողվել էր կեղծ թափուներ ձեռք բերել 1900-ականներին, կառա-

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրությունը կորցրեց իր եվրոպական տիրույթների զգալի մասը: Տարածքների կորուստը բնակչության զանգվածային տեղաշարժերի պատճառ դարձավ: Անկախացած երկրներից (Ռումինիա, Սերբիա, Չեռնոգորիա, Բուլղարիա) սկսվեց մուսուլմանների ներհոսք՝ կայսրությանը կանգնեցնելով նրանց վերաբնակեցնելու խնդրի առջև: Բացի այդ՝ կար նաև չերքեզների հոսք Ռուսական կայսրությունից: Տարածքների կորուստը, բնակչության ստվարացումը ստեղծել էին բավականին բարդ իրավիճակ Օսմանյան կայսրության և հատկապես նրա տնտեսության համար, որը շարունակաբար ավելի էր կախման մեջ ընկնում եվրոպական տերություններից: Դրանից բացի՝ Արդուլ Համիդին պարտադրվում էր երկրի ներքին գավառներում իրականացնել բարենորոգումներ (Սան Ստեֆանո՝ 19 փետրվար, Բեռլին՝ 13 հունիս- 13 հուլիս, 1878): Պարտադրվող բարենորոգումները ոչ միայն չիրականացան, այլև ավելի բարդացրեցին հպատակ ժողովուրդների վիճակը՝ հայերի դեպքում դառնալով զանգվածային ջարդերի պատճառներից մեկը:

Կառավարությունը արագ գտավ նաև փախստականներին վերաբնակեցնելու տարբերակներ: Նրանք մեծամասամբ ուղղորդվեցին կայսրության ավելի բերրի շրջաններ՝ առավել ևս եթե դրանք բնակեցված էին քրիստոնյաներով: Ադանայի նահանգը մշտապես համարվել է նմանօրինակ վերաբնակեցումների լավագույն վայրերից մեկը: Այն ոչ միայն հարմար էր աշխարհագրական դիրքով, հողի բերքատվությամբ և այլն, այլև նահանգի բնակչության հիմնական մասը կազմում էին քրիս-

---

վարության կողմից հրահանգ էր տրվելու հատկապես դատարաններին՝ լսել անիրավյալների բողոքները և առանց երկար ձևակերպումների և ձգձգման արագ վճիռ կայացնել: Գ. Չորրորդ դասակարգի վերաբերյալ, որ օրինական ձև էին ստացել, կազմվելու էին արդար դատարաններ, որտեղ լավելու էին գրկյալների կրած ճնշումները, պարտադրանքները, սպառնալիքները և տեղի ունեցած օրինազանցությունները: Տե՛ս Տեղեկագիր հողային գրամանցյան ձևաժողովոյ, Ա. Տետր, էջ 4:

տոնյաները, որոնց մեջ համեմատական կարգով գերակշռում էին հայերը: Նահանգը արձանագրում էր նաև տնտեսական լուրջ առաջընթաց, որի առաջամարտիկները կրկին մուսուլմանները չէին: Հպատակ ժողովուրդների, հատկապես հայերի հողերի հաշվին արվող վերաբնակեցումները փոփոխության էին ենթարկում ժողովրդագրական պատկերը, իսկ պետության կողմից արտոնվող անօրինականությունները հանգեցնում էին ինչպես տնտեսական լուրջ ցնցումների, այնպես էլ արտագաղթի:

Ադանայի նահանգում փախստականներ վերաբնակեցնելու հարցը բարձրացել է նաև ավելի ուշ՝ 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունից հետո: Ավստրո-Հունգարիայում Թուրքիայի դեսպան, նախկին մեծ վեզիր Հիլմի փաշան ֆրանսիացի դիվանագետներից մեկին ներկայացրել է 250-300 մլն. ֆրանկ արժողությամբ «Փոքր Ասիան կենդանացնելու ծրագիրը»՝ փախստականներին այնտեղ վերաբնակեցնելու ճանապարհով. «առաջարկելով Ադանայի շրջանը, որպես վերաբնակեցման հավանական վայր, որն այնքան բերրի էր, որ նման էր ոչ մեծ Եգիպտոսի», և հույս է հայտնել, որ ֆրանսիական կապիտալը կաջակցի այդ ծրագրին<sup>483</sup>:

Ադանայի նահանգում վերաբնակեցումներ իրականացնելու թիրախային վայրերից մեկը Թլանի ագարակն էր, որն անընդմեջ գրավման վտանգի տակ էր: Թլանի ագարակը դարեր ի վեր պատկանել էր կաթողիկոսարանին և Մայրավանքի գոյության համար կենսական նշանակություն ուներ: Թլանի ընտրությունը պատահական չէր, քանի որ վերջինս Մայրավանքի եկամտի կարևոր աղբյուրներից մեկն էր, ուստի վանքապատկան տարածքների կրճատումը բերում էր վանքի եկամուտների նվազման, ինչն էլ կսահմանափակեր կաթողիկոսարանի ֆինանսական հնարավորությունները և գործունեության շրջանակները:

1905 թ. փետրվարի 23-ին Ադանայի առաջնորդ Մուշեղ ծ. վ.

---

<sup>483</sup> Кеворкян Р., Геноцид Армян, Полная история, Центр Арменоведческих исследований «Анив», Москва, 2015, с. 159.

Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանից Թլանի ազարակի և այլ հարցերի վերաբերյալ կայսերական *իրադեն*երի (հրամանագիր) գործադրությունը արագացնելու օժանդակություն է խնդրում<sup>484</sup>: 1905թ. հոկտեմբերի 25-ի Սահակ Բ կաթողիկոսի՝ Օրմանյանին ուղղված Թլանի ազարակի հետ կապված նամակում կարդում ենք. «...Ատանայի Վսեմ. Վալին այս անգամ թե ի Կայս. Պալատ և թե ատալիյէի նախարարութեան հեռագրեց և գրեց Թլան ազարակին, մեր ամսականի վանական կալուածոց ապառիկ տրոց և *ֆէրադի* գործողութեան, նաև Հալէայի գետնի ծանօթ խնդրոց մասին»<sup>485</sup>:

Ադանայի նահանգում գրավված հողեր կային նաև Նաջարլը գյուղում, որի մասին հաղորդվում էր Ադանայի առաջնորդի նամակում՝ գրված ի պատասխան Կ. Պոլսի Հայոց պատրիարքի նամակի.

«Ի պատասխան Ձեր Բարձր Սրբազանութեան Յունվար 5 թիւ եւ համար 435 պաշտօնագրին կուզանք հաղորդել թէ Նաճառլուի մերայնոց գաղթականաց կողմէն գրաւուած հողերու խնդրոյն վերաբերեալ գործողութիւններու եւ մեր կողմէն տեղի ունեցած ձեռնարկութիւններու մասին, կարելոր տեղեկութիւնները պիտի գտնէք Յունվար 10 թիւ և 101 համարով Ատանայի Կուսակալութեան մատուցուած մեր ընդարձակ Տեղեկագրէն, -էջ 11-14, որուն մէկ օրինակը-թուրքերէն- դրկուեցաւ Պատրիարքարանիդ, թուականէս երկու շաբաթ առաջ»<sup>486</sup>:

1909 թ. հունվարի 10-ին Օջաքլը գյուղի Թաղական խորհրդի ատենապետ Գրիգոր Գյոքչանին ուղղված Մուշեղ եպիսկոպոսի նամակից պարզ է դառնում, որ Օջաքլը գյուղում ևս գրավված հողեր կան: Առաջնորդարանը պատրաստվում էր Գյոքչանի նամակին կցված ներփակ ցուցակի մեկ օրինակն ուղարկել

---

<sup>484</sup> Կիլիկեան կսկիծներ, էջ 53:

<sup>485</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 58:

<sup>486</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3043/38, յունվարի 21, թ. 328:

պատրիարքարան, իսկ մյուս օրինակը՝ մասնավոր *թաքրիղով* (ցուցակ) ներկայացնել կուսակալություն՝ գրավված հողերը վերադարձնելու խնդրանքով<sup>487</sup>:

Բացի այդ՝ հայերին ունեզրկելու և հողազրկելու համար թուրքերը դիմում էին անգամ իրենց իսկ ցեղակիցներին սպանելու գործին: Հայկական հարուստ ազարակների շրջակայքում թուրքերին սպանել տալով՝ ազարակատերերին ամբաստանում էին, այնուհետև դատապարտում, ինչն էլ դառնում էր ունեցվածքի կորստի պատճառ<sup>488</sup>:

Տարիներ շարունակ ձգձգված Թլանի ազարակի հարցը լուծված չէր նաև 1909 թ. ջարդի նախօրեին: Թլանի վանքապատկան հողերը բռնագրավելու կառավարության փորձերը շարունակվում էին: Բազմաթիվ անգամ իշխանությունների կողմից փորձեր էին արվել ազարակում բնակեցնել մուսուլման փախստականների, ինչը հայերի շրջանում մեծ դժգոհություններ էր առաջացրել: Կաթողիկոսարանի համար Թլանի և մյուս կալվածքների կարևորությունը շեշտելու, դրանք գրավումներից և վերաբնակեցումներից ձերբազատելու համար պայքարի բոլոր միջոցները սպառելով՝ Սահակ Բ կաթողիկոսը անգամ հրաժարականի է դիմում:

1909 թ. փետրվարի 7-ին գրված նամակներում Մուշեղ եպիսկոպոսը կրկին անդրադառնում էր Թլանի վանքին պետության կողմից տրվելիք *իբրադեի* բացակայության և Սահակ Բ կաթողիկոսի հրաժարականին առնչվող խնդիրներին: Ադանայի առաջնորդը նաև գրում էր, որ այս խնդիրների կապակցությամբ առաջիկայում հանրահավաք անելու անհրաժեշտություն չի տեսնում, սակայն ժողովրդին կհաղորդվի հարցի էությունը և

---

<sup>487</sup> Տե՛ս նույն տեղում, 3029/19, յունվարի 10, թ. 303:

<sup>488</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Ջարդը եւ պատասխանատուները, էջ 16:

հնարավոր է բողոքի հեռագիր ուղարկվի<sup>489</sup>: Մակայն, ինչպես ցույց է տալիս դեպքերի հետագա ընթացքը, Ադանայում տեղի են ունեցել վանքապատկան հողերի գրավումների հետ կապված հավաքներ:

1909 թ. փետրվարի 10-ին Ադանայի Հայոց առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսին Սահակ Բ կաթողիկոսը գրում էր, որ իր հրաժարականի պատճառը Մարաշի և Սսի կալվածքների խնդիրն էր, ինչպես նաև օրենքի առջև հայ եկեղեցու իրավագուրկ վիճակը. «հայը անհատապես իրավունք ունի Թուրքիոյ մեջ, որ իրեն կրօնական և բարեգործական հաստատութիւնները ունենան»<sup>490</sup>: Այնուհետև կաթողիկոսը շարունակում էր, որ դարերով եկեղեցապատկան ճանաչված կալվածքները կառավարության մեկ հրամանով գրավվում էին ու մասնատվում: Ի նշան բողոքի՝ ստեցիները հանրահավաք էին կազմակերպել՝ տարբեր պաշտոնյաների բազմաթիվ բողոք-խնդրագրեր ներկայացնելով: Կաթողիկոսը նշում էր նաև, որ պատրիարքարանները միավորվելով պետք է աշխատեն քրիստոնյա եկեղեցու գոյությունը ապահովել այնպես, ինչպես ապահովվել են ջամիւնները: Ապա փաստում էր, որ տարիների ընթացքում քանդված վանքերի և եկեղեցիների հողերը գրավվում էին մուսուլմանների կողմից, այնուհետև նրանք ճանաչվում էին օրինական հողատերեր: «Հայերը ջնջելու որոշման, նոր Շուրայի-Տեօվլէթի տուած որոշումով Սոյ վանքը կարօտութեամբ կործանելու, աւելի ճիշտը փակելու համար հրաման հրամանի վրայ կը հասցնեն»<sup>491</sup>:

1909 թ. «Բիւզանդիոն» օրաթերթում Կիլիկիո կաթողիկոսի դիվանապետ Գյուտ վարդապետը պաշտոնապես նշում էր, որ կաթողիկոսի հրաժարականի պատճառը եկեղեցական և վա-

---

<sup>489</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3096/87, փետրվարի 7, թ. 384, 388:

<sup>490</sup> Կիլիկեան կսկիծներ, էջ 72:

<sup>491</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 72-73:

նական կալվածքների անապահով վիճակն է<sup>492</sup>:

Միննույն ժամանակ Սահակ Բ կաթողիկոսը նամակ է ուղղել պատրիարքարան՝ իր պաշտոնի շարունակությունը անհնար համարելով, քանի դեռ Աթոռի կալվածքների խնդիրը որևէ լուծում չի ստացել: Կաթողիկոսը շեշտում էր նաև, որ խնդիրը միայն Սսի Աթոռին չի վերաբերում, այլ բոլոր եկեղեցիներին, դպրոցներին և բարեգործական հաստատություններին պատկանող կալվածքներին<sup>493</sup>:

Կաթողիկոսը նաև զարմանք էր հայտնում այն հարցի շուրջ, որ Ռոբերտ քոլեջի<sup>494</sup> հողերը տվյալ հաստատության անունով էին արձանագրված, իսկ հայկական դպրոցներին ու եկեղեցիներին իրավունք չէր տրվում իրենց անուններով կալվածքներ ունենալու: Ապա շարունակում էր. «Մինչև հիմա շատ անգամներ խոստացուեցաւ, այս կալուածական գործերու կարգադրութիւնը, սակայն դարերով հաւատացինք և դարերով տուժեցինք»<sup>495</sup>: Սահակ Բ կաթողիկոսը պահանջում էր նաև, որ Թլանի ազարակում թուրք փախստականներ հաստատելու կառավարության որոշումը չեղյալ հայտարարվի<sup>496</sup>:

Թլանի ազարակի խնդրահարույց վիճակի հետ կապված ուշագրավ է Ջ. Պզտիկյանի ծանոթագրությունը, որը իրավիճակն ավելի հասկանալի է դարձնում. «Կաթողիկոսարանի եւ Պատրիարքարանի ջանքերով նոր իրատեով Թլանէն 10.000 արտավար հող վանքին թուղնուեցաւ իբրեւ ապրուստի միջոց աղքատ

---

<sup>492</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,775, 1909, փետրուար 25-10 մարտ, էջ 3:

<sup>493</sup> Կիլիկիոյ Կաթողիկոսի Հրաժարականը, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,784, 1909, մարտ 7-20, էջ 3: Տե՛ս նաև «Արարատ», Էջմիածին, 1909-ՌՅԾԸ, համար Է-Ը, էջ 676:

<sup>494</sup> ԱՄՆ-ի սահմաններից դուրս հաստատված Ամերիկյան ուսումնական հաստատություն: Հիմնադրվել է Կ. Պոլսում 1863 թ. Քրիստոֆեր Ռայնելանդ Ռոբերտի և Սայրուս Հեմլինի կողմից: The Encyclopedia Americana International Edition, vol. 23, New York, 1967, p. 566.

<sup>495</sup> «Արարատ», Էջմիածին, 1909-ՌՅԾԸ, համար Է-Ը, էջ 676-677:

<sup>496</sup> Բարբէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, էջ 909:



միաբանութեան, պայմանաւ որ Իսլամ և Քրիստոնէայ գաղթականներ չը բնակին հոն»<sup>497</sup>:

Կաթողիկոսարանի և պատրիարքարանի ջանքերով Թլանի ագարակից 10.000 արտավար հող տրվում էր վանքին: Սակայն այս հաստատումը բոլորովին չէր նշանակում, որ հետագայում ինչպես Թլանը, այնպես էլ մյուս կալվածքները Ադանայի նահանգում բռնագրավման վտանգի առջև այլևս չէին կանգնելու:

1909 թ. ջարդին նախորդած իրադարձությունները լուսաբանելով՝ Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթը հաղորդում է, որ «Ատանայի ջարդը... հին փոթորիկի մը հետեւանքն է, որ կ'երեւայ թէ վերջապէս այս օրերս առիթ գտեր է պայթելու: Կուսակալին ու Առաջնորդին մէջ ծանր պայքար մը սկսած էր և երկուքն ալ Ատանայի երկու թուրքերէն թերթերուն մէջ կը պայքարէին բուռն լեզուով...»<sup>498</sup>:

1909 թ. հունվարի 10-ին Մուշեղ Եպիսկոպոսը Ադանայի նահանգապետին է ներկայացրել տեղեկագիր, որտեղ տեղեկություններ է հաղորդում Ջեբել-Բերեքթի գավառում *մութասարըրժ* Ասաֆ Էսասի հակասահմանադրական գործողությունների և բնակչության մոտ ջարդի երկյուղների մասին<sup>499</sup>: Կուսակալություն ներկայացված տեղեկագրի օրինակներից միաժամանակ ուղարկվել է Օսմանյան կայսրության վարչապետին, Երեսփոխանական ժողովի նախագահին, արդարադատության և ներքին գործերի նախարարներին, Կ. Պոլսի Հայոց Ազգային պատրիարքարան, ինչպես նաև Կ. Պոլսի հայկական և թուրքական թերթերին<sup>500</sup>:

Ադանայի նահանգապետը ընդդեմ առաջնորդի «պատաս-

---

<sup>497</sup> Տե՛ս Կիլիկեան կսկիծներ, էջ 61:

<sup>498</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 141, 1909, ապրիլի 4-17, էջ 1:

<sup>499</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Զրպարտող կուսակալը, Բաց նամակ Ատանայի նախորդ կուսակալ Ճեվատ Պէյի, «Արեւելեան մամուլ», Իզմիր, թիւ 24, 1909, յունիսի 9, էջ 558:

<sup>500</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Զարդը եւ պատասխանատուները, էջ 32:

խան» տեղեկագիր է ներկայացրել կառավարություն՝ գրելով, որ «Միս կողմէ Մուշեղ եպիսկոպոս ալ Հայերը պետութեան և վարչութեան օրէնքներուն դէմ կը գրգռէր, և անոնց միտքերը կը թունաւորէր»<sup>501</sup>: Մուշեղ եպիսկոպոսը տեղեկացնում է, որ կուսակալի տեղեկագրերը գրվել են հունվարի 16-ին, փետրվարի 3-ին և 17-ին:

Առաջինը թերևս հունվարի 10-ի տեղեկագրի «պատասխանն» է: Վերջին երկուսը գուգադիպում են Ադանայում գումարված հանդիպումներին, որոնցից առաջինը եղել է մամուլի ազատության համար և գումարվել է թուրքերի նախաձեռնությամբ, իսկ երկրորդը, գրում է եպիսկոպոսը. «գումարվել է հակառակ իմ կամքիս Մայր Եկեղեցում, Թլանի ազարակի գրաման խնդրոյն առթիւ, և ուր խօսելու պարտաւորուած զգացի ինքզինքս, հայ եկեղեցականի հանգամանքովս»<sup>502</sup>: Հարկ ենք համարում նշել, որ Մուշեղ եպիսկոպոսը հանրահավաքներ չկազմակերպելու մասին գրել էր դեռևս 1909 թ. փետրվարի 7-ին Ղևոնդ վարդապետին ուղղված իր նամակում<sup>503</sup>:

Քաջատեղյակ լինելով օսմանյան կառավարության գործելառձին և գնահատելով իրավիճակը՝ Մուշեղ եպիսկոպոսը հասկանում էր, որ նույնիսկ արդարացի և կենսական պահանջների դեպքում գումարված հանդիպումները կարող են շրջվել հայերի դէմ և ունենալ անկանխատեսելի հետևանքներ, ուստի եպիսկոպոսը խնդիրների լուծումները տեսնում էր առավել նեղ և պաշտոնական հարթակներում:

Հողային գրավումները, կամայականությունները, հայկական կողմի պայքարելու ու պաշտպանվելու ջանքերը, երբ համադրում ենք Ադանայի նահանգապետ Ջևադ բեյի և կենտրոնական կա-

---

<sup>501</sup> «Արեւելեան մամուլ», Իզմիր, թիւ 24, 1909, յունիսի 9, էջ 557:

<sup>502</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>503</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3096/87, փետրվարի 7, թ. 388:

ռավարության միջև ջարդի նախօրեին փոխանակված ծածկագիր-  
հեռագրերի ու գրությունների հետ, գործողությունների հետա-  
քրքիր և ընդհանուր պատկեր է ստեղծվում:

1909 թ. ապրիլի ջարդից առաջ Ջևադ բեյը պաշտոնական  
գրություն է ներկայացրել կառավարություն, որը «Մարտի 13  
թուակիր Ձեր Վսեմութեան շիֆրե հեռագրի պատասխանն է»:  
Ասվում էր, որ Նահանգային ընդհանուր ժողովի ընթացքում,  
Գոգան գավառի հայ ներկայացուցիչը առաջարկել է աղքատ և  
հողագործ հաճրնցիների մի խմբի՝ բաղկացած 500 տնից, գաղ-  
թականական հրահանգի համաձայն վերաբնակեցնել Գոգանի  
կողմերում՝ Չուբուր Օվայի չիֆթլիքի կամ կառավարության կող-  
մից հատկացված որևէ այլ վայրում, որտեղ ավելի բարենպաստ  
պայմաններ կլինեն, քանի որ Հաճրնի դիրքը մացառուտ է, իսկ  
մշակելի հողը՝ շատ սակավ: Տվյալ առաջարկը պաշտպանվել է  
ժողովի քրիստոնյա անդամների կողմից: Այնուհետև նահան-  
գապետը շարունակում է, որ հետզհետե փախստականները  
[մուսուլման] ավելի շատանում են և բացի այդ նահանգում թա-  
փառական աշիրեթներ կան, որոնց պետք է տեղավորել, ուստի  
առաջարկվել է, որ. «Հաճրնցի կարօտեալները՝ իրենց բնակա-  
վայրերում, հնարավորութեան չափով արհեստների եւ վաճա-  
ռականութեան անհատական աշխատութիւնների ընդարձա-  
կումով՝ վիճակնին բարելաւեն»<sup>504</sup>: Ասվածից կարելի է ենթադրել,  
որ, այնուամենայնիվ, բերրի և հարմարավետ հողակտորները  
հատկացվում էին մուսուլմաններին:

Այնուհետև Ջևադ բեյը ներկայացնում է տարբերակներ՝  
մուսուլման փախստականներին արագ բնակեցնելու և հայերի  
հնարավոր վերաբնակեցումները կանխելու համար.

«Թէն այդ շրջականերում առայժմ բացի մի երկու հայկական չիֆթլիկնե-  
րից՝ այնպէս մեծատարած քանակութեամբ և բնակչութեան յարմար եղող

---

<sup>504</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 40, 1910, փետրւարի  
20, էջ 2:

Հայերի սեփական հողեր չկան, բայց Սսի վանքին պատկանելը պնդող և Չուքուր Օվայի շրջանի մեջ գտնուող Թըլանի գետինը եթէ մասամբ ճահիճներից մաքրւի, արդարև ընդարձակ և բազմաթիւ տուներ պարունակելու չափ կարևորութիւն ունի: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, և Առաջնորդի այս Տեղի Հայերին թելադրած ու ներշնչած մասնաւոր նպատակն ու այդ նպատակին բնական հետեւողութիւնը երող Ազգային ձեռնարկները, մեր դատողութեամբ նպատակայարմար կը լիներ...»<sup>505</sup>:

Ձևադ բէյը գրում է նաև, որ երբ Չուքուր Օվայի չիֆթլիքի սեփականության իրավունքը Պետական գանձարանին փոխանցվի, այդ շրջանում *թափու*ով հող ունեցող մի շարք մարդիկ պետք է աշխատեն իրենց հողերի սահմանն ու տարածությունը ընդարձակել: Եվ մի շարք դեպքերից երևում է որ. «հայերը չեն կարողանում յետ կենալ այդտեղի հողերին աչք տնկելուց»<sup>506</sup>: Ուստի, մինչև առաջարկված ծրագրի գործադրվելը [Գոգանի հայ ներկայացուցչի առաջարկած ծրագրի]՝ նպատակահարմար է, որ Չիֆթլիքի ներկա վարչությունը մշտականի վերածել, և արագ բնակեցումներ կատարելով՝ մուսուլմանական տարրը ավելացնել, «որի շնորհիւ ասպարէզ չեն գտնի ծանուցած անպատեհութիւնները»<sup>507</sup>: Այսինքն՝ տարածքը հնարավորինս բնակեցնել մուսուլման փախստականներով և աշիրերներով՝ սահմանափակելով հայերի հնարավոր գործողությունները կամ տեղաշարժերը:

Միննույն ժամանակ Մուշեղ եպիսկոպոսը Սահակ Բ կաթողիկոսին տեղեկացնում էր, որ Օջաքուլի եկեղեցին այրված և քանդված է թուրք խուժանի կողմից: Եկեղեցին կիսակառույց է եղել, քանի որ հնարավոր չի եղել ձեռք բերել պաշտոնական արտոնություն: Պատերը կանգնեցնելուց հետո կառավարությունը

---

<sup>505</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>506</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>507</sup> Տե՛ս նույն տեղում:

արգելել է շարունակել շինարարությունը<sup>508</sup>:

Հարկավոր է նշել, որ եկեղեցիների, ազգապատկան և անհատական կալվածքների փլեցումները և հրկիզումները շարունակական բնույթ են կրել ինչպես ջարդից առաջ, այնպես էլ հետո:

Սակայն առավել ուշագրավ է եպիսկոպոսի հաջորդ հաղորդումը, որում ասվում է. «Մեր թեմին մեջ գրաւուած կամ դատի տակ գտնուող ռեւէ ազգապատկան կամ բարեգործական հաստատութիւն եւ կալուած չը կայ»<sup>509</sup>:

Կարելի է ենթադրել, որ ընդհանուր գրավումների հենքի վրա Ադանայում հողազրկումներ իրականացնելու հավանականությունը դարձել էր մասնակի: Հարց է ծագում. Ադանայի Հայոց թեմի ազգապատկան կալվածքները ինչպե՞ս էին զերծ մնացել գրավման քաղաքականությունից:

Սահմանադրության վերահռչակումից հետո հայերի՝ որպես օսմանյան քաղաքացիների սահմանադրական իրավունքի գիտակցումը և այդ առիթով առաջ եկած ոգևորությունը, նահանգում հայերի տնտեսական վերելքը, Ադանայում հայ հոգևոր և ազգային իշխանությունների համախմբված աշխատանքը երբ համադրում ենք նոր իշխանության եկած երիտթուրքերի ծրագրերի և ձգտումների հետ, ապա սկսում է պատկերանալ հանգուցալուծումը: Օսմանյան կայսրության հիմնական գործելառճի համատեքստում թե՛ Աբդուլ Համիդի և թե՛ երիտթուրքերի համար Ադանայի ոչնչացումը նախընտրելի էր: Նախ նահանգում նվազում էր հայ բնակչության քանակը, խափանվում էր տնտեսական առաջընթացը, ձեռք էր բերվում ավար, որը նույնպես մեծ էր, և, թերևս ամենակարևորը, տեղի էր ունենում զանգվածային հողազրկում:

Բացի այն, որ սպանությունների հետևանքով մեծ թվով

---

<sup>508</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3130/120, թ. 423:

<sup>509</sup> Տե՛ս նույն տեղում:

կալվածքներ ու հողեր առանց տերերի մնացին, անգամ գյուղեր ամբողջությամբ դատարկվեցին<sup>510</sup>, այլև ջարդից հետո վերապարած հայերը, մնալով առանց որևէ միջոցի, արտագաղթում էին՝ կրկին թողնելով հողատարածքներ<sup>511</sup> կամ պարզապես չէին կարողանում վերադառնալ իրենց բնակավայրերը ջարդի սարսափները չվերապրելու համար<sup>512</sup>:

1895-1896 թթ. մեծ կոտորածները խնայել էին այս տարածաշրջանը: Մուշեղ եպիսկոպոսը հավաստում էր, որ տարածաշրջանի համար պատրաստվել էր կոտորածի մի ծրագիր, որը պետք է իրագործվեր երկու տարբեր փուլերով՝ 1906 թ. և 1907 թ.: Այդ ժամանակ Ադանայի կուսակալ Բահրի փաշան պետք է որ ձախողած լիներ այդ ծրագիրը: Ըստ թուրքերի՝ քրիստոնյա ենթակաները Բահրիին իրենց կողմն էին գրավել կաշառելու միջոցով<sup>513</sup>:

Բահրիի հետ լավ հարաբերություններ ունենալու մասին գրում է Մուշեղ եպիսկոպոսն իր ինքնակենսագրական «Դիտումներ և Դատումներ» գրքում<sup>514</sup>: Ձևավորված լավ հարաբերությունների արդյունքում առաջնորդին հաջողվել է խաղաղություն և տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմաններ ապահովել, մի շարք լուրջ ծրագրեր իրականացնել՝ բարելավելով հայերի վիճակը:

Առաջնորդի և նահանգապետի հարաբերությունների մասին դրվագներ է հաղորդում «Արեւելք» թերթը: Ի թիվս այլ մանրամասների՝ ներկայացված է Մուշեղյան վարժարանի սրահում

---

<sup>510</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 45, 1910, փետրուարի 27, էջ 2:

<sup>511</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 52, 1910, մարտի 9, էջ 2:

<sup>512</sup> Դանիելեան Ներսես եպս., Կաթիլ մը Ջուր այրած սրտերու, Կ. Պոլիս, գրատուն Յ. Գըլըճեան, տպ. Օ. Սրգուման, 1912, էջ 51:

<sup>513</sup> Աղոսիդես Ա., Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները, թարգմ.՝ Վ. Պողոսյան, Երևան, ՀՅԹԻ, 2012, էջ 7:

<sup>514</sup> Սերոբեան Մ., Դիտումներ եւ Դատումներ (Էջեր Օրագրես), Պեյրուք, «Ազդակ», 1932, էջ 65-66:

կազմակերպած ընդունելությունը, որին մասնակցել են նահանգապետը, ինչպես նաև վերջինիս օգնականը, թարգման Ավետիս Միսյանը, դատարանների նախագահները, քաղաքապետ Ղարիբ բեյը, կուսակալի որդին՝ Քեմալեդդին բեյը և ուրիշ պաշտոնյաներ<sup>515</sup>:

Բահրի փաշայի և Մուշեղ եպիսկոպոսի լավ հարաբերությունների մասին հիշատակում է նաև Հ. Թերզյանը, հատկապես ընդգծելով, որ ոչ միայն բարձրացել էր հայերի վարկը, այլև «Նոյն բարուք և մտերմական յարաբերութեանց շնորհիւ կարուցուեցաւ Ատանայի Հայոց շուկան, վարժարանները և շրջակայ գիւղերուն և քաղաքներուն մէջ մի քանի կարելոր եկեղեցի և վարժարաններ»<sup>516</sup>:

Ադանայի ջարդից հետո «Ժամանակ» թերթին տրված հարցազրույցում Բահրին, խոսելով իրենց բարեկամության մասին, նշել է, որ իր պաշտոնավարության տարիներին Մուշեղ եպիսկոպոսի ջանքերով ու իր աջակցությամբ կառուցվել են Մուշեղյան վարժարանը, 46 վաճառատնով շուկա, ինչպես նաև եկեղեցիներ՝ Համիդիեում, Օսմանիեում և Մարայում, դպրոցներ՝ Բահչեում և Չորք-Մարգպանում<sup>517</sup>:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո Ադանան ևս լուրջ փոփոխությունների ենթարկվեց: Քաղաքում բացվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղ: Մասնաճյուղ ձևավորելու գործը հանձնարարվեց Իհսան Ֆիքրիին: Կուսակցությունը շատ արագ համալրվեց անդամներով: Քվեարկությամբ ընտրվեց վարչական խորհուրդ, որը կազմված էր յոթ թուրք, երեք հայ, մեկ հույն և մեկ արաբ անդամներից: Նախկին պաշտոնյաները Բահրի փաշայի գլխավորությամբ հրաժարական տվեցին. «Պաշտօնեաներ հրաժարեցուեցան ու նորեր դրուեցան և որով պահ մը տեղական կառավարութիւնը Իթթիհատի

<sup>515</sup> «Արեւելք», Պոլիս, թիւ 6085, 1906, յունուար 1-19 փետրուար, էջ 3:

<sup>516</sup> Թերզեան Յ., Ատանայի կեանքը, էջ 30:

<sup>517</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 191, 1909, յունիս 2-15, էջ 2:

կուսակցութեան հրամաններուն կը հետեւէր կէտ առ կէտ»<sup>518</sup>:

Կարճ ժամանակահատվածում Ադանայում գրեթէ բոլոր պատասխանատու պաշտոններում իթթիհաթականներ էին, իսկ կուսակցության մասնաճյուղերը շարունակաբար բացվում էին նահանգի տարբեր քաղաքներում և ավաններում, ինչպէս նաև կուսակցությունը շարունակաբար համալրվում էր նորանոր անդամներով (այս գործընթացը բնորոշ էր ոչ միայն Ադանային, այլև ողջ կայսրությանը<sup>519</sup>): Այսպիսով, ջարդից դեռ ամիսներ առաջ՝ մասնավորապէս 1908 թ. հոկտեմբեր-նոյեմբերից, Ադանայի նահանգը արդէն ղեկավարում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը:

Բահրիի փախուստից հետո կարճաժամկետ փոխանորդ դարձավ Միրլիվա Ալի փաշան, ապա նոր նահանգապետ նշանակվեց Կոնիայի նահանգապետ Ջևադ բեյը<sup>520</sup>, իսկ նահանգային գորքերի հրամանատար նշանակվեց գեթունցիներից պարտություն կրած Մուսթաֆա Ռեմզի փաշան<sup>521</sup>:

Ադանայի ջարդերի մեջ իր մեծ ներդրումն ուներ նաև մամուլը: Ադանայում Երիտթուրքական ակումբի նախագահ Իսսան Ֆիքրիի կողմից հիմնադրվել և վերջինիս խմբագրությամբ լույս էր տեսնում «Իթիդալ» (Չափավոր) թերթը: Յուրաքանչյուր հրապարակման մեջ թերթը «բարեպաշտ մուսուլմանին-օսմանեան միակ քաղաքացի տաճիկին» հիշեցնում էր, որ *գյավուրները* չափազանց վատ նպատակներ ունեն, որ նրանք ի վերջո քան-

---

<sup>518</sup> Թերզեան Յ., Ստանայի կեանքը, էջ 35:

<sup>519</sup> Սահմանադրության վերահռչակումից առաջ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների թիվը միայն Մակեդոնիայում կազմում էր 15 հազ., 1908 թ. կուսակցության անդամների թիվը հասավ 75 հազարի, իսկ 1909 թ.՝ 100 հազարի: Габидуллин Х. З., Младотурецкая революция, Москва, Государственное социально-экономическое изд., 1936, с. 108.

<sup>520</sup> Թերզեան Յ., Ստանայի կեանքը, էջ 41:

<sup>521</sup> Գասպարյան Ռ. Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921թ.), «Գիտություն», Երևան, 2005, էջ 56:



դելու են Թուրքիան թե՛ տնտեսապես և թե՛ իրապես<sup>522</sup>:

Բացի այն, որ իշխանության եկած երիտթուրքերը փորձում էին հաստատվել և նոր վերաձևումներ իրականացնել, նահանգում կային բավականին ազդեցիկ թուրքեր, որոնք դեմ էին սահմանադրությանը և այն համարում էին աղետ: Միաժամանակ տեղի երևելիներից Բաղդադիզադե Աբդուլբադիը հիմնադրում է «Ջիրաաթ քուլուբու» (Երկրագործական ակումբ) անվան տակ կուսակցություն, որն արագ իր շուրջն էր հավաքում համախոհների<sup>523</sup>: Հարկավոր է նշել, որ մի շարք աղաներ, ինչպես նաև վերոհիշյալ Աբդուլբադիը, մշտապես հետևել են հայերի առաջընթացին, խոչընդոտել տնտեսական գործունեությանը, յուրացրել հայապատկան հողերն ու ունեցվածքը<sup>524</sup>:

Վերլուծելով և համադրելով գործողություններն ու դեպքերը՝ Կիլիկիո կաթողիկոսը կարծես կանխագգում է գալիք իրադարձությունները՝ վախենալով հայկական նոր ջարդից: 1909 թ. փետրվարին կաթողիկոսը գրում է Մուշեղ եպիսկոպոսին.

«Տեղոյս միութեսարըքը ուրբաթ զիշեր Կարս-Պազարէ Վահկայէ ժողովուած 10-12 Սուարիներով Հաճըն գնաց...այդտեղէն եկած լուրի մը համեմատ Հայ վարժուիի մը բռնաբարելու խնդիր մը կայ: Ես լաւ բան չեմ տեսներ այս ցուրտ եղանակին Միութեսարըքին Հաճըն երթալուն մէջ, կանխագուշակուած փոթորիկը կը մօտենայ, նոր արհաւրանց ամպերը կը կուտակին և մերկ ու անօթի ժողովուրդը սպանդանոց պիտի առաջնորդուի»<sup>525</sup>:

Ինչպես նշում է պատմաբան Պ. Տեր-Մաթոսյանը, անհնար է հասկանալ Ադանայի կոտորածները՝ առանց դրանք ժամանակի մակրո և միկրոպատմական փոխակերպումների մեջ

---

<sup>522</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 39, 1910, փետրուարի 19, էջ 2:

<sup>523</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Ջարդը եւ պատասխանատուները, էջ 18-19:

<sup>524</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15-16:

<sup>525</sup> Կիլիկեան կսկիծներ, էջ 73:

դնելու<sup>526</sup>: Այն, որ Ադանայի նահանգում որոշակի իրավիճակ էր հասունանում, աստիճանաբար դառնում էր ավելի շոշափելի: Մահմանադրության հռչակումից հետո օսմանահպատակ ժողովուրդները երկրի լիարժեք քաղաքացիներ լինելու ցանկություն և կամք դրսևորեցին: Ադանայի նահանգում հայերը մեծ ոգևորությամբ ընդունեցին սահմանադրության վերահաստատումը և դրա հետ ակնհայտ հույսեր էին կապում, բայց ազատության և հավասարության կոչերով նոր իշխանության եկած «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը և նրա նահանգային մասնաճյուղերի նորաթուխ կուսակցականները բռնատիրական «նորաոճ» կարգեր հաստատելու գործընթաց էին սկսել:

1909 թ. ջարդի տարելիցին «Հորիզոն» թերթը, քննելով Ադանայի կոտորածները, գրում է, որ ջարդի ղեկավարները շարժվում էին որոշ սցենարով և ձգտում էին կարծես թե՛ իրականացնել նախապես մտածված և որոշված մի ծրագիր: Հռովմաձագիրը նշում է, որ «Ադանայի տաճիկները» խնամքով և հետևողականությամբ կատարել են առաջադրանքը և հարցադրելով ինչի էին ձգտում ղեկավարները՝ պատասխանել. «Մի չափազանց չնչին բանի. տիրանալ հայերի հողերին և դուրս քշել դաշտային մասից հայերին»<sup>527</sup>: Նրանք լավ հասկանում էին, որ ջարդերից հետո, մասամբ դրսի օգնությամբ, մասամբ իրենց տեղացիների ջանքերով, նորից կվերակառուցվեն գյուղերը, կվերսկսվի կյանքը: Հայը 10-15 տարվա ընթացքում կվերստեղծի նոր տնտեսություն և կմոռանա ջարդերը<sup>528</sup>: Այս հեռանկարը այդքան էլ հարմար չէր իշխանություններին, որոնք, օգտվելով ստեղծված իրավի-

---

<sup>526</sup> Der Matossian Bedross, *Shattered Dreams of Revolution, From Liberty to Violence in the Late Ottoman Empire*, Stanford University Press, Stanford, California, 2014, p. 163.

<sup>527</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 45, 1910, փետրվարի 27, էջ 2:

<sup>528</sup> Տե՛ս նույն տեղում:

ճակից, փորձում էին հարվածել ամենավճռական կերպով, որպեսզի վերականգնվելու հավանականությունը հնարավորինս նվազեր:

Կառավարությունը գիտեր, որ օրենքի համաձայն, երբ մի ընտանիքի անդամները ոչնչանում էին, և ընտանիքը դադարում է գոյություն ունենալուց, այդ ընտանիքի ամբողջ հողերը անցնում էին պետությանը՝ «մահլուլ» էր լինում: Երբ ջարդի շնորհիվ հայերի հողերը «մահլուլ» էին դառնում, հասկանալի է, որ այդ հողերը անցնում էին նույն կամ հարևան գյուղերի մուսուլմաններին: Այն փոքրաթիվ հայերը, որոնք «թյուրիմացաբար» ազատվել էին ջարդերից, ժամանակի ընթացքում չդիմանալով ճնշումներին աստիճանաբար կհեռանային՝ թողնելով ընդարձակ հողակտորներ: Բազմաթիվ շրջաններ, որոնք ժամանակին հայկական էին, կդառնան թուրքական<sup>529</sup>:

1910 թ. մարտի 26-ին Հոդային հանձնաժողովի անդամներ դոկտ. Ն. Տաղավարյանը, Ղ. Հ. Պեզագյանը, Ռ. Փափագյանը, Արամ Հալաճյանը Կ. Պոլսի պատրիարք Եղիշե արք. Դուրյանին ուղղված խոսքում շեշտում էին. «Կարծես ուխտ մը կայ Հայն հողագուրկ և ստրուկ ընել ամէնուրեք. և արդէն շատ տեղեր հասած են այս նպատակին...»<sup>530</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և հայաբնակ այլ վայրերում կոտորածը, բռնությունը, կողոպուտը, իշխանության տեղական ներկայացուցիչների օրինախախտումները նպաստում էին, որ հայերը զրկվեն իրենց հողերից: Կենտրոնական իշխանության կողմից համակարգվող տեղական իշխանությունների գործողությունները նպատակային էին: Խրախուսելով և ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելով մուսուլմանների համար՝ նրանց շահեկան դիրքերում գտնվելու հնարավորություն էր տրվում: Ստեղծվում էին մրցակցային անհավասար պայմաններ, որին

<sup>529</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>530</sup> Տեղեկագիր հոդային գրամանցյանձնաժողովոյ, Տետր Ա., էջ 1:

հաճախ չդիմանալով՝ հայերը դիմում էին արտագաղթի: Նման քաղաքականությունը միտված էր նվազեցնելու կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների, հատկապես հայերի թվաքանակը, հետևաբար կրճատվում էր նաև նրանց ներկայությունը գործունեության տարբեր ոլորտներում, ինչն ասպարեզ էր բացում մուսուլմանների համար: Եվ, թերևս, տեղի էր ունենում ամենակարևորը՝ դատարկվում էին հայաբնակ տարածքները: Մակայն միշտ չէ, որ այս գործողությունները նույնանման արդյունք էին ունենում: Ադանայի նահանգում, չնայած հողային գրավումներին, ճնշումներին և սահմանափակումներին, հայերին հաջողվել էր տնտեսական լուրջ առաջընթաց արձանագրել: Տնտեսական հաջողություններն առաջ էին բերել ժողովրդական տեղաշարժեր ևս. Ադանան իր տնտեսության շուրջն էր կենտրոնացրել ու աշխատանքով ապահովել կայսրության տարբեր վայրերից և հատկապես հայկական նահանգներից աշխատանք որոնողների: Նահանգը 1909 թ. ջարդի նախօրեին 100.000-ից ավելի մարդու աշխատանք ունենալու հնարավորություն էր տալիս: Ուստի, կարելի է ասել մասամբ խանգարում էր նաև մյուս նահանգներում իրականացվող հայաթափմանը, քանի որ շատերը արտասահման մեկնելու փոխարեն գալիս էին Ադանա, իսկ նրանց ընտանիքները մնում էին իրենց բնակավայրերում: Ադանայի սեզոնային աշխատանքների ավարտից հետո նրանք հիմնականում վերադառնում էին իրենց բնակավայրերը, արդեն գումարով՝ ուստի խախտվում էր հողային գրավումների համակարգը այլ նահանգներում ևս: Գումար ունեցող գյուղացին չէր գրավադրի իր հողը: Կառավարության համար հասկանալի էին այս առաջընթացի հետևանքները. օր օրի ընդլայնվող հայկական տնտեսություն, ավելի շատ աշխատատեղեր, ավելի ապահով ու հարուստ հայեր:

### **3.2. 1909 թ. Ադանայի հայերի կոտորածը և դրան ուղեկցող զանգվածային ունեզրկման ազդեցությունը նահանգի հայության տնտեսության վրա**

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից գրեթե մեկ տարի անց տեղի ունեցած Ադանայի կոտորածը Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես, հայերի նկատմամբ իրականացվելիք ծրագրի նախանշանը դարձավ: 1909 թ. հունվարի 9-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ն. Սկրյաբինը հաղորդում էր, որ Էրզրումում մուսուլմանների ատելությունը հայերի նկատմամբ աճում է ոչ թե օրերով, այլ ժամերով: Երիտթուրքերից նույնիսկ նրանք, որոնք դրանից առաջ ազդարարում էին իրենց երախտապարտությունը հայերին՝ ազատագրական շարժման մեջ նրանց ցուցաբերած նախաձեռնության համար, հայերի վրա գաղտնի հսկողություն սահմանեցին և հրահանգեցին զավառների իրենց գործակալներին՝ անհրաժեշտության դեպքում ոչնչի առջև կանգ չառնել: 1909 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին Ամասիայում ու Մարզվանում թուրք զինվորները կոտորեցին շուրջ 200-300 խաղաղ բնակիչ: Մարտի 2-ին Սկրյաբինը զեկուցում է, որ Էրզրումից բացի՝ թշնամությունը հայերի հանդեպ աճում է նաև Բիթլիսի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիրաբեքիրի նահանգներում<sup>531</sup>: 1908 թ. ապրիլ ամսից մինչև 1909 թ. ջարդը հայկական նահանգներում շարունակաբար իրականացվող բռնությունների, սպանությունների ու կողոպուտների մասին տեղեկություններ են հաղորդում նաև Կ. Պոլսում Իտալիայի դեսպանատնից և հյուպատոսություններից Իտալիայի արտաքին գործերի նախա-

---

<sup>531</sup> Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը..., էջ 31-32:

րար Տիտոսնիին ուղղված հեռագրերը<sup>532</sup>:

Սակայն հիմնական հարվածն ուղղվեց Կիլիկիային: Կառավարության քաղաքականության իրագործումը հանձնարարվեց Ադանայի նահանգապետ Ջևադ բեյին և զինվորական հրամանատար Մուսթաֆա Ռեմզի փաշային: Ադանայի նոր նահանգապետն ու զինվորական հրամանատարը սկսեցին գաղտնի խորհրդակցություններ գումարել, զորամասեր տեղափոխել Ադանայի նահանգ, զինել խուժանին և մշակել հայկական ջարդերի ծրագիր: Մուշեղ եպիսկոպոսը նշում էր. «...թրքական ծրագիրը իր առաջին հարուածը տուաւ Կիլիկիոյ սրտին: Հարուածը ո՛րքան ալ ահաւոր, ինծի համար դիպուածի մը, կամ Համիտական հին բեժիմի մը երկունքը չէր. անիկա կը բդիւէր Սահմանադրական Թուրքիոյ մեքենականութենէն»<sup>533</sup>: Այնուհետև հավելում է, որ «Իթթիհատ արիւնի ճամբուն վրայ իր հանդիսաւոր մուտքը ըրած էր Ատանայով: Դժուարութիւնը կը կայանար սկզբնաւորութեան և առաջին պատասխանատուութենէն յաջող խուսափումին մէջ: Երկուքին մէջ ալ յաջողած էր»<sup>534</sup>: Եվ, իսկապէս, նման մեծամասշտաբ հանցագործությունների դեպքում պակաս կարևոր հանգամանք չէ պատասխանատվությունից խուսափելու տարբերակներ գտնելը ևս, քանի որ 1909 թ. փորձը դեռ պետք է մշակվեր:

Մուշեղ եպիսկոպոսը, ներկայացնելով ջարդի նախադրյալները, գրում էր, որ տարիներ ի վեր Կիլիկիան Ջեյթունով արդեն իսկ իր վրա էր հրավիրել թուրքական քաղաքականության ուշադրությունը, որը ավելի լարվել էր Ադանայի տնտեսական զարգացման արդյունքում, ու ներքին գավառների հարստա-

---

<sup>532</sup> Իտալիայի Արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին (1913-1923 թթ.), հ. Ա (1913-1917), նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց Ա. Բալոյանը, ՀՅԹԲ, Երևան, «Տիգրան Մեծ», 2008, էջ 202-207:

<sup>533</sup> Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական մղձաւանջը, Պոստոն, «Ազգ», 1916, էջ 11:

<sup>534</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 41:

հարված և սովալլուկ ժողովուրդը իրենց զավառներում տիրող սովից ու անապահովությունից հուսահատված՝ հետզհետե դեպի Ադանայի դաշտ էր գալիս իր ապրուստը հայթայթելու համար<sup>535</sup>: Այնուհետև շարունակում էր. «...Ատանայի մեջ կ'ամփոփուէր ամենաստուար հայությունը, իր տնտեսական եւ հողագործական բարգավաճ կեանքով, եւ քանի որ Ատանայի տրուելիք հարուածը Կիլիկիոյ սրտին տրուած մահացու հարուածը պիտի ըլլար»<sup>536</sup>:

Ջարդերի նախօրէին «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ Իհսան Ֆիքրին «Իթիդալ» թերթի խմբագրությունում կազմակերպում է ժողով, որին մասնակցում են տեղական իշխանություններում ընդգրկված բոլոր մուսուլմանները՝ պաշտոնյաներ, կրոնավորներ, զինվորականներ, գործավորներ: Այնուհետև բոլորը լծվում են զանգվածային հարձակում նախապատրաստելու գործին: Վերոհիշյալ ժողովից հետո գրգռված ամբոխը, մշտապես այնտեղ գտնվող պահակազորի կողմից առանց որևէ դիմադրության հանդիպելու, թալանում է զինապահեստը, ինչն ինքնին վկայում է, որ զենքերը պարզապես բաժանվել են: Ջենքերը բաժանելու մասին գրում է նաև Հ. Թերզյանը. «Երկաթուղիի կայարանը պաշարող վայրագ խուժանը՝ բարձրաձայն գոչերով ու պոռչտուքներով զորանոց վազեց և հոն բաշխեցին մնացած զենքերն ալ»<sup>537</sup>: Ամերիկացի միսիոներուհի Հ. Գիբոնսի վկայությամբ ևս իշխանությունների կողմից հրացաններ, վառոդ և այլ զինատեսակներ են բաժանվել թուրք ամբոխին<sup>538</sup>: Մինչ այդ ջարդին նախորդող օրերին 5-600 սոֆթաները<sup>539</sup> կամ «սարրզ փաթթելով սօֆթա ձևացողներ» շուկայում խուզարկում և ձերբակալում էին հայ անցորդներին, գրավում՝

---

<sup>535</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Ջարդը եւ պատասխանատուները, էջ 9:

<sup>536</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

<sup>537</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 164:

<sup>538</sup> Gibbons H., *The Red Rugs of Tarsus. A Woman's Story of the Armenian Massacres*, Paris, Hagop Turabian editor, 1919, p. 87.

<sup>539</sup> Softa-մեղրեւեի աշակերտ:

դանակ, ատրճանակ, եթե այդպիսին կար, և դրամ, վիրավորում՝ բիրերով կամ դաշույնով: Իսկ ոստիկաններն ու զինվորները, անգամ սպաները, ականատես դառնալով այս գործողությունների, ոչ միայն չէին միջամտում, այլև ձեռքակալում էին վիրավոր հայերին և անտեսում նրանց բողոքները<sup>540</sup>:

Կոտորածների առիթ ստեղծելու, ժողովրդին հրահրելու համար սկսում են պարբերաբար վիրավորել ու անարգել հայերին: Սպանվում է կեսարացի հայ երիտասարդ, որին փորձում են որպես թուրք ներկայացնել<sup>541</sup>: Պետք է նշել, որ դեռևս 1908 թ. սեպտեմբեր ամսից սկսած հայերի սպանությունները, հարձակումներն ու բռնությունները նահանգի տարբեր գավառներում շարունակական բնույթ էին կրում<sup>542</sup>:

1909 թ. մարտի 31-ին թուրքերը կենտրոնանում էին Ադանայում՝ շարունակ ստվարանալով: Այնուհետև զինված և սպիտակ փաթոց կապած ամբոխը նշանագծում էր տների և խանութների դռները: Թերևս մարտի 31-ին մայրաքաղաքում տեղի ունեցած հեղաշրջումը պատեհ պահ է դառնում ջարդը սկսելու համար:

Ապրիլի 1-ի առավոտյան քրիստոնյաները փորձում էին չբացել իրենց խանութները, սակայն նահանգապետը, շրջելով ամենուր, հորդորում է, որ բոլորը գործի անցնեն<sup>543</sup>: Այնուհետև քրիստոնյա հոգևոր առաջնորդներին իր մոտ կանչելով՝ հանդիմանում է խանութների փակ լինելու համար և հրահանգում բացել՝ չլսելով անգամ նրանց, թե «...երբ իսլամ ժողովուրդը այսպես ձեռքերնին զենքերով եւ բիրերով կը պտտին՝ որեւէ քրիստոնեայ կրնա յ համարձակիլ իր խանութը բանալու»<sup>544</sup>:

---

<sup>540</sup> Ականատես, Ստանայի Ապրիլ 1ի հայկական ջարդը, «Արեւելեան մամուլ», Ջմիւռնիա, թիւ 17, 1909, ապրիլ 21, էջ 495:

<sup>541</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Ստանայի Ջարդը եւ պատասխանատուները, էջ 48:

<sup>542</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 34:

<sup>543</sup> Աճառեան Հ., նշվ. աշխ., էջ 58:

<sup>544</sup> Աշճեան Հ. Յ., Ստանայի եղեռնը եւ Գոնիայէ Յուշեր, Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1950, էջ 16:



Ապրիլի 1/14 սկսվում է ընդհանուր ջարդ, կողոպուտ և հրկիզումներ, որը շարունակվում է երեք օր: Սկզբում կոտորում են խանութների դռներն ու փեղկերը՝ վերցնելով ողջ դրամն ու ապրանքը: Այս կողոպուտը բավականին զբաղեցնում է ջարդարարներին և տների վրա անմիջապես հարձակվելու ժամանակ չի թողնում: Տների կողոպուտն ու հրկիզումները սկսվում է երկրորդ օրը<sup>545</sup>: Կողոպուտին անխտիր մասնակցում էին են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ: Նրանք, արագ հափշտակելով հայկական ապրանքները, աշխատում էին ժամանակ չկորցնել ու ըռպե շուտ վերադառնալ՝ կրկին թալանելու:

«Շուկաներուն մեջ թուրք վաճառատուններուն ու խանութներուն վրայ թուղթեր փակցուած էր անմիջապէս, որոշելու համար քրիստոնէաներու պատկանածները և որով թուրքերու բնաւ վնաս մը չեղաւ, իսկ ընդհակառակը քրիստոնէաներուն ապրանքները մինչև յետին ասեղը թալանուեցան: Առաջին ջարդին ատեն պաշտպանուեցան միայն Հայոց թաղերուն մեջ գտնուող փոքրաթիւ խանութները, որոնք ալ երկրորդ ջարդին կործանեցան ու մոխիր դարձան»<sup>546</sup>:

Մուսուլմանական խանութներին փակցված տարբերանշանների մասին է ասվում նաև ամերիկյան միսիոներների հաղորդագրություններում<sup>547</sup>:

Ադանայի ջարդի ականատեսներից Լևոն Փափազյանը փաստում էր, որ ջարդի երկրորդ օրը Ադանայի կառավարչատանը դիզված նավթով լի տարաները տեղափոխվում էին տարբեր վայրեր՝ հայկական գյուղեր, տներ ու այգիներ հրկիզելու համար: Նա ևս շեշտում էր, որ մուսուլմանների խանութների վրա նախապես հատուկ գրությամբ թղթեր են փակցվել՝ հայկականից առանձնացնելու համար. «Որո՞նք էին «իսլամ տիւքեանը»

---

<sup>545</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 18:

<sup>546</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 32:

<sup>547</sup> Ստեֆան վան Ռ. Թրովբրիջի նամակը պրն. Փիթին, Ադանա, 25 ապրիլի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը:

վերտառութիւնը սպիտակ թուղթերու վրայ կապոյտ մելանով գրած և պատրաստող, և օր առաջ թուրք վաճառատուններուն վրայ փակցնողները»<sup>548</sup>: Լ. Փափագյանը գրում է նաև, որ շաբաթներ առաջ արդեն կանչվել էին դրամարկղեր կոտորող մասնագետներ, կային նաև դրսից եկած հատուկ կառապաններ ու բեռնակիրներ, որոնք բեռնել և տեղափոխել են հայերի մեծաքանակ ապրանքները, կարսիները, դրամարկղերը և այլն<sup>549</sup>: Վերոնշվածը խոսուն վկայություն է ջարդի և կողոպուտի նախապատրաստության մասին:

Ամեն կողմից լսվում էին ջարդարարների կանչերը. «Մահ գյավորներին, թող չքանան նրանք, նրանց ինչքը, հողը, տունը, կինը և աղջիկները մեզ են պատկանում: Չկա պատիժ մեր արարքների համար...»<sup>550</sup>:

Ա. Ադոսիդեսը գրում էր, որ մի քանի օրում այն հողը, որի ամենավաղեմի սեփականատերը հայն է, վերածվեց վշտի և մահվան երկրի: Ապա շարունակում, որ բոլոր ժամանակներում, գլխավորապես նահանգներում, թուրքական մեծ կարողությունները դիզվել են քրիստոնյայի կոպիտ և քողարկված կողոպուտի արդյունքում: Հայկական ցանկացած կոտորած իր հիմքում ունեցել է նմանօրինակ շարժառիթ<sup>551</sup>: Հայկական ջարդեր հրահրող գործոններում նման շարժառիթ տեսնում էր նաև Մուշեղ եպիսկոպոսը. «Հայկական ջարդերու պատճառները տնտեսական տեսակետով կը բացատրուին ամբողջ պատմութեան շրջանին: Կրօնական մոլեռանդութիւնը և թուրք ազգային զգացումը տնտեսականին ձեռքը զինող ոյժերն են եղած»<sup>552</sup>: Վերապատվելի Աշճյանը ևս համակարծիք էր՝ նշելով, որ փոքրա-

---

<sup>548</sup> Ստանայի եւ շրջակայից ջարդը, Ականատեսի վկայութիւններ, «Ջայն Հայրենեաց», Կ. Պոլիս, թիւ 28, 1909, 1-14 մայիս, էջ 284: Տե՛ս նաև «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 168, 1909, մայիսի 5-18, էջ 1:

<sup>549</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>550</sup> Միմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 52:

<sup>551</sup> Ադոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 1, 8:

<sup>552</sup> Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական մղձաւանջը, էջ 64:

թիվ ազգի հարստանալը, նրանց առավել բարեկեցիկ կյանքը, ինչպես նաև հաջողություններ ունեցող վաճառատները, կալվածքները տեսնելով և անմրցունակ լինելով, որոշեցին ոչնչացնել: Ջարդերի իրական պատճառը այս է<sup>553</sup>:

Շաբաթաթերթերից մեկը հունիսի 19-ին հրատարակել է Տարսնի Ս. Պողոս քոլեջի նախագահ, պատվելի Թ. Դ. Քրիսթիի՝ մայիսի 6-ի հաղորդագրությունը, որտեղ պատվելի Քրիսթին Կիլիկիայի ջարդերի պատճառները վերլուծելով ի թիվս այլ պատճառների, մատնանշում է նաև հայերի բարեկեցությունը, որը մշտապես գրգռել է թուրքերի նախանձը և առաջացրել կոռուպտելու ցանկություն, այնուհետև մեջբերում է պաշտոնյաներից մեկի խոսքը. «Կ'սպասենք որ փեթակը մեղրով լեցուի: Երբ լեցուի ու առիթը ներկայանայ, ինչ որ ուրիշ տեղեր ըրինք, նոյնը հոս ալ պիտի ընենք»<sup>554</sup>: Իսկ Այնթափի քոլեջի շրջանավարտ, ապա Յելի համալսարանում դասախոս պատվելի Հ. Ատատուրյանը հավելում է, որ այս թուրք պաշտոնյայի խոսքերը հայկական կոտորածների պատճառի վերաբերյալ, մինչև այժմ իր լսած ամենաամփոփ և ուղիղ ձևակերպումն է<sup>555</sup>: Հարկ ենք համարում նշել, որ ջարդի առաջին զոհը Ադանայի հարուստ և հայտնի հայերից էր՝ Դավիթ Ուրֆայանը<sup>556</sup>: Սովորաբար ջարդարարները յուրաքանչյուր բնակավայրում առաջինը հարձակվում էին ամենահարուստ մարդկանց ու տների վրա:

Ջարդի առաջին նկարագրությունը տալով՝ Վ. Հակոբյանը

---

<sup>553</sup> Աշճեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 149:

<sup>554</sup> Ա. Կ. Ս., Հայոց պատասխանատվութիւնը Կիլիկիոյ ջարդին մէջ, «Ասպարէզ», Ֆրէզնօ, թիւ 48, 1909, յունիս 9, էջ 1:

<sup>555</sup> Ատատուրեան Հ., Կոտորածներու պատճառները, «Ասպարէզ», Ֆրէզնօ, թիւ 52, 1909, օգոստոսի 6, էջ 3:

<sup>556</sup> Դավիթ Ուրֆայանը բնիկ ադանացի էր, հին և հայտնի գերդաստանի ներկայացուցիչ: Ադանայի Ազգային Քաղաքական ժողովի ատենապետն էր, Ադանայի պատժադատ ատենանի անդամ: Հոգին ավանդել է. «զիս Ապտէլ Գատէրը սպաննել տվավ»,-խոսքերով: Ատանայի զոհերէն Վսէմ. Դաիթ էֆ. Ուրֆալեանը, «Գեղունի», Վենետիկ, Ս. Ղազար, թիւ 6, 1909, էջ 5: Տե՛ս նաև Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 47, 1910, մարտի 3, էջ 2:

ապրիլի 2/15-ին գրում է, որ Ադանան վերջացած է. շուկան ամբողջությամբ թալանված է բառի իսկական նշանակությամբ, ամեն ինչ թուրքերի տներն է լցված: Այրել են ընդարձակ հայկական գյուղ, հայկական ագարակներ, կտրել են պտղատու ծառերը՝ ոչնչացնելով ամեն ինչ<sup>557</sup>: «Արեւելեան մամուլ»-ը ևս հայտնում էր, որ Ադանայի շրջանակի բոլոր ագարակները, այգիները փչացրել են, կենդանության նշույլ չկա, միայն Մայր եկեղեցին և առաջնորդարանն է մնացել<sup>558</sup>: Իսկ ադանացի բժիշկ Թերզյանը տեղեկացնում էր, որ Ադանայի այրված շուկայի ինչպես կալվածքը, այնպես էլ գույքերը հայերին են պատկանում<sup>559</sup>:

Կ. Պոլսում՝ Բերայի արհեստանոցում, տեղի ունեցած Խառը ժողովի ընթացքում, որին մասնակցում էին Ազգային ժողովի Մայր դիվանը ամբողջությամբ, Կրոնական և Քաղաքական ժողովների ատենապետներ ու անդամներ, ազգային երեսփոխաններ, նույն բժ. Թերզյանը, ներկայացնելով իրավիճակը, հատկապես շեշտում է, որ ջարդի պահին 150.000-ի չափ մշակներ էին գտնվում նահանգում, որն ավելի է սաստկացնում աղետի մեծությունը<sup>560</sup>: Վերապատվելի Աշճյանը նույնպես նշում էր, որ տարբեր նահանգներից շուրջ 40-50.000 մշակներ և այլ աշխատավորներ յուրաքանչյուր տարի գալիս էին Ադանա աշխատելու համար: 1909 թ. ապրիլի 1/14-ի ջարդերի ընթացքում Ադանայում և շրջակայքում 100.000-ից ավել հայ է եղել, հետևաբար կորուստն էլ մեծ է եղել՝ վնասելով նաև ուրիշ նահանգների հայ բնակչությանը<sup>561</sup>:

Արդեն առաջին ջարդից հետո Կ. Պոլսի մամուլը ոչ միայն հեղեղված էր օգնություն խնդրող հեռագրերով, այլև բոլոր հեռագրերում շեշտվում էր մարդկանց ուղղակի սոված և մերկ լինելու հանգամանքը: Բազմաթիվ հեռագրերից ստորև կառանձնաց-

---

<sup>557</sup> «Բիզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,808, 1909, ապրիլի 8, էջ 3:

<sup>558</sup> «Արեւելեան մամուլ», Զմիւռնիա, թիւ 18, 1909, ապրիլի 28, էջ 518:

<sup>559</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 144, 1909, ապրիլի 7-20, էջ 1:

<sup>560</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>561</sup> Աշճեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 15:

ներք Ադանայի առաջնորդական փոխանորդի հեռագիրը, որում ասված է.

«Ատանա, 6 ապրիլ, ժամ 9:30 Պատր. Տեղապահին-Քաղաքին մեջ ջարդը դադարեցաւ: Քաղաքէն դուրս ինչ ըլլալը չենք գիտեր: Կարելոր կորուստներ կան: Առ այժմ անկարելի է ճշդել: Անհամար կարօտեալներուն և փախստականներուն կեանքին պահպանութիւնը կ'աղերսենք: Անմիջական օգնութեան պէտք կայ, որուն յապաղումը հանրային առողջութիւնը պիտի վտանգէ: Առաջն. Փոխանորդ Արսէն»<sup>562</sup>:

Ինչպէս արդէն նշվել է, Ադանայի ջարդի նախօրէին և դրա ընթացքում բազմաթիվ հեռագրեր և գրություններ են ուղարկվել Ադանայի կուսակալությունից կառավարություն և հակառակը: Այս փոխանակվող հեռագրերից հատկանշական է Ադիլ բեյի (ներքին գործերի նախարար[ի փոխանորդ]) հեռագիրը ջարդի օրերին ուղղված Ադանայի նահանգապետին, որում Ադիլ բեյը հրահանգում է, որ կոտորածի ժամանակ ամեն կերպ աշխատեն պաշտպանել օտարերկրացիներին և ֆինանսական հաստատությունները<sup>563</sup>:

Կ. Պոլսի «Ժամանակ»-ը՝ հղելով «Օսմանլը» թերթին, ևս անդրադառնում է այս հեռագրին. «Ներքին գործոց նախարարութիւնն հաստատեց պաշտօնապէս այս հեռագիրներուն պարունակութիւնները, և հեռագիր դրկելով յորդորեց ջարձակիլ պանքաներուն, ելեւտական հաստատութիւններուն և օտարներուն վրայ»<sup>564</sup>: Պատրիարքարանի կողմից Գամբեր Շիրինյանը Ադանայի ջարդի առթիվ դիմել է ներքին գործերի նախարարի փոխանորդ Ադիլ բեյին և ներկայացրել «Օսմանլը» թերթի համարը և ջարդի մասին լուսաբանումներ խնդրել: Ադիլ բեյը հաստատել է, որ նման հեռագրեր եկել են նախարարություն: Գ. Շիրինյանը հարցրել է, թե ի՞նչ կարգադրություններ է արել նա-

<sup>562</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 145, 1909, ապրիլի 8-21, էջ 1:

<sup>563</sup> Ermino, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 42, 1910, փետրւարի 23, էջ 2:

<sup>564</sup> Մեծ Յեղափոխութիւն Ատանայի մեջ, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 140, 1909, ապրիլի 3-16, էջ 2:

խարարությունը, և ի՞նչու է ներքին գործերի նախարարությունը հրահանգել, որպեսզի օտարահպատակների կյանքն ապահովվի, և մի թե միակ ջարդվողը հայերը պետք է լինեն, որ հայերին ջարդելու համար է տրված այդ հրամանը: Ադիլ բեյը ժխտել է, ասելով, թե նման հրաման տրված չէ, այլ ընդհակառակը, հեռագրված է Ադանայի կուսակալություն, որ արագ խնդիրը կարգավորեն՝ ապահովելով տեղի բոլոր քրիստոնյաների կյանքը, գույքը և պատիվը<sup>565</sup>:

Այն, որ ջարդվողը միայն հայերը պետք է լինեին և, որ հայկական գույքը պետք է կողոպտվեր ու ոչնչացվեր, առավել քան ակնհայտ է: Չնայած, ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական իշխանությունները շարունակ փորձում էին ինքնաբուխ անկարգությունների պատկեր ստեղծել և հայերի ջարդն ու կողոպուտը ներկայացնել իբրև երկկողմանի բախում, միննույն է ջարդերի ավատից հետո սպանված հայերի թվաքանակը և նյութական կորուստների չափերն ինքնին փաստում էին համակարգված կոտորածի և կողոպուտի մասին:

«Մարդ կ'ահաբեկի, վայրկեան մը, երբ տեղական իշխանութեանց կամաւոր կուրուքիւնը կը տեսնէ՝ աչք պատռող իրողութիւններու հանդէպ: Օրինակի համար, ինչու չեն ուզեր նկատել, թէ Ատանայի շուկաներուն մէջ Հայ խանութ մը չէ՛ մնացած, որ կողոպտուած ու քանդուած չըլլայ, ...մինչ իսլամի պատկանող ՄԷԿ ՀՍՏԻԿ կրպակ կարելի չէ՛ գտնել որ անվթար մնացած չըլլայ: Ո՞ւր է իսլամին այրուած տունը, թո՞ղ հազարներու մէջէն ՀՍՏ ՄԸ ցուցնեն: Թո՞ղ մէկ հատ, բայց ՄԷԿ ՀՍՏ իսլամ ցոյց տան, որ Հայուն վիճակակից գտնուի այսօր: Չեն կրնար, զի չի կայ»<sup>566</sup>:

Ապրիլի 11-ին Մալոնիկից Ադանա է ժամանել սահմանադրական 3-րդ բանակի երկու գորագունդ՝ ուղարկված Իթթի-հաթի կենտրոնական կոմիտեի կողմից «կարգ ու կանոն» հաստատելու համար: Ապրիլի 11/24-ին Ադանայի կուսակալ Ջևադ բեյի՝ ծածկագիր հարցմանը՝ «ինչպես գործել», Իթթիհաթի

<sup>565</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>566</sup> Պարթևեան Ս, Կիլիկեան Արհաիրքը, Կ.Պոլիս, գրտ. Նշան-Պապիկեան, 1909, էջ 77-78:

կենտրոնական կոմիտեի կողմից տրվել է գաղտնի հրաման. «Ընտրեք կարճ ճանապարհ»<sup>567</sup>: Այլ աղբյուրներ ևս հաստատում են, որ նրանք հրամաններ էին ստանում Իթթիհաթի առաջնորդների կողմից<sup>568</sup>, բացի այդ՝ որոշ զինվորներ իրենք են հաստատել, որ հայերին սպանելու հրաման են ունեցել<sup>569</sup>:

Կանոնավոր զորքերը ճշգրտորեն գրոհում են հայկական թաղամասերը, արդյունքում Տոսպոմահալեսի և Շաբանիե թաղամասերն ամբողջությամբ ավերվում են<sup>570</sup>: Արդեն 1909 թ. ապրիլի 14/27-ին «Բիւզանդիոն» թերթը ահագանգում էր, որ Ադանան նյութապես փչացած է<sup>571</sup>: Թերևս երկրորդ ջարդն առավել սոսկալի էր ոչ միայն այն պատճառով, որ ջարդն իրականացնում էին կանոնավոր զորամասերը, այլ նաև կառավարությունը նախապես հայերին զինաթափելով՝ զրկել էր նրանց պաշտպանվելու որևէ հնարավորությունից:

Այս անգամ հայկական թաղամասը հրկիզում էին նոր ժամանած զինվորները, որոնք վրեժի միայն այդ միջոցն էին գտել, որովհետև թուրք ու քուրդ խուժանը մինչև այդ ամեն բան կողոպտել էր<sup>572</sup>:

Սահմանադրական գորքի զինվորները ոչ միայն գործուն մասնակցություն են ունեցել կոտորածներին, այլև անմասն չեն մնացել ավար ձեռք բերելու գործում: «Բիւզանդիոն»-ն արձանագրում է, որ «Զինուորականներն օգնած են թե՛ այս հափշտակութիւններում, և թե՛ սպանութիւններում, և՛ աւարառութիւններում»:

---

<sup>567</sup> Тунян В. Г. Младотурки и армянский вопрос, ч. 1, 1908-1912, Ереван, изд. Музей-Института Геноцида Армян, 2004, стр. 111.

<sup>568</sup> Duckett Ferriman, Turkish Atrocities. The Young Turks and The Truth about Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, London, 1913, p. 32.

<sup>569</sup> Թ. Դ. Քրիսթիի նամակը, Տարսուն, 24 ապրիլի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը:

<sup>570</sup> Աղոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 24:

<sup>571</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,812, 1909, ապրիլի 14/27, էջ 1:

<sup>572</sup> «Գործ», Թիֆլիս, թիւ 86, 1909, ապրիլի 28, էջ 1:

րում»<sup>573</sup>: «Շուկայի ամբողջ երկայնքն հայու խանութ չէ մնացած, որ չթալանուի, դրամարկղերը զինուորներու օգնութեամբ հրացանների հարուածներով խորտակուած են»<sup>574</sup>: Ադանայի ջարդից փախած մի հույն հետևյալն է պատմել. «Ձորքն օգնեց ամեն կերպ. իրենց հրացաններով թէ մարդ զարկին, եւ թէ խանութներուն դռները կոտրտելով օգնեցին եւ իրենք ալ լցուեցան ավարով»<sup>575</sup>: Ավելի ուշ՝ ջարդից հետո, զինվորները սպանների հրամանատարության ներքո անցնում էին Մերսինի փողոցներով և փոխադրամիջոց բարձրանում՝ թալանված իրերը ձեռքներին<sup>576</sup>: Հաճրնի շրջակայքում տեղի ունեցած թալանի մեծ մասը տարել էին զինվորները: Հարյուրապետերից մեկի մոտ գտնվել էր մոտ 20 գորգ<sup>577</sup>:

Ադանայի ջարդից առաջ բաց էին թողնվել նաև բանտարկյալները, մասնավորապես Ջեբել-Բերեքթից Ադանայի նահանգապետ Ջևադ բեյին ուղղված հեռագրերից մեկում գրված է եղել, որ Էրզինի բանտի և Փայասի բերդի դատապարտյալներն ազատ են արձակվել, որից հետո վերջիններիս և գյուղացիներին զենք է բաժանվել<sup>578</sup>: Հարկավոր է նշել, որ բանտարկյալները ազատ արձակվելուց հետո հավասարապես մասնակցել են կոտորածներին:

Թերևս զարմանալի է, թե ինչպիսի ճշգրտությամբ է զինվորական տարբեր ստորաբաժանումների, հանցագործների ու խառնամբոխի կողմից իրականացվել համակարգված սպանություններ, հրկիզումներ ու կոդոպուտ: Եթե զինվորների դեպքում

---

<sup>573</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,814, 1909, ապրիլ 16-29:

<sup>574</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,815, 1909, ապրիլ 17-30:

<sup>575</sup> «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,808, 1909, ապրիլ 8-21:

<sup>576</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 1991, էջ 256:

<sup>577</sup> Ermينو, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 39, 1910, փետրուարի 19, էջ 2:

<sup>578</sup> Ermينو, Ադանայի ջարդերը, «Հորիզոն», Թիֆլիս, թիւ 42, 1910, փետրուարի 23, էջ 2:



կար գործողությունների հստակ հրաման, եթե բանտարկյալների համար իրենց հմտությունները ցուցադրելու լայն ասպարեզ էր բացվել, ապա հասարակ ժողովրդի կողմից համաքաղաքացուն կամ համագյուղացուն նման սառնասիրտ կերպով սպանելն ու թալանելը վկայում էր հասունացած ներքին հակասության, հակամարտության մասին, որի մեջ տնտեսական գործուն առաջնային էր: Այն, որ հպատակ ժողովուրդները, տվյալ դեքում հայերը, մրցակցային անհավասար ու բարդ պայմաններում, հաճախ նաև ենթարկվելով զանգվածային ու անհատական բռնությունների, հասել էին տնտեսական լուրջ ձեռքբերումների, մինչդեռ թուրքերը, ունենալով արտոնություններ, չէին կարողացել մանր առևտրից վեր բարձրանալ ու հասնել որոշակի դիրքի, հասարակ քաղաքացու կամ գյուղացու մոտ ձևավորել էր ներքին անհանդուրժողականություն: Այսինքն՝ հպատակ ժողովուրդը չպետք է առաջնային դիրքում լինի ցանկացած պարագայում, իսկ եթե կա, հարկավոր է տիրանալ նրա ձեռքբերումներին: Աղանայի նահանգի տնտեսության ամենատարբեր ոլորտներում թուրքերը հետ էին մնացել. արտահանումների և ներմուծումների շուկան, ժամանակի համար արդիական տեխնիկայով զինված գործարանները, վաճառատներն ու տարբեր գործակալությունները հայկական էին կամ հունական, հրեական: Տարիների ընթացքում այդ առաջընթացը, եթե կառավարող շրջանակների անհանգստության, ապա հասարակ ժողովրդի մոտ դժգոհության ու նախանձի առիթ էր դարձել: Անհանդուրժողականությամբ ու նախանձով կարելի է բացատրել նաև ջարդարարների վարքագիծը հաստոցների և երկրագործական մեքենաների նկատմամբ, որոնք թիրախավորված կերպով ոչնչացվել էին ջարդի ընթացքում: Ուշագրավ է նաև ընտանի կենդանիների սպանելու հանգամանքը այն դեպքում, երբ կարող էին պարզապես յուրացնել: Թերևս հասարակ ժողովուրդը դրանց մեջ տեսնում էր հայերի առաջընթացն ու բարեկեցությունը և ոչնչացնելով փորձում էր չեզոքացնել, ազատվել առավել հաջողակ մրցակիցներից:

Վերլուծելով 1909 թ. ջարդը՝ Յ. Լեփսիուսը գրում էր, որ թուրք գյուղացիները առաջին հերթին այրում և կոտորում էին շոգեշարժով աշխատող կալսիչներն ու արոքները, որոնք հայ գյուղացիները ներկրել էին Եվրոպայից՝ Կիլիկիայի դաշտը մշակելու համար<sup>579</sup>: «Արեւելեան մամուլ»-ը ևս նշում էր, որ այգիներից և տներից հետո այրում էին այն երկրագործական գործիքները, որոնք չէին կարողանում տանել<sup>580</sup>: Ագարակներում և այգեստաններում չայրված ծառերը կտրում էին. «...նոյն իսկ Հայոց կովերն ու ձիերը զարկին»<sup>581</sup>:

Ադանայի Երկրագործական բանկի տնօրենը հեռագրել է, թե վերջին դեպքերից հետո երկրագործական ոչնչացված մեքենաների արժեքը հասնում է 500.000 ոսկու: Լծկան անասունների մեծ մասն էլ կորած է<sup>582</sup>:

Ջարդից հետո ի թիվս այլ մտավորականների՝ Ադանա եկած Ջապել Եսայանը թերևս տալիս է քաղաքի ամենախոսուն նկարագիրը. «կը տարածուի քանդուած քաղաքը՝ անծայրածիր գերեզմանի մը պէս. Աւերակ ամէն կողմ...: Բան մը չէ ինայուած. բոլոր եկեղեցիները, բոլոր դպրոցները ու բոլոր բնակարանները»<sup>583</sup>: Իսկ Արշակունիի Թեոդիկը, հայապատկան կրպակների փլատակների վրա տեղավորված, «Ջարդի աշխարհին հերոսներ»-ին նկարագրելով՝ հարցադրում է. «երկիրը միթէ իրենցը չէ՞, միթէ հայուն գոյքն ու գոյութիւնը կախում չունի միշտ իրենց խուժողութ քմայքէն»<sup>584</sup>: Յնցոտիավոր մի մարդու ներկայացնելով՝ Թեոդիկը շեշտում էր, որ ջարդերից առաջ նա բարեկեցիկ մարդ էր: Շատերն ամեն օր կերակրվում էին նրա սեղանից, իսկ այժմ

---

<sup>579</sup> Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր. Հայ ժողովրդի, Երևան, ՀՅԹԻ, «Նահապետ», 2003, էջ 166-167:

<sup>580</sup> «Արեւելեան մամուլ», Ջմիրոնիա, թիւ 22, 1909, մայիսի 26, էջ 517:

<sup>581</sup> Կոտորածն ի Կիլիկիա, «Ջայն Հայրենեաց», Կ. Պոլիս, թիւ 24-25, 1909, ապրիլի 10-23, էջ 259 :

<sup>582</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 166, 1909, մայիսի 2-15, էջ 2:

<sup>583</sup> Եսայեան Ջ., Աւերակներուն մէջ, Պէրոյթ, տպ. Էտվան, 1957, էջ 25:

<sup>584</sup> Թեոդիկ Ա., նշվ. աշխ., էջ 22:

նա էր կարոտ մի պատառ հացի՝ կորցրած լինելով ամեն ինչ<sup>585</sup>: Ադանացի վերապրող Գասպար Թահրուճյանի 1909 թ. մայիսի 5-ին եղբորը Կարապետին (Ֆրեզնո) գրված նամակում ևս կարողում ենք մեծ կորուստների մասին, որ ամբողջ Ադանայի նահանգում հայկական ունեցվածք այլևս չկա, քաղաքում նույնպես ամեն ինչ ոչնչացված է. «մեկ խոսքով Փաճէն մինչև սերայը միայն տասնի չափ խանութ մանցած է, ան ալ տաճիկի: ...Այն քու գիտցած մեծամեծ հարուստների, վաճառականների, իւեղճ ու թշվառ վիճակի մեջ Եէնի-մահալլէյին անդիի կողմի աղբանոցին վրայ բաց տեղը կը բնակին՝ մերկ և նպաստէն գալիք կտոր մը հացին կարօտը քաշելով»<sup>586</sup>:

Ստում ևս իրավիճակը նույնն էր: Մոտ 20 ազարակ-գյուղեր թալանվել էին ու հրդեհվել: Ինչպես քաղաքում, այնպես էլ շրջակայքում, այրվել էին գործարանները, շարքից հանվել ջրաղացները, ոչնչացվել ցանքատարածությունները<sup>587</sup>: Մերսինում Անգլիայի հյուպատոսի կինը՝ տիկին Դաուրթի-Ուայլին ապրիլի 22-ին գրել է, որ յուրաքանչյուր ազարակում 100-ից 200 հոգի կնքել են իրենց մահկանացուն: Թուրքական ազարակները չեն հրկիզվել, բայց այնտեղ աշխատող բոլոր քրիստոնյա մշակները սպանվել են<sup>588</sup>: Տարսունից երկու ժամ հեռավորության վրա գտնվող ազարակներից մեկում աշխատել է 81 բանվոր, որից 80 եղել է հայ և միայն մեկը՝ հույն: Վերջինիս հաղորդած տեղեկությունների համաձայն մյուսները անխտիր սպանվել են<sup>589</sup>:

1909 թ. հունիսի 12-ին նորընտիր պատրիարք Եղիշե արք. Դուրյանի նախագահությամբ գումարված Հայոց Ազգային ընդհանուր ժողովում քննարկվել են կիլիկյան կոտորածները: Հատ-

---

<sup>585</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 31:

<sup>586</sup> Նամակ Ատանայէն, «Ասպարէզ», Ֆրեզնո, թիւ 45, 1909, յունիսի 18, էջ 4:

<sup>587</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 226-228:

<sup>588</sup> Աղոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 45:

<sup>589</sup> Թ. Դ. Քրիսթիի նամակը պրն. Փիթին, Տարսուն, 20 ապրիլի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը:

կապես կարևորվել է ջարդի հետևանքով որբացած երեխաների խնամքի, կարոտյալներին նպաստի բաշխման, բռնի կրոնափոխ արված կանանց ու աղջիկներին վերադարձնելու հարցերը, ինչպես նաև կողոպտված գույքը, ապահովագրական գումարները ստանալու խնդիրները<sup>590</sup>:

Հափշտակված իրերը հետ վերադարձնելու գործընթացը բավականին բարդ էր, եթե ոչ՝ անհնար, քանի որ կողոպտված գույքը հայկական կողմը պահանջում էր հենց կողոպուտը կազմակերպողներից, իսկ վերջիններս էլ հափշտակված իրերը վերադարձնելու հրամանները տալիս էին կողոպուտի հիմնական մասնակիցներին:

Ջարդի ականատես Ն. Թերզյանը գրում էր, որ քրիստոնյաների վաճառատներից թալանված ապրանքների մեծ մասը տեղափոխվեցին մուսուլմանների խանութները, որոնք մեծ հարստության տիրացան, իսկ որոշ մասն էլ կառքերով, ուղտերով և ջորիներով տարան շրջակա գյուղեր ու քաղաքներ, մինչև իսկ փոխադրեցին հեռավոր նահանգներ: Տներից կողոպտված արժեքավոր կահկարասիները ևս տեղափոխվեցին, իրերի մի մասն այրվեց տների մեջ, իսկ մյուս մասը կողոպտիչների տներից դուրս բերվեց հանձնախմբի ներկայությամբ և հանձնվեց տերերին. «այն ալ շատ քիչերուն բաժին ինկաւ մէյ մէկ աթոռ կամ բարձ, պահելու համար իբրև յիշատակ իրենց փառաւոր կահ կարսիներուն»<sup>591</sup>:

1909 թ. Ադանայի նահանգում կարճ ժամանակահատվածում ոչնչացվեց հայապատկան մեծ կապիտալ: Կողոպտվեց շարժական գույքի մեծ մասը, իսկ անշարժ գույքը հիմնականում հրկիզվեց: Գործարաններից, արհեստանոցներից, խանութներից, ագարակներից ու տներից բացի՝ հրկիզվեցին ու ոչնչացվեցին նաև հայկական կրթական հաստատություններն ու եկեղեցիները, որոնցից շատերը դարերի պատմություն ունեին:

---

<sup>590</sup> Միմոնյան Ն., նշվ. աշխ., էջ 199:

<sup>591</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 154 :

1909 թ. ջարդերի օրերին Հ. Ղազարյանը նշում էր ավերված հետևյալ եկեղեցիները՝ Ադանա՝ վեց, Հաճըն՝ մեկ, Տարսուն՝ մեկ, Չորք-Մարգպան, Օջաքը և Պուխարը՝ չորս, Էյրի Պուճագ՝ յոթ, Էքպեզ՝ երեք, Օսմանիե՝ երկու: Ընդհանուր՝ 24: Իսկ ավերված դպրոցների պատկերը հետևյալն էր՝ Ադանա՝ հինգ, Տարսուն՝ մեկ, Հաճըն և գյուղերը՝ երեք, Չորք-Մարգպան, Օջաքը և Պուխարը՝ յոթ: Ընդհանուր՝ 16<sup>592</sup>:

Ադանայում այրվեց 1.190 տուն և շուկայի հայապատկան բոլոր խանութները, Հասանբեյլիում՝ 416, Բահչեում՝ 115, Լափաջըում՝ 120, Ինջիրլիքում՝ 145, Օսմանիեում՝ 200 տուն<sup>593</sup>: Ամերիկյան միսիոներների հեռագրերից մեկում նշված է, որ Բահչեի գավառում ներառյալ Օսմանիեն հրկիզվեց 952 տուն<sup>594</sup>:

Միսիսում 80-ից ավելի տուն այրվեց, 350-ից ավել մարդ հրկիզվեց կամ մորթվեց: Հայաբնակ գյուղեր Շելյա Մուրադը, Աբդօղլուն և Կեմուրզան քանդվեցին<sup>595</sup>: Աբդօղլուն տվեց 500 զոհ: Համիդիեի շուկայում գտնվող իրենց կրպակներում ապրիլի 15-ին սպանվեց ավելի քան 600 մարդ, հրկիզվեց 400 տուն, չորս դպրոց, երկու եկեղեցի<sup>596</sup>:

Ադոսիդեսը ներկայացնում է ջարդի օրերին Կիլիկիայում գտնվող ֆրանսիացի ինժեների նոթատետրից մի հատված. «Մենք սկսում ենք նկատել ծիսի քուլաներ: Հրկիզվում են հայկական հարուստ ազարակները: Թուրքերին պատկանողներն անվնաս են: Ճանապարհից 500 մետր հեռավորության վրա տեսնում ենք Ինջիրլիք գյուղի հայկական թաղամասը, որը բոցավառվում է»<sup>597</sup>: Ինջիրլիքում 700 հոգուց բաղկացած բնակ-

---

<sup>592</sup> Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 170-171:

<sup>593</sup> Ադոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 69:

<sup>594</sup> Շելփարդից հեռագիր պրն. Փիթին, 12 հունիսի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը:

<sup>595</sup> Թեոդիկ Ա., նշվ. աշխ., էջ 130-136:

<sup>596</sup> Ադոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 43-45:

<sup>597</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 43:

չութունից փրկվեց 60-ը, որոնցից 28-ը արական սեռի ներկայացուցիչներ են: Քրիսթիանքոյ գյուղի 45 տներից մոռացության մատնվեցին միայն երեքը<sup>598</sup>:

1909 թ. Կարսում հրդեհվեց 60 տուն և 100 խրճիթ<sup>599</sup>: Կոտորածը Տարսոնում սկսվեց ապրիլի 16-ին: Ամբողջ հայոց թաղը այրվեց, իսկ եկեղեցիները հիմնահատակ քանդվեցին<sup>600</sup>: Տարսոնի հայկական թաղամասը հրկիզվեց, 800 տուն ոչնչացվեց<sup>601</sup>: Տարսոնում ու շրջակայքում կողոպտվեց և այրվեց 203 շենք, որտեղ գտնվում էին 551 ընտանիքների բնակարաններ, հինգ հացի փուռ, չորս խանութ, չորս մթերանոց՝ բուն Տարսոնում, չորս դպրոց, երկու առաջնորդարան, մեկ եկեղեցի՝ մասամբ այրված ու կիսաքանդ, նաև 69 տուն, չորս խանութ՝ Գոգոլուզ գյուղում, երկու եկեղեցի և երկու դպրոց<sup>602</sup>: Բացի այդ՝ հրկիզվեց ու կողոպտվեց 16 ազարակի շենք, 15 հնձող մեքենա և այլ գործիքներ: Միայն կողոպտված տները շուրջ 28 էին, իսկ 13 տուն զերծ մնաց կողոպուտից ու հրդեհից, քանի որ գտնվում էին թուրքական և հունական թաղերում: Հայոց թաղում հրկիզված տների մեջ կային 20 թրքապատկան և երեք հունապատկան տուն, որոնց վարձակալները հայեր էին<sup>603</sup>:

Չորք-Մարզպանի, Պայասի և շրջակայքի առաջնորդ Սահակից մայիսի 10-ին նամակ է հասել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, որում ասված է, թե հարյուրավոր անմեղ մարդիկ սպանվեցին, տները և ազարակները այրվեցին, և ողջ գույքը

---

<sup>598</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>599</sup> Քելեշեան Մ., նշվ. աշխ., էջ 220:

<sup>600</sup> «Ասպարեզ», Ֆրեզնո, թիւ 38, 1909, ապրիլի 30, էջ 2:

<sup>601</sup> Ստեֆան վան Ռ. Թրովբրիջի նամակը պրն. Փիթին, Ադանա, 24 ապրիլի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը: Տե՛ս Ադոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 69:

<sup>602</sup> Մինասեան Մ., 5 Անտիպ վաւերաթուղթ՝ Կիլիկիոյ 1909 թուականի կոտորածներուն մասին, Ազդակ Բացատիկ, Պէյրուս, 24 ապրիլ, 2009, էջ 90:

<sup>603</sup> Տե՛ս նույն տեղում:

դարձավ ավար: Ուննոր դասակարգը չքավորին հավասարեցվեց<sup>604</sup>: Չորք-Մարգպանի ինքնապաշտպանության գծից դուրս մնացած մոտ 40 տուն հրկիզվեց: Այրվեցին ու կողոպտվեցին նաև շրջակա ագարակների տները, որոնցից 100-ը պատկանում էին չորքմարգպանցիներին<sup>605</sup>: Շուկայում 18 խանութ կողոպտվեց, ևս չորս խանութ և մեկ նարնջի ամբարանոց հրկիզվեց, երկու ջրաղաց ոչնչացվեց, 26 ձի սպանվեց, հրդեհվեց կամ քանդվեց 30 տուն, որից 20-ը ագարակների մեջ, դրամական վնաս՝ 27.000 օսմ. ոսկի: 1909 թ. Օջաբլրում հրդեհվեց կամ քանդվեց 24 տուն, դրամական վնասը կազմում էր 7.000 օսմ. ոսկի: Էոզերլիում հրդեհվեց կամ քանդվեց 30 տուն, եկեղեցին և դպրոցը ևս հրկիզվեցին, դրամական վնասը կազմում էր 6.000 օսմ. ոսկի<sup>606</sup>:

Հասանբեյլիի դեպքերը նկարագրող ամերիկյան զեկուցագրերից մեկում նշվում է. «Կասկածից վեր է, որ մահմեդականները ցանկացել են կոտորել հայ բնակչությանը՝ նրա կալվածքներում հաստատվելու համար»: Հասանբեյլիի տները տարածված էին այգիներում, դրանք առանձին-առանձին կողոպտվելուց հետո մեկ առ մեկ հրկիզվեցին: Այս գործն ավարտին հասցնելու համար պահանջվեց 12 օր: Նույն եղանակով հրկիզվեց 416 տուն, 56 կրպակ, երեք դպրոց, երկու եկեղեցի<sup>607</sup>:

Բազմաթիվ գյուղաքաղաքներում, գյուղերում և ավաններում այլևս ոչ մի տուն կանգուն չէր մնացել: Միայն Ջեբել-Բերեքեթում 915 կացարան (չհաշված կրպակներն ու արհեստանոցները), վեց եկեղեցի, 12 դպրոց հրի ճարակ դարձան<sup>608</sup>: Հարունիե, Էնթիլլի, Գոյակ և Գոբջայիր գյուղերի բոլոր տները այրվեցին<sup>609</sup>: Մ. Օրմանյանը գրում էր, որ 1909 թ. Ադանայի նահանգում

---

<sup>604</sup> «Ասպարեզ», Ֆրեզնօ, թիւ 45, 1909, յունիսի 18, էջ 2:

<sup>605</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 57-58:

<sup>606</sup> Գոճայեան Մ., նշվ. աշխ., էջ 96-97:

<sup>607</sup> Ադոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 49:

<sup>608</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 69:

<sup>609</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 67-73:

հրդեհվել և վնասվել է 37 քաղաք ու գյուղ<sup>610</sup>:

Հայ կաթոլիկ եպիսկոպոսությանը պատկանող ագարակում կոտորվեց 160 մարդ, իսկ նրանց դիերը նետվեցին ջրհորները<sup>611</sup>:

Հրկիզվեց Ադանայի Ս. Ստեփանոս եկեղեցին, Մուշեղյան և Աշխենյան վարժարանները, հայ հռոմեական եկեղեցին և վարժարանը, հայ բողոքականների ժողովարանն ու վարժարանը, հայոց շուկան ամբողջությամբ, հայկական հինգ տներից չորսը<sup>612</sup>: Ջարմանալիորեն կանգուն էր մնացել միայն Ազգային առաջնորդարանն ու Մայր եկեղեցին<sup>613</sup>:

Հրդեհվեց Տարսուհի Ս. Պողոս եկեղեցին<sup>614</sup>, Օսմանիեի բողոքական եկեղեցին, որտեղ ողջակիզվեցին մի խումբ հոգևորականներ և մտավորականներ<sup>615</sup>:

Ի թիվս այլ արժեքավոր իրերի՝ հատկանշական է նաև բազմաթիվ ձեռագիր մատյանների կորուստը, որոնք ոչնչացվեցին 1909 թ. «Կիլիկիոյ սահմաններուն մէջ»<sup>616</sup>:

Հ. Թերզյանը<sup>617</sup> միայն Ադանա քաղաքում հաշվում է 18.627 մարդկային և 1.634.137 լիրա նյութական կորուստ<sup>618</sup>: Իսկ օսմանյան բանկի ներկայացրած տվյալներով՝ նյութական կորուստը

---

<sup>610</sup> Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյն անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատ. Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5869-5870:

<sup>611</sup> Աղոսիդես Ա., նշվ. աշխ., էջ 45:

<sup>612</sup> Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, Ազգապատում, էջ 5869:

<sup>613</sup> Պարթեւեան Ս., Վերապրողները, «Լուսաբեր-Արև», Գահիրե, թիւ 814, 1910, ապրիլի 14, էջ 2:

<sup>614</sup> Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 668:

<sup>615</sup> Տէր-Վարդանեան Յ., Մարաշի Ջարդը 1920-ին, Հալեպ, տպ. Արաքս-Բ. Թօփալեան, 1927, էջ 39:

<sup>616</sup> Եարտըմեան Հ. Տաճատ Կրդ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1995, էջ 68:

<sup>617</sup> Կողոպտվել ու հրկիզվել է նաև Հ. Թերզյանի Ադանայում գտնվող դեղատունը և տունը: Նյութական վնասը կազմել է 500 ոսկուց ավելի: Այրվել է Հ. Թերզյանի վկայագիրը ևս: «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 179, 1909, մայիս 19-1 յունիս, էջ 1:

<sup>618</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, էջ 157:



կազմում է 5.000.000 ոսկի<sup>619</sup>:

Ս. Պարթևյանը նշում է, որ Կիլիկիայում բոլոր կարոտյալների թիվը հասնում է մոտ 80.000-ի, իսկ ինչպես հավելում է Ա. Համբարյանը, եթե վերոհիշյալ թվին ավելացնենք 30.000 սպանվածների թիվը, ապա կտեսնենք, որ թուրքական իշխանությունները կես ամսվա ընթացքում ջարդի և թշվառության մատնեցին կիլիկիահայության շուրջ կեսը<sup>620</sup>: Ամերիկացի միսիոներ Ս. Թրովբրիջը ապրիլի 28-ին զեկուցում էր, որ ամբողջ նահանգից 25.000 կամ մի քիչ ավել վերապրած հայեր, մեծամասամբ կանայք, երեխաներ ու ծերեր, մնացին առանց տների, առանց խանութների, առանց հագուստի և առանց հացի<sup>621</sup>:

1909 թ. մայիսին Ադանայի Ազգային առաջնորդարանի քարտուղար Գր. Փափազյանը հայտնում է, որ ջարդի 20.000-30.000 զոհերի թիվը չպետք է նկատվի չափազանցություն. «երբ հաշուենք Անտիոքի, Լաթաքիոյ և Պելէնի գիւղերուն ու Մարաշի և շրջակայ գիւղերու մէջ կատարուած ջարդերու կորուստը, վստահութեամբ ու անկասկածորէն կրնանք յայտարարել թէ Կիլիկեան Հայութեան կորուստը բնաւ երբեք քառասուն հազարէն պակաս չէ, թողունք անօթութեան, համաճարակի հետեւանոք մեռածներու և մեռնելիքներու թիւը»<sup>622</sup>:

Պատմաբան Հ. Ղազարյանը նշում է, որ Ադանայի ջարդերի ընդհանուր վնասը 80 միլիոն դոլարից ավելի էր: Միայն ֆիզիկական անձանց ապահովագրական գումարը կազմում է 5 մլն. դոլար, իսկ անշարժ և շարժական սեփականության՝ 15 մլն. դոլար<sup>623</sup>:

---

<sup>619</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 254:

<sup>620</sup> Համբարյան Ա. Ս., Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, Պատմա-Բանասիրական հանդես, թիվ 4, Երևան, 1988, էջ 27:

<sup>621</sup> Ստեֆան վան Ռ. Թրովբրիջի նամակը պրն. Փիթին, Ադանա, 28 ապրիլի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը:

<sup>622</sup> Գր. Փափազեան, Կիլիկեան Վիճակագրեր, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3, 839, 1909, մայիսի 16-29, էջ 1:

<sup>623</sup> Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 173:

Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, խորհրդարանի կողմից Ադանայի կոտորածները հետաքննելու համար ստեղծված հանձնախմբի անդամ Հ. Պապիկյանը իր տեղեկագրում փաստում է. «Ինչ կը վերաբերի նիթական կորուստներուն, բաւական է ինձ ըսել որ Ատանայի նահանգը, կայսրութեան ամենէն բարգաւաճ և ամենէն հարուստներէն մին, այսօր միմիայն աւերակներու կոյտ մըն է՝ տխրատեսիլ և լռին»<sup>624</sup>: Այնուհետև Պապիկյանը հավելում է, որ Պատկանյալ վարչության տուրքերի համաձայն, հրդեհված կավածքների համագումար արժեքը ներկայացվում է մոտավորապես 96.000 օսմ. ոսկի: Իսկ իր կարծիքով այդ թվին մեկ զրո ավելացնելու դեպքում ևս արժեքը պակաս պետք է համարել: Բահչեում, որ բնակչության համար պայմանները այդքան էլ բարենպաստ չեն, յուրաքանչյուր տան համար հաստատվել է նվազագույնը 25 ոսկի: Հ. Պապիկյանը գտնում է, որ հնարավորինս ճիշտ թիվ ստանալու համար յուրաքանչյուր տան համար նվազագույնը պետք է ընդունել 50, իսկ առավելագույնը 500 ոսկի<sup>625</sup>:

Ադանայի առաջնորդարանի հաղորդումներից մեկում 1908-1909 թթ. տան արժեքը նշվում է 700 ոսկի<sup>626</sup>: 1909 թ. հուլիս-օգոստոս ամիսներին հրատարակված «Արարատ» ամսագիրը գրում է, որ Ադանայում այրված տների թիվը 1.000-ից ավելի է, և որ շատ տների արժեքը գերազանցում էր 1.000-1.500 ոսկին<sup>627</sup>:

Ադանայում ապահովագրական ընկերությունների վնասների հատուցման գումարը հասնում է 750.000 ոսկու: Ներկայացնելով նյութական կորուստների հանրագումարը՝ Հ. Պապիկյանը եզրակացնում է, որ անշարժ և շարժական գույքի,

---

<sup>624</sup> Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Ատանայի եղեռնը, թարգ.՝ Յակոբ Սարգիսեան, Կ. Պոլիս, գրատուն «Կիլիկիա», տպագր. «Կ.-Արձագանգ»ի, 1919, էջ 20:

<sup>625</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>626</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3175/165, մարտի 18, թ. 485:

<sup>627</sup> «Արարատ», Էջմիածին, 1909-ՌՅԾԸ, համար Է- Ը, էջ 664:

ընդհանուր գումարը 3 միլիոն օսմ. ոսկուց պակաս չպետք է լինի<sup>628</sup>:

1909 թ. ջարդից հետո բազմաթիվ քաշքշուկներ հարուցեցին նաև ապահովագրական գումարների փոխհատուցման խնդիրները: Դրանցից շատերը չլուծված մնացին մինչև 1915 թ. բռնագաղթը և վերջնականապես կորստի մատնվեցին:

Ապահովագրական ընկերությունները կոտորածի հետևանքով սպանված, կյանքի ապահովագրություն ունեցող անձանց ապահովագրական գումարները վճարել են ժառանգ ունեցողներին: Հրդեհների դեմ ապահովագրվածների փոխարժեքները չեն վճարվել, քանի որ հրդեհների դեմ կնքված ապահովագրական պայմանագրերի մեջ գրված է եղել, որ խոռվության կամ խուժանի հարձակումների արդյունքում առաջ եկած հրդեհների վնասները չեն վճարվելու<sup>629</sup>: Կարելի է ենթադրել, որ անգամ օտարերկրյա ապահովագրական ընկերություններն էին վստահ, որ հարձակումներն անխուսափելի են լինելու, և նախապես իրենց իսկ գործունեությունը ապահովագրող կետեր էին մտցրել պայմանագրերում:

Կիլիկիայի ազգապատկան կալվածքների և հայ անհատական կալվածքների մեծամասնությունը ապահովագրված էր ֆրանսիական «Union» ընկերության մոտ, որն էլ առավել չափով պարտքեր ուներ և փորձում էր խուսանալվել: Սահակ Բ կաթողիկոսը աղետյալների անունից դատի էր տվել «Union» ընկերությանը: Կ. Պոլսի օսմանյան դատարանը երկար դատավարությունից հետո հարկադրում է ընկերությանը՝ վճարելու աղետյալների վնասները: Ընկերության կողմից գրեթե չի ընդունվում օսմանյան դատարանի վճիռը<sup>630</sup>:

1914 թ. օգոստոսի 8-ին «Կոչնակ» թերթը հաղորդում էր, որ «Union» ապահովագրական ընկերությունը համաձայնություն է հայտնել 4.000 ոսկի փոխհատուցում տալ հայ կալվածատերե-

<sup>628</sup> Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Ատանայի եղեռնը, էջ 21:

<sup>629</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 155:

<sup>630</sup> Տե՛ս նույն տեղում:

րին<sup>631</sup>: 1914 թ. նոյեմբերի 11-ին, ի պատասխան Կ. Պոլսի Հայոց պատրիարքի պաշտոնագրի (թիվ 2043), որը վերաբերում էր “Սոնոն” ապահովագրական ընկերության խնդրին, Ադանայի Հայոց առաջնորդ Գևորգ Ծ. վ. Արսլանյանը հայտնում է.

«Այժմ, թե ազգապատկան կալուածոց վերաբերեալ պարագային համար յանուն պատկանեալ պաշտօնական մարմնոց եւ թէ յանուն անհատ-շահակիցներու կուգամ յայտարարել, թէ ամենն ալ հաճ եւ հաւան են, որ ըստ կանխաւ կայացած համաձայնութեան Ինիսօնէն 4000 օսմ. ոսկին կանխիկ եւ ոսկի դրամ ըլլալով առնուի Ձերդ Բարձր Սրբազանութեան կողմանէ, Ձեզ տրուած լիազօրութեամբ եւ դրկուած վաւերաթուղթերու ոյժով, ու դրամին ստացումը հեռագրուի մեզ, որպէսզի դրկուելու եղանակին նկատմամբ գարժանն ի գործ դնենք»<sup>632</sup>:

Բացի այն, որ ամեն կերպ ձգձգվում էր վնասների փոխհատուցումը կամ մասնակի հատուցելով՝ փորձում էին խույս տալ, վնասը կրողները ևս իրենց պահանջները հաստատելու համար երբեմն չէին կարողանում համապատասխան փաստաթղթեր ներկայացնել, քանի որ փաստաթղթերի մեծամասնությունը այրվել էր տների և այլ անշարժ գույքի հետ միասին: Արշակունցի Թեոդիկը արձանագրում էր, որ. «Օճնդեան եւ ամուսնութեան վկայագիր, «համիտիէ», տունի տեղի «հեօճէթ», ատոնց ամէնքը հրդեհի միջոցին ոչնչացած են, առանց որոնց ոչ մէկ դիմում կրնան ընել խեղճերը Կառավարութեան մօտ, ոչ գաղթել, ոչ մանաւանդ տէր հանդիսանալ իրենց այրած տուններուն հողին ու պարտեզին»<sup>633</sup>: Փաստորեն կալվածական փաստաթղթեր չունենալու դեպքում սեփականատերերը չէին կարող պահանջներ ներկայացնել իրենց կալվածքների նկատմամբ: Եթե դրան հավելենք նաև այն կալվածքները, որոնք ոչ միայն հրդեհված կամ ոչնչացված էին, այլև սպանված էին դրանց սեփականա-

<sup>631</sup> «Կոչնակ», Նիւ Եորք, թիւ 32, 1914, օգոստոսի 8, էջ 764:

<sup>632</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի Հայոց առաջնորդարանի գրադրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 570-388, 11 նոյեմբերի, թ. 97:

<sup>633</sup> Թեոդիկ Ա., նշվ. աշխ., էջ 52:

տերերը, ապա ստացվում է, որ մեծ թվով կալվածքներ մնում էին առանց տերերի. չկային ո՛չ սեփականատերեր, ո՛չ սեփականությունը, ո՛չ էլ սեփականության պատկանելիությունը հավաստող փաստաթղթերը, կար միայն հողակտորը, որը, այսպիսով, մնում էր պետությանը:

Եթե հողային քաղաքականության տեսանկյունից Ադանայի նահանգում տարածքներ ազատվեցին, ապա տնտեսական առումով, նույնիսկ այն դեպքում, երբ հարվածն ուղղված էր հայկական տնտեսությանը, այնուամենայնիվ կորուստներն անդրադառնում էին պետության վրա: Այրիախնամի տեղեկագիրը արձանագրում էր, թե տարակույս չկա որ, առանց 1909 թ. աղետի, բոլորովին այլ պետք է լիներ Ադանայի վիճակը: Նաև կասկած չկա, որ այդ լայնատարած աղետի ուղղակի և ուժգին կերպով տուժող տարրը եղել է հայությունը. «Բայց պիտի ուզեի որ մանաւանդ մեր Թուրք հայրենակիցները կարենային ըմբռնել թե՛ այդ աղետին հետեւանքները շատ չարաշուք կերպով ազդած են, ու չէին կրնար չազդել, երկրին, պետութեան թե՛ նիւթական և թե՛ մանաւանդ բարոյական կացութեան վրայ»<sup>634</sup>:

Մինչև 1909 թ. Ադանայի նահանգը տարեկան 1,5 մլն. ոսկի հասույթ էր վճարում պետական գանձարան: Կառավարությունը պատրաստվում էր այդ գումարը հասցնել 2 մլն. ոսկու, այնինչ կոտորածից հետո նահանգը հնարավորություն էր ունենալու վճարել միայն 0,5 մլն. ոսկի<sup>635</sup>: Այսինքն՝ 1909 թ. ջարդից հետո երեք անգամ կրճատվում էր կայսրության պետական գանձարան վճարվելիք հասույթը:

Ջարդի հետևանքով, բնականաբար, նվազել էր հայերի ազգային բյուջեն: Տարբերությունը տեսնելու համար բավական է համեմատել ջարդից առաջ Ադանայի ազգային վարժարանների 1909-1910 ուս. տարվա համար հատկացված գումարը՝ ջարդից հետո ազգային ողջ բյուջեի հետ: 1909 թ. Ադանայի Գավառական

<sup>634</sup> Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, էջ 80:

<sup>635</sup> «Ասպարեզ», Ֆրեզնօ, թիւ 52, 1909, օգոստոսի 6, էջ 2:

ժողովը ազգային վարժարանների բյուջեն նոր տարեշրջանում բարձրացնում է 2.000 ոսկու<sup>636</sup> (նախապես այն կազմում էր 1.200 օսմ. ոսկի, որը 800 օսմ. ոսկով բարձրացվելու էր)<sup>637</sup>: Իսկ 1911 թ. Ադանայի ազգային բյուջեն հնարավորություն ուներ լավագույն դեպքում հասնելու 2-3.000 ոսկու<sup>638</sup>, այսինքն՝ ջարդից հետո Ադանայի ողջ ազգային բյուջեն դժվարությամբ էր հասնում նախկինում միայն վարժարանների համար նախատեսված բյուջեի չափին:

Նահանգում կրճատվել կամ գրեթե դադարել էին առևտրական գործարքները, քանի որ դրանք իրականացնելու համար բացակայում էին շատ գործառույթներ: Օսմանյան բանկի Ադանայի մասնաճյուղի տնօրինությունը հեռագրում է բանկի ընդհանուր տնօրինությանը. «Ապրիլի 14էն մինչև Օգոստոսի վերջը չորսուկես ամսուան մօրաթորիոմ հրատարակուի անմիջապէս և պաշտօնական բրօշէտոյի գործողութիւններն առժամապէս դադարեցնելու համար հրահանգ տրուեցաւ կուսակալութեան»<sup>639</sup>: Ադանայի նահանգի առևտրային բացառիկ դրության մասին ելամտական նախարությունը հաղորդում է Բ. Դռանը. «Ատանայի և շրջականերուն վաճառականներու գործառութիւններն ոչ թէ դադարած են, այլ վաճառականական վիճակ չէ մնացած: Ոչ դրամագլուխ կայ, ոչ ապրանք, և վաճառականներէ շատերը մեջտեղ չկան»<sup>640</sup>:

Բազմաթիվ խնդիրներ կային նաև ջարդից տուժածների նպաստի վճարումների հետ կապված: 1909 թ. Ադանայի ջարդից

---

<sup>636</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի առաջնորդարանի նամակների տետրակ (1908, 10 յունիս-1909, 28 մարտ), 3109/99, փետրվարի 17, թ. 400:

<sup>637</sup> Կիլիկեան լուրեր, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,775, 1909, փետրուար 25-10 մարտ, էջ 2:

<sup>638</sup> Միապետ, Կիլիկեան արձագանք, Ատանայի այժմեան կացութիւնը, «Ժամանակ», Կ. Պոլիս, թիվ 738, 1911, մարտ 9-22, էջ 1:

<sup>639</sup> Մօրաթօրիոմ Ատանայի մէջ, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 3,826, 1909, ապրիլ 30-13 մայիս, էջ 3:

<sup>640</sup> Տե՛ս նույն տեղում:

հետո պետության կողմից աղետյալներին տրվելիք նպաստի հատկացումների, ուշացումների առնչությամբ բազմաթիվ քննարկումներ և պարզաբանումներ էին հրապարակվում պոլսահայ առաջատար թերթերի տարբեր համարներում<sup>641</sup>, սակայն 1914 թ. դեկտեմբերի 26-ին Ադանայի առաջնորդի Կ. Պոլսի Հայոց պատրիարքին ուղղված նամակը սպառիչ կերպով ներկայացնում է պետության կողմից աղետյալներին վճարված և դեռևս վճարման ենթակա գումարները.

«...909ի դեպքերին վերջ բարեխնամ կառավարությունը հետևեալ կարգադրություններն ըրած էր, ի մասին աղետեալ վայրերու եւ աղետելոց. 1-Վաճառականաց եւ երկրագործներու փո՜ւստոտութիւն մը, 100,000 լիրանոց, գումար մը, ժրուն ամենակարեւոր մէկ մասը վճարուած է եւ մնացորդը առ այժմ չը պահանջուի, եւ արդէն հատուցումն անհնար է բացարձակապէս: 2-Հրդեհուած տուներու վերաշինութեան համար երկու անգամէն 20,000 լիրա, զոր առանց բացարութեան ամէն տեսակ այրած անհատական տուներու վերաշինութեան յատկացուցած է կառավարութիւնը եւ վճարած է: 3-Այրիներու ապրուստին եւ որբերու դաստիարակութեան համար տարեկան 10 հազարական լիրա, զոր 326 տարիէն սկսեալ 5 տարիէ ի վեր անխափան գանձած է Ազգ. Պատրիարքարանը...»<sup>642</sup>:

Այնուհետև Գևորգ ծ. վ. Արսլանյանը շարունակում է, որ հրդեհված աղոթատեղիների և վարժարանների վերակառուցման համար հատկացված 20.000 լիրայից 1910 թ. 10.000 լիրա վճարվել է, 1912 թ. ևս վճարվել է 1.100 լիրա, իսկ մնացած 8.900 լիրան, չնայած բազմաթիվ դիմումներին, տակավին վճարված չէ<sup>643</sup>:

Ադանայի ջարդի ընթացքում հրկիզված ու քանդված եկեղեցիների ու դպրոցների մեծ մասը չվերականգնվեց: Առաջին աշխարհամարտի նախօրեին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը,

<sup>641</sup> Կիլիկիոյ 10,000 ոսկին, «Բիզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 4,700, 1912, մարտ 30/12 ապրիլի, էջ 2: Տե՛ս և Կիլիկիոյ տնտեսական վիճակը, «Ազատամարտ», Կ. Պոլիս, թիւ 832, 1912, փետրվար 26/10մարտ, էջ 3:

<sup>642</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 662-480, դեկտեմբերի 26, թ. 194:

<sup>643</sup> Տե՛ս նույն տեղում :

Ադանայի հոգևոր և ազգային իշխանությունները դեռևս բազմաթիվ դիմում-խնդրագրերով փորձում էին վերակառուցման համար անհրաժեշտ գումարները ստանալ պետական բյուջեից:

Ադանայի առաջնորդ Շահին վարդապետը, Քաղաքական ժողովի ատենապետ Լ. Խուպեսեթյանը, ատենադպիր Թերզյանը 1912 թ. ապրիլի 7-ին հեռագրում են «Ազատամարտ» թերթին, որ ջարդի ընթացքում այրված 11 եկեղեցիների և 15 դպրոցների վերակառուցման համար տրվելիք գումարների մասին արված դիմումները մնացել են անարդյունք<sup>644</sup>: 1914 թ. օգոստոսի 8-ին «Կոչնակ»-ը հաղորդում էր, որ այրված եկեղեցիների և դպրոցների փոխարժեքի մի մասի վճարման համար դիմում է ուղղվել կառավարությանը<sup>645</sup>, իսկ 1915 թ. հունվարի 10-ին Ադանայի առաջնորդ Գ. ծ. վ. Արսլանյանը Կ. Պոլսի Հայոց պատրիարքին է ներկայացնում 1909 թ. ջարդի ժամանակ այրված և դեռևս չվերականգնված եկեղեցիների ու վարժարանների ցուցակը: Առաջնորդը նշում էր, որ վերակառուցման համար պետական *թահսիսաթը* (հատկացում՝ դրամական) ենթադրում է 895.320 դուրուշ<sup>646</sup>:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի սկզբին Ադանայի նահանգում դեռևս վերացված չէին 1909 թ. կոտորածի հետքերը, դեռևս կային բազմաթիվ կիսաքանդ շինություններ, չվճարված գումարներ և մեծ թվով կարոտյալներ: 1913 թ. Կիլիկիո կաթողիկոսարանից Օսմանյան կայսրության վարչապետարան հասցեագրված նամակներից մեկում (մեզ հայտնի չէ նամակը ուղարկվել է, թե ոչ), թերևս, լավագույն ձևով նկարագրված է 1909 թ. ջարդը վերապրած աղետյալների վիճակը տարիներ անց.

---

<sup>644</sup> Ատանայի դպրոցներն ու եկեղեցիները, «Ազատամարտ», Կ. Պոլիս, թիւ 867, 1912, 10/23 ապրիլ, էջ 3:

<sup>645</sup> «Կոչնակ», Նիւ Եոթք, թիւ 32, 1914, օգոստոսի 8, էջ 764:

<sup>646</sup> Մատենադարան, Ադանայի առաջնորդարանի անմշակ արխիվ, Ադանայի Հայոց առաջնորդարանի գրադրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 493-7, 10 յունվար 1915, թ. 215-216:



«Չեմ կարող չ'իջել, որ կառավարությունը Կիլիկիոյ ցավերը ամոքելու համար թեև չը խնայեց հացազին և խրճիթներու շինութեանց նպաստներ, թեև չը զլացավ ջանքեր՝ միլիոններ արժող կողոպուտէն մաս մը միայն վերադարձնել տալու, նոյն իսկ հրկիզողներու և ավարառուներու կողոպուտին աննշան մէկ փոխարենը պետական գանձէն, լաւ ևս է տօին յատկացիալ նպաստի գումարէն վճարելու, սակայն կան տակաւին՝ մօտաւոր անցեալէն կսկիծներ արթնացնող հարյուրավոր եկեղեցիներ, դպրոցներ ու տուներ, կան անպաշտպան, անօթի և կիսամերկ բազմաթիւ այրիներ ու որբեր, որոնց անտանելի կեանքը, սպիացած վերքերը ամէն օր կ'արունտօին»<sup>647</sup>:

Ադանայի կոտորածներից հետո թե՛ տեղական կառավարության և թե՛ հարցաքննվող «ակննատեսների» կողմից բազմիցս փորձեր են արվել որպէս ջարդերի կազմակերպիչներ դիտարկել հայերին: Վերջիններս մեղադրվել են ապստամբելու փորձի մեջ կամ, վերջապէս, ներկայացվել որպէս սադրիչներ, որոնք հրահրել էին թուրքական կողմին մտնել կովի մեջ: Սակայն, ինչպէս գրում է Ս. Պարթևյանը. «Թրքական իրերուն մօտէն տեղեակ ո՛րէն անձ չանգիտեր թէ ոչ մէկ տեղ թուրք խուժանը, որքան որ ալ գրգռուած ըլլայ, ջարդելու չելլար երբէք՝ եթէ նախապէս տեղական իշխանութեանց քաջալերանքը չունենայ եւ մեղսակցութիւնն ու աջակցութիւնը չապահովէ: Առանց ատոր ջարդ եղած չէ Թուրքիոյ մէջ եւ չի կրնար ըլլալ»<sup>648</sup>:

Հետագայում մանրամասները պարզելու նպատակով կազմվեց վերաքննիչ հանձնաժողով, իսկ մեղավորներին պատժելու համար ստեղծվեց Ռազմական ատյան: Զինվորական դատարանը, որ բաղկացած էր կիլիկյան կոտորածների կազմակերպիչներից, ղեկավարներից ու մասնակիցներից, ձերբակալվածների մի մասին ազատեց, իսկ մյուսին դատապարտեց տարբեր ժամկետներով բանտարկության:

Դեպքերին քաջատեղյակ ռուս պաշտոնյա Շելկովնիկովը, 1909 թ. հունիսին լինելով Ադանայում, գրում է, որ իսկական մեղավորներն ու մարդասպանները, այսինքն՝ իշխանություններն

<sup>647</sup> Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի անմշակ արխիվ:

<sup>648</sup> Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ Ը:

ու մակեդոնական (երիտթուրքական) զորքերը, չեն էլ մտածում թաքնվել, դրա կարիքը նրանք չեն զգում, քանի որ հենց իրենք են ռազմական դատարանի և հետաքննչական հանձնաժողովների անդամները, հենց իրենք էլ այժմ պաշտպանում են կարգն այն երկրում, որտեղ իրենց ձեռքով կոտորեցին մինչև 25-30.000 քրիստոնյա<sup>649</sup>: Իսկ Ադանայում ռուսական փոխհյուպատոս Մավրոմատին արձանագրում էր, թե այժմ թող փորձեն հերքել, որ բոլոր անդամներն այս դատարանի, որի որոշումները բողոքարկման ենթակա չէին, Ադանայից չեն մեկնել ոսկով լի գրպաններով: Կոտորածի ժամանակ այդ ոսկին, իհարկե, խլվել էր հայերից, քանի որ հայերին պատկանող բոլոր սնդուկները կոտորված էին ու դատարկված<sup>650</sup>:

Հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդ Պողոս եպս. Թերզյանը Զմմատի վանահայր գերապայծառ Անդրեաս Աղեքսանդրյանին 1909 թ. հունիսի 22-ին Ադանայից գրում էր, որ մարդասպանները ազատ շրջագայում են ու վաճառում կողոպտած ապրանքները, իսկ քրիստոնյաները բանտարկվում են և անարգվում. «Լսեցինք, վեց հոգի կախեցին մեզմե<sup>651</sup>, հետզհետե թիավարութեան կը դատապարտեն անմեղները»<sup>652</sup>:

Պատերազմական ատյանի անարդարության մասին հավաստող բողոքներից մեկում (8 սեպտեմբերի 1909 թ.) ասվում էր, որ միայն Ադանա քաղաքում վեց եկեղեցի, 12 դպրոց և հազարավոր խանութների ու տների հրկիզման կազմակերպիչ-

---

<sup>649</sup> Համբարյան Ա. Ս., Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, էջ 29:

<sup>650</sup> Геноцид Армян в Османской империи, сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, изд. АН Армянской ССР, 1966, ст. 206.

<sup>651</sup> Պատերազմական ատենախոսության կողմից մահվան են դատապարտվել և 1909 թ. մայիսի 28-ին կախաղան են բարձրացվել վեց անմեղ հայ՝ Քասաբ Միսաքը, Հովհաննես, Հարություն և Կարապետ Պուլտուցյանները, Խաչո Կարապետյանը և Գևորգ Չենեսիզյանը: Մինասեան Ս., 5 Անտիպ վաերաթուղթ՝ Կիլիկիոյ 1909 թուականի կոտորածներուն մասին, էջ 91:

<sup>652</sup> Մինասեան Ս., 5 Անտիպ վաերաթուղթ՝ Կիլիկիոյ 1909 թուականի կոտորածներուն մասին, էջ 88:

ներից թաղապետութեան երկրաչափ Հյուսեին էֆենդին ոչ միայն պաշտոնից չի հեռացվել, այլև հարցը երբևէ չի բարձրացվել<sup>653</sup>:

Ադանայի և Հալեպի նահանգներում շուրջ 30.000 մարդու կյանք խլած ջարդի պատասխանատուներից Ադանայի նահանգապետ Ջևադ բեյը դատապարտվել է միայն վեց տարի վարչական ծառայության՝ նվազագույն վարձատվությամբ, զինվորական հրամանատար Մուսթաֆա Ռեմզի փաշան՝ երեք ամիս բանտարկության: Ջարդերի պատասխանատու մյուս պաշտոնյաներից Ջեբել-Բերեքեթի *մութասարրըֆ* Ասաֆ բեյը դատապարտվել է չորս տարի հասարակական աշխատանքի, Ադանայի կայազորի հրամանատար Օսման բեյը՝ եռամսյա բանտարկության, Իսմաիլ Սեֆան՝ ևս եռամսյա բանտարկության, Երիտթուրքական ակումբի նախագահ Իհսան Ֆիքրին՝ արտաքսվել է Ադանայից, ազդեցիկ գործիչ Աբդուլբադիբ Բադդադիզադեն արքտրվել է Հիջազ երկու տարով, ավելի ուշ սահմանադրության վերահռչակման տարելիցի առթիվ արժանացել է համաներման<sup>654</sup>:

Օսմանյան խորհրդարանի նիստերից մեկում պատգամավոր Վարդգես Սերենգուլյանը նշել է, որ այս ամենը 14 տարի առաջ տեղի ունեցած ջարդերի հեղինակներին անպատիժ թողնելու հետևանքն էր<sup>655</sup>: Ադանայի ջարդի պատասխանատուները ևս մնացին անպատիժ և հնարավորություն ունեցան Ադանայում ձեռք բերած փորձը կիրառել առավել հեռահար ու մեծամասշտաբ հանցագործություն կազմակերպելու և իրականացնելու գործում:

Ժամանակակիցներից ամերիկացի միսիոներուհի Հելեն Գիրոնսը գրում էր, որ Երիտասարդ և Հին թուրքերի միջև միակ տարբերությունը այն է, որ երիտասարդ թուրքերն ավելի գործունյա են կոտորելիս<sup>656</sup>: Իսկ գերմանացի միսիոներուհի Պատուլա

---

<sup>653</sup> Թերզեան Յ., Կիլիկիոյ աղետը, էջ 427:

<sup>654</sup> Kevorkian R. H., *The Cilician Massacres, April 1909, Armenian Cilicia*, edited by Richard G. Hovannisian and Simon Payaslian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2008, p. 368-367.

<sup>655</sup> «Ժամանակ», Կ. Պոլիս, թիւ 143, 1909, սպրիլի 6-19, էջ 2:

<sup>656</sup> Gibbons H., նշվ. աշխ., էջ 127:

Շեֆերը արձանագրել է, որ այն, ինչ կատարվել էր ավելի դաժան է, քան 14 տարի առաջ տեղի ունեցածը, ամեն ինչ այնքան ծրագրված էր ոչնչացվել, որ ոչինչ փրկել հնարավոր չէր<sup>657</sup>: Կայսրությունում երկար տարիների պաշտոնավարության փորձ ունեցող և օսմանյան գործելատճին քաջատեղյակ Մուշեղ արքեպիսկոպոսը գտնում էր, որ Ադանան երիտթուրքերի ծրագրի մեկնարկն էր.

«Ժեօն Թուրքերու սեւ հոգեբանութեան վրայ քաշուած վարագոյրը պատուելէն վերջ, այլ ևս յիմարութիւն պիտի ըլլար խորհիլը, թէ Ատանայի դէպքերը անջատ ու կզղիացած պիտի մնային *բարեկարգուած* Թուրքիոյ պատմութեան մէջ: Ընդհակառակն, ինծի համար Կիլիկիոյ ջարդերը սկզբնաւորութիւնն էին Երիտասարդ Թուրքերու համիտական ոճրագործութեան, որ կանգ պիտի չ'առնուր բնաւ, մինչև որ կատարեալ ընէր իր բնաջնջումի գործը, սպասելով յարմար ժամանակի»<sup>658</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգի հայության տնտեսական վերելքը առանձնակի էր և հեռանկարային: Հովհաննես արք. Նազյանի դիպուկ բնորոշմամբ Ադանան իրապես մեր ամենաապահով հույսերի և ամենավերջին հուսախաբության վկան էր<sup>659</sup>:

Ադանայի ջարդը մեծ հարված հասցրեց ու գրեթե ոչնչացրեց նահանգի հայության տնտեսությունը: 1909 թ-ից 1915 թ. ընկած ժամանակահատվածում այն միայն մասամբ կարողացավ վերականգնվել: Եթե ջարդից առաջ Ադանան կայսրության այլ նահանգների հայ բնակչության համար աշխատանք գտնելու իրական հնարավորություն էր և արտագնա աշխատանքի կենտրոնատեղի, ապա ջարդից հետո այն պետական, եկեղեցական ու

---

<sup>657</sup> Մարտիրոսյան Հ., Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայան (1896-1919 թթ.), Երևան, «Զանգակ-97», 2016, էջ 142:

<sup>658</sup> Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական մղձաւանջը, էջ 11:

<sup>659</sup> Նազլեան Յովհաննէս Արք., Յուշեր, Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Պէրյուֆ, պո. Հայ Կաթողիկէ, էջ 427:

բարեգործական տարբեր կառույցների հոգաձուռյանն էր ապավինում, որոնք ավերված գործարանների փոխարեն փորձում էին տարբեր քաղաքներում և գյուղերում ստեղծել արհեստանոցներ՝ այրիներին աշխատանքով ապահովելու ու որբերին սովից փրկելու համար:

Ստացվում է, որ Ադանայում կայացած և առաջընթացի լուրջ շրջանակներ ընդգրկող կապիտալի ոչնչացումն ավելի կարևոր էր կառավարող մարմինների համար, քան երկրում կայուն հարկատու դաս ունենալը: Շաբաթների ընթացքում Ադանայի տնտեսության հայ ներկայացուցիչների մեծամասնությունը հարկատուի կարգավիճակից վերածվեց նպաստառուի: Ուրեմն, ո՞րն է պետության օգուտը, և ի՞նչ նպատակներ է հետապնդում նա, երբ հարվածում է կայացած ու զարգացման հեռանկարներ ունեցող իր իսկ տնտեսությանը:

Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության տնտեսական զարգացումը խափանելու, նրանց ձեռքբերումները յուրացնելու անհրաժեշտությունն աստիճանաբար դարձավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրի մի մասը, որն էլ հայերի դեպքում մեկնարկեց 1909 թ. Ադանայում և ամբողջացավ Հայոց ցեղասպանությամբ:

## ՎԵՐՋԱԲԱՆ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում շարունակաբար մեծանում էր Ադանայի նահանգի նշանակությունը: Նահանգի զարգացում ապրող քաղաքներն ու գյուղաքաղաքներն աստիճանաբար իրենց վրա էին կենտրոնացնում ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների ուշադրությունը: Նահանգը վերածվում էր առևտրաշրջանառության կարևոր կենտրոնի՝ Փոքր Ասիան կապելով Եվրոպայի, ԱՄՆ-ի և Միջին Արևելքի երկրների հետ:

Ծովափնյա աշխարհագրական դիրքը նպաստում է առաջին նահանգների թվում երկաթուղի ունենալու հնարավորությանը: 1886 թ. արդեն գործում էր Ադանա-Մերսին երկաթուղին, որը գլխավոր նավահանգիստ Մերսինը կապում էր նահանգի վարչական կենտրոն Ադանայի հետ: Երկաթուղու առկայությունը բերում է առևտրի ու արդյունաբերության զարգացմանը՝ տնտեսության առաջընթացը վերածելով դինամիկ գործընթացի: Ընդհանուր զարգացման համատեքստում արդյունաբերության որոշ ճյուղեր լուրջ հաջողությունների են հասնում, որոնց թվում հատկանշական էր բամբակագործությունը: Այն գնալով մեծացնում էր իր արտադրման և սպառման շրջանակները՝ աստիճանաբար դառնալով նահանգի առևտրաշրջանառության հիմնական ապրանքատեսակը:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ադանայի նահանգում հայերի տնտեսական հաջողությունները ուշագրավ էին: Մրցակցային բարդ և անհավասար պայմաններում հայերը կարողացել էին հասնել մեծ ձեռքբերումների: Նահանգում արտահանումների և ներմուծումների շուկայի, ժամանակի համար արդիական տեխնիկայով զինված գործարանների, վաճառատների ու տարբեր գործակալությունների զգալի մասը պատկանում էր հայերին: Հայերը տիրապետում էին գրեթե բոլոր արհեստներին, ունեին ժամանակակից տեխնիկայով հագեցած

գյուղատնտեսություն:

Եթե 19-րդ դարի վերջին տնտեսական դաշտում հայերի հաջողությունները «թույլատրելի» էին, ապա տարիների ընթացքում այն կառավարող շրջանակների մոտ լուրջ անհանգստության առիթ դարձավ: Այլևս թուրքերի համար պարզ էր, որ երկրի հիմնական տնտեսավարողները եվրոպացիներն են կամ օսմանահպատակ հայերը, հույները ու հրեաները, իսկ նոր ասպարեզ մտնող թուրք բուրժուազիան խոշոր հաշվով զիջում էր նրանց:

20-րդ դարի սկզբին ինչպես կայսրությունում, այնպես էլ նրա շուրջը ծավալվող նոր գործընթացներն իրենց ազդեցությունն են ունենում բոլոր ժողովուրդների վրա: Աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների համատեքստում Օսմանյան կայսրությունը գոյատևման ուղիներ էր որոնում՝ դառնալով ավելի ու ավելի անհանդուրժող հպատակ ժողովուրդների հանդեպ: Հայերի և մյուս օսմանահպատակ ազգությունների տնտեսական հաջողություններն ու վերելքն աստիճանաբար դիտարկվում էր որպես կայսրությունը կազմալուծող հնարավոր ուժ, իսկ դրա յուրացումը՝ հնարավոր փրկություն: Հայերին տնտեսապես թուլացնելու, կազմալուծելու խնդիրը դանդաղ հասունանում էր: Իսկ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո ավելի ու ավելի ընդգծվելով՝ աստիճանաբար վերածվում տնտեսությունն ամբողջապես թուրքացնելու ռազմավարական խնդրի:

1909 թ. Ադանայի ջարդը թերևս այդ քաղաքականության նախնական վկայությունն էր, երբ օրերի ընթացքում ոչնչացվեց հայապատկան մեծ կապիտալ: Ադանայի ջարդի օրերին հատուկ հրկիզվում, կոդոպտվում և ավերվում էին հայկական խանութները, գործարանները, տներն ու ազարակները, իսկ դրանց կողքին կանգուն ու գրեթե անվնաս էր մնում մուսուլմանական կամ օտարազգի կապիտալը: Բացի այդ՝ օտարերկրացիների գույքը և կյանքը ապահովելու հստակ հրամանները տրվում ու կարգավորվում էին կառավարության կողմից:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո ինչպես ողջ կայսրության տարածքում, այնպես էլ Ադանայի նահանգում իրավի-

ճակը կտրուկ փոխվել էր: Ի հայտ եկած նոր ուժը սեփական իշխանության հաստատման համար տարբեր վերաձևումներ էր իրականացնում (կարելի է ասել, որ հպատակ ժողովուրդների օժանդակությամբ իշխանության հասած երիտթուրքերը փորձում էին հնարավորինս արագ ազատվել իրենց «հեղափոխական գործընկերներից», նրանց պարզ հասկացնելով, որ Օսմանյան կայսրությունում փոխվել է միայն իշխանությունը, այլ ոչ թե կառավարման ձևը): Ադանայի նահանգում արդեն 1908 թ. աշնանն իշխանությունը երիտթուրքական էր, սակայն նահանգում դեռևս կային իրական ուժ ունեցող հին վարչակարգի հետևորդներ, որոնք սահմանադրությունը չարիք էին համարում՝ որակելով այն որպես օսմանահպատակ ազգերին անտեղի տրված արտոնություն: Այն, որ նահանգում այս երկու ուժերը պայքարում էին միմյանց դեմ ազդեցության ոլորտների համար, բոլորովին չէր նշանակում, որ նրանք համախոհներ չէին հայերին չեզոքացնելու գործում: Ադանայի հայության ջարդը, տնտեսության կողոպուտն ու յուրացումը հարկավոր էր երկու կողմերին էլ: Տեղացի աղաներն ու բեկերը ոչնչացնում էին հաջողակ մրցակիցներին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական ներկայացուցիչներն ամրապնդում էին իրենց իշխանությունը: Իսկ մայրաքաղաքում համիդյան հեղաշրջման փորձը տապալած ու հաղթանակած երիտթուրքական ուժերը երկրորդ անգամ կրկնակի հարվածով՝ փաստում էին, որ կայսրությունում իշխանությունը պատկանում է իրենց. չնայած վերահաստատված սահմանադրությանն ու գործող խորհրդարանին:

Դեռևս 1909 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին Ամասիայում ու Մարզվանում մասնակի կոտորածներ են տեղի ունեցել, Բիթլիսի, Մեքաստիայի, Խարբերդի և Դիարբեքիի նահանգներում ևս իրավիճակը սրվել էր, սակայն որպես հիմնական թիրախ՝ ընտրվել էր Ադանան: Անշուշտ, հայերի տնտեսական վերելքը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բնորոշ էր ողջ կայսրությանը, սակայն Ադանայի նահանգում այն շաղկապվում էր որոշ գործոնների հետ ևս: Արդեն իսկ ֆինանսատնտեսական կայունությանն ու բարեկեցությանը գու-



մարվում էր նահանգի առանձնակի աշխարհագրական դիրքով պայմանավորված զարգացման հեռանկարները, նահանգում հայ ազգային ու հոգևոր իշխանությունների հմուտ գործելաճճը, ինչպես նաև նահանգի կաթողիկոսանիստ լինելու հանգամանքը: Դրանից բացի՝ Ադանայի նահանգի հայերը, ի տարբերություն հայկական նահանգների, համիդյան կոտորածներից ավելի քիչ էին տուժել, համեմատաբար ավելի փոքր է եղել նաև նյութական կորուստների ծավալը: Այս հանգամանքը նույնպես նպաստել էր տնտեսության զարգացմանն ու առաջընթացին:

Ադանայի հայկական կապիտալի ոչնչացումը գրեթե կաթվածահար էր արել նահանգի տնտեսությունը, ավելին՝ ջարդը վերապրած և սնանկացած ժողովուրդը ինչ-որ չափով բեռ էր դարձել պետության համար՝ շարունակ ակնկալելով օգնություն և օժանդակություն: Սակայն այս հանգամանքը ևս շահեկան էր, քանի որ թալանված ունեցվածքի համեմատությամբ նպաստի տեսքով տրված փոխհատուցումը կողոպտված միջոցների նվազագույն մասն էլ չէր կազմում: Բացի այդ՝ չկային արդեն հայկական շատ գործարաններ ու վաճառատներ, ինչը մեծ ասպարեզ էր բացում թուրքերի համար:

Ադանայի ջարդի արդյունքում տեղի էր ունեցել մեծածավալ հողազրկում, ինչը հատկապես ձեռնտու էր ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական իշխանություններին: Վերջինս, լինելով այն սուլթանական, թե երիտթուրքական, վաղուց որդեգրել էր հայկական նահանգների կամ կայսրության հայաշատ վայրերի հայաթափման քաղաքականությունը՝ հողային գրավումների միջոցով: Ադանայի ջարդից հետո որոշ հողեր մնացել էին պարզապես առանց տերերի, քանի որ տերերը սպանվել էին, իսկ վերապրածների մի մասը, կորցնելով գույքն ու ունեցվածքը, հեռացել: Կոտորածների արդյունքում շատ հողեր մնացել էին անմշակ՝ տղամարդկանց պակասի պատճառով, և ևս օտարվել էին հայերից: Այսպիսով, մեծ քանակությամբ հայապատկան տարածքներ անցել էին պետությանը և վերաբնակեցվել մուսուլմաններով:

Ադանայի ջարդը հետապնդում էր հստակ նպատակներ:

Այն նախագծված և ժամանակային առումով ճշգրիտ գործի դրված ծրագիր էր: Հայերին համակարգված կոտորելուց հետո, նրանց նաև մեղադրեցին սադրելու, անկարգություններ սկսելու, խժոժություններ կազմակերպելու մեջ, ինչը պակաս կարևոր հանգամանք չէ արդարանալու, պատասխանատվությունից խուսափելու, ինչպես նաև փաստերը խեղաթյուրելու համար: Հայերին տարբեր մեղադրանքներ առաջադրվում էին նաև ջարդից առաջ, որոնցից հատկապես շրջանառվում էր սահմանադրության վերահաստատումով ոգևորված լինելու հանգամանքը: Այս առանձնակի ոգևորությունը կառավարության կողմից օգտագործվում և թուրք-մուսուլման ազգաբնակչությանը հրամցվում է բավականին հարմար տարբերակով: Հայերը ներկայացվում են որպես լուրջ ֆինանսական հնարավորություններ ունեցող անջատողականներ, որոնց հարկավոր էր զսպել:

Գործում էր հարստահարիչ մի համակարգ, երբ հային ամեն ինչ ստեղծելու հնարավորություն էր տրվում, սակայն իր ստեղծածը տնօրինելու իրավունքը չէր տրվում: Սահմանադրության հետ կապված հայերի ոգևորությունն այդ իրավունքը ձեռք բերելու հնարավորությունն էր համարվում: Այսպիսով, հայերի ոգևորության առանցքը օրենքով պաշտպանված լինելու հանգամանքն էր, թուրքերի նպատակը՝ հայերի դեմ արվող բոլոր անօրինականություններն օրինականացնելը:

1909 թ. Ադանայի ջարդի օրերին Ադանայի և Հալեպի նահանգներում սպանվեց շուրջ 30.000 հայ: Կարճ ժամանակահատվածում ոչնչացվեց և կողոպտվեց հայապատկան մեծ կապիտալ, որը գրեթե կազմալուծեց Ադանայի հայության տնտեսությունը՝ անդրադառնալով նաև ողջ նահանգի տնտեսության վրա: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը՝ ջարդը վերապրած հայերը, ապավինելով պետական, եկեղեցական և բարեգործական տարբեր հաստատությունների օգնությանը, մասամբ կարողացան վերականգնել իրենց տնտեսությունը, որն էլ բռնագրավվեց, կողոպտվեց ու ոչնչացվեց Հայոց ցեղասպանության տարիներին:

## SUMMARY

The significance of Adana province continuously grew within the Ottoman Empire by the end of the 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> cc. The developing towns and boroughs of the province gradually drew the attention of both local and foreign investors to themselves. The province was turning into an important center of trade thus connecting Asia Minor to Europe, USA and Middle East.

The coastal geographical position of Adana contributed to the possibility of being among the first provinces to have a railroad. In 1886 Adana-Mersin railroad was already in work connecting the main seaport of Mersin with the administrative center of the province of Adana. The existence of a railway led to the development of trade and industry thus turning the economic progress into a dynamic process. Within the context of overall development of the industry certain sectors achieved great success, among which cotton growing was notable. Over the time it increased the scope of its production and consumption, thus gradually becoming the main product of the province's commercial circulation.

The economic achievements of Armenians in Adana province were especially remarkable at the end of the 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> cc. In hard competitive and unequal conditions Armenians managed to reach serious success. A significant part of imports and exports market, factories equipped to the highest modern standards for its time, trading houses and various agencies in the province belonged to Armenians. They mastered almost all trades and crafts, had an agriculture equipped with modern techniques.

If the success of Armenians in the economic field was "permissible" in the end of 19<sup>th</sup> c., over the years it became a matter of serious concern among the ruling circles. It had already become clear to the Turks that the country's business was now mainly run by Europeans or Armenian subjects of the Ottoman Empire, Greeks and Jews, while the Turkish bourgeoisie just stepping into the arena largely fell behind.

In the early 20<sup>th</sup> c. new processes unfolding both within the Empire, as well as around it affected all of the nations. In the context of serious geopolitical changes, the Ottoman Empire sought for ways of survival, becoming more and more intolerant towards the subject peoples. The economic success and rise of the Armenians and other subject peoples of the Ottoman Empire were gradually viewed as a possible strength to dissolve the Empire and the latter's appropriation as a possible salvation. The issue to economically weaken and disorganize the Armenians slowly took a shape. After the 1908 Coup D'état of the Young Turks this reality being increasingly emphasized turned into a strategic issue of totally Turkifying the economy.

The 1909 Adana massacre was probably the initial evidence of that policy when during several days a big Armenian capital was destroyed. During the Adana massacre Armenian shops, factories, houses and farms were fired, plundered and destroyed, while Muslim or foreign capital standing next to them remained almost untouched. In addition, clear orders were given and regulated by the government to secure the life and property of foreigners.

After the Young Turk Coup D'état as throughout the Empire both in the province of Adana the situation had been abruptly changed. The nascent power had implemented various revisions to establish its own authority (it may be said that the Young Turks who had come to power by the subject peoples' support, tried to get rid of their "revolutionary colleagues" as quickly as possible by giving them to clearly understand that only the power changed in the Ottoman Empire but not the form of government).

Already in autumn 1908 the power belonged to the Young Turks in Adana though there were still followers of the old regime in the province having real authority who considered the Constitution to be an evil, qualifying it as an inappropriate privilege granted to the Ottoman subject nations. The fact that both parties were fighting against each other for spheres of influence within the province did not still mean they were not like-minded in the neutralization of Armenians. The massacre of Armenians in Adana, robbery and appropriation of their economy was required by both sides. Local

aghas and beks eliminated their successful opponents. Representatives of “Union and Progress” party strengthened their authority locally while the Young Turk forces having quashed Hamid’s coup attempt by a double blow triumphed in the capital for the second time thus stating that the power belonged to them in the Empire despite of the restored Constitution and the functioning Parliament.

Still in late January and early February 1909 partial massacres were perpetrated in Amasia and Marzvan, the situation was also exacerbated in the provinces of Bitlis, Sivas, Kharberd and Diyarbakir though Adana was chosen as the primary target. Indeed, the economic rise of the Armenians by late 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> cc. was typical of the whole Empire but in Adana province it was also linked to some other factors. Development perspectives conditioned with special geographical location, skillful practice of Armenian national and spiritual authorities as well as the presence of the seat of the Catholicos in the province should be added to already existing financial stability and welfare. Besides, to the contrary of the Armenian provinces which underwent Hamid massacres the Armenians of Adana province were less affected, the volume of their material losses were relatively small. This circumstance also contributed to the economic development and progress.

The destruction of the Armenian capital of Adana almost paralyzed the economy of the province, moreover, the impoverished people who had survived the massacre somehow became a burden for the state continuously seeking help and assistance. However, this circumstance was also favorable because the compensation provided as a kind of subsidy did not comprise even a minimum part of the financial means compared to the stolen property. In addition, many Armenian factories and commercial houses did not exist anymore, which opened a serious field of activities for the Turks.

In the result of the Adana massacre there occurred a large scale of land deprivation, which was especially beneficial to both local and central authorities. The latter, be it sultan or Young Turk, had erewhile adopted a policy of de-Armenization of the Armenian provinces or Armenian-populated areas of the Empire through land

expropriations. After the Adana massacre some lands were simply left ownerless as the owners had been killed, and some of the survivors having lost property and possessions left their places. In the result of the massacre much of the lands left uncultivated due to the lack of men, being also alienated from the Armenians. Thus, a huge amount of lands once belonging to Armenians had passed to the state and resettled by Muslims.

The Adana massacre pursued clear goals. It was a well-designed program implemented accurately in a sense of choosing suitable time period. After the systematic slaughter of Armenians, the latter were also accused of instigations, initiating disorders, organizing brawls, which is not a less important circumstance for excuse to avoid responsibility as well as to distort the facts. Armenians were charged with various accusations before the massacres, too, among which the circumstance of being excited about the restoration of the Constitution was particularly being circulated. This particular enthusiasm was used by the government and presented to the Turkish-Muslim population in quite a convenient version. Armenians were presented as separatists having serious financial resources who had to be restrained.

There operated a predatory system when Armenians were given the opportunity to create everything but had no right to dispose of what they had created. The Armenians' enthusiasm linked to the Constitution was viewed as an opportunity to obtain such a right. Thus, the core of this excitement was the circumstance of being protected by the law, whereas the purpose of the Turks was the legalization of all of the violations against the Armenians.

Nearly 30.000 Armenians were slaughtered in the provinces of Adana and Aleppo during the 1909 Adana massacre. In a short period, a big Armenian capital was destroyed and robbed which disorganized the economy of the Armenians of Adana, reflecting as well on the whole economy of the province. Before the First World War the survivors of the massacre, relying on the support of the state, church and charitable institutions, were able to partially restore their economy, which was confiscated, plundered and destroyed during the years of the Armenian Genocide.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## Ա. Արխիվային նյութեր

1. ԳԱԹ, Վահան Սալեգյանի ֆոնդ, N 956:
2. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի անմշակ արխիվ:
3. Մատենադարան, Ադանայի Հայոց առաջնորդարանի անմշակ արխիվ:
4. Մատենադարան, Ադանայի Տստեսական խորհրդի անմշակ արխիվ:
5. Մատենադարան, Ադանայի Քաղաքական ժողովի անմշակ արխիվ:
6. Միհրան Մինասյանի արխիվային հավաքածու:
7. Houghton Library, Harvard University: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917.

## Բ. Տեղեկագրեր

1. Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Ա., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1910:
2. Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Բ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Օսմ. գործակցական ընկերութեան, 1911:
3. Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Գ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1912:
4. Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ, Տետր Դ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, տպ. Տ. Տողրամաճեան, 1912:
5. Տեղեկագիր Այրիախնամ Յանձնաժողովի, 1910 սեպտ. 11-1912 սեպտ. 11, Յաւելուած Տեղեկագիր քննիչ-պատուիրակ Պ. Ժազ Սայապալեանի, Ղալաթիա, «Շանթ», 1912:
6. Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի, Ատանայի եղեռնը, թարգմ. Յակոբ Սարգիսեան, Կ. Պոլիս, գրատուն «Կիլիկիա», տպագր. «Կ.-Արձագանգ»ի, 1919:

#### **Գ. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, վավերագրեր**

1. Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին (1913-1923 թթ.), հ, Ա (1913-1917), նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց Արամայիս Բալոյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, «Տիգրան Մեծ», 2008:
2. Կիլիկեան Կսկիճներ, 1903-1915, կազմ.՝ Զ. Պզտիկեան, Պէյրուօ, «Հրագդան», 1927:
3. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 1991:
4. Ղազարեան Հայկազն, Յեղասպան թուրքը, Բէյրուօ, «Համագգային», 1968:
5. Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԵ, Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան Կոստանդնուպոլսի պատրիարք (1896-1908), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմող՝ Սանդրո Բէհրուդեան, Երևան, ՀՀԱԱ, 2007:
6. Վավերագրական նյութեր Արևմտահայերի մասին, Գ. մատենաշար, Երևան, 1983:
7. Геноцид Армян в Османской империи, сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, изд. АН Армянской ССР, 1966.

#### **Դ. Ականատեսների վկայություններ, վիճակացույցներ, ուղեցույցներ, ժամանակակիցների աշխատություններ**

1. Ադոսիդես Ալեքսանդր, Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները, թարգմ.՝ Վարուժան Պողոսյան, Երևան, ՀՅԹԻ, 2012:
2. Ալիշան Ղեւոնդ, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ-Ս. Ղազար, 1885:
3. Աճառեան Հրայրա, Տաճկահայոց Հարցի պատմութիւնը (Սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջեան, տպ. Ս. Յ. Աւագեանի, 1915:
4. Առաքելեան Համբարձում, Զէյթուն: Տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1896:
5. Ասլանեան Ի. Ա., Նոր աշխարհագրութիւն ի պէտս Ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, տպ. Արամեան, 1873:



6. Դանիելեան Ներսես Եպս., Կաթիլ մը Ջուր այրած սրտերու, Կ.Պոլիս, գրատուն Յ. Գըլլճեան, տպ. Օ. Արզուման, 1912:
7. Եսայեան Զապէլ, Աւերակներուն մէջ, Պէյրութ, տպ. Էտվան, 1957:
8. Թէոդիկ, Ամենուն Տարեցոյցը, Տրդ, Կ. Պոլիս, հրատ. եւ տպ. Մ. Յովակիմեան, 1914:
9. Թէոդիկ Արշակունիի, Ամիս մը՝ի Կիլիկիա, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան, 1910:
10. Թէրզեան Յակոբ, Ատանայի կեանքը, Կ. Պոլիս, տպ. Զարեհ Ն. Պէրպէրեան, 1909:
11. Թէրզեան Յակոբ, Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, «Արաքս», 1912:
12. Լեփսիոս Յոհաննէս, Գաղտնի տեղեկագիր. Հայ ժողովրդի ջարդերը, (Արևմտահայերենից արևելահայ գրական հայերենի վերածեց եւ գերմաներեն բնագրի հետ համեմատեց Գ. Բ. Թուսունյանը), Երևան, ՀՅԹԻ, «Նահապետ», 2003:
13. Խանճեան Հ. Ս., Պատկերագարդ Նոր Աշխարհագրութիւն, Բ. Մաս Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան, Կ Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1900:
14. Կիլիկիա, Փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, տպ. Բ. Լիբերմանի, 1894:
15. Մուշեղ Արքեպիսկոպոս, Հայկական մղձաւանջը, Պոստոն, «Ազգ», 1916:
16. Մուշեղ Եպիսկոպոս, Ատանայի Ջարդը եւ պատասխանատուները, Գահիրէ, տպ. Արարատ-Ս. Դարբինեան, 1909:
17. Մուշեղ Եպիսկոպոս, Հովիւին Խրատները, Կ. Պոլիս, Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1908:
18. Չեովէքճեան Սիմօն, Առաջնորդ Վաճառականաց կամ Տարերք Առեւտրական գիտութեան, հ, Բ, Կ. Պոլիս, տպագր. Նշան Կ. Պէրպէրեան, 1901:
19. Չիթունի, Յուշիկք Հայաստանի, Կ. Պոլիս, «Հայագիտում հրատարակչութիւն», 1919:
20. Պարթեւեան Սուրեն, Կիլիկեան Արհաիրքը, Կ.Պոլիս, գրտ. Նշան-Պապիկեան, 1909:
21. Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Ա., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1901:
22. Վիճակացոյց Գաւառական Ազգային Վարժարանաց Թուրքիոյ, Տետր Բ., Կ. Պոլիս, տպ. Յ. Մատթէոսեան, 1903:

23. Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյն անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատ. Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001:
24. Օրմանեան Մաղաքիա Արքեպիս., Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, հրատ. Վ. եւ Ն. Տէր-Ներէսեան, 1911:
25. Тыркова Ариадна, Старая Турция и Младотурки, Год в Константинополе, Петроград, Типография Б.М. Вольфа, 1916.
26. Duckett Ferriman, Turkish Atrocities. The Young Turks and The Truth about Holocaust at Adana in Asia Minor, During April, 1909, London, 1913.
27. Gibbons Helen, The Red Rugs of Tarsus. A Woman's Story of the Armenian Massacres, Paris, Hagop Turabian editor, 1919.
28. Lambert Rose, Hadjin and the Armenian Massacres, New York, Fleming H. Revell Company, 1911.
29. Ougouze Remzi, Cuide Commercial D'Adana, Stamboul, imp. Djihan Freres, 1924.

### **Ե. Հուշագրություններ, օրագրեր**

1. Աշըգեան Կ. Բ., Ուզուն Աշըգեան գերդաստանի պատմութիւնը, Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1968:
2. Աշճեան Հ. Յ., Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ Յուշեր, Նիւ Եորք, «Կոչնակ», 1950:
3. Խապրիկ Մինաս, Եթէ Չորք-Մարգպանը ինձի հետ խօսէր..., Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1983:
4. Նազլեան Յովհաննէս Արք., Յուշեր, Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Պէյրութ, տպ. Հայ Կաթողիկէ, 1960:
5. Սերոբեան Մուշեղ, Դիտումներ եւ Դատումներ (Էջեր Օրագրես), Պէյրութ, «Ազդակ», 1932:
6. Քելէշեան Միսաք, Ինքնակենսագրութիւն, Պէյրութ, «Օլիմպիք», 1951:

### **Զ. Անտիպ հուշագրություն**

1. Պոռանեան Սամվէլ, Հուշագրություն Ճուլ Մարգպանի (Չորք-Մարգպան), Լենինական, 1965: Պահվում է Վերա Սահակյանի մոտ:

## **Է. Մենագրություններ, հետազոտություններ, հուշամատյաններ**

1. Աստոյան Անահիտ, Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, «Նաիրի», 2013:
2. Ատանալեան Կ. Պ., Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցոյ, Ֆրեզնո, Կալիֆորնիա, Crown printing co., 1952:
3. Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն Մինչեւ մեր օրերը), Անթիլիաս-Լիբանան, տպ. Դպրեվանուց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1939:
4. Գալուստեան Գր. Հ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, «Կոչնակ», 1934:
5. Գասպարյան Ռ. Հ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921թ.), Երևան, «Գիտություն», 2005:
6. Գոճայեան Մինաս, Պատմութիւն Չորք-Մարզպանի (Տէօրթ-Եոյ) գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ, Լոս-Անճելըս, Լոս-Անճելըսի Չորք-Մարզպանի հայրենակցական միութիւն, 2005:
7. Գէորգեան Յարութիւն Ռ., Թաշճեան Վահէ, Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Կեդրոնական վարչութիւն, 1906-1940, հ. 1, Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, Հայկական բարեգործական ընդհանուր միություն, թարգմ.՝ Գրիգոր Շահինեան, Շաղիկ Արծրունի, "Impression Brochage" 2006:
8. Եարտըմեան Հ. Տաճատ Վրդ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1995:
9. Եղիայեան Բիւզանդ, Ատանայի Հայոց պատմութիւն, Հրատարակութիւն Ատանայի հայրենակացական միութեան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1970:
10. Թորոսյան Շ. Թ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, ԵՊՀ, 1987:
11. Համբարյան Ա. Ս., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., Արմավիր, «Պարզն Ոսկանյան», 2003:
12. Համբարյան Ա. Ս., Երիտթորքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, ՀՍՍ ԳԱ հրատ., 1979:

13. Մարտիրոսյան Հայկ, Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայան (1896-1919 թթ.), Երևան, «Զանգակ-97», 2016:
14. Մուրաֆյան Կոդ, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, թարգմ. Ամալյա Շահումյան, գիտ. խմբ. Ազատ Բոզոյան, Երևան, «Նաիրի», 2001:
15. Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, խմբ. Գերսամ Ահարոնեան, Պեյրուր, հրատարակություն «Զարթոնք» օրաթերթի, 1965:
16. Ոսկեան Հ., Կիլիկիայի վանքերը, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1957:
17. Չորմիսեան Լեւոն, Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա. հատոր, (1850-1878), Պեյրուր, տպ. Սեւան, 1972:
18. Պօղոսեան Հ. Եփրեմ Վ., Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1957:
19. Պօղոսեան Յ. Պ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Lou Անճէրըս, Քալիֆօրնիա, Պօզաճեան տպ., 1942:
20. Միմոնյան Հրայիկ, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009:
21. Տէր-Պետրոսեան Յովհաննէս, Հայերու սատարը թուրք մշակոյթին եւ տնտեսութեան, Գահիրէ, 1976:
22. Տէր-Վարդանեան Յ., Մարաշի Ջարդը 1920-ին, Հալեպ, տպ. Արաքս-Բ. Թօփալեան, 1927:
23. Քէլէշեան Միսաք, Միս-Սատեան, Պեյրուր, տպ. «Հայ Ճեմարանի», 1949:
24. Габидуллин Х. З., Младотурецкая революция, Москва, Государственное социально-экономическое издательство, 1936.
25. Инджикян О. Г., Буржуазия Османской Империи, Ереван, Издательство Академии наук Армянской ССР, 1977.
26. Кеворкян Р., Геноцид Армян, Полная история, Москва, Центр Арменоведческих исследований «Анив», 2015.
27. Петросян Ю. А., Османская империя: могущество и гибель, Москва, «Наука», 1990.
28. Тунян В.Г. Младотурки и армянский вопрос, ч. 1, 1908-1912, Ереван, изд. Музей-Института Геноцида Армян, 2004.
29. Der Matossian Bedross, Shattered Dreams of Revolution, From Liberty to Violence in the Late Ottoman Empire, Stanford University Press, Stanford, California, 2014.

30. Karpat Kemal, Ottoman Population: 1830-1914, Demographic and Social Characteristics, London, The University of Wisconsin Press, 1985.
31. Köker Osman, Armenians in Turkey 100 years ago, vol. 2, İstanbul, Birzamanlar yayıncılık, 2013.
32. Üngör Uğur Ümit, Polatel Mehmet, Confiscation and Destruction, The Young Turk Seizure of Armenian Property, London, Continuum International Publishing Group, 2011.
33. Kevorkian R. H., Paboudjian P. B., 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda Ermeniler, İstanbul, Aras, 2012.
34. Köker Osman, 100 yıl önce Türkiye'de Ermeniler, İstanbul, Birzamanlar yayıncılık, 2005.
35. Tuğlacı Pars, Tarih Boyunca Batı Ermenileri, (1851-1890), c. 2, İstanbul, Pars Yayın ve Tic. Ltd. Şti., 2004.

### **Ը. Հանրագիտարաններ, բառարաններ**

1. Էփրիկեան Հ. Ս., Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ, Ս. Ղազար, 1902:
2. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ., հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986:
3. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ., հ. 3, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991:
4. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Ս., Բարսեղյան Հ. Խ., հ. 5, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2001:
5. Հովակիմյան Բ. Ս., Հայոց ծածկանունների բառարան, (8000 հեղինակի 25000 ծածկանուն), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005:
6. The Encyclopedia Americana International Edition, vol. 23, Americana corporation International Headquarters, New York, 1967.

### **Թ. Հոդվածներ**

1. Ադանալյան Մ. Լ., Ազգանվեր Հայուհյաց ընկերությունը (Ստեղծման 100-ամյակի առթիվ), Պատմա-Բանասիրական հանդես, N 4, Երևան, 1979:

2. Համբարյան Ա. Ս., Կիլիկիայի 1909 թ. հայկական կոտորածները, Պատմա-Բանասիրական հանդես, N 4, Երևան, 1988:
3. Մինասեան Միհրան, 5 Անտիպ վաւերաթուղթ՝ Կիլիկիոյ 1909 թուականի կոտորածներուն մասին, Ազգակ Բացառիկ, Պէյրուի, 24 ապրիլ 2009:
4. Սահակյան Վերա, «Քելեկյան» և «Միսվան» որբանոցների գործունեությունը, Բանբեր Մատենադարանի, N 22, «Նաիրի», Երևան, 2015:
5. Սաֆրաստյան Ա. Խ., Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների նախարարությանը ներկայացված Հայկական Եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները, Էջմիածին, Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Ը, ՌՆԺԶ/1966:
6. Kevorkian Raymond H., The Cilician Massacres, April 1909, Armenian Cilicia, edited by Richard G. Hovannisian and Simon Payaslian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2008.

#### **Ժ. Պարբերական Մամուլ**

1. «Ազատամարտ», Կ. Պոլիս, **1909**՝ թիւ 136, **1910**՝ թիւ 207; **1911**՝ թիւ 776, **1912**՝ թիւ 792, 832, 867; **1914**՝ թիւ 1458
2. «Ազգ», Պոսթոն, **1921**՝ թիւ 21-1655
3. «Ապագայ», Կ. Պոլիս, **1910**՝ թիւ 18
4. «Առետուր», Կ. Պոլիս, **1908**՝ թիւ 2
5. «Ասպարեզ», Ֆրեզնո, **1909**՝ թիւ 38, 45, 48, 52
6. «Արարատ», Էջմիածին, **1909**՝ համար Է-Ը; **1915**՝ համար Ա
7. «Արեւելեան մամուլ», Չմիւռնիա, **1903**՝ թիւ 21; **1909**՝ թիւ 17, 18, 22, 24
8. «Արեւելք», Պոլիս, **1906**՝ թիւ 6085
9. «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, **1898**՝ թիւ 625; **1901**՝ թիւ 1,400; **1909**՝ թիւ 3,775, 3,784, 3,808, 3,812, 3,814, 3,815, 3,826, 3,839; **1910**՝ թիւ 4,140; **1912**՝ թիւ 4,700, **1913**՝ թիւ 5,149
10. «Բիւրակն», Կ. Պոլիս, **1906**՝ թիւ 10, 19; **1907**՝ թիւ 9-10, 15, 17-18, 21, 24, 27, 35, 36, 44, 45, 46, 47, 48, 49; **1908**՝ թիւ 26
11. «Գեղունի», Վենետիկ, Ս. Ղազար, **1909**՝ թիւ 6
12. «Գործ», Թիֆլիս, **1909**՝ թիւ 86
13. «Զեփիւռ», Կ. Պոլիս, **1863**՝ թիւ 30
14. «Զեփիւռ Հայրենեաց», Կ. Պոլիս, **1863**՝ թիւ 10

15. «Ժամանակ», Կ. Պոլիս, **1909**՝ թիւ 140, 141, 143, 144, 145, 147, 166, 168, 179, 191; **1911**՝ թիւ 738, 795; **1913**՝ թիւ 1474, 1607, 1651, 1657
16. «Ժողովուրդի Չայնը», Կ. Պոլիս, **1920**՝ թիւ 428, 504
17. «Լուսաբեր-Արեւ», Գահիրէ, **1910**՝ թիւ 814
18. «Ծաղիկ», Պօլիս, **1892**՝ թիւ 42
19. «Կիլիկիա», Ատանա, **1919**՝ թիւ 15
20. «Կիլիկիա», Կ. Պոլիս, **1863**՝ թիւ 9
21. «Կիւղնոս», Տարսոն, **1913**՝ թիւ 1
22. «Կոչնակ», Նիւ Եորք, **1914**՝ թիւ 32; **1915**՝ թիւ 48
23. «Հաճըն», Մարսել, Փասսադենա **1932**՝ թիւ 9-10, **1935/1936**՝ թիւ 9-12, **1938**՝ թիւ 7, **1939**՝ թիւ 14, **1940**՝ թիւ 19
24. «Հեռաձայն», Կ. Պոլիս, **1913**՝ թիւ 2(1347)
25. «Հորիզոն», Թիֆլիս, **1910**՝ թիւ 22, 27, 33, 39, 40, 42, 45, 47, 52, 64, 72
26. «Չայն Հայրենեաց», Կ. Պոլիս, **1909**՝ թիւ 24-25, 28
27. «Փորձ», Տիֆլիս, **1879**՝ թիւ 11

#### **Ի. Համացանաց**

1. <http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/adanavilayet.html>
2. <http://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/adanavilayet/hadjin/religion/festivals.html>

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1

### 1.1. Ատանայի թեմական քաղաքներու եւ գիւղերու հայ բնակչութիւնը ըստ նոր մարդահամարի<sup>660</sup>

Թիւ	Թեմեր	Հայ		Հայ-Բողոքական		Հայ-Կաթոլիկ	
		Այր	Կին	Այր	Կին	Այր	Կին
1	Ատանա (Կեդր. քաղաք)	8500	7500	518	466	460	400
2	Հայ գիւղ	100	90	-	-	-	-
3	Ինճիրլիք	130	120	-	-	-	-
4	Շէյխ-Մուրատ	85	75	-	-	-	-
5	Գայըրլը	49	35	-	-	-	-
6	Կէմի-Սուրա	20	17	-	-	-	-
7	Միհմանտար	13	10	-	-	-	-
8	Թանկրը-Վերտի եւ ուրիշ 11 ազարակներ	55	40	-	-	-	-
9	Միսիս (Կեդր. նահիէի)	280	220	-	-	-	-
10	Ապտօղլու	180	160	-	-	-	-
11	Համիտիէ (Կեդր. գազայի)	249	125	27	12	4	-
12	Մէրսին (Կեդր. սանճ.)	920	680	100	77	280	240 <sup>(2)</sup>
13	Տարսոն (Կեդր. գազայի)	1461	1209	177	182	48	62
14	Գօզ-Օլուզ	125	120	25	20	-	-
15	Սելէկիս (Կեդր. սանճ.)	175	196	-	-	-	-
16	Մարա (Կեդր. նահիէի)	45	40	-	-	-	-
17	Էրզին(Կեդ.ճէպէլ սանճ.)	-	-	-	-	-	-
18	Չոք-Մարգուան	2487	2213	80	70	-	-
19	Օճազլը	1009	931	-	-	-	-
20	Էօզէրլի	510	484	32	30	-	-
21	Նաճարլու	226	214	-	-	-	-

<sup>660</sup> Մուշեղ Եպիսկոպոս, Հովիւին Նրատները, Կ. Պոլիս, Տպագրութիւն Յ. Մատթէոսեան, 1908, էջ 172-175:



Թիւ	Թեմեր	Հայ		Հայ- Բողոքական		Հայ- Կաթոլիկ	
		Այր	Կին	Այր	Կին	Այր	Կին
22	Օսմանիյե(Կեդր. գազայի)	159	137	226	198	-	-
23	Եարբուզ(Կեդր. նահիլէի)	130	100 <sup>(1)</sup>	2	1	-	-
24	Գայբագ-Պանըսը	15	10	-	-	-	-
25	Քիշնէզ	80	70	-	-	-	-
26	Էքպէզ(Կեդ. գազ. Խասսա)	70	60	85	75	82	78
27	Ֆասըլ կամ Էյրի-Պուճուզ	38	32	-	-	-	-
28	Հաճիլար	21	19	-	-	-	-
29	Քիւրեճի	8	7	-	-	-	-
30	Տէմրէկ	3	2	-	-	-	-
31	Թէլէք	-	-	-	-	65	55
32	Իսլահիյե (Կեդր. գազայի)	2	2	-	-	-	-
33	Գայա-Պաշը	12	13	-	-	-	-
34	Պաղչէ	13	13	-	-	-	-
35	Քէլլեր	93	75	5	5	-	-
36	Էնթիլլի	62	69	-	-	-	-
37	Քիւնէս	30	30	-	-	-	-
38	Փաշա չիֆթլիքի ագարակ	9	8	-	-	-	-
39	Պոսթան աղա չիֆթլիքի	16	14	-	-	-	-
40	Պաղչա(Կդ. Պուլանըզ գազայի)	357	343	10	12	-	-
41	Գուշճու-Մուսթաֆա	70	70	-	-	-	-
42	Գըզլաճ	32	28	-	-	-	-
43	Հասան-Պէլլի	931	613	162	142	-	-
44	Սափրանլը	16	14	-	-	-	-
45	Լարաճլը	266	212	6	6	-	-
46	Խառնը	172	134	127	91	-	-
47	Կէօք-Չայիր	123	85	-	-	-	-
48	Գուրսլար	40	26	-	-	-	-

(1)Ժողովուրդը Էրզին փոխադրուած:

(2)Թեպէտ պաշտօնական արձանագրութիւնը այս թիւը ցոյց կուտայ Մէր Հայ-կաթոլիկներու համար, բայց մեզ համար ճիշդ չէրեւիր: Ասոնց մեծագոյն մասը պէտք է բարդել բուն Հայերու վրայ:

1.2. Ատանայի թեմական քաղաքներու եւ գիւղերու հայ բնակչութիւնը ըստ նոր մարդահամարի<sup>661</sup>

(շարունակություն)

Թիւ	Թեմեր	Քահանայ	Վարժարան	Թիւ Աշակերտաց			Թիւ Պաշտօնէից			Տար. Օթխս L. O.
				Մանկա-պարտէզ	Արական Վարժարան	Իգական Վարժարան	Ուսուցիչ	Ուսուցչուհի	Պաշտօնէայ	
1	Ատանա (Կեդր. քաղաք)	9	5	200	700	600	23	21	6	1100
2	Հայ գյուղ	-	-	-	-	-	-	-	-	-
3	Ինճիրլիք	1	1	-	30	-	1	-	-	12
4	Շէյխ-Մուրատ	1	1	-	50	-	1	-	-	14
5	Գայըրլը	-	-	-	-	-	-	-	-	-
6	Կէմի-Մուրա	-	-	-	-	-	-	-	-	-
7	Միհմանտար	-	-	-	-	-	-	-	-	-
8	Թանկրը-Վերտի եւ ուրիշ 11 ագարակ	-	-	-	-	-	-	-	-	-
9	Միսիս (Կեդր. նահիէի)	1	1	-	45	-	1	-	-	12
10	Ապտօղլու	1	1	-	50	-	1	-	-	25
11	Համիտիէ (Կեդր. գաղայի)	1	1	-	40	-	1	-	-	20
12	Մէրսին (Կեդր. սանճագի)	3	3	80	75	50	3	2	2	140
13	Տարսուն (Կեդր. գաղայի)	3	3	90	95	60	3	5	2	188
14	Գոգ-Օլուգ	1	1	-	30	-	1	-	-	8
15	Սելեկիա (Կեդր. սանճագի)	1	1	-	45	-	1	-	-	22
16	Մարա(Կեդր. նահիէի)	1	1	-	20	-	1	-	-	8
17	Էրզին(Կեդր.ճէպէլ ս.)	-	-	-	-	-	-	-	-	-
18	Չոք-Մարգուան	4	4	-	300	150	5	2	2	150

<sup>661</sup> Տե՛ս նույն տեղում:



Թիւ	Թեմեր	Քահանայ	Վարժարան	Թիւ Աշակերտաց			Թիւ Պաշտօնէից			Տար. Ծախս Լ. Օ.
				Մանկա- պարտեզ	Արական Վարժարան	Իգական Վարժարան	Ուսուցիչ	Ուսուց- չուհի	Պաշ- տօնէայ	
42	Գրգլաճ	-	-	-	-	-	-	-	-	-
43	Հասան-Պէլլի	3	2	-	150	80	2	1	1	50
44	Սավրանլը	-	-	-	-	-	-	-	-	-
45	Լաբաճլը	1	1	-	50	-	1	-	-	10
46	Խառնը	1	1	-	60	-	1	-	-	15
47	Կէօք-Չայիր	-	1	-	35	-	1	-	-	10
48	Գուրտլար	-	-	-	-	-	-	-	-	-

<sup>(1)</sup>Նպաստը դադրած:

Ծանոթ.-Քահանայ չգտնուած գիւղերը կ'այցելեն կեդրոններու (լիվայի կամ գազայի) քահանայները, իրենց համար գծուած կրօնական իրաւասութեան շրջանակին համաձայն: Սոյն Եկեղեցիներէն հազիւ 7ը իբրև Եկեղեցի շինուած են, իսկ միւսները գուրկ կը գտնուին Եկեղեցիի ճարտարապետական հանգամանքէն: Նմանապէս դպրոցներէն շատերը:

### 1.3. Հաւաքական ցանկ Ատանա առաջն. վիճակի եկեղեցւո, քահանայից, վարժարաններու եւ աշակերտաց<sup>662</sup>

Եկեղեցի	Քահանայ	Թիւ աշակերտաց		Թիւ ուսուցչաց		Վարժարաններ	Տարեկ. ընդ. ծախս
		արական	իգական	արական	իգական		Լ.Օ.
26	34	2360	2185	57	32	38	2932

Ծանոթ.-2000ի մօտ աշակերտներ ալ կը յաճախեն Հայ-Բողոքականներու, Հայ-Կաթօլիկներու և Ամերիկեան ու Ֆրանսական վարժարանները:

<sup>662</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 176:

2.1. Տարսնի վիճակագրությունը Վ. Վ. Փիթի համար<sup>663</sup>

(1909 թ. Ադանայի ջարդը վերապրած կարոտյալներին  
օգնելու համար արված վիճակագրություն)

	Ընտանիք	անդամներ	Աշխատու- նակներ	Վճարումներ/ լիրա	
				Յուրաքանչ.	Ընդհանուր
Այրիներ և որբեր	151	469			
Ծերեր և հաշմանդամներ	37	129			
Մշակ	51	210	55	5	275
Բանվոր	49	181	52	5	260
ջորեապաններ	48	192	50	8	400
Կոշկակարներ և այլն	39	172	48	10	480
Նպարավաճառ	34	157	37	15	555
Ատաղձագործ, դարբին	44	196	47	10	470
Ֆերմեր	61	162	40	25	1.000
Որմնադիր	17	61	17	5	85
Բամբակագործ	12	60	17	20	340
Վաճառական	13	61	20	25	500
	556	2050	383		4365

Նրանց մի մասը ապրում է 40 լ-ով, 556 ընտանիքների համար- 22.240 լիրա:  
Ընդհանուր՝ 26.605 լիրա

15 հունիս, 1909

<sup>663</sup> Տարսնի վիճակագրությունը Վ. Վ. Փիթի համար, 15 հունիսի, 1909 թ.: Western Turkey Mission records, Western Turkey Mission, ca. 1891-1917: Houghton Library, Harvard University. Նյութը տրամադրել է Ա. Ալեքսանյանը:

**3.1. Ադանայի Հայոց թեմի առաջնորդ Գևորգ ծ. վ. Արսլանյանի նամակը Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանին<sup>664</sup>**

10 Յունվար 5  
493-7

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր.

Կը հաստատենք մեր անցեալ տարւոյ Դեկտ. 26 թուականաւ եւ 662-480 համարաւ ընդարձակ նամակը, որով ի մէջ այլոց մանրամասնօրէն խօսած էինք ծանօթ դէպքերուն հրդեհուած եւ տակաւին աւերակ վիճակի մը մէջ գտնուող եկեղեցեաց եւ վարժարանաց մասին:

Այս անգամ հարկ դատեցինք խնդրոյն ամբողջ փուլերը պատկերացնելիք եւ լիակատար կերպով նախընթաց գործողութիւնները պարունակելիք ներկայ նամակը ուղղել Ձերդ Բարձր Սրբազանութեան, խնդրելով որ, բարեհաճիք խնամով նկատի առնուլ զայն եւ օր առաջ ապահովել խոստացեալ գումարին յառաջիկայ 331 մալիլէի տարւոյ պիտոճէն վճարուիլն:

Ա.- Հրդեհուած ու ցարդ չը վերաշինուած եկեղեցիներն են 4 հատ.-

1. Ատանայի Ս. Ստե[փ]աննոս եկեղեցին
2. Տէօրթ-Եօլի Էօզէրլի գիւղի Ս. Լուսաւորիչ եկեղեցին
3. -- -- Նաճառլու գիւղի եկեղեցին, եւ
4. Հաճընի Բումլու գիւղի եկեղեցին

Բ.-Իսկ վարժարաններն են 7 հատ.-

1. Ատանայի աղջկաց վարժարանը
2. -- -- -- միւս վարժարանը
3. Տարսոնի վարժարանը
4. Տէօրթ-Եօլի Օճագլու գիւղի վարժարանը

---

<sup>664</sup> Տե՛ս նամակը ամբողջությամբ Մատենադարան, Ադանայի Հայոց առաջնորդարանի անմշակ արխիւվ, Ադանայի Հայոց առաջնորդարանի գրագրությունը, 18 սեպտեմբերի 1914 թ.-31 մայիսի 1915 թ., 493-7, 10 յունվար 1915, թ. 215-218:

5. -II-- Նաճառլու գիւղի վարժարանը
6. Տարսոնի Գօգ-Օլուգ գիւղի վարժարանը, եւ
7. Հաճընի Բումլու գիւղի վարժարանը

Ասոնց վերաշինութեան իբր պետական թախսիսաթ ենթադրուած է կանխաւ ընդամենը 895.320 դրշ. Լ. Օ. 102.60 դրշ.ի հաշիւով: Ի գիտութիւն միայն ի ստորեւ կը նշա[նա]կենք իւրաքանչիւր տեղւոյն, այդ գումարէն տրուելիք Բաժինը, այն մտածումով, թէ այդ պարագան թերեւս հարկ ըլլայ աչքի առջեւ ունենալ որ եւէ պատճառաւ:

1. Ատանայի եկեղեցիին համար - 535.000 դրշ.
  2. Ատանայի երկու աղջկանց վարժարանին համար - 215.000 դրշ.
  3. Էօզերլիի եկեղեցիին համար - 51.000 դրշ.
  4. Նաճառլուի եկեղեցիին եւ վարժարանին համար - 25.500 դրշ.
  5. Բումլուի II-- -II-- - 11.100 դրշ.
  6. Տարսոնի վարժարանին համար - 41.500 դրշ.
  7. Օճագլուի -II-- - 13.500 դրշ.
  8. Գոգ-Օլուգի -II-- - 2.720 դրշ.
- Գումար՝ 895.320 դրշ.:**

Յուսալով որ այս մեր կարետր գրութիւնը կ'արժանանայ Ձերդ Բարձր Սրբազանութեան ծանրածանր զբաղմանց մէջ Ձեր լուրջ եւ խնամտ նկատառման, ակնդէտ կսպասենք արդիւրանոր պատասխանի մը եւ եմք ու մնամք միշտ,

Սրտագին մեծարանաց ամենախորին հաւատօք  
Առաջնորդ Հայոց Ատանայի  
/ստորագրություն/  
Գ. ծ.վ. Արալանեան

## ԱՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՅԱՆԳԻ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.

1909 Թ. ՈՒՆԵՉՐԿՈՒՄ

Հրատարակչության խմբագիր՝	Ա. Հովակիմյան
Սրբագրիչ՝	Ա. Խառատյան
Էջադրումն ու ձևավորումը՝	Մ. Համբարձումյանի

Հրատ. պատվեր № 792: Չափսը՝ 60×84<sup>1/16</sup>.  
Ծավալը՝ 13 տպ. մամուլ + 1.5 տպ. մամուլ ներդիր:  
Տպաքանակը՝ 150 օրինակ: